

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



**Մարիե
Հարութօրնաւ**

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ
ԱՐՑԱԽՈՒՄ 1639-1736 ԹԹ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՄԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐԻԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔՆ
ԱՐՑԱԽՈՒՄ 1639–1736 ԹԹ.**

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԽԻԱՆ

ՄԱՏԵՆԱՇԱՐ

171



ARCH. MESROB ASHJIAN

BOOK SERIES

171

ԵՐԵՎԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

2018

ՀՏԴ 008:94(479.25)
ԳՄԴ 71+63.3(5Հ)
Հ 422

**ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ**

Գիտական խմբագիր՝

պ.գ.դ., պրոֆեսոր **Գևորգ Ստեփանյան**

Գրախոսներ՝

մ.գ.դ., պրոֆեսոր **Գրիգորի Հարությունյան**

պ.գ.դ. **Գևորգ Տեր-Վարդանյան**

Հարությունյան Մարինե

Հ 422 Մշակութային կյանքն Արցախում 1639-1736 թթ., / Մ. Հարությունյան.-
Եր.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2018.- 244 էջ:

Աշխատությունում ներկայացվում է Արցախի մշակույթի պատմությունը, որն ընդգրկում է XVII դ. երկրորդ կեսից մինչև XVIII դ. սկիզբը ընկած ժամանակահատվածը: Անտիպ ձեռագրերի, տպագիր սկզբնաղբյուրների, վավերագրերի, պարբերական մամուլի նյութերի և գրականության հիմնն վրա ներկայացվում են Արցախի մշակույթի ճյուղերի՝ գրչության արվեստի, գիտակրթական կյանքի, կերպարվեստի (մանրանկարչություն և զարդանկարչություն), Ճարտարապետության (նկեղեցաշինություն, քնակեղի տների ձևեր, կամրջաշինություն), քանդակագործության, դեկորատիվ-կիրառական արվեստի՝ գորգագործության, ասեղնագործության, ժանկագործության արծաթագործության, ոսկերչության, սկիզբագործության, փայտագործության վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ: Աշխատությունը նախատեսված է պատմաբանների, գրականագետների, արվեստագետների և ընթերցողների լայն շրջանակների համար:

ՀՏԴ 008:94(479.25)
ԳՄԴ 71+63.3(5Հ)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի բազմադարյա պատմության մեջ իր ուրույն տեղն ու դերն ունի մշակույթը, որում արտահայտվում է նրա ազգային նկարագիրը: Մյուս կողմից էլ՝ հայկական մշակույթի դերի կարևորությունը ընդգծվում է համաշխարհային մշակույթի հայեցակետից, քանզի հայ ժողովուրդը, պահպանելով իր մշակութային արժեքների ինքնատիպությունը, դրանով իսկ մեծ ավանդ է ներդրել համաշխարհային մշակույթի գանձարանում: Ուսումնասիրության արդիականությունը դիտարկվում է մշակույթի՝ որպես հայոց երկրի քաղաքականության կարևորագույն ռազմավարական ուղղություններից, ինչպես նաև ազգապահպանության հիմնական երաշխիքներից մեկը:

Ազգային մշակույթի պատմության գիտական ուսումնասիրությունը, որը հայագիտության կարևոր բնագավառներից է, դարեր ի վեր եղել է մշակույթի կարկառուն ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում: Սույն ժամանակաշրջանի հայկական մշակույթի ճյուղերի առանձին խնդիրների լուսաբանմանն անդրադարձել են Գ. Լևոնյանը¹, Ն. Ալիսյանը², Վ. Թերզիբաշյանը³, Մ. Ղազարյանը⁴, Ն. Ոսկանյանը, Բ. Կորկոտյանը, Ա. Մավալյանը⁵, Հ. Սահակ Ճեմճեմեանը⁶, Ա. Այվազյանը¹, Ա. Աղասյանը, Հ. Հա-

¹ Տե՛ս Լևոնյան Գ., *Հայ գիրքը և տպագրության արվեստը*, Ե., 1946:

² Տե՛ս Ալիսյան Ն., *Բաղէշի դպրոցը 1500-1704 նպաստը մը Հայոց եկեղեցու պատմութեան եւ մատենագրութեան*, Վիլնէմա, 1952:

³ Տե՛ս Թերզիբաշյան Վ., *Հայ դրամատուրգիայի պատմություն*, գիրք 1, Ե., 1959:

⁴ Տե՛ս Ղազարյան Մ., *Հայ կերպարվեստը XVII-XVIII դդ.*, Ե., 1974:

⁵ Տե՛ս Ոսկանյան Ն., Կորկոտյան Բ., Մավալյան Ա., *Հայ գիրքը 1512-1800*, Ե., 1988:

⁶ Տե՛ս Ճեմճեմեան Ա., *Հայ տպագրութիւնը եւ Հռոմ (ՏԷ դար)*, Վեներտիկ, 1989:

կոբյանը, Մ. Հասարթյանը, Վ. Ղազարյանը², Վ. Ղազարյանը, Հ. Հակոբյանը³ և այլք, որոնց ուսումնասիրություններում հիմնականում տեղ են հատկացված հայկական գաղթօջախներում մշակույթի տարբեր ճյուղերի պատմության ուսումնասիրության խնդիրներին: Այս խնդրում կարևորում ենք նաև ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտաշխատողների ջանքերով լույս ընծայված «Հայոց պատմության» (հ. III, Եր., 2010) գրքում տեղ գտած արժեքավոր նյութերը:

Ուսումնասիրվող շրջանի Արցախի մշակույթի տարբեր բնագավառների առանցքային խնդիրներ գիտականորեն լուսաբանվել են Ս. Զալալեանցի⁴ Մ. Բարխուտարեանցի⁵, Ե. Լալայանի⁶, Հ. Ոսկեանի⁷, Ս. Դավթյանի⁸, Լեոյի⁹, Շ. Մկրտչյանի¹⁰ Բաֆֆու¹¹, Վ. Հարությունյանի¹², Կ. Ղահրամյանի¹³, Բ. Ոլուրբաբյանի¹⁴, Ա. Ղուլյանի¹⁵, Վ. Բալայանի¹⁶, Վ. Թաթիկյանի¹⁷, Ս. Կարապետյանի¹,

¹ Տե՛ս Այվազյան Ա., *Նախիջևանի որմնանկարչական արվեստը*, Ե., 1998:

² Տե՛ս Աղայան Ա., Հակոբյան Հ., Հասարթյան Մ., Ղազարյան Վ., *Հայ արվեստի պատմություն*, Ե., 2009:

³ Տե՛ս Ղազարյան Վ., Հակոբյան Հ., *Հայ միջնադարյան կերպարվեստի պատմություն*, Ե., 2012:

⁴ Տե՛ս Զալալեանց Ս., *Ծանապարհորդութիւն ի մեծն Հայաստան*, մասն Ա, Տիֆլիս, 1842, մասն Բ, Տիֆլիս, 1853:

⁵ Տե՛ս Բարխուտարեանց Մ., *Արցախ*, Բաքու, 1895:

⁶ Տե՛ս Լալայան Ե., *Վարսնդայի տեղագրությունը*, Ազգագրական հանդես, գիրք Բ, Թիֆլիս, 1897:

⁷ Տե՛ս Ոսկեան Հ., *Արցախի վանքերը*, Վիեննա, 1953:

⁸ Տե՛ս Դավթյան Ս., *Հայկական ասեղնագործություն*, Ե., 1972:

⁹ Տե՛ս Լեո, *Երկերի ժողովածու*, հ. 3, Ե., 1973:

¹⁰ Տե՛ս Մկրտչյան Շ., *Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները*, Ե., 1980:

¹¹ Տե՛ս Բաֆֆի, *Երկերի ժողովածու*, հ. IX, Ե., 1987:

¹² Տե՛ս Հարությունյան Վ., *Հայկական ճարտարապետության պատմություն*, Ե., 1992:

¹³ Տե՛ս Ահրամյան Կ., *Հյուսիսային Արցախ*, Գիրք Ա, Ե., 1993:

¹⁴ Տե՛ս Ոլուրբաբյան Բ., *Արցախի պատմություն*, Ե., 1994:

¹⁵ Տե՛ս Ղուլյան Ա., *Արցախի և Սյունիքի մեխիթրական ապարանքները*, Ե., 2001:

¹⁶ Տե՛ս Բալայան Վ., *Արցախի պատմություն*, Ե., 2002:

¹⁷ Տե՛ս Թաթիկյան Վ., *Արցախի տոհմագրությունը*, Ե., 2004:

Հ. Հակոբյանի², Ա. Ավանեսյանի, Գ. Հարությունյանի³, Թ. Մինասյանի⁴ և այլոց աշխատություններում: Սակայն, Արցախի մի շարք մշակութային արժեքների՝ Գյուլիստանի Սբ. Ամենափրկիչ վանքի (1641 թ.), Խաչակապի թաղակապ եկեղեցու (1650 թ.), Ավետարանոցի Սբ. Աստվածածին (1651 թ.), Խաչմաս (նաև՝ Խաչմաչ) գյուղի Սբ. Ստեփանոսի (1651 թ.), Շոշ գյուղի Ս. Ստեփանոսի (1655 թ.), Եղիշե վանքի (1655 թ.), Հերիերի Սբ. Գրիգորիսի (1667–1676 թթ.), Առաջածոր գյուղի Սուրբ Աստվածածին (1668 թ.), Պուկաթաղի (1670 թ.), Ղազանչի գյուղի Սբ. Գևորգի (1671 թ.), Խանձք գյուղի Սուրբ Ստեփանոսի (1673 թ.), Վարդաշենի Ս. Գաբրիել (1674 թ.), Բերդաշեն գյուղի Սբ. Նահատակ (1676 թ.), Մարտունաշենի Սբ. Աստվածածին (1676 թ.), Կուսապատի Սբ. Աստվածածին (1686 թ.), Երից Մանկանց վանքի (1691 թ.), Ջրակույս գյուղի Սբ. Ստեփանոսի (1698 թ.), Խաչբուլաղի (1710 թ.) և այլ եկեղեցիների, ինչպես նաև վերջիններիս կից գրչության կենտրոնների (80-ից ավելի ձեռագրեր), դպրոցների, գիտության, ճարտարապետության, քանդակագործության, դեկորատիվ-կիրառական արվեստի բազմաբովանդակ ճյուղերի՝ գորգագործության, ասեղնագործության, ժանեկագործության, արծաթագործության, ոսկերչության, ակնագործության, փայտագործության և այլ խնդիրների ուսումնասիրության պատմությունը հանգամանորեն լուսաբանված չէ, ուստի փորձել ենք Մատենադարանի ձեռագրերի, նորահայտ վավերագրերի, արխիվային, աղբյուրագիտական, պատմական նյութերի հիման վրա վերհանել հայկական մշակույթի

¹ Տե՛ս **Կարապետյան Ս.**, *Հյուսիսային Արցախ*, Ե., 2004: **Նույնի՝ Արցախի կամուրջները**, Ե., 2009:

² Տե՛ս **Հակոբյան Հ.**, *Արցախի մանրանկարչական արվեստը*, Ե., 2014:

³ Տե՛ս **Ավանեսյան Ա., Հարությունյան Գ.**, *Արցախի կրթական համակարգը*, հ. I, Ստեփանակերտ, 2014:

⁴ Տե՛ս **Մինասյան Թ.**, *Արցախի գրչության կենտրոնները*, Ե., 2015:

պատմության այդ արժեքավոր էջերը: Մյուս կողմից էլ՝ մեր նպատակն է ամբողջացնել 1639-1736 թթ. Արցախի մշակութային կյանքի ընդհանուր պատկերը, որը որպես այդպիսին կդիտարկվի առաջին անգամ:

Գիտական հետազոտության կարևորագույն խնդիրն է՝ արխիվային նյութերի, տպագիր սկզբնաղբյուրների և այլ գիտական ուսումնասիրությունների հիման վրա ցույց տալ, որ ժամանակաշրջանի մշակութային արժեքները ստեղծվել են Արցախի տարածքում՝ հայ մշակույթի անխոջ ներկայացուցիչների կողմից և, անշուշտ, համարվում են հայկական: Ցավոք, աշխատանքում ներկայացված բազմաթիվ մշակութային արժեքավոր նմուշներ ներկայումս գտնվում են Ադրբեջանի կողմից բռնագավթված տարածքներում, և հաճախ օտար ուսումնասիրողների (մի քանիսի տեսակետները ներկայացրել ենք աշխատանքում) կողմից պատմական փաստերի խեղաթյուրման արդյունքում վերագրվում են նրանց (խոսք վերաբերում է հատկապես Արցախի հյուսիսային տարածքներին):

Աշխատությունն ամփոփում է Արցախի մշակույթի ճյուղերից գրչության արվեստի, գիտակրթական կյանքի, կերպարվեստի, Ճարտարապետության, քանդակագործության, դեկորատիվ-կիրառական արվեստի զարգացման պատմությունը, որը ժամանակագրական առումով ընդգրկում է 1639-1736 թթ.: «Գրչության արվեստ» և «Գիտակրթական կյանք» խորագրերը կրող բաժիններում ներկայացրել ենք գրչության նշանավոր կենտրոնների՝ Դահլի վանքի, Ամարասի, Գանձասարի, Գոչավանքի, Խանաձախի, Ավետարանցի, Խզնավարի, Փառիսոսի, Երից Մանկանց վանքի, Ծարա երկրի, Ս. Հակոբա վանքի, Եղիշե Առաքյալ վանքի, Գանձակի, Սուլթանեցիքի, Լիզների, Մելիքզադայի, Խավունիսի,

Չարեքա վանքի, Պապաջանի, Քարահատի, Մոսոտի, Մեծ Ղարամուրատի, Սվրեցիքի, Հարցհանգիստի, Գուլլար գյուղի, Գետաշենի, Դաստիփյուրի, Պայանանց գյուղի, Քարատակի և այլ վայրերի ձեռագրերի պատմությունը: Ցույց ենք տվել հասարակական, մասնավոր, եկեղեցական, վանական դպրոցների գործունեության հիմնական ուղղությունները, դարաշրջանի կրթական համակարգի դրսևորման ձևերը, ընդգծվել է Գանձասարի Պետրոս Խանձքեցի կաթողիկոսի, Հովհաննես երեցի, Մարիամ ապաշխարողի, Մկրտիչ աբեղայի, Գրիգոր երեցի, Հովհաննես Ապահունեցու, Իգնատիոս Մեծշենցու, Սիմոնի, Մխիթարի, Բարսեղի, Արիստակես երեցի, Ստեփանոս սարկավագի, Սարգիսի, Վարդանի, Եսայի Հասան-Ջալալյանի և այլոց դերի կարևորությունը: Նշվել է գիտության բնագավառում հայ հոգևորական և հրատարակիչ Մատթեոս սարկավագ Ծարեցու գործունեության մասին, արժևորվել նրա դերը հայ տպագրության բնագավառում:

Արվեստի ճյուղերից՝ կերպարվեստին առնչվող հարցում անդրադարձել ենք գրչագիր մատյաններում արված գծանկարներին, գունանկարներին, անվանաթերթերին, խորաններին, լուսանցազարդերին, սրբապատկերներին, պատմողական թեմատիկ տեսարաններին և այլ զարդամոտիվներին: Վերլուծվել են մանրանկարչության և զարդանկարչության բնագավառներում անգնահատելի հետք թողած ծաղկողների՝ Գրիգորի (Չարեքա վանք), Գայանեի (Ավետարանոց), Գրիգոր քահանայի, Ղազար սարկավագի (Քարահատ), Ավետիս քահանայի (Պապաջան կամ Պապճան), Մովսես Գորիսեցու, Մովսես երեցի, Տեր Բարսեղի (Ծար գավառ), Բարսեղ քահանայի, Ղազար Սարկավագի, Հովհաննեսի (Հարցհանգիստ կամ Հերցանկիս), Գրիգոր երեցի (Գանձասար), Ստեփանոս սարկավագի (Շատախ), Գրիգոր երե-

ցի (Գանձակ), Նիկողայոսի (Գետաշեն) և ուրիշների ստեղծագործությունները: Ցանկանում ենք շեշտել, որ կերպարվեստին վերաբերող բաժնում անդրադարձել ենք միայն մանրանկարչության և զարդանկարչության դրսևորման ձևերին, քանզի տվյալ շրջանի որմնանկարչության, խճանկարչության, գեղանկարչության և դրանց հետ առնչվող որոշ խնդիրների վերաբերյալ շատ աղքատիկ նյութեր ենք գտել, որոնց պատճառով էլ Արցախի մշակույթի վերոնշյալ էջերը շարունակում են մնալ բաց: Հավելենք, որ երբեմն հայ կերպարվեստի ուսումնասիրման ընդհանուր համակարգում նաև դիտարկվում են արվեստի մնացած ճյուղերը՝ գրքարվեստը, քանդակագործությունը, դեկորատիվ-կիրառական արվեստը, նոյնիսկ ճարտարապետությունը¹, որոնք առավել հանգամանակից ուսումնասիրելու համար նախընտրեցինք ներկայացնել առանձին-առանձին:

Ճարտարապետության և քանդակագործության բաժիններում խորամուխ ենք եղել եկեղեցաշինության, բնակելի տների ձևերի՝ ապարանքների, ինչպես նաև կամրջաշինության, եկեղեցիների արտաքին պատերի, ճակտոնների, մուտքերի, պատուհանների շրջանակների ու գոտիների, զանգակատների, թմբուկների վրա արված գեղաքանդակների և այսպես կոչված «մանր պլաստիկա» (փոքր ձևերի քանդակագործություն) ձևերի նկարագրության վրա:

Դեկորատիվ-կիրառական արվեստին վերաբերող բաժնում մանրակրկիտ ներկայացրել ենք գորգագործության, ասեղնագործության, ժանեկագործության, արծաթագործության, ոսկեր-

¹ Մանրամասն տեսն **Ղազարյան Վ., Հակոբյան Հ., Հայ միջնադարյան կերպարվեստի պատմություն**, Ե., 2002:

չության, ակնագործության, փայտագործության դրսևորման ձևերն ու պատմությունը:

Պատմաշրջանի ընտրությունը պայմանավորված է նրանով, որպեսզի արխիվային վավերագրերի, աղբյուրագիտական և այլ փաստերի հիման վրա ցույց տրվի, որ չնայած 1639 թ. Կասր ի Շիրինի (Կասրե-Շիրին) պայմանագրի կնքումից հետո Արցախը, Արևելյան Հայաստանի մյուս շրջանների հետ հայտնվելով Սեֆյան Պարսկաստանի տիրապետության տակ, շարունակել է ոչ միայն հնարավորինս պահպանել դարեր ի վեր ստեղծված մշակութային ժառանգությունը, այլև ստեղծել նորերը: Խնդիրն այն է, որ հայկական մշակույթի կարկառուն ներկայացուցիչները, ունենալով սեփական մշակութային ավանդների հստակ գիտակցում և հաշվի առնելով նախորդ սերունդների վաստակը, ջանասիրաբար պայքարել են ազգային մշակութային համակարգի համալրման ուղղությամբ: Դրա վառ վկայություններն են քննարկվող ժամանակաշրջանում ստեղծված գրչության արվեստի, մանրանկարչության, զարդանկարչության, ճարտարապետության, քանդակագործության, գորգագործության, ասեղնագործության, ժանեկագործության, արծաթագործության, ոսկերչության, ակնագործության, փայտագործության նմուշները:

Նշենք, որ դարաշրջանի մշակութային կյանքի որոշակի առաջընթացը, թե՛ քաղաքական և թե՛ իրավական առումներով, բացատրվում է տարբեր հանգամանքներով, որոնցից ամենակարևորը համարում ենք մելիքական տների առկայությունը, որոնք դիտարկվել են որպես Հայոց պետականության դրսևորումներ: Դրանց շնորհիվ երկրամասում ստեղծվեց ինքնուրույն իրավական համակարգ, որի մասին ավելի հանգամանակից անդրադառնում ենք աշխատության առաջին բաժնում:

Աշխատության շարադրման համար աղբյուրագիտական հիմք են հանդիսացել Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող արժեքավոր ձեռագրերը, արխիվային վավերագրերը, տպագիր սկզբնաղբյուրները, պարբերական մամուլում լույս ընծայված նյութերը, նախախորհրդային, խորհրդային և հետխորհրդային շրջանի հետազոտողների աշխատությունները:

Արցախի գրչության արվեստի, գիտակրթական կյանքի, մանրանկարչության և զարդանկարչության հարցերի ուսումնասիրման խնդրում օգտագործել ենք Մատենադարանի ձեռագրերը¹, որոնցում արժեքավոր տեղեկություններ կան Արցախի՝ Դադի, Ամարասի, Գանձասարի, Գոչա, Սուրբ Հակոբա վանքերի, Ավետարանցի, Գյուլիստանի, Սուլթանեցիքի, Պապաջանի, Շատախի, Չարեքա վանքի, Բերդատակի (գյուղ Շամբորում), Ծարա երկրի, Քարահատի (գյուղ Գանձակում), Հարարի (Հագարեան երկիր), Երից Մանկանց վանքի, Համտիվնայի (գյուղ Գանձակում), Պապաջանի, Դաստափյուրի, Հարցհանգիստի, Լիզների (գյուղ Վարանդայում), Մեծ Ղարամուրատի, Գուլարի (գյուղ Գանձակում), Խզնավարի, Սարդարի թալայի, Եղիշե Առաքյալի վանքի, Փառիսոսի և այլ գրչության կենտրոնների, գիտության անխոջ ներկայացուցիչների Մխիթարի, Հովհաննես երեցի, Գրիգորի, Բարսեղի, Դավիթի, Սարգիսի, Մովսես Գորիսեցու, Հովհաննես Ապահունեցու, Գայանեի, Ավետիս քարտուղարի, Պաղտասար դպիրի, Իզնատիոս Մեծշենցու, Մարտիրոս Խնձորեկցու,

¹ Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), ձեռ. N 223, N 337, N 713, N 968, N 986, N 1032, N 1574, N 1626, N 2277, N 2404, N 2561, N 3196, N 3437, N 3446, N 3541, N 3542, N 3576, N 3601 N 3647, N 3813, N 3856, N 3888, N 3994, N 4053, N 4176, N 4228, N 4281, N 5072 , N 5143 , N 5636, N 5868, N 6705, N 6746, N 6771, N 7008, N 7606, N 7687, N 7821, N 7840, N 7980 , N 8504, N 8549, N 8678, N 8965, N 9043, N 9088, N 9448, N 9923, N 10044, N 10472, N 10660, N 10743, N 10863, N 10882, N 10966, N 11060 և այլն:

Մարիամ ապաշխարողի, Նազար դպիրի, Ստեփանոս սարկավագի, Ավետիս արեղա Քամալեցու, Եսայի Հասան-Ջալայյանի, Եփրեմ քահանայի, Հովհաննես երեցի և այլոց գիտակրթական գործունեության վերաբերյալ:

Վերոնշյալ ձեռագրերից արժեքավոր նյութեր ենք քաղել «Ավետում», «Ծնունդ», «Մկրտություն», «Երևումն հրեշտակի», «Խաչելություն», «Վերջին դատաստան», «Ավերումն դժոխաց», «Հոգեգալուստ», «Ավետարանիչ», «Անվանաթերթ Մատթեոսի», «Մարիամ Աստվածածին», «Հիսուս Քրիստոս», «Խորան», «Կիսախորան», «Տերունական», «Լուսանցազարդ», «Զարդագիր», «Թռչնագիր» և այլ մանրանկարների ներկայացման և վերլուծման, ինչպես նաև անվանաթերթերի վրա, խորաններում, լուսանցքներում, տերունական և սյուժետային մանրանկարների մանրամասներում, զարդաշրջանակների վրա արված զարդանկարների վերաբերյալ: Մանրանկարչության և զարդանկարչության վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ կան ծաղկողներ՝ Գրիգորի¹, Մովսես Գորիսեցու², Տեր Բարսեղի³, Գայանեի⁴, Գրիգոր քահանայի⁵, Մովսես երեցի⁶, Ստեփանոս սարկավագի⁷, Ավետիս քահանայի⁸ և այլոց ստեղծագործություններում:

Արխիվային վավերագրերից գիտական հետազոտության համար մեծ արժեք են ներկայացնում Ա. Երիցյանի⁹, Կաթողիկո-

¹ Տե՛ս ՄՄ, ձեռ. N986:

² Նույն տեղում, ձեռ. N 1626:

³ Նույն տեղում, ձեռ. N 2067:

⁴ Նույն տեղում, ձեռ. N 2404:

⁵ Նույն տեղում, ձեռ. N 3196:

⁶ Տե՛ս ՄՄ, ձեռ. N 3647:

⁷ Նույն տեղում, ձեռ. N N 5143:

⁸ Նույն տեղում, ձեռ. N 7687:

⁹ Տե՛ս Մատենադարան, Ա. Երիցյանի արխիվ, թղթ. 157, վավ. 1:

սական դիվանի¹, Հայաստանի ազգային արխիվի², Եղիշե Չաբենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի³ նյութերը:

Ժամանակաշրջանի վարչաքաղաքական, իրավական հարցերի վերլուծման տեսանկյունից աղբյուրագիտական հենք են հանդիսացել Հակոբ Կարնեցու⁴ (1639 թ. պայմանագրի վերաբերյալ), Առաքել Դավրիժեցու⁵ Զաքարիա Սարկավազ Քանաքեռցու⁶, *Զաքարիա Ազուլեցու*⁷, Աբրահամ Կրետացու⁸, Եսայի Հասան-Ջալալեանցի⁹, Աբրահամ Երևանցու¹⁰ աշխատությունները, ինչպես նաև այլ տպագիր սկզբնաղբյուրներ¹¹, որոնց ուսումնասիրությունները հիմնված են հեղինակների անձնական դիտարկումների, զանազան ճանապարհներով (այդ թվում՝ նաև հետախուզական) ձեռք բերված տեղեկատվության, բանավոր փո-

¹ Տե՛ս Յուզակ գրչագիր Մատինից Սրբազան Սարգիս արք. Հասան-Ջալալեանցի, Մատենադարանի արխիվ, Ֆ. Կաթողիկոսական դիվան, թղթ. 1 վավ. 79, թղթ. 228, վավ. 15, թղթ. 240, վավ. 132, թղթ. 240, վավ. 180:

² Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 332, ց. 1, գ. 778:

³ Տե՛ս Եղիշե Չաբենցի անվան Գրականության և արվեստի թանգարան (այսուհետ՝ ԳԱԹ), ֆոնդ Ս. Քանայլանի ց. 2, բաժին VI, N 28, 43, 44, ց. 4, բաժին IX, N 491:

⁴ Տե՛ս **Հակոբ Կարնեցի**, *Տեղագիր վերին հայոց*, Վաղարշապատ, 1903:

⁵ **Առաքել Դավրիժեցի**, *Գիրք Պատմութեանց*, Ամստերդամ, 1669: Տե՛ս նաև **նույնի՝ Պատմութիւն**, Վաղարշապատ, 1896:

⁶ Տե՛ս **Ջաքարեայ Մարկաազ**, *Պատմագրութիւն*, հ. 2, Վաղարշապատ, 1870:

⁷ Տե՛ս **Ջաքարիա Ազուլեցի**, *Օրագրութիւն*, Ե., 1938:

⁸ Տե՛ս **Աբրահամ Կրետացի**, *Պատմագրութիւն, անցիցն իւրոց եւ Նասր-Շահին պարսից*, Վաղարշապատ, 1870:

⁹ Տե՛ս **Եսայի Հասան Ջալալեանց**, *Պատմութիւն համառոտ Աղղամնից երկրի*, Երուսաղեմ, 1868: **Նույնի՝ Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղղամնից ի թուականին հայոց 1160, իսկ ի թուականին տեսառն մերոյ փրկչին Յիսուսի 1711**, Շուշի, 1839:

¹⁰ **Абраам Ереванци**, *История войн (1721-1736)*, Е., 1939:

¹¹ Տե՛ս **Ներսես Շնորհալի**, *Հիսուս որդի, Ամստերդամ, 1660-1661: Պատմագրութիւն փարոցն եւ գործոց Նաղարշ շահ քազառութիւն պարսից*, Մաղրաս, 1780-1783: Պատմութիւն հայկական սպարազորութեան սկզբնաղբյուրներն մինչ առ մեզ (1513-1895), Վենետիկ, 1895: Тбилисская коллекция персидских фирманов. Т. II., Составители, М.А. Годуа и И.К. Шамс, Тбилиси, 1989: Tadhkirat al-muluk, a manual of safaavid administration, by V. Minorsky, London, 1943 և այլն:

խանցված խոսքի վրա: Արցախի մշակույթի առանձին բնագավառների լուսաբանման գիտական հայեցակարգում արժևորվում են Մեսրոպ արքեպ. Սմբատեանցի¹, Յովհ. եպսկ. Շահխաթունեանցի², Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի³, Գարեգին Հովսեփյանի⁴, Խաչիկ Դադյանի⁵, Ե. Լալայանի⁶, Օ. Եզանյանի⁷, Ն. Պողարեանի⁸, Հ. Աճառյանի⁹, Հ. Քրիստեանի¹⁰ և այլոց աշխատությունները, որոնք դրսևորվում են որպես բացառիկ տպագիր սկզբնաղբյուրներ:

Թեմայի գիտական հետազոտության համար նշանակալի են պարբերական մամուլի հրապարակումները, մասնավորապես՝ «Ազգագրական հանդես», «Էջմիածին», «Նոր- Դար», «Մեղու Հայաստանի», «Արձագանք», «Արարատ», «Լուսնայ», «Բազմավկյ», «Բանբեր Մատենադարանի», «Ղարաբաղ», «Լրաբեր հասարակական գիտությունների», «Բանբեր Երևանի համալսարանի», «Պատմա-բանասիրական հանդես» և այլն¹¹:

¹ Տե՛ս **Մքստեանց Մ.**, *Նկարագիր Սորբ Կարապետի վանից Երևզակայ և շրջակայից նորա*, Տիֆլիս, 1904:

² Տե՛ս **Շահխաթունեանց Յովհ.**, *Ստորագրութիւն Կարողիկէ Էջմիածնի և հինգ գատասցն Արարատայ*, հ. Բ, Էջմիածին, 1842:

³ Տե՛ս **Կարապետ եպիսկոպոս, Դուինեանք և Մելիք-Շահնազարեանք**, *Նյութեր հայ մեկիբրոյան մասին*, պրակ. Բ, Էջմիածին, 1914:

⁴ Տե՛ս **Հովսեփեան Գ.**, *Հիշատակարանք ձեռագրաց*, հ. Ա (Ե դարից մինչև 1250), Անիփիսա, 1951:

⁵ Տե՛ս **Թօփճեան Յ.**, *Յուզակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898*, մասն Ա, Էջմիածին (Վարդաշապատ), 1898, մասն Բ, Էջմիածին, 1900:

⁶ Տե՛ս **Լալայան Ե.**, *Գանձակի գալիա. Պատմական համառոտ տեսություն*, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1899, N 5 (N 1):

⁷ Տե՛ս **Եզանեան Օ.**, *Գանձաաղբի հայերեն ձեռագրերի հավաքածուն*, «Էջմիածին», 1971, N Դ, էջ 59-62:

⁸ Տե՛ս **Պողարեան Ն.**, *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբեանց*, հ. VII, Երուսաղեմ, 1974:

⁹ Տե՛ս **Աճառեան Հ.**, *Յուզակ հայերեն ձեռագրաց Թավրիզի*, Վիեննա, 1910:

¹⁰ Տե՛ս **Քրիստեան Հ.**, *Վիշապը հայկական գորգերուն մէջ*, Վենետիկ, 1932:

¹¹ Այս պարբերականների մասին տե՛ս աշխատության վերջում ներկայացրած գրականության ցանկը:

Մենագրության մեջ ընդգրկված ժամանակաշրջանի Արցախի մշակութային կյանքի պատմության համակողմանի լուսաբանման համար մեծ նշանակություն ունի նախախորհրդային, խորհրդային և հետխորհրդային շրջաններում լույս ընծայված գրականությունը: Այս տեսակետից հատկանշական են Հայր Ղ. Ալիշանի¹, Մ. Բարխուտարեանցի², Ի. Պետրուշևսկու³, Պ. Հարությունյանի⁴, Լ. Մելիքսեթ-Բեկի⁵, Հ. Նաջարյանի⁶, Ս. Պողոսյանի⁷, Վ. Երկանյանի⁸, Թ. Հակոբյանի⁹, Յ. Սիմոնյանի¹⁰, Հ. Ժամկոչյանի, Ա. Աբրահամյանի, Ս. Մելիք-Բախչյանի, Ս. Պողոսյանի¹¹, Բ. Ուլուբաբյանի¹², Մ. Զուլպյանի¹³, Բաֆֆու¹⁴, Մ. Հասարթյանի¹⁵, Գ. Հարությունյանի¹⁶, Խաչիկ Ծ. վարդապետ Դատեանի¹⁷, Ա. Մա-

¹ Տե՛ս **Պետր Ալիշան**, *Այրարատ բնաշխարհի Հայաստանեաց*, Վենետիկ, 1890:

² Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, *Պատմորիկն Արտանից*, Թիֆլիս, 1907:

³ Տե՛ս **Петрушевский И.**, *Очерки по истории отношений в Азербайджане и Армении в XVI - начале XIX вв.*, Ленинград, 1949:

⁴ Տե՛ս **Арутюнян П.**, *Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века*, М., 1954:

⁵ Տե՛ս **Մելիքսեթ-Բեկ Լ.**, *Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին*, Կ. Գ., Ե., 1955:

⁶ Տե՛ս **Նաջարյան Հ.**, *Թորք-իրանական հարաբերությունները XVI դարում ու XVII դարի առաջին կեսին և Հայաստանը*, Ե., 1961, **նոյնի՝ 1639 թ. Թորք-իրանական հաշտության պայմանագիրը և Հայաստանը, Ե., 1969:**

⁷ Տե՛ս **Պողոսյան Ս.**, *Հայ ժողովրդի պատմություն*, IX-XIX, Կ. II, Ե., 1965:

⁸ Տե՛ս **Երկանյան Վ.**, *Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, 1870-1905*, Ե., 1970:

⁹ Տե՛ս **Հակոբյան Թ.**, *Երևանի Պատմությունը, 1500-1800 թթ.*, Ե., 1971:

¹⁰ Տե՛ս **Սիմոնյան Յ.**, *Այնարկներ հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության*, Ե., 1971:

¹¹ Տե՛ս **Ժամկոչյան Հ., Աբրահամյան Ա., Մելիք-Բախչյան Ս., Պողոսյանի Ս.**, *Հայ ժողովրդի պատմություն*, սկզբից մինչև XVIII դարի վերջը, Ե., 1975:

¹² Տե՛ս **Ուլուբաբյան Բ.**, *Խաչենի իշխանությունը*, Ե., 1975:

¹³ Տե՛ս **Զուլպյան Մ.**, *Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների*, գիրք Ա, Ե., 1990:

¹⁴ Տե՛ս **Раффи**, *Меликства Хамсы, 1600-1827*, Ե., 1991.

¹⁵ Տե՛ս **Հասարթյան Մ.**, *Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը*, Ե., 1992:

¹⁶ Տե՛ս **Հարությունյան Գ.**, *Արցախահայ դպրոցը 5-19-րդ դարերում*, Ստեփանակերտ, 2000:

¹⁷ Տե՛ս **Դատեան Խ.**, *Երկերի ժողովածու*, Ս. Էջմիածին, 2007:

ղայանի¹ և այլոց աշխատությունները, ինչպես նաև վերը նշված գրականությունը: Արժեքավոր տեղեկություններ կան «Դիվան հայ վիմագրության» (պր. 5, Արցախ, Եր., 1982) գրքում:

Աշխատանքի վերջում ներկայացրել ենք օգտագործված ձեռագրերի աղյուսակ, լուսանկարներ, որոնք ընթերցողին հնարավորություն կընձեռեն վերոնշյալ բնագավառների մասին ունենալ ընդհանուր պատկերացում:

Աշխատությունը ունի գիտագործական նշանակություն: Խնդրո առարկայի մանրակրկիտ լուսաբանումը ևս մեկ անգամ պատմական և իրավական առումներով հիմք կծառայի ազգային ավանդույթների պահպանության, ինչպես նաև օտարների կողմից անընդհատ յուրացումների մասին թյուր կարծիքներին հակառակն ապացուցելու գերխնդրին:

¹ Տե՛ս **Մաղալյան Ա.**, *Արցախի մեղիքությունները և մեղիքական տները XVII-XIX, Ե.*, 2007:

§ 1. ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐ

XVI դարի սկզբներից մինչև XVII դարի 30-ական թվականների վերջերը ընդգրկող ժամանակաշրջանը հայ ժողովրդի պատմաքաղաքական կյանքում դրոշմվեց որպես նոր աղետներով ու փորձություններով լի ժամանակաշրջան: Խնդիրն այն է, որ Սեֆյան¹ Իրանը և Օսմանյան կայսրությունը, շարունակելով իրենց նվաճողական քաղաքականությունը, փորձում են քաղաքական առաջնության հասնել Առաջավոր Ասիայում: Մյուս կողմից էլ նրանց միջև անընդհատ մղվող պատերազմների առիթը բխում էր կրոնական մոլեռանդությունից. շահ Իսմայիլը երկրի պետական կրոն հայտարարելով շիիզմը, իսլամի մյուս տարատեսակի՝ սուննիզմի հետևորդների դեմ անհաշտ պայքար սկսեց: Սուննիզմը հովանավորող Թուրքիան ընդունեց այդ մարտահրավերը: Այս պարագայում, երկու պետությունների կողմից ծավալված ռազմական գործողությունների թատերաբեմ դարձել էր Հայաստանը: Ստեղծված իրավիճակը կարելի է բացատրել մի քանի հանգամանքներով. 1) պատերազմող յուրաքանչյուր կողմը՝ ռազմագիտական տեսակետից հանձին Հայաստանի տեսնում էր որպես կարևորագույն վարչական միավորի, որի նվաճումից հետո, կհայտնվի հակառակորդ երկրին դեմ-հանդիման: 2) Հայաստանը տնտեսական ու ռազմական հզորացման աղբյուր էր նրանց համար: 3) Ռազմաստրատեգիական նշանակություն կու-

¹ 1502 թ. շահ Իսմայիլը, պարսոթյան մատնելով աղ (սկ)–կոյունլուներին և գրավելով մայրաքաղաք Թավրիզը, հիմք դրեց կղզրաշների (ղզրաշների) Սեֆյան պետությանը:

նենա երկու կողմերի համար՝ տարածքների ընդարձակման տեսակետից և այլն:

XVI–XVII դդ. թուրք-պարսկական պատերազմները ավարտվեցին 1639 թ. մայիսի 17-ին Կասրե-Շիրինի¹ (սակ՝ Կասր ի Շիրին, գտնվում է Տիգրիս գետի ճախափնյա Դիալա վտակի ավազանում²) պայմանագրով՝ մասնակի փոփոխություններով վերահաստատվել են 1555 թ.-ի Ամասիայի պայմանագրով ամրագրված սահմանները: Պայմանագիրը թուրքական կառավարության կողմից ստորագրեց մեծ վեզիր Քեմենքեշ Կարա փաշան (ըստ Հակոբ Կարնեցու՝ Մուստաֆա)³, իսկ Իրանի կառավարության կողմից՝ արտակարգ դեսպան Սարուխանը⁴ (ըստ Ջաքարիա Սարկավազի՝ Ջազաթա-Քոթուկ-Մահմադ խան)⁵: Պայմանագրի համաձայն՝ Հայաստանը կրկին բաժանվեց երկու տերությունների միջև. արևելյան մասը անցավ Պարսկաստանին, արևմտյանը՝ Օսմանյան կայսրությանը: Պարսկաստանին (Իրանին) անցան Արևելյան Հայաստանի հետևյալ նահանգներն ու գավառները՝ Գուգարքը, Շիրակի և Արշարունիքի մի մասը, Արարատյան դաշ-

¹ Պայմանագրի մասին մանրամասն տե՛ս Թորքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Բ, Ե., 1964, էջ 114: **Նաջարյան Հ., Թորք-իրանական հարաբերությունները XVI դարում ու XVII դարի առաջին կեսին և Հայաստանը**, Ե., 1961, էջ 262: **Նույնի՝ 1639 թ. Թորք-իրանական հաշտության պայմանագիրը և Հայաստանը**, Ե., 1969, էջ 20: **Հակոբյան Թ., Երևանի Պատմությունը (1500–1800 թթ.)**, Ե., 1971, էջ 50: **Քայրուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն**, Ե., 2011, էջ 279: **Келоразии Мир Нуроддин Н., Военно-политические и дипломатические отношения Ирана с Бухарским и Хивинским ханствами в XVII-первой половине XVIII вв.**, диссертация, Душанбе, 2015, с. 22.

² **Մալխասյան Մ., Հայաստանը 15–17-րդ դարերում**, Քրիստոնյա Հայաստան. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ, 2010, 15 Ապրիլի 2010 թ. հոկտեմբերի: Տե՛ս նաև <http://kh-tert.livejournal.com/29458.html>

³ **Հակոբ Կարնեցի**, նշվ. աշխ., էջ 32:

⁴ **Նաջարյան Հ., 1639 թ. Թորք-իրանական հաշտության պայմանագիրը և Հայաստանը**, էջ 21: Տե՛ս նաև Թորքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Բ, էջ 114:

⁵ **Ջաքարեայ Մարկուսազ Քանաքեցի**, նշվ. աշխ., էջ 25:

տը՝ նրա շրջակա գավառներով, Սյունիքն ու Արցախը և Վասպուրականի արևելյան մասը, Արևելյան Վրաստանը (Քարթլի և Կախեթի թագավորություններ)¹, Շիրվանը (մինչև Դերբենդ) և Ատրպատականը, իսկ Օսմանյան կայսրությանը՝ Հայաստանի մեծ մասը՝ Այրարատյան նահանգի հարավային գավառները, Տուրքերանի նահանգը, Վասպուրականի արևմտյան մասը՝ Վան քաղաքով, Աղձնիքը, Ծոփքը, Բարձր Հայքը, Բասենն ու Վանանդի գավառը, Արևմտյան Վրաստանը (Իմերեթ, Մեգրելիա, Սվանեթիա, Գուրիա), Աբխազիան, Միջագետքը (Մոսուլով և Բաղդադով)²:

Թուրք-պարսկական սահմանն անցնում էր հյուսիսում Իմերեթի և Քարթլիի թագավորությունների միջև սահմանագծով, այնուհետև՝ դեպի հարավ-արևելք՝ Ախալցխան ու Ախալքալաքը թողնելով թուրքերին, իսկ Փարվանա լիճը՝ պարսիկներին: Իջնելով ուղիղ հարավ՝ սահմանն անցնում էր Ախուրյան գետի հունով և հասնում մինչև Արաքս գետի հետ միախառնման տեղը: Այնուհետև անցնելով Հայկական պար լեռնաշղթայով՝ թեքվում էր դեպի արևելք և Սիս ու Մասիս լեռներով հարավում հասնում մինչև Վասպուրականի լեռները, որտեղից էլ շարունակվում էր դեպի հարավ՝ Միջագետքը թողնելով թուրքական կողմում³: Այս բաժանումը անփոփոխ մնաց մինչև XIX դ. առաջին քառորդը:

¹ Տե՛ս Մելիքսեթ-Քեյ Լ., *Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին*, Կ. Գ., Ե., 1955, էջ 64:

² Մալխասյան Մ., *Պատմա-ժողովրդագրական ուսումնասիրություններ, գիտական հոդվածների ժողովածու*, Ե., 2015, էջ 23: Տե՛ս նաև Նաջարյան Հ., 1639 թ. Թուրք-իրանական հաշտության պայմանագիրը և Հայաստանը, էջ 27:

³ Մալխասյան Մ., նշվ. աշխ., էջ 23: Տե՛ս նաև «Հայաստանի ազգային առլաս», Կ. Բ., էջ 50, քարտեզ՝ 17-րդ դարի 1-ին կեսին, հեղինակ՝ Բադալյան Գ., մասշտաբ՝ 1:3 600 000, Ե., 2008: Ժամկոչյան Հ., Աբրահամյան Ա., Մելիք-Բախշյան Ս., Պողոսյան Ս., Հայ ժողովրդի պատմություն (սկզբից մինչև XVIII վերջը), Ե., 1975, էջ 615–616: Հակոբյան Թ., *Հայաստանի պատմական աշխարհագրություն*, Ե., 1968, էջ 378:

1639 թ. հաշտության պայմանագիրը թեև կնքվեց երեսուն տարով, բայց այն տևեց ավելի քան ութսուն տարի՝ մինչև 1723 թ.: Հարկ է նշել, որ պայմանագրով ամրագրված իրավական դրույթները առանձնապես ծանր էին Այսրկովկասի երկրների, հատկապես Հայաստանի համար, որոնք կանգնած էին տնտեսական և մշակութային զարգացման ավելի բարձր մակարդակի վրա, քան նրանց օտարերկրյա զավթիչները: Այնուամենայնիվ, պատերազմների հետևանքով տեղի ունեցած արյունահեղություններն ու ավերածությունները հաշվի առնելով, նշենք, որ հաստատված ժամանակավոր խաղաղությունը փրկություն էր պատերազմների արհավիրքներից տուժած Այսրկովկասի ժողովուրդների համար, ովքեր ուրախությամբ ընդունեցին հաշտության լուրը: Այս մասին՝ Մատենադարանում պահվող գրիչ Մարտիրոսի ձեռագրից (Մատ., ձեռ. 7087, թ. 363բ) հետաքրքիր մեջբերում է կատարել Մ. Զուլայանը. «Փառք իր առատ բարերարութեան, իր առատ գըթութեամբն գթութին ձգեալ ի սիրտս թագաւորաց, վասն ողորմեալ հայոց ազգիս եւ արարեալ սահման եւ խաղաղութին եւ բարիշութին: Եւ ետուր թագաւորն արեւել[ե]լան Բաբելոնի բերդն ի ձեռն արեւմտեան թագաւորին, եւ եղեւ բարիշութին ի թվականիս հայոց ՌՁԸ. (1639). ամէն. Հայր մեր»¹:

1639 թ. հաշտության մասին հետաքրքիր հիշատակություն ունի Ժ. Շարդենը. «Աշխարհում չկա մի այլ երկիր, ուր տեղի ունեցած լինեին այդքան շատ արյունալի ճակատամարտեր Հայաստանը հանդիսացավ ռազմական գործողությունների թատերաբեմը թուրքերի և պարսիկների մղած վերջին պատերազմներում: Թուրքերը կռվում էին ամբողջ Հայաստանը նվաճելու հա-

¹ Տե՛ս **Զուլայան Մ.**, *Հայ ժողովրդի XIII–XVIII դարերի պատմության հարցերը քստ եվրոպացի հեղինակների*, գիրք Ա, Ե., 1990, էջ 173:

մար, սակայն բավարարվեցին այն բաժանելով պարսիկների հետ, այդուհանդերձ նրանք տիրեցին նրա մեծագույն մասին»¹:

Հայ պատմագիրներն ու մյուս հեղինակները, յուրովի գնահատելով հաստատված խաղաղությունը և երկրի տնտեսական ու մշակութային կյանքի որոշակի բարելավումը, մեծ նշանակություն են տվել այդ հաշտությանը: Ժամանակագիր Հակոբ Կարնեցին, բարձր գնահատելով 1639 թ. հաշտության պայմանագիրը, գրում է, որ մինչ այդ բազմիցս, գրեթե ամեն տարի թուրքերը և նրանց չզիջող պարսիկները բարբարոսաբար ասպատակում էին մեր երկիրը, մանուկներին գերում, ծերերին սրի քաշում, իսկ բնակավայրերը՝ հրո ճարակ դարձնում, քանդում ու ավերում էին ամեն ինչ և անապատի վերածում մեր երկիրը: Ժամանակագիրը նկարագրում է հետևյալ խոսքերով. «...Զի այն ժամանակն մեծ թուրքս այս մարտ մտեալ էր Պարսից, ՌԼԵ. (1586) թվէն ի վեր պատերազմէին եւ աիրէին գերկիրս մինչև ՌՁԹ. (1640) թվին, որ գնաց Սուլթան Մուրատն տասն անգամ ՃՌ.(100.000) ոգով եւ էառ զԲաբելոն ի ճեռաց Պարսիցն...Մուստաֆա վագիրն...այս կողմանց բերդորէից պահապանք ըստ իրեանց յաջող ժամուն ելանէին ամենայն տարի բազում զօրօք եւ գնացեալ երկիրն Երևանայ, Չորսայ, Լօռու եւ Բամբկաձորու ասպատակէին, երէին եւ աւերէին, մեծամեծսն ի սուր քարշէին, զկին և ըզտղայսն գերի բերէին: Նմանապես Պարսիկքն քան զսոսա եւ անողորմք եւ բարբարոսք ամենայն կողմաց ելանէին գաղտագողի ասպատակէին Կարսայ եւ Անու երկիրն, Վանայ ծովափն ամենայն մինչև ի դաշտն Մշու եւ Խնուսայ գերէին եւ աւեր էին զկին և զտղայսն գերի տանէին...»²: Զաքարիա Քանաքեռցին մեծ ուրախությամբ

¹ Տե՛ս մեջբերումը ըստ՝ **Ջուլայան Մ.**, նշվ. աշխ., էջ 173:

² **Հակոբ Կարնեցի**, նշվ. աշխ., էջ 32–33:

նշում է. «... Սոցին պատմութիւնս յետոյ արասցուք: Այսքան թագաւորացս ժամանակ խաղաղութիւն է 'ի մէջ Պարսից և Տաճկաց: ... Զի 'ի Կոստանդնուպօլսէ մինչ 'ի Ասպահան երթեւեկութիւն է առանց եկիրի և ահու»¹:

Թուրք-պարսկական արշավանքների հետևանքով Արցախում տեղի ունեցած ավերածությունների մասին նկարագրում է Առաքել Դավրիժեցին. «...կոտորէր զբազումս յամենից ազգաց մինչ բազումք տունք անտերունչք և բազումք հարք և մարք անգաւակք մնացին և երկիրս Աղուանից ի մէջ այսպիսոյ վտանկի գալով զմեռեալսն սգալով եւ զկենդանի զանկեալսն եւ զինքեանս եւս հոգալով մտածմամբ ասէին՝ ոհ թէ զերծանիմք՝ ի տարածամէ մահուանէս՝ թե ոչ...»²: Այնուհետև մեծ ոգևորությամբ նշում է. «...Թուին ՌՁԹ. (1640) եղև բարիշուքին ի մէջ երկուց ազգացն, եւ թագաւորացն Օսմանցոց եւ Պարսից զի թագաւորն Պարսից Շահսէֆի զԵրևան էառ, եւ թագաւորացն Օսմանցոց սուլթան Մուրատն զԲաղդատ էառ, յետ առնլոյ զքաղաքս զայսոսիկ միաբանեցան երկոքին թագաւորքն եւ արարին բարիշուքին, պայման եղեալ մինչև ցերեսուն տարի պահել զբարիշուքինն: Վասն որոյ ամենայն աշխարհք արեւելեայք եւ արեւմտեայք օրինեն և ողորմի տան երկուց թագաւորացն, զի կեան ի խաղաղութեան զի նախքան զբարիշուքին ի փախստեան եւ ի թաքստեան կային, ի յափշտակութեան եւ յաւարառութեան, ի գերութեան եւ ի սպանութեան, ի սով, եւ ի սուր, եւ մանավանդ ողորմելի ազգս Հայոց»³:

Մեր կարծիքով այդ պայմանագրի կնքումը ճիշտ է մեծ խաղաղություն բերեց Այսրկովկասի ժողովուրդներին, սակայն դրան

¹ **Ջաքարեայ Սարկսազ**, *նշվ. աշխ.*, էջ 26:

² **Առաքել Դավրիժեցի**, *Գիրք Պատմութեանց*, էջ 577:

³ **Առաքել Դավրիժեցի**, *Պատմութիւն*, էջ 575–576:

պատմական մեծ նշանակություն տալու որոշ ուսումնասիրողների տեսակետների հետ համամիտ չենք, քանի որ Հայաստանի երկու հատվածներն էլ շարունակում էին մնալ օտար տիրապետությունների տակ՝ իրենց վրա կրելով վերջիններիս իրավական համակարգի և տնտեսական, մշակութային տարրերի ազդեցությունը:

1639 թ. հաշտության պայմանագրի կնքումից հետո թե՛ Օսմանյան կայսրությունում, թե՛ Սեֆյան Պարսկաստանում տեղի ունեցան վարչաիրավական փոփոխություններ:

Սեֆյանների օրոք Իրանը բաժանված էր վարչական չորս վիճակների՝ Իրաք, Ֆարս (նաև՝ Պարս, նահանգ և պատմական երկրամաս Իրանի հարավում, Պարսից ծոցի ափին), Ատրպատական¹, Խորասան: Հիշատակենք, որ պարսից պետության վարչատարածքային կառուցվածքի, կրոնական իշխանությունների գործառության համակարգի, բարձրաստիճան անձաց կոչումների և այլ մանրամասնությունների մասին հետաքրքիր տեղեկություններ կան «Թագքիրաթ ալ-մուլուք»-ում (ըստ Պետրուշեվսկու՝ այս փաստաթուղթը ստեղծվել է մոտ 1725 թ.)²: Ըստ այդ աշխատության՝ մինչև 1722 թ. Իրանում կար 4 վալի (փոխարքա) և 13 բեկլարբեկություններ (գորապետություն)³: Այսպես կատարվում էր համարվում Քարթլի-Կախեթի թագավորությունը⁴: Իսկ Բեկլարբեկության կարգավիճակ ունեին Ատրպատակա-

¹ Հնում Ատրպատականը պատմական Հայաստանի հարավ-արևելյան մասն էր կազմում և իր մեջ ընդգրկում էր Հայոց Պարսկահայք և Փայտակարան նահանգները, Վասպուրականի մի մասը (մանրամասն տե՛ս **Ֆրանգեան Ե.**, *Ատրպատական*, Թիֆլիս, 1905, էջ 7: **Ինճիճեան Ղ.**, *Աշխարհագրորին չորից մասանց աշխարհի*, մասն առաջին, Կ. Ա. Վեներտիկ, 1806, էջ 401):

² **Петрушевский И.**, *Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI - начале XIX вв.*, Л. 1949, с. 53.

³ Մանրամասն տե՛ս Tadhkirat al-muluk, a manual of safaavid administration, by V. Minorsky, London, 1943. <http://www.iranicaonline.org/articles/tadkerat-al-mohuk>. **Петрушевский И.**, նշվ. աշխ., էջ 54:

⁴ **Петрушевский И.**, նշվ. աշխ., էջ 54:

նի, Մակուի, Երևանի (Չուխուր-Սաադ կամ Չուգուր-Սաադ¹), Ղարաբաղի, (Գանձակի) և Շիրվանի² նահանգները:

Պարսկաստանին անցած հայկական նահանգներում կազմավորվեցին պարսկական արքունիքին ենթակա ինքնուրույն վարչատարածքային միավորներ, որոնք Սեֆյան տիրապետության ընթացքում անվանվում էին բեկլարբեկություններ (նաև՝ վիլայեթ, բեյլերբեյություն, խանություն) Շաքիի, Շիրվանի, Ղուբայի, Երևանի, Նախիջևան-Սյունիքի, Գանձակ-Արցախի (Ղարաբաղի) և այլն³: Վերջիններս իրենց հերթին բաժանվում էին ավելի փոքր վարչական միավորների՝ մահալների, որոնց կառավարիչները նշանակվում էին խանի կողմից և կրում էին սուլթան, բեկ, մելիք և այլ անուններ⁴:

Ղարաբաղի վիլայեթը, որն իր կենտրոն Գանձակի⁵ անուսով կոչվում էր նաև Գանձակի բեկլարբեկություն (խանություն),

¹ Անվանումն առաջացել էր ոմն Ամիր-Սաադի անունից, որը համարվել էր XIV դարի բուրքմենական մի քանի ցեղերի ցեղապետը: Մոտավորապես նույն ժամանակներում էլ այդ ցեղերի հիմնական բնակավայրը հանդիսացող Երասխաձորը, Սուրմալուի դաշտը և մերձակա այլ վայրերը անվանվում են «Չուխուր-Սաադ» կամ «Սաադի փոս», հայկական աղբյուրներում «Սահաբա փոս» կամ «Երկիրն Սահաբո» (տե՛ս **Փառիսազյան Հ.Ղ., Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԵ դ.)**, «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտութ.), 1960, № 7–8, էջ 25: **Ինճիճյան Ղ.**, նշվ. աշխ., էջ 255: **Ղևոնդ Ալիշան, Այլարատ բնաշխարհի Հայաստաննայց**, Վենետիկ, 1890, էջ 284):

² Ներկայումս քաղաքը գտնվում է Ադրբեջանի կողմից բռնազավթված տարածքներում: Շիրվան քաղաքի տեղադրման վերաբերյալ հետաքրքիր հիշատակություն ունի Ղ. վրդ. **Ինճիճյանը** (տե՛ս **Ինճիճյան Ղ.**, նշվ. աշխ., էջ 415):

³ Օսմանյան կայսրության անցած Արևմտյան Հայաստանի տարածքը ևս բաժանվել էր վարչական միավորների՝ էյալեթների (նաև՝ փաշայություններ): Հայտնի էին Կարինի (Էրզրումի), Կարսի, Վանի, Խարբերդի (Մալաթիայի), Սեբաստիայի (Սվազի), Դիարբեքիի, Բիթլիսի (Բաղեշի), Բայազետի: Վերջիններս էլ իրենց հերթի բաժանվել էին ավելի փոքր վարչատարածքային միավորների՝ սանջակների (գավառներ), սանջակները՝ կազաների (գավառակներ), իսկ կազաներն էլ՝ մահիենների(գյուղախմբերի):

⁴ **Հակոբյան Թ.**, *Հայաստանի պատմական աշխարհագրություն*, էջ 380:

⁵ Ադրբեջանցի հետազոտող Էլշար Բամախովը Գանձակը նշում է որպես Ղարաբաղի բեկլարբեկության մայրաքաղաք: Այստեղ հետաքրքիրն այն փաստն է, որ ադրբեջանցի հետազոտողը ևս ընդունում է՝ այդ շրջանում Արցախի (Ղարաբաղի) որպես առանձին վարչական միավորի առկայությունը (տե՛ս **Исмаилов Э.**, *Очерки по истории Азербайджана*, М., 2010, с. 129):

ընդգրկում էր Կուրից մինչև Արաքս ընկած մի ընդարձակ տարածություն: Նրա լեռնային շրջանները համապատասխանում էին պատմական Մեծ Հայքի Արցախ նահանգի և Գարդման-Փառիտսի ու Ծավդեից երկրներին: Գանձակի բեկլարբեկերի մասին հետաքրքիր նյութեր կան Ա. Երիցյանի ֆոնդում¹: Իսկ վավերագրի էջերից մեկում նշվում է, որ Գանձակի խանը միաժամանակ Արցախի բեկլարբեկն էր. «...յիշեցաք՝ բեկլարբեկին Արցախայ որ էր խանն Գանձակայ»²: Սա ևս մեկ անգամ վկայում է, որ Արցախն այդ ժամանակ ընդգրկված էր Գանձակի բեկլարբեկության կազմի մեջ: Ավելին, պարսկական հրովարտակներից մեկում նշվում է, որ Ղարաբաղի բեկլարբեկը համարվում էր նաև Կախեթի հաքիմը³, իսկ նրա նստավայրը Գանձակ քաղաքն էր: Այսինքն, կարելի է ենթադրել, որ այս իրավիճակը շարունակվել էր մինչև Նադիր շահի կողմից Արցախի ինքնուրույնության ճանաչումը (Խամսայի⁴ ձևավորումը):

Ինչպես մյուս բեկլարբեկություններում⁵, այնպես էլ Գանձակի բեկլարբեկությունում իշխանությունն ամբողջությամբ գտնվում էր պարսիկ պաշտոնյաների ձեռքում: Բարձրագույն պաշտոնյան բեկլարբեկն էր (կամ խանը), որին ենթարկվում էին մնացած բոլոր պաշտոնյանները: Նա նշանակվում էր շահի կողմից՝ անորոշ ժամանակով: Նրա պարտականությունն էր հետևել

¹ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Ա. Երիցյանի արխիվ, թղթ. 157, վավ. 1:

² Նույն տեղում, էջ 14:

³ Тбилисская коллекция персидских фирманов. Т. II., Составители, М.А. Тодуа и И.К. Шамс, Тбилиси, 1989, с. 26–27.

⁴ ԳԱԹ-ի արխիվային վավերագրերից մեկում նշվելով Բաֆֆու «Խամսայի մելիքություններ» արժեքավոր աշխատության մասին, ընդգծվում է, հետևյալ վերնագրի անունը՝ «Որպիտաթինը Խամսայ Գանձակայ»: Այստեղից կարելի է ևս ենթադրել, որ մինչ Խամսայի ձևավորում Արցախը ընդգրկված էր Գանձակի բեկլարբեկության կազմի մեջ (Ս. Բամալյանի ֆոնդ, ց. 4, քաժին IX, N 491, էջ 2:)

⁵ Մանրամասն տես՝ **Պողոսյան Ս.**, *Հայ ժողովրդի պատմություն (IX–XIX)*, հ. II, Ե., 1965, էջ 224–225:

բեկլարբեկության ներքին կարգ ու կանոնին, այն պաշտպանել դրսի հարձակումներից, բաշխել հարկերն ու տուրքերը՝ ըստ շրջանների, և վերահսկել դրանց գանձումը: Վերջիններս պատերազմի ժամանակ զինված ուժերի հրամանատարներն էին: Բեկլարբեկն է դատում ծանր հանցագործությունները կամ հաստատում նման հանցանքների վերաբերյալ կայացված վճիռները¹:

Խանի (բեկլարբեկի) պալատին կից կային գրասենյակներ՝ իրենց պաշտոնյաներով՝ ծախսարարներ (հիմնարկության գնումներ կատարող պաշտոնյա²), հարկահավաքներ և այլն: Խանի հայեցողության տակ կային որոշ թվաքանակով գորամիավորումներ, որոնք խաղաղ ժամանակ տեղաբաշխվում են հայկական բնակավայրերում. վերջիններս էլ խաղաղ բնակչության նկատմամբ թույլ էին տալիս մի շարք կամայականություններ:

Գանձակի բեկլարբեկությունը բաժանված էր մի քանի մահալների (արաբերեն բառ է, նշանակում է գավառ, նաև՝ մելիքություն), որոնցից աչքի են ընկնում Արցախի հյուսիսային հատվածի³ Ոսկանապատի, Գետաշենի Մելիք-Մնացականյանների, Կրզենի (այժմ կոչվում է Կիրզան, ներկայումս գյուղը գտնվում է Ադրբեջանի Թովուզի շրջանում), Բադայի (այժմ կոչվում է Բադաբենդ, ներկայումս գտնվում է Ադրբեջանի Շամքորի շրջանում), Հարցհանգիստի (Չովդառ), Բանանցի մելիքությունները, որոցից

¹ Ընդհանրապես խամոթյուններում դատավարությունը գրեթե ամբողջությամբ գտնվում էր մահմեդական հոգևորականության ձեռքում: Գատական օրենքները սահմանված էին Գուրբանի սկզբունքներով (տե՛ս **Ժամկոչյան Հ., Արբահամյան Ա., Մելիք-Բախաջյան Ս., Պողոսյան Ս.**, նշվ. աշխ., էջ 620–621):

² Տե՛ս **Ադայան Է.**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, էջ 621:

³ Հյուսիսային Արցախը ըստ «Աշխարհացույց»-ի՝ ներառում է պատմական Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգներից 3-ական գավառներ. Արցախից՝ Քուսախ-Փառնես, Կոռք և Մեծ Կողմանք (կամ Մեծ Կվենք), իսկ Ուտիքից՝ Տոս-Քուստակ, Գարդման, Շակաշեն: Այսինքն, Արցախի դաշտային կամ ստորին գավառներ և լեռային գավառներ կամ միջև Արցախ (մանրամասն տե՛ս **Բարխուտարեանց Մ., Արցախ**, Բաբո, 1895, էջ 22–25, Ե., 1996, էջ 15–19):

յուրաքանչյուրը իրենց տիրույթում ունեւ հինգ և ավելի գյուղեր¹: Ավելի հզոր ու ընդարձակ էին Դիզակի², Վարանդայի³, Խաչենի, Ջրաբերդի, Գյուլիստանի մահալները: Այդ մելիքությունները⁴ վարում էին ներքին ինքնավարություն⁵: Վերջիններս կառավարվում էին հայ մելիքների⁶ կողմից, որոնք կախում ունեւին միայն Գանձակի խանից, հետագայում՝ Պարսից շահից:

Պետք է նշել, որ պարսից շահերի՝ հայերի նկատմամբ ունեցած երբեմնի «բարյացակամ» վերաբերմունքը բխում էր իրենց երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական շահերից. այսպես, Պարսկաստանի տիրապետության շրջանում Արցախում մելիքական կարգի հաստատմանն ու մելիքությունների ընդարձակ իրավունքների պահպանմանը նպաստած հանգամանքներից մեկն այն էր, որ սկսած Շահ Աբբասից⁷ (1571-1629 թթ., Իրանի Սեֆյան հարստության շահ՝ 1587-ից), Իրանի տիրակալները, լավ ծանոթ լինելով հայ զինվորների քաջությանը, փորձում էին նրանց զինվորական ուժը օգտագործել՝ Օսմանյան կայսրության նվաճողա-

¹ **Նարայնայան Ա.**, *Հյուսիսային Արցախ*, Ե., 2004, էջ 11:

² Դիզակ գավառի գյուղերի վերաբերյալ տե՛ս ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 87, էջ 25:

³ Վարանդա գավառի գյուղերի ցանկի մասին տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 1, էջ 41-42:

⁴ Մելիքությունների մասին տե՛ս **Րաֆֆի**, *Խամսայի մելիքությունները*, Թիֆլիս, 1882: **Ղահրամանյան Կ.**, *Հյուսիսային Արցախ*, գիրք. Ա, Ե., 1993: **Մաղալյան Ա.**, *Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX*, Ե., 2007:

⁵ **Петрушевский И.**, նշվ. աշխ., ց. 59.

⁶ «Մելիք» տերմինի մասին մանրամասն տե՛ս **Րաֆֆի**, *Խամսայի մելիքությունները*, Թիֆլիս, 1882, էջ 2: **Աճառյան Հ.**, *Հայերեն արմատական բառարան*, Ե., 1930, հ. Գ, էջ 294: **Պողոսյան Ֆ.**, *Խամսայի մելիքների իրավունքներն ու պարսականությունները*, «Բանբեր Հայաստանի արխիվների» (այսուհետ՝ ԲՀԱ), Ե., 1966, N 1(13), էջ 197-198: **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. Գ, գիրք երկրորդ, Ե., 1973, էջ 16: **Ուլուբաբյան Բ.**, *Խաչենի իշխանությունը*, Ե., 1975, էջ 416: **Նույնի**, *Արցախի պատմություն*, (սկզբից մինչև մեր օրերը), Ե., 1994, էջ 130: **Մաղալյան Ա.**, նշվ. աշխ., էջ 32: **Նույնի**, *Арцахские мелккства и возникновение Карабахского ханства*, Русский сборник: Исследования по истории, Модест Колеров, 2010, том III, ց. 8: **Աբրահամյան Հ.**, Արցախը 18-19-րդ դարերում, Ե., 2015, էջ 19:

⁷ Շահ Աբբասի խորամանկ դիվանագիտական քաղաքականության մասին տե՛ս Գ.ԱԹ, Ս. Քամալյանի ֆոնդ, ց. 1, բաժին II, N 67, ք. 1-2:

կան քաղաքականության դեմ: Այդ իսկ պատճառով վարում էին այսպես կոչված սիրաշահողական քաղաքականություն: Դրա վառ վկայությունն այն է, որ Իրանի խորամանկ տիրակալ Շահ Աբբասը (նաև նրա հաջորդները), որը հայության նկատմամբ կատարել էր բազմաթիվ դաժանություններ¹, խրախուսեց մելիքական կարգը², օրինականացրեց նրանց իրավունքներն ու պարտականությունները: Մյուս կողմից էլ՝ հայոց երկրի հարուստ տնտեսական ռեսուրսները փորձում էին օգտագործել իրենց երկրի ռազմաարդյունաբերության զարգացման համար: Հավելենք, որ մելիքների լիազորությունների շրջանակը ավելի ընդարձակվեց Նադիրի³ կառավարման տարիներին (1736-1747 թթ., Աբրահամ Երևանցու մոտ՝ Թահնագկուլի խան⁴):

Արցախի մելիքները հանդիսանում էին իրենց գավառների տիրակալները: Վերջիններս, ինչպես վերը նշվեց ենթարկվում էին միայն Գանձակի բեկլերբեկին, իսկ հետագայում՝ Նադիր շահի օրոք, նրանք անմիջապես ենթարկվում էին շահին: Գավառներում մելիքական իրավունքը հաստատվում էր շահի հրովարտակով: Այս մասին Լեոն նշում է. «Շահական հրովարտակներով այսպես էր պատկերանում մելիքների անձնավորության մեջ կենտրոնացած հայ ազգային իշխանությունը. մելիքը տեր էր, տիրապետող, այն էլ ինքնագլուխ ու միահեծան, ոչ ոք իրավունք

¹ Դաժանություններից մեկը վերաբերում է հայերի բռնագաղթին (մանրամասն տե՛ս **Առաքելյան Հ., Պարսկաստանի հայերը. նրանց անցյալը, ներկան և ապագան**, մասն Ա, Վիեննա, 1911):

² Հավելենք, որ Շահ-Աբբասը և նրա հաջորդները շատ լավ գիտեին մելիքներին իրարից հեռու պահելու, նրանց միաձուլման հնարավորությունները խեղդելու քաղաքականությունը: Երբեմն առանձին-առանձին հովանավորում էին նրանց՝ նպատակ ունենալով մելիքության շրջանում առաջ բերել մրցակիցներ և դաշնակիցներ:

³ Մանրամասն տե՛ս Պատմագրություն վարուցն եւ գործոց Նադիր շահ թագաւորին պարսից, Մադրաս, 1780-1783: **Աբրահամ Արեւուսցի**, նշվ. աշխ.: Մատենադարան, Ա. Երիցյանի արխիվ, թղթ. 157, վավ. 1, էջ 13:

⁴ **Աբրահամ Երևանցի**, նշվ. աշխ., с. 43-46.

չուներ ընկերանալ նրա իշխանությանը: Ամենքը պիտի հնազանդվեին մելիքին, կատարեին նրա հրամանները, որովհետև մելիքը բարձր իշխանության կողմից նշանակված իշխանավոր էր: Իր կողմից մելիքը պարտավոր էր լինել արդարադատ, պիտի հոգ տաներ իր երկրի բարօրության մասին...»¹:

Մելիքական պաշտոնը ժառանգական էր: Մահացած մելիքին փոխարինում էր ավագ որդին, իսկ ժառանգ չունենալու դեպքում՝ եղբայրը: Մելիքները պարտավոր էին ժամանակին վճարել սահմանված պետական հարկերը, ճնշել գավառում ծայր առած խռովությունները, մելիքության սահմանները պաշտպանել արտաքին հարձակումներից, պատերազմների ժամանակ իրենց գործով ներկայանալ շահին:

Մելիքի իրավասության շրջանակները ներառում էին տնտեսական համակարգի տարբեր բնագավառներ: Մելիքները տիրապետում էին տնտեսական հզոր կարողությունների: Մելիքության կազմում գտնվող գյուղերը կառավարվում էին գյուղացիների կողմից ընտրված տանուտերերի միջոցով, որոնց ընտրությունը պարտադիր վավերացվում էր մելիքի կողմից: Երբեմն մելիքն ինքն էր նշանակում տանուտերերին²: Վերջիններս հետևում էին գյուղի կարգ ու կանոնին, հավաքում հարկերը: Այսպես, գյուղական յուրաքանչյուր ընտանիք պարտավոր էր նրան տալ բերքի մեկ հինգերորդը ու գլխահարկ և իր աշխատանքային գործիքներով տարեկան մի քանի օր ձրի աշխատել նրա համար³: Այս մա-

¹ Տե՛ս **Լեո, Երկերի ժողովածու**, հ. Գ, գիրք երկրորդ, էջ 18: **Քարխոտաարեանց Մ., Պատմութիւն Աղուանից**, Թիֆլիս, 1907, հ. Բ, էջ 7(է): **Ուլուքաբեյան Բ., Խաչենի իշխանությունը**, էջ 417:

² Տանուտեր պարսկերեն կոչվում է «քովխա կամ քոխվա», «քեանդ», «խուդա»:

³ Տե՛ս Խամսայի մելիքությունների իրավունքներն ու պարտականությունները, Հայոց պատմության հանրագիտարան, http://www.historyofarmenia.am/am/Encyclopedia_of_armenian_history_Xamsayi_meliqutyayn_irav_ev_partakanutyunnery

սին Մատենադարանի վավերագրերից մեկում նշվում է. «...Մե-
լիքները իրենց կառավարման ներքո գտնվող ժողովրդից ստա-
նում էին որոշակի հացահատիկային և դրամական եկամուտներ,
որոնք կոչվում էին մելիքյանա (Меликяна)...»¹ :

Դատավարության իրավունքը ևս գտնվում էր մելիքի և նրա
կողմից հաստատված տանուտերի ձեռքին: Այս մասին Մ. Բար-
խուդարյանը նշում է. «Արքունուստ շնորհուած իրաւունքներով իւ-
րաքանչիւր մելիք բացարձակ տէր, իշխան, դատաւոր եւ իրաւա-
րար էր իւր հպատակների համար: Այս պատճառաւ ամեն մելիք
իրաւունք ունէր պատժել, բանտարկել, ծեծել եւ տուգանել գողե-
րը, յափշտակողները եւ հասարակութեան հանգստութիւնը վրդո-
վողները իւր հպատակներից...»²: Ծանր հանցանքները մելիքն էր
քննում, իսկ թեթևները՝ տանուտերերը³: Հարկ է նշել, որ չկար
դատավարության համար նախատեսված հատուկ օրենսգիրք և
մելիքները դատում էին սովորույթի իրավունքով և իրենց հայեցո-
ղությամբ⁴: Սահմանված պատիժները և պատժաչափերը զանա-
զան էին. սովորական ծեծ, ու տուգանք, բանտարկություն, մարմ-
նին կնիք խփել, կախ տալ (հատուկ կախադան չկար, ծառից էին
կախում մեղադրյալին), նույնիսկ՝ մահապատիժ և այլն⁵:

¹ Տե՛ս Մատենադարան, ֆ. Կարթղ. դիվան, քղբ. 240, վավ. 180, էջ 31: Նշենք, որ մելիք-
յանան որոշակի հարկի ամուն չէ, այլ՝ հավաքական: Այն իր մեջ ընդգրկում է այն ամենը,
ինչ բնակչությունից հավաքվում էր հօգուտ մելիքի:

² Տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, *Պատմութիւն Աղուանից*, հ. Բ, էջ 7(է):

³ **Լաբանան Ե.**, *Մելիքների հասարակական և իրավաբանական սովորույթները*,
«Ազգագրական հանդէս», 1899, գիրք Ե, N 5(1), էջ 253: Նաև տե՛ս **Մաղսյան Ա.**, նշվ. աշխ.,
էջ 54:

⁴ Մանրամասն տե՛ս **Լաբանան Ե.**, *Մելիքների հասարակական և իրավաբանական
սովորույթները*, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1899, գիրք Ե, N 5(1), էջ 254: **Պողոս-
յան Ֆ.**, *Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները*, «ԲՀԱ», Ե.,
1966, N 1(13), էջ 200:

⁵ **Լաբանան Ե.**, *Մելիքների հասարակական և իրավաբանական սովորույթները*,
«Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1899, գիրք Ե, N 5(1), էջ 254–255: **Պողոսյան Ֆ.**,

Մելիքի լիազորությունների մեջ մտնում էր ռազմական ուժերի կազմակերպման գործընթացը: Ինչպես նշում է ազգագրագետ Ե. Լալայանը, զինվորական պարտադիր ծառայություն չկար, և մելիքները մշտական ու կազմակերպված բանակ չունեին: Մակայն մելիքներից յուրաքանչյուրը իր մոտ որպես թիկնապահներ մշտապես պահում էր 300 զինվոր, որոնց թոշակ էր տրվում¹: Հետաքրքիր են Մակար եպիս. Բարխուդարյանի մոտ եղած տվյալները՝ զորքերի թվաքանակի վերաբերյալ: Եպիսկոպոսը նշում է. «Ամեն մելիք ունի արտօնությիւն պահել զօրք՝ ըստ թոյ հպատակաց եւ ըստ իր նիւթական կարողութեան 2000-3000 զինուոր, մի սպարապետ-գօրավար, որ կոչում էր իւզբաշի եւ մի փորձառու օգնական գօրավար, զօրս ընտրում էին իրանք մելիքներն եւ հաստատում»²:

Մելիքը համարվում էր իր զորքի ընդհանուր հրամանատարը, որի յուրաքանչյուր խումբն ուներ իր հարյուրապետը (յուզբաշին): Այս պաշտոնը համարվում էր ժառանգական, երբեմն էլ մելիքը այդ պաշտոնը տալիս էր քաջությամբ աչքի ընկնող զինվորներին³: Պատերազմի ժամանակ զենք կրելու ընդունակ բոլոր չափահաս տղամարդիկ պարտավոր էին պատրաստ վիճակում (ձիով, հրացանով, թրով, դաշոյնով և այլն) հավաքվել որոշված վայրում: Խոսելով մելիքների զինվորական ուժի մասին, պետք է

Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, «ԲՀԱ», Ե., 1966, N 1(13), էջ 200:

¹ **Լալայան Ե.**, *Մելիքների հասարակական և իրավաբանական սովորույթները*, «Ազգագրական հանդես», 1899, զիք Ե, N 5(1), էջ 252-253: **Պողոսյան Ֆ.**, *Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները*, «ԲՀԱ», 1966, N 1(13), էջ 202: **Մաղալյան Ա.**, նշվ. աշխ., էջ 39: **Աբրահամյան Հ.**, նշվ. աշխ., էջ 22:

² **Բարխուդարյանց Մ.**, *Պատմություն Աղսանից*, Կ. Բ., էջ 7(է):

³ Մելիքների ռազմական ուժի մասին մանրամասն տե՛ս **Լալայան Ե.**, *Մելիքների հասարակական և իրավաբանական սովորույթները*, «Ազգագրական հանդես», 1899, զիք Ե, N 5(1), էջ 252: **Մաղալյան Ա.**, նշվ. աշխ., էջ 39:

շեշտել, որ տարբեր ժամանակներում մելիքներն ունեցել են տարբեր քանակությամբ զինվորական ուժեր: Ըստ Պ. Հարությունյանի՝ XVIII դարի 20-ական թվականների ազատագրական շարժումներին մասնակցող զինվորների թիվը եղել է շուրջ 20.000¹: Այնուհետև վերջինս աղյուսակում² վերաբաշխելով արցախցիների ռազմական ուժերը, նշում է, որ անհրաժեշտության դեպքերում արցախցիները կարող էին մարտի դուրս հանել են մինչև 40.000-ի հասնող զինվոր³: Այս թվի մասին է հիշատակվում Իվան Կարապետի (18-րդ դարի հայ ազատագրական շարժման գործիչ) նամակներից մեկում⁴:

Մելիքները գործուն մասնակցություն են ունեցել նաև Արցախի հոգևոր կյանքին, երբեմն միջամտել Գանձասարի կաթողիկոսների ընտրությանը, որը հաճախ տեղիք էր տվել մելիքական տարբեր խմբավորումների միջև շահերի բախման ու հարևան մահմեդական տիրակալների անցակալի միջամտության:

Նադիր շահի կառավարման ընթացքում(1736-1747) Գանձակի բեկլարբեկությունից անջատվեց Արցախը, որտեղ ստեղծվեց հայկական իշխանություն՝ «Խամսա» (հնգյակ) անունով, Դիզակի մելիք Եզանի⁵ գլխավորությամբ (1736): Այս մասին ուշագրավ արձանագրություն է թողնվել Մելիք Եզանի ընդունարանի մուտքի մոտ: Վիմական արձանագրության վերծանված տարբերակից հետաքրքիր հիշատակում է արել Հակոբ Փափազյանը. «ՌՁԶԶ (1737): Այս ընդունարանը հիշատակ է: Այսպես է, որ ես Դուկասս

¹ **Арутюнян П.**, *Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века*, М., 1954, с. 160.

² Նույն տեղում, էջ 161.

³ Նույն տեղում, էջ 160: Տե՛ս նաև **Aivazian A.**, *The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal*, Yerevan, 1997, p. 7.

⁴ **Арутюнян П.**, նշվ. աշխ., с. 161.

⁵ Մելիք Եզանի տոհմական ծագման մասին տե՛ս ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 56, ք. 1-5: **Մաղալյան Ա.**, նշվ. աշխ., էջ 199:

վարդապետի որդիս, որ իմ անունն է Մելիք Եզան, նախապես ժողովուրդը հավաքեց և ինձ քոյսվա(տանուտեր) կարգեց: Դրանից հետո, երբ երկիրը խառնակության մատնվեց, շահ Սուլթան Հուսեյնի որդի շահ Թահմասաթ թագավորին որոշ ծառայություն մատուցեցի, և նա բերեց սրանց վրա ինձ մելիքություն տվեց: Այնուհետև օսմանցին եկավ և երկիր նրա ձեռքից վերցրեց... Իրանից Նադիր գորեղ թագավորը իր գորքով եկավ, երկիրը օսմանլուի ձեռքից առավ: Նրան էլ այնքան ծառայություն մատուցեցի, որ նա քրիստոնյա ազգի վեց մահալների՝ Թալիշի, Չարաբերդի, Խաչենի, Վարանդայի, Քոչիզի և Դիզակի վրա ինձ որպես խան և բեկլարբեկի կարգեց. շնորհ արեց: Ով հետո կարդա, այս գրությունից կիմանա, որ մեր որպիսությունը այսպես է եղել և թող մի ողորմի ասի... Ամեն»¹:

Այս ընդհանուր վարչական միավորման մեջ ընդգրկվում էին հինգ մելիքություններ, որոնք պատմագրության մեջ հայտնի են «Խամսայի մելիքություններ» (հինգ մելիքություններ) անունով²: Դրանք են՝ **1. Գյուլիստանի կամ Թալիշի, 2. Ջրաբերդի կամ Չարաբերդի, 3. Խաչենի. 4. Վարանդայի. 5. Դիզակի**³: Ըստ Բաֆֆո՝ **Գյուլիստանի⁴ կամ Թալիշի մելիքությունը (XVII-XVIII դդ.)**

¹ Փափազյան Հ., *Մելիք Եզանի ընդունարանի մուտքի վիճակի արձանագրությունից*, «Լրարբեր հասարակական գիտությունների» (այսուհետ՝ ԼՀԳ), 1985, N 5, էջ 77:

² Մանրամասն տե՛ս ՄՄ, Ա. Տրիցյանի արխիվ, թղթ. 157, վավ. 1, էջ 21:

³ Բաֆֆի, *Խամսայի մելիքությունները*, էջ 3-4: Նաև տե՛ս **նույնի, Меликства Хамсы (1600-1827)**, с. 16:

⁴ Տեղադրված է Կորսակ և Ինճա գետերի միջև: Տարածքը հայտնի է դեռևս վաղ անցյալից: X դարից սկսած այն մտել էր հզորացող Խաչենի իշխանության կազմի մեջ, իսկ XVII-XVIII դդ.՝ Գյուլիստանի մելիքության: Գյուղից 3 կմ հեռավորության վրա, սեպտեմբերի 1-ին, ժողովել ու վարդապետան է դարձրել այն: Այստեղից էլ առաջացել է գյուղի անունը (տե՛ս **Քարխտատարեանց Մ., Արցախ (1895)**, էջ 240: **Լալաեան Ե., Գանձակի գավառ. պատմական համառոտ տեսություն**, «Ազգագրական հանդես», 1899, N 5(1), էջ 213: **Հակոբյան Թ., Մելիք-Քախչյան Սա., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան**, հ. 1, Ե., 1986, էջ 906):

սկսվում է Քյուրակ-չայ գետից, այսինքն Գանձակի սահմաններից և տարածվում մինչև Թարթառ գետը: Նստավայր-կենտրոններն էին Հոռեկավանքը (Թալիշ) և Գյուլիստանը, ամրոցը՝ Գյուլիստան բերդը: **Ջրաբերդի կամ Չարաբերդի մելիքությունը (XVII-XVIII դդ.)** սկսվում է Թարթառ գետից և տարածվում մինչև Խաչենի գետը: Նստավայր-կենտրոններն էին Քաղաքատեղ կամ Մայրաքաղաք բերդավանն ու Մոխրաթաղը, ամրոցը՝ Ջրաբերդը: **Խաչենի մելիքությունը (XV-XVIII դդ.)** սկսվում է Խաչենագետից և տարածվում մինչև Բալուջա գետը: Նստավայր-կենտրոնը՝ Խոխանաբերդն էր (Թարխանաբերդ)՝ հարակից բերդավանով: **Վարանդայի մելիքությունը (XVII-XVIII դդ.)** սկսվում է համանուն գետից և տարածվում մինչև Քիրս-Դիզափայտի լեռները: Նստավայր-կենտրոնը՝ Ավետարանոց բերդավանը: **Դիզակի (XVII-XVIII դդ.) մելիքությունը** սկսվում է Դիզափայտ լեռներից և տարածվում մինչև Երասխ¹: Նստավայր-կենտրոնը՝ Դող(Տող)ավանը²:

Հավելենք, որ մելիքությունների ընդարձակ իրավունքների շրջանակը փոքրանում է Նադիր շահի սպանությունից հետո (1747): Պարսկաստանի նոր տիրակալները վերացնում են Խամսայի շատ արտոնություններ և երկրամասը դարձյալ ենթարկվում է Գանձակի խանին:

Այսպիսով, թուրք-իրանական երկարատև պատերազմները, որոնք ընթացել էին հիմնականում Հայաստանի տարածքում, մեծ վնասներ էին պատճառել երկրի սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքին: Հայ ժողովուրդը, ընկնելով Սեֆյան Իրանի և Օսմանյան կայսրության լծի տակ, հավասարապես ենթարկվում էր

¹ **Բաֆֆի**, *Խամսայի մելիքությունները*, էջ 3-4: Նաև **նույնի**՝ Меликства Хамсы (1600-1827), Е., 1991, с. 16: **Աբրահամյան Հ.**, նշվ. աշխ., էջ 18:

² **Ղուլյան Ա.**, *Արցախի և Սյունիքի մելիքական սպարանքները*, Ե., 2001, էջ 10:

թե՛ տնտեսական հարստահարման (հատկապես ծանր էր հարկային քաղաքականությունը) և թե՛ քաղաքական ու կրոնական իրավագրկության ու հավաճանքների: 1639 թ. պայմանագրով նախատեսված պատերազմի դադարումը Հայոց երկրամասը ինչ-որ չափով զերծ պահեց հայկական մշակութային ժառանգության ոչնչացումից և որոշակի նախադրյալներ ստեղծվեցին հայկական մշակութային արժեքային համակարգի համալրման համար: Ինչպես երևում է հայոց երկրամասի վարչաիրավական համակարգի բնութագրումից, կարելի է նշել, որ ի տարբերություն Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական, իրավական կարգավիճակի, Արևելյան Հայաստանում դրությունը այլ էր: Մյուս կողմից էլ, ուսումնասիրվող ժամանակաշրջանում, Արցախի մշակութային որոշ ճյուղերի առաջընթացին նպաստեցին երկրամասի պետական ինքնության դրսևորումները: Հավելենք, որ չնայած Արցախի մեղիքությունները Պարսկաստանի տիրապետության շրջանում ունեին միայն ներքին ինքնավարություն, այնուամենայնիվ, շնորհիվ նրանց հեռատես դիվանագիտական քաղաքականության, պահպանվեց հայկական պետական ինքնությունը և որոշ չափով զարկ տրվեց մշակութային կյանքի զարգացմանը:

§ 2. ԳՐԶՈՒԹՅՈՒՆ

Գրչությունը կամ գրչագրությունը (գրելու արվեստ) պատմական Հայաստանում ստեղծվել է դեռևս հնագույն դարաշրջանում՝ փորագրությունների տեսքով: Արվեստի այս տեսակը լայնորեն սկսվել է կիրառվել միջնադարում: Ինչպես նշում է Գ. Հովսեփյանը, գրչության արվեստն այն աշխատանքն է, որը դարերի ընթացքում կատարել են մեր ձեռագրական մշակույթի ներկայացուցիչները¹: Միջին դարերում եղել են գրչությամբ զբաղվող և նրա մեջ մասնագիտացած հատուկ անձինք, որոնք կոչվել են «գրիչներ»: Գրիչներն իրենց գրառումների մեջ անվանում են «գծող», «ծաղկող», «մրող» և այլ անուններով²: Վերջիններս ձեռագրեր³ ընդօրինակելուց բացի, տեքստերի վերջում թողել են գրառումներ (հիշատակարաններ, հիշատակագրություններ⁴), որոնցում նշել են արժեքավոր պատմական տեղեկություններ ձեռագրի արտագրության, հանգամանքների գրության վայրի, պատվիրատուի, ժամանակակից քաղաքական իրադարձությունների և այլ խնդիրների մասին:

¹ Սանրամասն տե՛ս **Հովսեփյան Գ.**, նշվ. աշխ.:

² Տե՛ս **Աբրահամյան Ա.**, *Հայոց գիր և գրչություն*, Ե., 1973, էջ 301:

³ Ձեռագրերը հնադարյան ոչ ապագիր գրքեր կամ մատյաններ են՝ գրված աղյուսի, կավե սալիկի, պապիրուսի, մագաղաթի, թղթի վրա, որոնք ստեղծվել են հիմնականում վանքերին ու մենաստաններին, եպիսկոպոսարաններին ու դպրոցներին կից գրատներում: Դրանք պարունակում են արժեքավոր տեղեկություններ գրիչների, մատյանների ստեղծման հանգամանքների, ինչպես նաև ժամանակաշրջանի պատմական կարևոր իրադարձությունների մասին:

⁴ Եթե գրիչն անմիջապես իր կողմից է կատարել գրառումը՝ կոչվում է հիշատակարան, իսկ եթե ուշ շրջանում ուրիշ մեկն է գրել՝ հիշատակագրություն:

Արցախի գրչագրության արժեքային համակարգում կարևորվում են Սարգիս արքեպս. Հասան-Ջալալյանցի¹, Մակար եպս. Բարխուդարյանի², Մեսրոպ արքեպ. Սմբատյանցի³, Յովհ. եպս. Շահխաթունեանցի⁴, Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի⁵, Գարեգին Հովսեփյանի⁶, Խաչիկ Դադյանի⁷, Ե. Լալայանի⁸, Օ. Եզանյանի⁹, և ուրիշների ձեռագրական հավաքածուների դերն ու նշանակությունը:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում շարունակում էին գործել դեռևս միջնադարում ձևավորված հայկական գրչության կենտրոնները: Դրանց զուգահեռ բացվեցին նորերը: Այսպես, Արցախում հայտնի են՝ Դադիվանքի (նաև՝ Դադոյի), Ամարասի, Գանձասարի¹⁰, Գոչավանքի (հնում՝ Քթիշ, հետագայում՝ Կտիչ, Գտիչ, իսկ նոր ժամանակներում մեկիքանիստ Տող գյուղի անունով՝ Տող), Խանածախի (ներկայիս Արցախի Հանրապետության Ասկերանի շրջան), Ավետարանցի, Խզնավար գյուղի, (ներկայիս Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջան), Չարեքա վանքի, Փառիտսի վանքի, Երից Մանկանց վանքի, Ծարա երկրի, Ս. Հակոբա

¹ Տե՛ս Յուզակ գրչագիր Մատինից Սրբազան Սարգիս արք. Հասան-Ջալալեանցի, Մատենադարանի արխիվ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 228, վավ. 15:

² Տե՛ս Բարխուտարյանց Մ., *Արցախ, Բաքու*, 1895 (Ե., 1996):

³ Տե՛ս Մրատեանց Մ., նշվ. աշխ.:

⁴ Տե՛ս Շահխաթունեանց Յովհ., նշվ. աշխ.:

⁵ Կարապետ եպիսկ., նշվ. աշխ.:

⁶ Հովսեփեան Գ., նշվ. աշխ.:

⁷ Տե՛ս Թօփճեան Յ., *Յուզակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878–1898*, մասն Ա, Էջմիածին (Վաղարշապատ), 1898, մասն Բ, Էջմիածին, 1900:

⁸ Տե՛ս Լալաեան Ե., *Գանձակի գավառ. սլաոմական համառոտ տեսություն*, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1899, N 5 (N1):

⁹ Տե՛ս Եզանեան Օ., *Գանձասարի հայերեն ձեռագրերի հավաքածուն*, «Էջմիածին», 1971, N Գ, էջ 59–62:

¹⁰ Տարբեր դարաշրջաններում Գանձասարում գրված ձեռագրերի, ինչպես նաև վանքում եղած իրերի, տապանաքարերի վերաբերյալ որոշ արժեքավոր տեղեկություններ կան Գ.ԱԹ-ում (տե՛ս ֆոնդ Ս. Քամայանի, ց. 2, բաժին 44):

վանքի¹, Եղիշե Առաքյալի վանքի, Առաջաձոր գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու (ներկայիս Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջան), Հիրիերի (Հերիերի), ինչպես նաև Արցախի հյուսիս-արևելյան հատվածի մի շարք վայրերի գրչագրության կենտրոններ: Սակայն ցավով նշենք, որ ինչպես Արևելյան Հայաստանի մյուս շրջաններում, այնպես էլ Արցախում գրված և ընդօրինակված հայկական ձեռագրերից առավել ցայտուն էր դրսևորվել շատ քչերի պատմական ճակատագիրը: Արցախի մի շարք վայրերի ձեռագրերի պատմական ժառանգությունը գրեթե չի պահպանվել: Փաստորեն, վերոնշյալ գրչատներում 1639-1736 թթ. գրված ձեռագրերից մի մասն են հասել մեզ: Խնդիրն այն է, որ հայ ժողովուրդը ստեղծված ձեռագիր մատյանները թշնամիների ասպատակումների հետևանքով իրականացրած ոչնչացումից փրկելու համար հաճախ դրանք թաքցրել էր աննպաստ պայմաններում, որն էլ պատճառ էր դարձել բազմաթիվ հայկական ձեռագիր գրքերի անդարձ կորուստների, մագաղաթե, թղթե, կաշվե և մետաղյա կազմերի քայքայմանը:

Փրկված ձեռագրերի մի մասը ներկայումս պահվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում: Արցախում փրկված ձեռագրերի մասին արժեքավոր հիշատակություն ունի Մակար Եպս. Բարխուտարեանցը. «Խաչենի հայրենասեր մելիքները Գանձասարի, Ծարա, Խոթա, Մայրաքաղաքի, Ջրվշտիկի Եղիշե առաքյալի և այլ վանքերի ու եկեղեցիների դպրատների ձեռագրերը բարբարոսներից փրկելու համար խնամքով երեք մասի են բաժանել ու թաքցրել մի մասը Գանձասարի ու Խոթա վանքերի մեջտեղում՝ մի քարայրի մեջ, երկրորդ մասը՝ Ջրաբերդի մոտա-

¹ Բարխուտարեանց Մ., *Արցախ* (1996), էջ 109:

կայքում՝ մի ստորերկրյա տեղում, իսկ երրորդ մասը՝ Գյուլիստան գավառի Հոռեկա վանքի տարածքում...»¹:

Փորձենք ներկայացնել մեր կողմից Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում ուսումնասիրված ձեռագրերի մի մասը՝ ըստ գրչագրության կենտրոնների:

Դադիվանքի դերը՝ որպես գրչագրության կենտրոնի նշանավորվում է դեռևս հին շրջանից (այստեղ ի նկատի ունենք, որ դեռևս I դարում Դադի առաքյալի գերեզմանի տեղում կառուցվել է եկեղեցի, որտեղ և առկա են եղել գրչության արվեստի միտումները՝ փորագրությունների ձևով), որն ավելի վառ դրսևորվեց զարգացած միջնադարում: Այստեղ միջնադարում և նոր դարաշրջանում գրվել են բազմաթիվ ձեռագրեր: XVII դ. երկրորդ կեսից գրված ձեռագրերի մասին շատ քիչ հիշատակումներ կան պատմագիտության մեջ: Ուշադրության արժանի է գրիչ Վառվառեի կողմից 1684 թ. ընդօրինակված Գրիգոր Տաթևացու «Քարոզգիրք»-ը² (թերթ՝ 474, երկայուն, բոլորգիր)³, որի պատվիրողն եղել է Պետրոս վարդապետը: Գրիչը մեծ ոգևորությամբ, գեղագիր տառերով ոչ միայն գրել, այլ նաև սրբագրել է աշխատանքը: Այս մասին հետաքրքիր հիշատակություն ունի Հ. Ոսկյանը. «1684 թ. Ծարի մէջ ընդ հովանեաւ Դադէի Ս. Առաքելոյն... Վառվառիա Քարոզգիրք մը կը գրէ, իսկ Բարսեղ քահանային Պետրոս վարդապետը ժողովածու մը նորոգել կու տայ...»⁴: Ձեռագրում ներկայացված են հետևյալ բաժինները՝ «Վարք Գրիգոր Տաթևացոյն», «Կանոն խաղող օրինելոյ», «Օրինութիւն նոր զգեստի»:

¹ Տե՛ս **Քարխտատարեանց Մ.**, *Պատմութիւն Արմանից*, հ. Ա, Էջմիածին, 1902, էջ 197:

² Տե՛ս **Карапетян С.**, *Памятники Армянской культуры в зоне Нагорного Карабаха*, Е., 2000, с. 80:

³ ՄՄ, ձեռ. N 2067: Տե՛ս նաև, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հ. Ջ, Ե., 2012, էջ 1317–1324:

⁴ **Ոսկեան Հ.**, *Արցախի վանքերը*, Վիեննա, 1953, էջ 110:

«Քարոզգիրք»-ի հիշատակարանում հետաքրքիր է հետևյալ գրառումը. «... Յիշեցէք զանարժան գծող սորա զՎառվառէս եւս ծնողքն իմ¹...: Գրիգոր խնդրողի բանին եւ ի տառիս սորին ստացողի նուաստ Պետրոսի՝ յետին բանասիրի եւ գծողի սմին մեղաց թողութին եւ ողորմութին յաւուրն դատաստանի յանյիշաչարն Տեառնէ եւ ամենայն աշխատողացն ի սմա քարոզողացն եւ լսողացն, եւ որք զամէնն ասիցեն, առհասարակ շնորհք եւ պարգեւք եւ դարձումն եւ ազատութին աստի կենացս եւ հանդիպումն Հօրն երկնաւորի եւ մարդասիրութեան Որդւոյն Միածին եւ ազատութեան Հոգւոյ ճշմարտի. Ամէն²...: Որ եւ զիս՝ զամենավէր եւ թշուառ գծող գրոյս զՎառվառիայ զապաշխարողս յիշել մաղթեմ ի բարեմիտ եւ աստուածաբան քարոզչացոյ զի ի ընթեռնուլն եւ քարոզելն աննախանձապէս հայցմամբ եւ սրտի մտօք հառաչմամբ խնդրել ի հեշտալուր Տեառնէն, զի գթացեալ ողորմեսցի եւ թողցէ զյանցանս իմ, որպէս զի եւ ի ձեզ փոխտրսցի զնոյնն. Ամէն³...: Զմեղօք զառածեալ Վառվառիէս յիշման արժան առնէք եւ զծնողքն իմ տէր Մարտիրոսն եւ մայրն իմ՝ Սօլթանաւղէն, եւս հանգուցեալ եղբայրն իմ՝ Աստուածատուրն...»⁴:

Ըստ Հ. Ոսկյանի՝ Դադի վանքի մեկ այլ ձեռագիրը՝ «Աւետարան»-ը, գրվել է 1694 թ.: Ուշագրավ է ձեռագրի հետևյալ հիշատակումը, որտեղ նշվում է Աղվանից երջանկահիշատակ հայրապետներ տեր Երեմիայի և տեր Սիմիոնի անունները և ձեռագրի գրված թվականը. «Արդ ի ժամանակի յորում գնեցաք զկենսաբույս սուրբ Աւետարանս, էին կաթողիկոսք ի տանս Աղուանից երջանկափառ հայրապետք զտէր Երեմիայն եւ զտէր Սիմէօն,

¹ ՄՄ, ձեռ. N 2067, ք. 232ա:

² Նույն տեղում, ք. 244ա:

³ Նույն տեղում, ք. 249ա:

⁴ Նույն տեղում, ք. 409ա:

զտուրք այթոռոյն Գանձասարայ եւ զմերունս նահանգի առաջնորդութեան զԴաղի վանից եւ զԽաղի վանից արհի եւ պանծալի րաբունապետքն զտէր Պետրոսն եւ զտէր Հոհաննէս, զտէր Բարսեղն եւ զտէր Գրիգորն եւ զտէր Աթանասն...Գրեցաւ Աւետարան ՌՃԽԳ (1694) թուին Յունիսն ԺԹ...»¹:

Ամարասի վանքը գրչագրության կենտրոնից բացի, համարվում է նաև հայկական դպրության գլխավոր օջախներից մեկը: Վանքում գրվել և արտագրվել են մի շարք ձեռագրեր: 17-րդ դարի երկրորդ կեսին ստեղծված ձեռագրերից նշվում է 1664 թ.-ին գրված «Հիշատակարան»-ի մասին, որտեղ արժեքավոր տեղեկություններ են տրվում Աղվանից Պետրոս կաթողիկոսի և Ամարաս վանքի արքեպիսկոպոս Բարսեղի կողմից ծավալված շինարարական աշխատանքների մասին²:

Գանձասարի վանքն իր կառուցման ժամանակից ի վեր եղել է հայ գրչության³, նշանավոր կենտրոններից մեկը: Ըստ Լեոի՝ այստեղ գործում էր ձեռագրերով հարուստ մատենադարան⁴: Օ. Եզանյանն իրավացիորեն նշում է. «Որպես կաթողիկոսական նստավայր և գրչության արվեստի կենտրոն, Գանձասարի վանքն ունեցել է նաև իր գրատունն ու գրչագիր մատյանների հավաքածուն»⁵: Այս մասին վկայում են Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի⁶, Մակար եպս. Բարխուտարեանցի⁷, Հակոբ Թովմյա-

¹ Ոսկեան Հ., նշվ. աշխ., էջ 110:

² Նույն տեղում, էջ 29:

³ Մանրամասն տես Եզանյան Օ., *Գանձասարի հայերեն ձեռագրերի հավաքածուն*, «Էջմիածին», 1971, N 4, N Գ, էջ 59–62:

⁴ Տես Լեո, *Երկերի ժողովածու*, հ. Գ, գիրք երկրորդ, էջ 446:

⁵ Տես Եզանյան Օ., *Գանձասարի հայերեն ձեռագրերի հավաքածուն*, «Էջմիածին», 1971, N 4, էջ 59:

⁶ Մբատեանց Մ., նշվ. աշխ.:

⁷ Բարխուտարեանց Մ., Արցախ:

նի¹ և այլոց կոմից ներկայացված ձեռագրերի հավաքածուները: Գրչատան գիտնական վարդապետների, գրիչների, ծաղկողների վերաբերյալ որոշակի տեղեկություններ են հաղորդում վանքի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու որմերին ու խաչքարերի վրա պահպանված վիմագիր արձանագրություններն ու ձեռագիր հիշատակարանները: Վանքն ուներ իր մատենադարանը և ձեռագրերի հարուստ հավաքածուն, որոնցից բազմաթիվ արժեքավոր ձեռագրեր կամ ոչնչացվել են, կամ էլ թալանվել բարբարոս թշնամիների կողմից: Չնայած ժամանակաշրջանի ծանր հանգամանքներին, ինչպես նախորդ դարերի, այնպես էլ քննարկվող ժամանակաշրջանի հայ մշակույթի ականավոր գործիչների կողմից ստեղծված արժեքավոր ձեռագիր մատյանները պահպանվել և հասել են մեզ: Հավելենք, որ դրանք հիմնականում 15-18-րդ դարերի ընդօրինակություններ են, որոնք պահպանվում են Մաշտոցի անվան Մատենադարանում²:

1639-1736 թթ. ընդօրինակված ձեռագրերից հետաքրքիր են Գանձասարի Պետրոս Խանձրեցի կաթողիկոսի պատվերով կատարված աշխատանքները: Այս առումով հայտնի է նրա պատվերով 1657 թ.-ին գրիչ, ծաղկող Գրիգոր երեցի օրինակած Երուսաղեմի Սրբոց Հակոբանց վանքի ձեռագիրը՝ «Խորհրդատետր»-ը³: Հայրապետը ոչ միայն Գրիգորին պատվիրել է գրել մատյանը, այլ նաև ծաղկազարդել, ինչը սիրով է կատարել գրիչը: Վերջինս հիշատակարանում նշում է. «Գրեցաւ եւ աւարտեցաւ ոսկիազարդ եւ ծաղկափթիղ Տետրս Խորհրդեա, ի մայիս ամսոյ ԺԸՆ. ի

¹ Թօփճեան Յ., նշվ. աշխ.:

² Տե՛ս Մինասյան Թ., *Գանձասարի գրչության կենտրոնը*, «Քաներկ Մատենադարանի» (այսուհետև՝ ԲՄ), Ե., 2014, № 20, էջ 227:

³ Պողարեան Ն., *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբեանց*, հ. VII, Երուսաղեմ, 1974, էջ 366:

խնդրոյ երիցս երանեալ եւ երջանիկ հայրապետի եւ սրբազան կաթողիկոսի տեառն տէր Պետրոսի վերադիպողի սրբոյ յաթոռն Գանձասարայ, որ եւ ետ ձեռն եւ զարդարեալ պայծառացոյց եւ վայելչացոյց հաստատ կարգաորութեամբ, եւ եղեւ երկրորդ լուսատրիչ տանս Աղուանից, որո Տէրն փառաց Աստուածն ամենայնի լուսատրեսցէ զհոգի եւ զմարմին նորա, աստ եւ ի հանդերձեալն, ամէն...»¹:

Մատենադարանի մեկ այլ ձեռագրում² հիշատակվում է Հովհաննես Ապահունեցու անունը, որը 1659 թ. Գանձասարում օրինակել է «Ժողովածու» (թերթ՝ 235, միաայուն, բոլորգիր, նոտրգիր): Ձեռագրում ներկայացվում են Հայոց լեզվի Քերականությանն առնչվող տեղեկություններ: Իրենց հետաքրքրությամբ առանձնանում են հետևյալ բաժինները՝ «Յաղագս քերականութեան», «Յաղագս բայի», «Յաղագս դերանուան», «Յաղագս յօդի», «Յաղագս նախդրի», «Յաղագս մակբայի», «Յաղագս շաղկապի», «Յաղագս շարադրութեան» և այլն³: Գրչության հիշատակարանում նշվում է, որ այն գրվել է 1659 թ., Գանձասարում՝ Աղվանից կաթողիկոս Պետրոսի օրոք: Գրիչը եղել է Հոհաննես երեցը⁴: Հիշատակարանում («Հիշատակարան գրչութեան ժամանակի») նշվում է. «ի թուականությանս Հայոց Ռ. երորդի, Ճ. երորդի եւ Ը. երորդի (1659 թ.) ես՝ պիտակ եւ տխմար, սուտ անուամբ Յոհաննես իրիցունկս, որ եմ ի գեղջէն Ապահինու, եկի ի Սուրբ Աթոռս Գանձասար, ի պատրիարգութեան Աղուանից տեառն մեծին Պետրոսի, եւ այս սուղ ինչ Քերականութեան արիեստս

¹ Պողոսեան Ն., նշվ. աշխ., էջ 367: Տե՛ս նաև Մինասյան Թ., *Գանձասարի գրչության կենտրոնը*, «ԲՄ», N 20, էջ 238:

² ՄՄ, ձեռ. N 2277: Տե՛ս նաև Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Է, Ե., 2012, էջ 770–772:

³ ՄՄ, ձեռ. N 2277:

⁴ Նույն տեղում, ք. 154ա:

ծրագրեցի թե՛ կամբ իմով, բայց աղերսեմ զձեզ, ով ոք, որ հանդիպինք սմա վերածնելով կամ օրինակելով, թողութին շնորհեցէ՛ք սակս վրիպամանցս կամ խոշոր եւ վատ գրոյս, քանզի կարմեր այս էր. յոյժ վարանեալ եւ տարակուսեալ կայի մտօքս վասն զբաղմանց աշխարհիս, կրկին մաղթեմ յիշել մու Հայր մեղայ ի զառածեալս մեղօք»¹: Ձեռագրի մեկ այլ էջում նշվում է. «1659 թ. Հովհաննես Ապահունեցի երեցը ի գեղջէն Ապահինու եկել է սուրբ աթոռն Գանձասար՝ քերականություն սովորեցնելու եւ իր ցանկությամբ օրինակել է Թովմա Իտալացու Քերականությունը²: Վերջինիս մասին հիշատակվում է ձեռագրի առաջին էջում. «Արարեալ մեծի հռետորի Թովմայի Իտալացոյ...»³: «Ժողովածու»-ի էջ 4-ում ներկայացնելով հայոց այբուբենի տառերը, գրիչը յուրովի է մեկնաբանում ձայնավորների և բաղաձայնների ճիշտ գրությունը⁴: Այնուհետև հեղինակը ներկայացնում է թվականի⁵ հոլովների⁶, դերանունի⁷, բայի⁸ (սեռի, դեմքի, թվի, ժամանակի, եղանակի մասին), կապի⁹ և հայոց լեզվի քերականության այլ խոսքի մասերի մանրակրկիտ նկարագրությունը:

Ապահունեցին նշում է, որ ձեռքի տակ ստույգ և ընտիր օրինակ չի ունեցել և ձեռագիրը գրել է թերացումներով, ինչի համար թողություն է խնդրում. «Եւ այս սուղ ինչ Քերականութէնս արհեստս ծրագրեցի թե՛ կամբ իմով, բայց աղերսեմ զձեզ, ով ոք, որ հանդիպեք սմա՛ վերծանելով կամ օրինակելով, թողութին շնոր-

¹ ՄՄ, ձեռ. N 2277, ք. 154 ա:

² Նույն տեղում, ք. 154ա:

³ Նույն տեղում, ք. 1ա:

⁴ Նույն տեղում, ք. 4բ-5ա:

⁵ Նույն տեղում, ք. 20 ա:

⁶ Նույն տեղում, ք. 27բ:

⁷ Նույն տեղում, ք. 38բ:

⁸ Նույն տեղում, ք. 54 ա:

⁹ Նույն տեղում, ք. 96ա:

հեցեք սակս վրիպմանացս կամ խոշոր եւ վատ գրոցս, քանզի կար մեր այս էր»¹:

N 2561-ի ներքո գտնվող ձեռագիր մատյանը (թերթ՝ 264, երկայուն, բոլորգիր) կրում է Մովսէս Կաղանկատուացու աշխատության՝ «Պատմութիւն Աղուանից»² խորագիրը, որն օրինակվել է 1664 թ., Գանձասարում՝ գրիչ Սիմոնի կողմից: Ստացողն եղել է արքեպս. Բարսեղը: Գլխավոր հիշատակարանում նշվում է Պետրոս Աղվանից կաթողիկոսի անունը, ընդգծվում վերջինիս կողմից ծավալված լուսավորական և շինարարական գործունեության մասին: Աշխատության առաջին էջում հիշատակվում է միջնադարյան հայտնի հոգևորականների և գիտության տարբեր բնագավառների ներկայացուցիչների՝ Մեսրոպ վարդապետ, Հովհան Մանդակունի, Մովսէս Խորենացի, Ասանիա Շիրակացի, Ստեփանոս Սյունեցի, Հովհան Օճնեցի, Գրիգոր Մագիստրոս, Պետրոս Գետադարձ, Ներսես Լամբրոնացի անունները³: Ինչպես Մովսէս Կաղանկատուացու աշխատությունում⁴, այստեղ ևս ներկայացվում է Աղվանից աշխարհի թագավորների՝ Վաղարշակի⁵, Ոռնայրի⁶, Վաչեի⁷, Վաչագան Բարեպաշտի օրոք Հայոց Արևելից նահանգներում (Արցախ և Ոսոխը նահանգներ)⁸ կատարված պատմաքաղաքական, մշակութային իրադարձությունների մա-

¹ ՄՄ, ձեռ. N 2277, ք. 154ա:

² «Արարատ», Սբ. Էջմիածին, 1895, N 10, էջ 388: Տե՛ս նաև **Թօփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 100: **Սիմասյան Թ.**, *Արցախի գրչության կենտրոնները*, էջ 17:

³ Տե՛ս ՄՄ, ձեռ. N 2561, ք. 1բ:

⁴ Տե՛ս **Մովսէս Կաղանկատուացի**, *Պատմութիւն Աղուանից աշխարհի (քննական բնագիրը և ներածությունը Վարսագ Առաքելյանի)*, Ե., 1983:

⁵ Տե՛ս ՄՄ, ձեռ. N 2561, ք. 7ա:

⁶ Նույն տեղում, ք. 10 բ:

⁷ Նույն տեղում, ք. 12 բ:

⁸ Մանրամասն Տե՛ս **Ուրտաբեյան Բ.**, *Դրվագներ Հայոց արևելից կողմանց պատմության V–VII դդ.*, Ե., 1981: **Վարդանյան Ա.**, *Արվանքի պատմասաշխարհագրական քննություն*, Ե., 2013, էջ 159–167:

սին: Հետաքրքիրը այն փաստն է, որ Մատենադարանի Կաթողիկոսական դիվանի մեկ վավերագրում¹ նշվում է, որ «Աղուանից պատմութիւն» գրչագրի վրայի հիշատակարանը հետագայում՝ 1889 թ. փետրվարի 25-ին, արտագրել են Շահբուլաղում (ներկայիս՝ Արցախի Հանրապետությունում):

N 8504 ձեռագիրը՝ «Ժողովածու»-ն² (թերթ՝ 220, միասյուն, նոտրագիր) վերագրվում է Մկրտիչ աբեղային (ապա՝ եպիսպ.), որն այն սկսել է գրել դեռևս 1654 թ.-ին Կաֆայում (Գրիմում) և ավարտել 1664 թ.-ին³, Գանձասարում: Վերջինս Կաֆայում գրել է ձեռագրի մի մասը՝ «Տոնացոյցը» և «Հայսմավորքի ցանկը»⁴: Հիշատակարաններից մեկում⁵ Մկրտիչն արձանագրել է 16-17-րդ դարերի պատմական կարևոր փաստեր: Այնուհետև ժամանակագրության ցանկն ավարտում է իրեն վերաբերող մի քանի կենսագրական տվյալներով, ըստ որի 1656 թ. նա օծվել է քահանա, 1660 եկել է Գանձասար և 1667թ.-ին արդեն եպիսկոպոս էր⁶:

Տարաբնույթ բովանդակությամբ «Ժողովածու»-ում ուշագրավ են «Թագաւոր յաիտեան»⁷, «Բարեխոսումն սրբոյ»⁸, «Ուրբ. գատիկին»⁹, «Վարդավառի գիշերն»¹⁰, «Ցանկ Յայսմաւորաց», «Աւետարանք բժշկալէ այսլն»¹¹, «Աւետարանք Հանգստեան»¹,

¹ Տե՛ն ՄՄ, ֆ. Կաթող. դիվան, թղթ. 240, վավ. 132, էջ 1:
² Ձեռագիրը Մատենադարան է քերվել Կարինի Սամասարյան վարժարանից, որի մասին նշվում է ձեռագրի կազմի վրա:
³ Թ. Մինասյանի մոտ նշվում է, որ այն ավարտել է 1667 թ. (տե՛ն **Մինասյան Թ.**, *Արցախի գրչության կենտրոնները*, էջ 17):
⁴ Տե՛ն Արդ, գրի Տօնացոյցս և ցանկ Այսմաւորաց կարգին համառօտարար ի թվակաւնի շայկազան սեռի ՌՃԳ(1654):
⁵ ՄՄ, ձեռ. N 8504, ք. 219 ա: Տե՛ն նաև **Մինասյան Թ.**, նշվ. աշխ., էջ 17:
⁶ ՄՄ, ձեռ. N 8504, ք. 219 բ:
⁷ Նույն տեղում, ք. 11բ:
⁸ Նույն տեղում, ք. 12ա:
⁹ Նույն տեղում, ք. 64ա:
¹⁰ ՄՄ, ձեռ. N 8504, ք. 84ա:
¹¹ Նույն տեղում, ք. 111ա:

«Աղօթք հոգոյ գալստին»², «Աղօթք ծննդեան»³, «Ալելուք Համբարձման տոնի»⁴, «Ալելուք եկեղեցոյ»⁵, «Երգեցէք որդիք սիրով»⁶, «Երգ ճշմարտութեան եւ խորհրդոյն»⁷, «Աղօթք»⁸ (Գր. Նարեկացի, Եփրեմ Ասորի), «Պարգատումար», «Մկրտիչ գրչի Թվականք Շահ-Աբասին» (1603-1654 թթ.)⁹, «Տաղ» և այլ բաժիններ: Ձեռագրում հետաքրքիր են տարվա ամիսների ինքնատիպ վերլուծությունները¹⁰:

Մեր կողմից ուսումնասիրված հաջորդ ձեռագիրը՝ «Գիրք աղօթից և տաղք»-ը, ևս գրվել է Գանձասարում: Վերջինս գրվել է 1713 թ., գրիչ Յակոբ Երեցի կողմից: Այն պահվում է Գալուստ Շերմազանյանի անձնական հավաքածուի մեջ՝ N 27 ներքո¹¹:

XVIII դարի սկզբի Գանձասարի ձեռագրերի արժեքային համակարգում առանձնանում է նշանավոր հոգևորական, մատենագիր, հայ ազգային-ազատագրական շարժման խոշոր գործիչ Եսայի Հասան-Ջալալյանի¹² (Գանձասարի կաթողիկոս՝ 1701-1728) տետրը (կամ՝ տետրակ)՝ «Վիմական արձանագրութիւնք»¹³: Այս մասին հետաքրքիր գրառում է կատարել Յովհաննես եպսկ. Շահխաթունեանցն. «Արձանագրուիք աշխարհին Աղուանից՝

¹ ՄՄ, ձեռ. N 8504, ք. 111ա:

² Նույն տեղում, ք. 113ա:

³ Նույն տեղում, ք. 114բ:

⁴ Նույն տեղում, ք. 115ա:

⁵ Նույն տեղում, ք. 115 բ:

⁶ Նույն տեղում, ք. 119ա:

⁷ Նույն տեղում, ք. 128բ:

⁸ Նույն տեղում, ք. 192ա:

⁹ Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, Ե., 1970, էջ 759:

¹⁰ ՄՄ, ձեռ. N 8504, ք. 132ա-142 բ: Իսկ էջ 209-ի աղյուսակում ներկայացվում են ամսաթվերի հետաքրքիր տարբերակներ:

¹¹ **Եզանեան Օ.**, *Գանձասարի հայերեն ձեռագրերի հավաքածուն*, «Էջմիածին», 1971, N 4, էջ 59:

¹² Եսայի կաթողիկոսի քաղաքական գործունեության վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ կան ԳԱԹ-ում (տե՛ս ֆոնդ Ս. Քամալյանի, ց. 2, բաժին, VI, N 28, էջ 1-6):

¹³ ՄՄ, ձեռ. N 9923:

գորս ժողովեաց յեկեղեցեաց եւ ՚ի խաչարձանաց Եսայի կաթողիկոս նոցին Աղուանից ՚ի թուականութեանն Հայոց ՌՃԿԷ (1718) ՚ի մի տէտր, յորոյ գրուածոց առեալ մեր դիցուք աստէն ՚ի տեղեկութին հայրենի հնութեանց»¹: Վերջինիս գրառումից կարելի է հստակ եզրակացնել, որ 1718 թ. Աղվանից Եսայի կաթողիկոսը հավաքել ու համակարգել է հայրենիքի հնության վայրերի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ, որոնք ամփոփում են Գանձասարի, Դադի, Խաղավանքի, Գոչա, Ծարա, Եղիշեի, Ս. Նշան վանքի, Գոշավանքի, Վարագա վանքի, Հաղարծնի և հարակից տարածքների վանքերի և խաչքարերի արձանագրությունների վերաբերյալ նյութեր: Այս մասին նաև նշում է Շ. Մկրտչյանը. «Խաչենի վիմական արձանագրությունների առաջին հավաքողը Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյան է եղել, որի վիմագրական տետրակը կազմվել է 1718 թ. և ընդգրկում է Խաչենի հովտի շուրջ հարյուր վիմագրեր»²: Հավելենք, որ Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվում են բնօրինակից կատարված երկու ընդօրինակություններ՝ N 7821³ (ընդօրինակվել է 1809 թ. Արցախի մետրոպոլիտ Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանի ձեռքով) և N 9923⁴ (ընդօրինակվել է 1822 թ.՝ Էջմիածնի գրագիր Հավհաննես Դրիմեցու ձեռքով⁵) ձեռագրերը: Այս ձեռագրերի մասին Ս. Հասան-Ջալալյանը (Մատենադարանի նշված ձեռագրերից) հետաքրքիր մեջբերում է անում. «Ի ՌՄԾԸ (1809) թուին հայոց ի Սուրբ Աթոռս Գանձասարու վերստին նորո-

¹ **Շահխաթունեանց Յովի.**, նշվ. աշխ., էջ 356:

² Տե՛ս **Մկրտչյան Շ.**, *Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները*, Ե., 1980, էջ 8:

³ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, էջ 617: Տե՛ս նաև **Մինասյան Թ.**, *Արցախի գրչության կենտրոնները*, էջ 19:

⁴ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, էջ 1016:

⁵ **Հասան-Ջալալյան Ս.**, *Կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի քաղաքական գործունեությունն ու պատմագրական ժառանգությունը*, «ԼՀԳ», 2011, N 3, էջ 96:

գեցաւ արձաններս ի հին օրինակէ ձեռամբ Բաղտասար վարդապետի Զալալեան, և որդոյ Դանիէլ հազարապետին Տեառն Խաչենոյ, սյուսը՝ 1822 թ. Էջմիածնի գրագիր Հովհաննես Դրիմեցու ձեռքով...Յամի տեառն 1822 յամսեանն յուլիսի մէկին ընդ սրբազնակատար Եփրեմ կաթողիկոսին մինչ էաք ի Գանձասար հրաշալի վանս, տեսի զբազում վանորէից, եկեղեցաց և խաչից հնագոյն արձանաց օրինակս խողովեալս ի միում հին տետր ձեռամբ Եսայի կաթողիկոսին Աղուանից ի թուականութեան հայոց ՌՃԿԷ (1718), զոր և օրինակեցի կրկին իմով ձեռամբ»¹:

N 7821 ձեռագիրն իր մեջ ամփոփում է «Պատճէնք արձանագրութեանց վանոց», «Խութայ», «Խաթայ», «Ծարայ», «Քթիշոյ», «Գօշայ», «Հաղարծնի», «Գանձասարայ», «Հրիերայ», «Եղիշէի Ս. Առաքելոյ», «Ս. Նշանի», «Ճալեթու», «Յուրեկայ», «Հաւաբտկոյ», «Պառաւաճորոյ», «Վաճառու» և այլ եկեղեցիների, վանքերի վերաբերյալ տեղեկություններ: Տեղկություններ կան նաև «Պատճէնք յիշատակարանց Աւետարանաց», «Յայսմաւորաց» և այլ բաժինների մասին:

N 9923 ձեռագրում ուշագրավ են հետևյալ բաժինները՝ «Խութայ», «Գանձասարայ», «Ծարայ», «Քթիշայ», «Գոշավանից», «Վարագայ», «Հաղարծնոյ վանօրէից», «Վաճառու», «Վերձու եկեղեցեաց եւ Մարչի Խոտակերաց խաչի»:

Եսայի Հասան-Ջալալյանը նույն թվականին հավաքել և ամբողջացրել է Արցախում գրված Ավետարանների, Հայսմավորքների հիշատակարաններ: Արձանագրությունների հավաքածուի հիման վրա կազմել է Ծարի (Վերին Խաչեն) իշխանական տան տոհմաբանությունը²:

¹ Հասան-Ջալալյան Ս., *Կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի քաղաքական գործունեությունն ու սլատմագրական ժառանգությունը*, «ԼՀԳ», 2011, N 3, էջ 96:

² Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Ե., 2002, էջ 317:

Արցախի գրչագրության օջախներից կարևորվում է *Գոչավանքի* դերը¹: Այստեղ XVII դ. երկրորդ կեսին գրչագրության կազմակերպման գործը իր վրա էր վերցրել Աղվանից կաթողիկոս Պետրոս Խանձբեցու եղբայր Մատթևոս քահանան (Գոչավանքի սիաբան՝ 1653-1675 թթ.): Վերջինս իր եղբոր համար 1668 թ. մի «Ավետարան» է ընդօրինակել²: Այս մասին հետաքրքիր հիշատակություն ունի Ղ. Ալիշանը. «...Գտանի Աւետարան մի գրեալ ի գեղջս յամի 1668 վասն Մատթեի քահանայի եղբօր Պետրոսի կաթողիկոսի Աղուանից, որ և ասի բնակեալ մերձ ի Վանս Կոչոյ. Այլ ոչ է յայտ աստանօր եթե յայլում վայրի իցէ վանքը...»³: Գոչավանքի ձեռագրերի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ կան Խ. Դադյան վարդապետի ձեռագրերի հավաքածուներում. երկը կոչվում է «Պատմութիւն Գոչոյ»⁴:

Խանսաճախի գրչագրության մասին արժեքավոր տեղեկություններ կան Մատենադարանի 4281, 7840 թվահամարների ներքո պահվող ձեռագրերում: N 4281-ի ներքո գտնվող ձեռագիրը՝ «Բանք Չափա» (ստեղծագործության հեղինակը Ներսես Շնորհալին է, թերթ՝ 261, միասյուն, բոլորգիր), օրինակվել է 1647 թ.՝ գրիչ (նաև՝ գրչուհի) Մարիամ ապաշխարողի ձեռքով: Ստացողն եղել է վերջինիս հորեղբայր եպիսկոպ. Մարկոսը, որն այս մասին ձեռագրի հիշատակարանում նշում է. «...Արդ ես Մարկոս եպսկ. ըստացի...որ գրել տուի ձեռամբ եղբօր դստերն իմոյ՝ Մարիամին...որ ապաշխարող կոչի: Յիշատակ ինձ եւ փրկութեան հոգոյ

¹ Գոչավանքի ձեռագրական մշակույթի վերաբերյալ տե՛ս **Մինասյան Թ.**, Գոչավանքի և Գիգակ գավառի ձեռագրական ժառանգությունը, «Հայկազյան հայագիտական հանդես», հ. ԼԳ, Բեյրութ, 2014, էջ 411–424:

² Տե՛ս **Ղևոնդ Ալիշան**, *Միսակամ*, Վենետիկ, 1898, էջ 270:

³ Նույն տեղում:

⁴ **Թօփճեան Յ.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 102:

եւ ծնողացն իմոց...: Գրեցաւ զսա ի յերկիրս Քաշթաղ ու գիւղս Խանածախս...ով որ զսա կարդայ ...մի բերան զմեզ յիշե եւ ողորմի ասէ...»¹: Այս հիշատակությունից կարելի է ենթադրել, որ գրիչ Մարիամը այն օրինակել էր իր հորեղբոր պատվերով: Իսկ N 7840-ի ձեռագիրն՝ «Աւետարան»-ը (թերթ՝ 341, երկայուն, բոլորգիր), գրվել է 1693 թ., գրիչ Եփրեմ քահանայի ձեռքով, ստացող՝ Մահփարի խաթուն Շինաթաղցի²: Ըստ «Ավետարանի» կազմի վրա գրառումի, ձեռագիրը Մատենադարան բերվել է Զանգեզուրից:

Ավետարանացում³ գրչության արվեստը կենտրոնացված էր Սուրբ Հարությունի, Կուսանաց անապատի եկեղեցիներում: Սուրբ Հարությունի եկեղեցում գրիչ Գայանեն (Վարանդայի մելիք Հուսսեհինի և Աննայի դուստրը) 1641 թ. ընդօրինակել է ձեռագիր մատյան՝ «Մաշտոց Ձեռագ» (թերթ՝ 293, միասյուն, բոլորգիր)⁴: Ստացողը համարվում է պարոն Զանուսը, որն ի սրտե ձեռագիրը նվիրել է Մարտիրոս քահանային՝ ի հիշատակ իր ծնողների և մերձավորների: Հետագայում՝ XIX դ. սկզբներին, Խաչատուր դպիրը այս ձեռագիր մատյանը նորոգել է և եղած թերությունները շտկել: Վերջինիս կողմից՝ ձեռագրին ավելացված հիշատակագրությունում նշվում է, որ ձեռագրի հետ կապված աշխատանքները կատարվել էին Եփրեմ սրբազանի օրոք (դպիրը նկատի ունի Ամենայն Հայոց կաթողիկոս Եփրեմ Ա Ձորագեղցուն՝ 1809-1830)⁵: Գլխավոր հիշատակարանում⁶, որտեղ գրիչն իր անունը թողել է ծածկագրով, փառք է տալիս աստծոն, որ կարո-

¹ ՄՄ, ձեռ. N 4281, ք. 260ա-261ա:

² Նույն տեղում, ձեռ. N 7840, ք. 1ա:

³ Ավետարանոց (նախկինում՝ Չամախչի) գյուղը գտնվում է ներկայիս Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանում՝ շրջկենտրոնից 38 կմ հարավ: Եղել է Վարանդա գավառի կենտրոնը և մելիքների նստավայրը:

⁴ ՄՄ, ձեռ. N 2404:

⁵ Նույն տեղում, ք. 289ա:

⁶ Նույն տեղում, ք. 287ա:

ղացել էր ավարտին հասցնել ձեռագիրը. «...Փա՛ռք ամենասուրբ Երրորդութեանն՝ Հայր եւ Որդոյ եւ Հոգւոյն սրբոյ ամէն: Փա՛ռք ապենիազ բարերարին, որ ետ կարողութին տկար անձինս իմոյ հասանել այսմ աւարտ գրոյս՝ Մաշտոց կոչեցելոյ: Արդ գրեցաւ զսա ձեռամբ փծոյն եւ անխմաստ գրչի Գայանէ կոչեցելոյ, ի յերկիրն Աղւանից, ի գեաղաքաղաքն Աւետարանոց, ըդ հովանեաւ Սուրբ եկեղեցոյս Յարութին կոչեցելոյ, ի թվաբերութեան հայոց տօմարի Ռ եւ Ղ երրորդի (1641) ամի եւ յիշխանութեան Էջմիածնի տեառն Փիլիպոսի եւ Աղվանից տեառն Գրիգորի եւ հայրապետութին մերոյ գաւառի Յոհանէս եպիսկոպոսի...»¹: Խնդրում է հիշել իր հարազատ քրոջն ու հոգևոր ծնողին՝ Հռիփսիմենին²: Ուշագրավ են «Սկիզբն Մկրտութեան»³, «Կանոն եւ կարգ հարսանեաց նշան օրհնելոյ»⁴, «Կանոն Պսակ օրհնելոյ ամենայն քրիստոնէից»⁵, «Ողբ ննջեցելոց»⁶ և այլ բաժինները:

Ավետարանոցի Կուսանաց անապատի եկեղեցու ձեռագրերից հայտնի է 1660 թ. գրված «Աւետարան»-ը: Վերջինիս հիշատակարանում նշվում են Աղվանից Պետրոս կաթողիկոսի և Մելիք Շահնազարյանների տոհմի ներկայացուցիչների մասին. «...Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուականութեան Հայոց ՌՃԹ (1660) թըլին. աւարտեցաւ սա ձեռամբ անարժան...Կատարինիս ի երկիրս Վարանդու (ի) կաթողիկոսութեան Աղուանիցս Տեառն Պետրոսի եւ եպիսկոպոսութին տէր Յովհաննիսի եւ թագաւորութին Շահապազին եւ իշխան մալիք երկիրս Մելիք Բաղին եւ խոստովանահայր սուրբ անապատի որ մերժ զքաղաքիս

¹ ՄՄ, ձեռ. N 2404, ք. 287ա–287բ:

² Նույն տեղում, ք. 287ա, 288ա:

³ Նույն տեղում, ք. 6ա–26բ:

⁴ Նույն տեղում, ք. 29բ–33ա:

⁵ Նույն տեղում, ք. 39ա–52ա:

⁶ Նույն տեղում, ք. 107բ:

Անտարանոցիս գտեր Առաքեալն եւ միաբան քորք վանասցս
գկուսանուհին Գայանէն, որ եղեւ ծաղկող սուրբ Անտարանիս եւ
համշիրակ ընկերակից քոյրն իմ գեռիմսիմէն, որ է մայր սուրբ
անապատիս...»¹: Հաջորդ ձեռագրի մասին որոշ տեղեկություն է
տալիս Օ. Եգանյանը, ով վկայում է, որ «Ավետարանոցի Կուսա-
նաց մենաստանում 1671 թ. (ՌՃԻ) գրիչ Գայանե մայրապետի
ձեռքով գրվել է Ավետարան, որի գտնվելու վայրը մեզ հայտնի
չէ²: Այս ձեռագրի մասին Ս. Զալայանցը գրում է. «Տեղի աստա-
նոր զգեղեցկադիր Անտարան զարդարեալ զանազան պատկե-
րօք, գրեալ ձեռաբ մայրապետին Գայիանէի...»: Ձեռագրի հիշա-
տակարանում նշվում է «...Արդ այսմ Աստուածեղէն և երկնա-
պարգև գանձիս, եւ լուսափայլ մարգարտիս եղև ցանկացօղ եւ
եռափափագ սիրով գծագրող եւ ստացող աստուածաւերք եւ բա-
րեպաշտուհիք, կուսակրօնք հարազատքն գծօղ սուրբ Անտարա-
նիս մայրապետ Գայիանէ եւ անդրանիկն իւր Հռիփսիմէ, որ եղև
սկիզբն շինութեան սուրբ կուսաստանին Ղարաբաղու, որ՝ ի գի-
ղաքաղաքն Անտարանոցին ընդ հովանեաւ սուրբ Նշանին և այ-
լում սրբութեանց՝ որ են աստ...»³:

Գրչության արվեստի նմուշներից իրենց ինքնատիպությամբ
առանձնանում են *Խզնավար գյուղի, Փառխոսի վանքի, Երից
Մանկանց վանքի, Ծարաւ երկրի, Ս. Հակոբաւ վանքի, Եղիշե
Առաքյալ վանքի, Վերին Թաղավարդի* ձեռագրերը:

Խզնավար գյուղի ձեռագրերից մեր ձեռքի տակ առկա է
7606 թվահամարի ներքո գտնվող «Անտարան»-ը (թերթ՝ 278,

¹ Ոսկեան Հ., նշվ. աշխ., էջ 32:

² Եգանեան Օ., *Սարգիս արքեպս. Զալայանցի ճանապարհորդությունի ի մեծն Հայաս-
տան գրքում հիշատակվող ձեռագրերը*, «Էջմիածին», 1972, N 5, էջ 61:

³ Տեն Զալայանց Ս., *Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան*, հ. Բ, Տփլիսիս, 1858,
էջ 246–247:

երկայուն, բոլորգիր), որը գրվել է 1652 թ.¹ գրիչ Միքայել սարկավագի ձեռքով: Պատվիրողը համարվում է Զաքարյան (նաև՝ Զաքարե): Վերջինիս կողմից թողած հիշատակարանում նշվում է, որ ձեռագիրը գրվել է Խզնավար գյուղում(Քաշաթաղ դղյակ), Սբ. Ստեփանոսի հովանավորությամբ, հայոց հայրապետ Փիլիպ(պ) ոսի օրոք¹: Զաքարյան հավելում է, որ ձեռագիրը պատվիրել է ի հիշատակ իր ծնողների և մյուս հարազատների²: Գրիչ Միքայել սարկավագը Զաքարային կոչում է բարեգործ, սրբասեր, բարեհոգի. «...տեսա... սրբասէր, մաքուր, բարեգործ, բարեհոգի այրն Զաքարայ...»³:

Ձեռագրում իրենց ինքնատիպ գաղափարներով առանձնանում են «Սբ. Անետարան ըստ Դուկասու»⁴, «Սբ. Անետարան ըստ Յոհաննու»⁵ գլուխները:

Փառիստի⁶ վանքի մասին «Նոր-Դար» թերթը գրում է. «...Այս վանքի անմարդաբնակ լինելուց թուրքերը օգուտ քաղելով՝ դարձրել են ոչխարի փարախ, աղբով և ապականուած ջրով լիքը, այնպես որ ներս մտնելու հնարք չկա»⁷: Չնայած այդ բարդ իրավիճակին, վանքում գրվել են մի քանի ձեռագրեր, որոնցից միայն երկուսի մասին մեզ հաջողվեց որոշ տեղեկություններ հավաքել: Հ. Ոսկյանը, վկայակոչելով Սմբատեանցի աշխատութ-

¹ ՄՄ, ձեռ. N 7606, ք. 277ա:

² Նույն տեղում, ք. 277ա–277բ:

³ Նույն տեղում, էջ 276 բ:

⁴ Նույն տեղում, ք. 124 ա:

⁵ Նույն տեղում, ք. 213 ա:

⁶ Փառիստս քաղաքատեղին կոչվում է նաև Ղալաքեանդ կամ Շալաքեանդ: Գտնվում է Շամբոր գետի վերին հոսանքում: Ըստ Մ. Բարխուտարեանցի՝ դասվում է Արցախի լեռնային գավառների (կամ Միջև Արցախ) թվին (տե՛ս **Քարխուտարեանց Մ., Արցախ (1895)**, էջ 24, **Լալաեան Ե., Հայոց նշանավոր գյուղեր**, «Ազգագրական հանդես», 1899, N 5, էջ 325): Ներկայումս գտնվում է Ադրբեջանի կողմից բռնագավթված Գետաբեկի շրջանում (այս մասին տե՛ս Դիվան հայ վիմագրության, սյր. 5 (Արցախ), Ե., 1982, էջ 270):

⁷ «Նոր-Դար», 1893, 2 մարտի (N 36), էջ 3:

յունները՝ նշում է, որ այստեղ 1657 թ. Հակոբ վարդապետի կողմից գրվել է «Աւետարան»¹: Օ. Եգանյանի վկայության համաձայն՝ նույն 1657 թ. Հարություն դպիրը գրել է մեկ այլ ձեռագիր մատյան՝ «Աւետարան», որի կազմողը եղել է Հակոբ վարդապետը²:

N 3446-ի ներքո պահվող ձեռագիրը՝ «Ժողովածու»-ն (թերթ՝ 369, միայուն, նոտրգիր, ձեռագրի ստացողն է նույն ինքը՝ գրիչը), գրվել է 1661 թ. *Երից Մանկանց վանքում* Իգնատիոս Մեծենցու կողմից: Վերջինում հետաքրքիր են հետևյալ բաժինները՝ «Գիրք պիտոյից», «Մովսիսի Գումարումն իրողութեանց Սահմանաց Դարթի», «Յաղագս հասարակաց պատկերացուցութեան», «Բանք իմաստնոց», «Նախերգանք քարոզից»³:

«Գիրք պիտոյից» բաժնի մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում Յակոբ Թօփճեանը. «Գիրք պիտոյից սկսում է Աղեքսանդր Մակեդոնացու պէտքով: ...Հիշատակարանում նշվում է...Ես Իգնատիոս սպասատր եմ յերկրէն Չարաբերթոյ ի գեղջեն Մեծ-շինու ըստ բնական տեղոյ սնընդեան ի ուխտն ս. Երից մանկանց, սնեալ ևս վարժեալ ի նախնի աթոռն մեր եւ կաթողիկոսարանն Հայոց եւ ամենայն Աղուանից ս. Գանձասարս որ այսու ժամանակաւ գեղեցկագարդ պայծառութեամբ շքեղացեալ գոյ՝ հոգեւորին եւ մարմնատրին սահմանադրութեամբ...ի ձեռն երջանիկ կաթողիկոսին Պետրոսի...Մելքոնն զհայրն իմ տէր Սարգիսն եւ զմայրն իմ զՍալվարն եւ եղբարքս զՍէվամն, զՄանուչարն: զՍիմէօն սարկաւագն զՊալասանն... եղբարքս Ռհանէս,

¹ Ոսկեան Հ., նշվ. աշխ., էջ 176–177:

² Եգանյան Օ., *Մերոյ արքեպ. Սնրատեանցի «Նկարագիր Շամախոյ քեմի» գրքում հիշատակված ձեռագրերը*, «Էջմիածին», 1970, N 1, էջ 46:

³ ՄՄ, ձեռ. N 3446:

զՆիկողայոս, գտէր Պետրոս...»¹: Երից Մանկանց վանքի ձեռագրերից հիշատակության արժանի է գրիչ Իգնատիոս վարդապետի կողմից 1661 թ. օրինակված Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»²:

Հայկական հոգևոր մշակույթի արժեքային համակարգում արժևորվում են *Ծարսա երկրում* գրված ձեռագրերը: Հիշատակության արժանի է *Ապահեն* գյուղում գրիչ, ծաղկող, կազմող Մովսես Գորիսեցու կողմից 1652 թ. գրված «Շարականցը» (թերթ՝ 406, սիասյուն, բոլորգիր), որը պահվում է Մատենադարանի N 1626 ներքո: Վերջինիս մասին որոշ տեղեկություններ կան գրչի հիշատակարանում, որտեղ հավաստվում է, որ այն գրվել է Մովսես Գորիսեցու կողմից, Ծարսա երկրի Ապահեն գյուղում՝ Գրիգորի առաջնորդության ժամանակ³: Թ. Մինասյանը հիշատակարանից նշում է հետևյալ հետաքրքիր գրառման մասին. «...ի յԱղվանից հայրապետութիւն Գրիգորի կաթողիկոսի եւ յառաջնորդութեանն տէր Ստեփաննոս արհեպիսկոպոսի, որ է սպասատր եւ ժրաջան հովիւ ի Սբ. Դադիվանիցն եւ Մարդաղանեաց Սբ. Նշան...»⁴: Իսկ ավելի ուշ՝ 1704 թ., ձեռագրին ավելացվեց մեկ հիշատակագրություն, որում նշվում է, որ «Շարականցը» գրվել է 1652 թ.՝ Մովսես Գորիսեցու կողմից և Փիլիպպոսի հայրապետության (կաթողիկոս՝ 1633-1655 թթ.) ժամանակ⁵: Գրիչը մեծ ոգևորությամբ նկարագրում է հատկապես «Ուրախացիր սրբո» խորագիրը կրող գլուխը⁶, որի էջերից մեկում լուսավոր խոսքերը ուղղված են Սբ. Մարիամ Աստվածածնին. «...ուրախա-

¹ Թօփճեան Յ., նշվ. աշխ., մասն Ա, էջ 101:

² Ոսկեան Հ., նշվ. աշխ., էջ 126:

³ ՄՄ, ձեռ. N 1626, ք. 405ա-406բ:

⁴ Մինասյան Թ., *Արցախի գրչության կենտրոնները*, էջ 37:

⁵ ՄՄ, ձեռ. N 1626, ք. 1ա: Տե՛ս նաև Յուզակ Ձեռագրաց, հ. Ա, Ե., 1965, էջ 595:

⁶ Նույն տեղում, ք. 13ա:

ցիր ամենասուրբ կոյս, որ ծնել ես աշխարհի ամենարդար գավակին, որն էլ լուսավորեց ամբողջ ազգին...»¹:

Ձեռագրերից մեկն՝ «Աւետարան»-ը² (թերթ՝ 353, երկայուն, բոլորգիր), օրինակվել է Ծար գավառի *Մոս գյուղում*³ գրիչ Մարտիրոս Խնձորեկցու կողմից, 1653-1654 թթ.: Աշխատանքի ստացողը համարվում է Թաղեոս Բաղիշեցին(սան՝ Բախիշեցի): Աշխատանքում հոգևոր թեմատիկայի վերլուծություններով առանձնանում են «Աւետարանս ըստ Մարկոսի», «Նախադրութիւն Դուկասու Աւետարանիս նոր ցանկին»³ և «Նախադրութիւն Յովաննու Աւետարանիս նոր ցանկին»⁴ հատվածները:

Ծարսա երկրում եղած հաջորդ ձեռագիրը՝ «Աւետարան»-ը⁵ (թերթ՝ 302, երկայուն, բոլորգիր), գրվել է գրիչ Եսայի երեցի կողմից՝ 1663 թ.: Ստացողն եղել է Սիմեոնը: «Աւետարան»-ում նկարագրվում է Քրիստոսի ծննդյան, մկրտության, Քրիստոսի պատվիրանների և այլ հոգևոր դրվագների մասին: Ուշագրավ են աշխատանքում ներկայացված տերունական աղոթքը⁶ (Հայր մեր...) և Դուկաս ավետարանչի մասին որոշ տեղեկությունները⁷: Ինքնատիպ նկարագրությամբ ներկայացվում են «Աւետարան ըստ Դուկասու», «Աւետարան ըստ Յոհաննու» ենթաբաժինները⁸: Չորրորդ ձեռագիրը՝ «Մաշտոց»-ը⁹ (թերթ՝ 230, երկայուն, բոլորգիր), գրվել է Ծար գավառի *Դաշտակ գյուղում*⁹ 1673 թ.: Գրիչը Եսայի երեցն է, ստացողը՝ Տեր Բարսեղը: Այս մասին նշվում է ձե-

¹ ՄՄ, ձեռ. N 1626, ք. 13ա:

² Նույն տեղում, ձեռ. N 3647:

³ Նույն տեղում, ք. 166բ:

⁴ Նույն տեղում, ք. 266ա:

⁵ ՄՄ, ձեռ. N 4053: Տե՛ս նաև Ցուցակ ձեռագրաց, հ. Ա, էջ 1138:

⁶ ՄՄ, ձեռ. N 4053, ք. 13ա:

⁷ Նույն տեղում, ք. 139 բ:

⁸ Նույն տեղում, ք. 229 բ:

⁹ ՄՄ, ձեռ. N 3601:

ռագրի վերջում. «Եւ աւարտեցաւ սբ. մատեան, որ կոչի Մաշտոց...ձեռամբ գրչի Եսայի... ի յերկիրս Ծարայ՝ ի գեաղս, որ կոչի Դաշտակ՝ ընդ հովանեաւ Սբ. Աստուածածին...»¹: Գրիչ Եսային իր կողմից թողած հիշատակարանում նշում է, որ մատյանը, որը կոչվեց «Մաշտոց», գրել է Քրիստոսի օրհնությամբ և Տեր Բարսեղի խնդրանքով: Հավելում է, որ բարեմիտ և մեծահոգի Տեր Բարսեղն այն պատվիրել է ի հիշատակ իր ծնողների՝ Օհանին և Փարին²: Հետագայում (1718 թ³.) ձեռագրին ավելացվեց ևս մեկ հիշատակարան⁴: Աշխատանքում հետաքրքիր տեղեկություններ կան Պողոսի⁵, Սբ. Գրիգորի⁶, Եսայի⁷, Հովհաննեսի⁸ և այլ առաքյալների վերաբերյալ: Ուշագրավ են՝ «Պողոսի առաքյալ Յեբրաեցոց թուղթ»⁹, «Աւետարան բժշկութեան»¹⁰, «Աւետարանն ըստ Մարկոսի»¹¹ բաժինները: «Աւետարան բժշկութեան» բաժնում ներկայացվում է «Աւետարան»-ի հրաշքների մասին, և ընդգծվում, որ նրա շնորհիվ որոշ հիվանդներ (կույրեր, համրեր) բուժվել էին:

Սբ. Հակոբա վանքում (Մեծ-Արանց կամ Մեծ-Իրանց գավառում, ներկայիս Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջան) գրված ձեռագրերի մասին ունենք շատ աղքատիկ տեղեկություններ: Միայն հայտնի է 1664 թ. գրված «Աւետարան»-ի մասին, որի վերաբերյալ Հ. Ոսկյանը նշում է. «Ի գաւառին Խաչենայ

¹ ՍՄ, ձեռ. N 3601, էջ 229բ:

² Նույն տեղում, ք. 228ա–228 ք:

³ Յուզակ ձեռագրաց, հ. Ա, էջ 1048:

⁴ ՍՄ, ձեռ. N 3601, էջ 330ա–330բ:

⁵ Նույն տեղում, էջ 15ա, 33բ, 119ա:

⁶ Նույն տեղում, ք. 95բ:

⁷ Նույն տեղում, ք. 147ա, 188բ:

⁸ Նույն տեղում, ք. 189բ:

⁹ Նույն տեղում, ք. 166ա:

¹⁰ Նույն տեղում, ք. 203ա:

¹¹ Նույն տեղում, ք. 205ա:

Արցախյ նահանգի ի վանքս Մեծիրանց Ս. Հակոբայ 1664-ին կը գրուի դարձեալ Աւետարան մը»¹:

Եղիշէ Առաքյալի վանքում (նաև՝ Ջրվշտիկ²) 1644 թ. գրվել է «Քարոզգիրք», իսկ 1682 -ին՝ Հովսեփ քահանայի կողմից «Աւետարան»: Վերջինիս մասին Հ. Ոսկյանը հիշատակում է. «1682-ին յարքեպիսկոպոսութեան սրբոյ աթոռոյն Եղիշէի առաքելոյն՝ Յովհաննու Մեծիգեղոյ, Յովսեփ քահանայն Աւետարան մը կը գրէ»³:

Վերին Թաղավարդ գյուղում օրինակված և գրված ձեռագրերի վերաբերյալ կան շատ քիչ տեղեկություններ: Մատենադարանի ձեռագրերից մեկի համաձայն՝ այդտեղ անհայտ գրիչը 1717 թ. օրինակել է Առաքել Սյունեցու «Ադամգիրք»-ը⁴ (թերթ՝ 148, միասյուն, շղագիր):

1639-1736 թթ. Արցախում ստեղծված ձեռագրական գանձարանում հիշատակության արժանի են երկրամասի հյուսիս-արևելյան հատվածում եղած գրչության արվեստի նմուշները (ցավոք, ներկայումս այդ տարածքների որոշ մասը բռնազավթվել է Ադրբեջանի կողմից):

N 7980-ի ներքո գտնվող ձեռագիր մատյանը կոչվում է «Աւետարան» (թերթ՝ 299, երկսյուն, բոլորգիր), որն օրինակվել է 1639 թ. **Գանձակում**⁵, գրիչ Հովհաննես երեցի ձեռքով⁶: Ստացողները եղել են Գրիգորն ու Անանիա քահանայն: Գրիչը հիշատակարա-

¹ Ոսկեան Հ., նշվ. աշխ., էջ 91:

² Ըստ Ս. Բարխուսարեանցի՝ Ջրվշտիկ անունը առաջացել է ջրի գնայելի ջրվեժից: Վանքը կոչվել է նաև Ներս-Միրի վանք (տե՛ս **Բարխուսարեանց Ս.**, *Արցախ (1996)*, էջ 151):

³ Ոսկեան Հ., նշվ. աշխ., էջ 123:

⁴ ՄՄ, ձեռ. N 3888:

⁵ Գանձակի Սր. Հովհաննես եկեղեցում գրված որոշ ձեռագրերի, ինչպես նաև մայր եկեղեցու խորանի, մի քանի տապանաքարերի վերաբերյալ որոշ հետաքրքիր քաղվածքներ կան ԳԱԹ-ում, որոնց հետ կապված պատմական իրադարձությունները վերագրվում են տարբեր դարաշրջաններին (տե՛ս Ֆանդ Ս. Քամայանի, ց. 2, բաժին VI, N 43, էջ 6-24):

⁶ ՄՄ, ձեռ. N 7980, ք. 294բ:

նում նշելով նրանց անունները՝ ընթերցողներին խնդրում է, որ միշտ հիշեն և փառք տան նրանց. «Դարձեալ յիշեցէք Ասանիայ քին եւ կողակիցն իւր Մարեանն եւ որդին Մաթեոս սարկավազն...ողորմի ասա՛ Գրիգորին եւ կողակցին Հուռումին...»¹: «Աւետարան ըստ Մարկոսի»² գլխի էջ 142ա նշվում է «Աւետարան»-ի նշանակության մասին, ընդգծվում, որ վերջինիս շնորհիվ բուժվել են հավատացյալների բազմաթիվ հիվանդություններ:

Հաջորդը հիշատակենք **Շաստիսը** (գյուղ Գանձակում³), որտեղ հայկական ձեռագրերը հիմնականում գրվել են Սք. Աստվածածին եկեղեցում: Այստեղ գործած գրիչներից հայտնի են Դավիթ երեցը, Հովհաննես երեցը, Նազար դպիրը, Բարսեղը, Ստեփանոսը սարկավազը և ուրիշներ: Դավիթ երեցը 1644 թ. գրել է «Աւետարան»⁴, իսկ Հովհաննես երեցը՝ «Ժողովածու» (1644 թ., թերթ՝ 182, միասյուն, բոլորգիր)⁵: Վերջինս գրվել էր Գրիգոր քահանայի խնդրանքով՝ ի հիշատակ կնոջն՝ Մարիանին, ու որդիներին: Այս մասին կարդում ենք ձեռագրի հիշատակարանից. «Արդ գրեցաւ սք. մատենիս ի յերկիրս Գանձայ ի գեղս որ կոչի Շաստախ ընդ հովանեաւ սք. Աստվածածնիս..., ձեռամբ Յոհաննէս իրիցու ի խնդրոյ Ժրանան եւ ուսումնասէր Գրիգոր քին, որ սէրտ սիրով ստացաւ սք. Գիրքս յիշատակ իւր եւ կողակիցն Մարիանն եւ որդոցն...»⁶: «Ժողովածու»-ի վերաբերյալ որոշ հետաքրքիր տեղեկություններ կան ձեռագրին 1743 թ. և 1744 թ.⁷ ավելացված

¹ ՍՄ, ձեռ. N 7980, ք. 295 ա:

² Նույն տեղում, ք. 141բ:

³ Տե՛ս Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Գ, Ե., 2007, էջ 241: Ներկայումս գտնվում է Ադրբեջանի կողմից բռնագավառված Դաշլի(ք)եսանի շրջանում (տե՛ս **Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ**, էջ 249):

⁴ **Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ**, էջ 250:

⁵ ՍՄ, ձեռ. N 10882: Տե՛ս նաև Յուզակ ձեռագրաց, հ. Գ, էջ 241:

⁶ ՍՄ, ձեռ. N 10882, ք. 180ա:

⁷ Յուզակ ձեռագրաց, հ. Գ, էջ 241:

հիշատակագրություններում¹: Բազմաբովանդակ ձեռագրում ուշագրավ են «Ի տէր Առաքելոյ ասացեալ բանս ամենայն հաւատացելոյ՝ զկիրակին եւ վասն յիշընցաց»², «Վասն հոգէվարին եւ ճանապարհի հոգոց եւ դիացն»³, «Քարոզ հարսանեաց»⁴, «Յովհաննու Երզնկացոյ խրատ հասարակաց քրիստոնէից...»⁵, «Վարք եւ պատմութիւն սուրբ հարանց»⁶ բաժինները:

Նազար դպիրի արժեքավոր գործերից աչքի է ընկնում «Աւետարան»-ը⁷ (թերթ՝ 306, երկայուն, բոլորգիր): Ըստ գրչի հիշատակարանի⁸ այն գրվել է 1661 թ. Գանձակի Շատախ կոչվող գյուղում (Սբ. Աստվածածին եկեղեցում)՝ տանուտեր Խաչատուրի պատվերով⁹: Վերջինս ձեռագիրը պատվիրել է ի հիշատակ կնոջն ու որդիներին¹⁰: Գրիչը շատ բարձր էր գնահատում Խաչատուրին՝ կոչելով նրան բարեսեր, հյուրընկալ անձնավորություն. «...Ստացող Սբ. Աստուածաշունչ Աւետարանիս հեզահոգի եւ բարեսեր հիւրընկալ Խաչատուրն ջերմեռանդ եւ փափակմամբ սրտի ըստացաւ Սբ. Աւետարանս յիշատակ իւր եւ կողակցին եւ որդոցն...»¹¹:

Շատախի ձեռագրական մշակույթում իր ներդրումն ունի գրիչ Բարսեղը, որը մելիք Հախնազարի պատվերով 1687 թ. լրացրել է գրիչ Հովհաննես Շատախեցու՝ դեռևս 1636 թ. գրված

¹ ՄՄ, ձեռ. N 10882, ք. 1ա-1բ, 182ա-182բ:

² Նույն տեղում, ք. 2ա-7ա:

³ Նույն տեղում, ք. 7ա-9բ:

⁴ Նույն տեղում, ք. 10բ-13բ:

⁵ Նույն տեղում, ք. 15բ-59բ:

⁶ Նույն տեղում, ք. 158ա-168բ:

⁷ Նույն տեղում ձեռ. N 5072:

⁸ Հետազայում՝ 1730 ք. (էջ 305ա) և XVIII դ. (էջ 306ա), ձեռագրի վերջում ավելացվեցին ևս երկու հիշատակագրություն (տե՛ս Յուզակ ձեռագրաց, հ. Բ, էջ 28):

⁹ ՄՄ, ձեռ. N 5072, էջ 303բ-304ա:

¹⁰ Նույն տեղում, էջ 304ա:

¹¹ Նույն տեղում:

ձեռագիր մատյանը՝ «Ժողովածու»-ն (թերթ՝ 141, միասյուն, նոտր-գիր)¹: Ստացողն եղել է Մալիք Հախնազարը: Բովանդակությունը պարունակում է մի քանի բաժիններ՝ «Աղիսակ կենդանակերպից ըստ ամսոց», «Ամսացոյց», «Մղոնաչափք» և այլն: Ձեռագրում որոշ հետաքրքիր տեղեկություններ կան քրիստոնեության տարածման գործում մեծ դեր խաղացած Թադեոս, Բարդուղիմեոս, Փիլիպպոս, Սիմոն, Պողոս, Անդրեաս և ուրիշ առաքյալների մասին: Ձեռագրի հիշատակարանում նշվում է. «...լեզուս շնորհիս Աստուծոյ հասցէ օգնութիւն պարոն Մալիք Հախնազարին եւ նորաբողոքոջ որդւոյն՝ Քամալպէկին. ամեն²: ...Այլ եւ յիշեցէք զպարոն Մալիք Հախնազարն եւ զկենակիցն իւր՝ զՄալաքխաթունն, եւ զնորաբոյս որդիքն՝ Քամալպէկն եւ զԱյտինպէկն, որ եւ Տէրն ամենայնի երկար կեանք պարգեւէ սոցին մինչեւ ի խորին ծերութիւնն. ամէն:...Գրծակրեալ եղեւ սա ի թուականիս Հայոց ՌՃԼ եւ Ջ (1687) ամին, ձեռամբ՝ բազմամեղ եւ անիմաստ, փրծուն Բարսեղ գրչի»³:

Գրիչ Ստեփանոս սարկավազի մասին արժեքավոր հիշատակություն ունի Ալափարսեցի Գեղամ Ալոյանը, որի հաղորդած տեղեկության համաձայն, 1707 թ. Շատախում գրիչ Ստեփանոս սարկավազը՝ Արոյի պատվերով գրել է ձեռագիր մատյան⁴: Ստեփանոս սարկավազի ձեռքով 1708 թ. օրինակվել է մեկ այլ ձեռագիր՝ «Աւետարան»⁵ (թերթ՝ 303, երկսյուն, բոլորգիր), ստացողն՝ Այգի գեղջ Շատախեցի: Ավետարանում նշվում են Հիսուս

¹ ՄՄ, ձեռ. N 713:

² Նույն տեղում, ձեռ. N 713(Բ), ք. 113ա:

³ Նույն տեղում (Բ), ք. 129բ:

⁴ Մատյանը պահվում է Ալափարսեցի Գեղամ Ալոյանի ձեռագրերում (տե՛ս Ցուցակ հայերեն ձեռագրաց մասնավոր անձանց, «ԲՄ», 1980, N 13, էջ 299):

⁵ ՄՄ, ձեռ. N 5143:

Քրիստոսի ծննդյան¹, մկրտության², պատվիրանների³, տերունական աղոթքի (Հայր մեր որ յերկինս սբ եղիցի անուն քո...)՝⁴ Քրիստոսի աշակերտների⁵, վերջինիս գործած հրաշքների⁶ և այլ պատմական իրադարձությունների մասին (հավելենք, որ ձեռագիրը Մատենադարան բերվեց Էջմիածնից, որի մասին նշվում է ձեռագրի վերջում՝ կազմի վրա): Հետաքրքիր են Մատթեոսի, Մարկոսի, Դուկասի և Հովհաննեսի կանոնները, որոնք ներկայացված են առանձին շարքերով⁷:

Արցախի գրչագրության կենտրոններից հայտնի է *Սույթանեցիք* (սակ՝ Սուլտանե)⁸ գյուղատեղին, որտեղ հայտնի են գրիչներ Մխիթարը, Սարգիսը, Վարդանը: 1647 թ. գրիչ Մխիթար աշխարհականի ջանքերով օրինակվել է «Աւետարան» (թերթ՝ 222, երկայուն, բոլորգիր), որի ստացողը եղել է Լալա Ծատուրը⁹: Ըստ գրչի հիշատակարանի՝ ձեռագիրը գրվել է Ամենայն հայոց կաթողիկոս Փիլիպպոսի Ա Աղբակեցու օրոք, Զականա երկրի Սուլտանե գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցում. «...Գրեցաւ Սբ. Աւետարանս յորդառատ բոլխմամբ...ի հայրապետութ՛ հայոց տէր Փիլիպպոսի ի յաթոռ Սբ. Էջմիածնի ի երկիրս Զականա ի գեղոս

¹ ՄՄ, ձեռ. N 5143, ք. 17բ:

² Նույն տեղում, ք. 21ա:

³ Նույն տեղում, ք. 24բ, 25ա, 25բ, 26ա, 26բ և այլն:

⁴ Նույն տեղում, ք. 27բ, 28ա:

⁵ Նույն տեղում, ք. 37ա:

⁶ Նույն տեղում, ք. 37բ:

⁷ Նույն տեղում, ք. 10բ:

⁸ Չականի գավառում: Չական-գավառ կամ գավառակ պատմական Մեծ Հայքի Արցախ աշխարհում: Տարածվում էր համանուն (Չեգամ) գետի հովտում և համապատասխանում էր հին Կողք գավառի մի մասին, իսկ երբեմն էլ նույնացվում էր նրա հետ: Չականը բաժանվում էր Ներքին և Վերին հատվածների (մանրամասն տես՝ **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Մու., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան**, հ. 2, Եր., 1988, էջ 259): Ներկայումս՝ Աղբեջանի կողմից բռնազավթված Գետաբեկի շրջանում (տես՝ **Արարապետյան Մ., Հյուսիսային Արցախ**, էջ 100):

⁹ ՄՄ, ձեռ. N 223:

որ կոչի Սուլտանեցի ընդ հովանեաւ Սբ. Աստուածածին»¹: Ձեռագրի պատվիրողի՝ Լալա Ծատուրի թողած գրառումից հասկանում ենք, որ այն օրինակվել է ի հիշատակ իրեն և իր հորն՝ Գրիգորին և մորն՝ Սոլթանին. «Արդ ես Լալա Ծատուրս... յոյժ ըղձմամբ եւ ջերմն սիրով եւ փափագմամբ յուսով ետու գծագրել զսուրբ Աւետարանս յիշատակ ինձ եւ ծնօղացն իմոց հօրն իմում՝ Գրիգորին, եւ մօրն իմում՝ Սօլթանին: Յիշեցէք եւ զի սրտիւ ասացէք ամէն»²: Հիշատակարանի վերջում նշվում է նաև Լալա Ծատուրի հարազատների մասին³:

Մխիթար գրչի ձեռքով գրվեցին ևս երկու ձեռագիր մատյաններ: Առաջինը գրվել է 1671 թվականին՝ Եվա և Ոսկան ամուսինների պատվերով: Ձեռագրի վերջին ստացողն է համարվում Մելիք Սարգիսը՝ 1729 թ.: 19-րդ դ., ձեռագիր մատյանը պահվում էր Բանանց գյուղի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, որտեղ էլ այն տեսել և հիշատակարանն արտագրել է Մ. Բարխուտարյանը: Վերջինս այս մասին նշում է. «Շնորհք եւ օժանդակութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ասարտեցաւ նոր կտակարանս...ձեռամբ... Մխիթարի ի թուականութեան հայկական տումարի ամի հազարերորդի, հարիւրերորդի, քսաներորդի...ի յայս ամի սաստիկ մահ յերկիրս Վերին Զակամայ, որ օր մի՛ ի տան միում եօթն հոգի վախճանեցավ...ի հայրապետութեան տեառն Պետրոսի Սրբազան Կաթողիկոսին Սրբոյ Գանձասարայ, ի առաջնորդութեան նահանգիս Մինաս վարդապետի եւ ի տէրութեան Պարսից Շահ Սուլէիմանին ի յերկիրս Վերին Զակամայ 'ի գեօղս որ կոչի Սուլտանեցիք ընդ հովանեաւ սուրբ Աստուա-

¹ ՄՄ, ձեռ. N 223, էջ 218բ–219ա:

² Նույն տեղում, էջ 219բ:

³ Նույն տեղում, էջ 220ա:

ծածնիս ի խնդրոյ բարեմիտ Եային եւ այրն(առն)իւրոյ Ոսկա-
նին...»¹:

Գրիչ Մխիթարը մյուս ձեռագիր մատյանը՝ «Մաշտոց»-ը (թերթ՝ 228, երկայուն, բոլորգիր), գրել է 1678 թ. (ստացողը՝ Թա-
ղեսու Եպիսկոպոս)²: Իսկ Սարգիս և Վարդան գրիչների կողմից
1709 թ. օրինակված ձեռագիր մատյանը կոչվում է «Հայսմա-
տուք» (խոսքը վերաբերում է դեռևս միջնադարում Ծերենցի՝
Գրիգոր Խլաթեցու, խմբագրած աշխատությանը: Ստացողը՝
Սարգիս, թերթ՝ 497, երկայուն, բոլորգիր)³: Ձեռագրում արտացոլ-
վել են հայ ժողովրդի պատմությունից առանձին դրվագներ:
Ուշագրավ են ձեռագրի էջ 7բ-ում ներկայացված տեղեկություն-
ները քրիստոնյաների՝ Հռիփսիմեան կոյսերի մասին: Ընդգծվում
է նաև, որ հայոց թագավոր Տրդատ Մեծը (սկզբնական շրջա-
նում) իր անհավատության և Գրիգոր Լուսավորչին Խոր Վիրա-
պում բանտարկելու պատճառով վարազի կերպարանք էր ընդու-
նել: Ձեռագրում նշվում է. «...Գրիգոր յորժամ ելի Վիրապէն եւ
եկն ի Վաղարշապատ քաղաք: Ամփոփեաց զնաշխարհս սբ. կու-
սանացն Հռիփսիմեանց եւ սկսաւ ուսուցանել զբանն կենաց ժո-
ղովրդեանն: ... Եւ թագաւորն Տրդատ խոզակերպ ձեռովն ան-
կեալ կայր առ յոտս նորա զաւուրս կեագիշերին ելանելոյ ՚ի Վի-
րապէն ետես տեսիլ ահեղ եւ զարմանալի...»⁴: Ներկայացվում է
նաև հայոց թագավորի՝ նախկին կերպարին վերադառնալու հա-
մար բժշկության հիմնական ճանապարհը. այն է՝ Խոր Վիրապի
վանքից պետք է ազատ արձակել Գրիգոր Լուսավորչին⁵: Հիշա-

¹ Բարխուդամյանց Մ., *Արցախ* (1895), էջ 278, 282:

² ՄՄ, ձեռ. N 968:

³ ՄՄ, ձեռ. N 3813:

⁴ Նույն տեղում, ք. 7բ:

⁵ Նույն տեղում, ք. 8ա:

տակվում է Սբ. Մարիամ Աստվածածնի առաքելության, հրեշտակապետ Գաբրիելի, ավետարանիչ Հովհաննեսի¹, Հռոմի Դիոկղետիանոս կայսր կամայականությունների, հատկապես քրիստոնյաներին հալածելու, բժիշկ Դոմեդիոսի գործած հրաշքների (բժշկության բնագավառում) մասին: Վերջինիս ջանքերի շնորհիվ մեծ թվով հիվանդներ են բուժվել (խոսքը վերաբերվում է հատկապես Դիոկղետիանոս կայսեր հալածանքներից փրկվածներին): Նա իր հիվանդներին միշտ հավաստիացնում է. «...միշտ հավատարիմ մնալ քրիստոնեական հավատքին»²: Հիշատակության արժանի է նաև պարսից Հազկերտ թագավորի օրոք քրիստոնյաների հալածանքների³, Գրիգոր Լուսավորչի կողմից քրիստոնեության տարածման, հեթանոսական տոների վերացման, քրիստոնեական տոների հաստատման⁴, սբ. Թադեոս⁵ և սբ. Բարդուղիմեոս⁶ առաքյալների գործունեության, Սահակ Պարթևի⁷, պարսից Շապուհ թագավորի ասպատակությունների⁸, Հռոմի կայսեր Հուստինիանոսի՝ հայերի նկատմամբ կատարած հալածանքների մասին: Վերջինիս մասին նշվում է. «...Յուստիանոս կայսրն հայոց հալածեաց զազգս հայոց ուղղափառ հաւատոյս յիշանութ իւրմէ...»⁹: Հետաքրքիր է Թադեոս առաքյալի աշակերտներից Եղիշե առաքյալի՝ Արցախ-Ուտիք աշխարհում (Աղվանից աշխարհում) ծավալած գործունեության մասին: Նշվում է նաև, որ նրա մասունքները պահվում են Արցախի Ջրվշտիկ կոչ-

¹ ՄՄ, ձեռ. N 3813, ք. 8բ–9բ:

² Նույն տեղում, ք. 14բ:

³ Նույն տեղում, ք. 16բ:

⁴ Նույն տեղում, ք. 22ա:

⁵ Նույն տեղում, ք. 24ա:

⁶ Նույն տեղում, ք. 26ա:

⁷ Նույն տեղում, ք. 41ա:

⁸ Նույն տեղում, ք. 43բ:

⁹ Նույն տեղում, ք. 49բ:

վող վանքում¹: Ձերագրի որոշ էջերում պատմվում է Հռոմի Հուլիանոս կայսեր՝ քրիստոնյանների նկատմամբ ցուցաբերած վատ վերաբերմունքի², Մեսրոպ Մաշտոցի՝ հայոց գրերի ստեղծման³, սբ. Գրիգոր Նարեկացու⁴, Սմբատ Բագրատունու⁵ և այլ պատմական իրադարձությունների մասին:

N 4176-ի ներքո գտնվող ձեռագրում նշվում է *Լիզներ գյուղում (Վարանդա գավառ)* 1652 թ. Առաքել երեցի և Պետրոս երեցի կողմից գրված «Աւետարան»-ի (թերթ՝ 252, երկայուն, բոլորգիր) մասին:

Գրչագրության հաջորդ կենտրոնը *Մելիքզադա* (նաև՝ Մելիքզատա)⁶ գյուղատեղին է, որտեղ 1652 թ. Հակոբ քահանան ընդօրինակել է ձեռագիր՝ «Աւետարան»: Հետագայում ինչ-ինչ հանգամանքներում Բանանցում Մ. Բարխուդարյանը մատյանը տեսել է գյուղի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում և հրատարակել գրչի հիշատակարանը. «...Ի ՌՃԱ (1652) թուականիս Հայոց եւ ի յամսեանն մարտի ի Ա (1) ...եղև սկիզբն գրութեան սբ. Աւետարանիս եւ կատարեցավ ապրիլ ամսոյ ԺԵ (15)...Արդ գրեցաւ սա ի յերկիրս Զական, ի գիղս Մէլիքզատայ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս եւ Ս. Թովմա եւ այլ Ս. Նահատակի, որ աստ է, ձեռամբ անարուեստ եւ գրչի Յակոբայ յետնեալ քահանայի: Աւետարանի առաջին ստացողը Կիրակոս երեցն է, ապա՝ Մելիք Օվանեսը»⁷:

¹ ՄՄ, ձեռ. N 3813, ք. 65բ–66ա:

² Նույն տեղում, ք. 89բ:

³ Նույն տեղում, ք. 145բ:

⁴ Նույն տեղում, ք. 248բ:

⁵ Նույն տեղում, ք. 295 ա:

⁶ Արցախի հյուսիսային մասում: Ներկայումս՝ Ադրբեջանի կողմից բռնազավթված Գետաբեկի շրջանում (տե՛ս **Մարտիկյան Ս.**, *Հյուսիսային Արցախ*, էջ 100):

⁷ Նույն տեղում:

Գրչության արվեստի նշանավոր օջախներ են եղել *Խավու-նիսում, Չարեքա վանքում, Պասպաջանում, Քարահասում, Սո-նոտում, Մեծ Ղարամուրատում, Սվրեցիքում, Հարցհանգիս-տում, Գուլյար գյուղում, Գետաշենում, Դաստիպյուրում, Պայա-նանց գյուղում, Քարատակում*:

Խավունիս գյուղում (սակ՝ Խունիս, Նովո-Սպասովկա¹) ձե-ռագրեր են գրվել և օրինակվել Ջուխտակ կոչվող եկեղեցում: Ուշադրության արժանի է 1655 թ. գրիչ Ավետիս քահանայի ձեռ-քով ընդօրինակված ձեռագիրը՝ «Շարականոց»-ը, որի մասին նշվում է հիշատակարանում²:

Չարեքա վանքում հայտնի են գրիչներ Հովհաննեսը, Սարգիս կրոնավորը, Ներսես վարդապետը, Գրիգորը: Նրանց կողմից գրվել և արտագրվել են մի շարք ձեռագիր մատյաններ, որոնցից մի քանիսի ճակատագիրը մեզ հայտնի է: 1662 թ. և 1715 թ. (հավա-նաբար 1715 թ. շարունակել է) նույն Չարեքա վանքում գրիչ Հով-հաննեսը գրել է «Ժողովածու»³ (թերթ՝ 322, բոլորգիր, նոտրգիր), որի ստացողը Ներսես կրոնավորն է: «Ժողովածու»-ում գիտա-կան մեծ տաղանդով վերլուծված է Գր. Նարեկացու «Մատենան ողբերգութեան» երկը, հայտնի հոգևորականների (Մեսրոպ վրդ. Յովհ. Գառնեցի, Յովհ. Սարկավագ, Գր. Նարեկացի, Մեղրիկ վրդ, Անաստաս քահանա) գործերից ներկայացված է Աղոթքը⁴ և այլն:

Գրիչներ Սարգիս կրոնավորի և Ներսես վարդապետի մա-սին հետաքրքիր հիշատակություն ունի Հ. Ոսկյանը. «Սարգիս

¹ Հյուսիսային Արցախ: Ներկայումս՝ Ադրբեջանի կողմից բռնազավթված Գետաքեկի շրջանում (տե՛ս **Karapetian S.**, *Northern Artsakh*, Yerevan, 2007, p. 271).

² **Karapetian S.**, *Northern Artsakh*, p. 271.

³ ՄՄ, ձեռ. N 8678:

⁴ Ցուցակ ձեռագրաց, հ. Բ, էջ 792:

կրճատորը՝ ի սուրբ ուխտս Չարեքա կ'արտագրէ Աւետարան մը, իսկ 1655-ին հոն Շարականց մը կ'աւարտի, մինչ Ներսէս վարդապետը 1699-ին կը գրէ Գիր Օրհնութեան եւ 1704-ին Գաւազանագիրք մը»¹:

1665 թ. գրիչ, ծաղկող Գրիգորի ճեռքով գրված ձեռագիրը կոչվում է «Ճաշոց»² (թերթ՝ 552, երկայուն, բոլորգիր), որի մասին նշվում է հիշատակագրությունում³: Պատվիրողը համարվում է Չարեքա վանքի առաջնորդ Սարգիս վարդապետը (վանահայր): Ձեռագրի հիշատակարաններից⁴ մեկում⁵ գրիչը նշելով սրբասեր րաբունապետ տեր Սարգսի անունը, ընթերցողներին խնդրանքով դիմում է, որպեսզի ընդմիշտ հիշեն նրան: Աշխատանքի ստեղծման գործում գրիչը արժևորում է վանքի միաբանների՝ տեր Սահակի, Բարսեղի դերը⁶: Նա հիշում է նաև ծնողներին՝ Հովհաննեսին և Եղիսաբեթին, հանգուցյալ եղբորը՝ Հակոբին, կնոջն ու որդիներին՝ Հակոբին, Պալասանին և Ղազարին, որոնք օգնել են գրչին մատյանը ծաղկազարդելու և կազմելու աշխատանքներում⁷:

Վերլուծական մեթոդի տեսակետից առանձնանում են Պողոս առաքյալի⁸, Յեսայայի⁹, Դանիել¹⁰, Մաղաքիա¹¹ մարգարեների, Պետրոս առաքյալի¹² և այլոց կրոնական գաղափարները: Հանգա-

¹ Ոսկեան Հ., ուշվ. աշխ., էջ 175:

² ՄՄ, ձեռ. N 986:

³ Նույն տեղում, ք. 1ք:

⁴ Ձեռագիրն ունի 5 հիշատակարան: Ավելի ուշ՝ XVIII դ. և XIX դ. սկզբին (1808 թ.) ավելացվեցին ևս երկուսը:

⁵ ՄՄ, ձեռ. N 986, ք. 141ք :

⁶ Նույն տեղում, ք. 313 ա:

⁷ Մինասյան Թ., *Արցախի գրչության կենտրոնները*, էջ 62:

⁸ ՄՄ, ձեռ. N 986, ք. 2ա, 29ա, 30ա, 34ք, 38ք:

⁹ Նույն տեղում, ք. 11ք, 35ա:

¹⁰ Նույն տեղում, ք. 15ա:

¹¹ Նույն տեղում, ք. 35ա:

¹² Նույն տեղում, ք. 262ք:

մանորեն ներկայացվում են Համարձման տոնի էությունն ու նշանակությունը¹:

Հայտնի գրչօջախ է եղել *Պապաջան գյուղը* (սակ՝ Պապճան, Ենիքենդ, ներկայիս՝ Բաջանկա²), որտեղ պապաջացի Ավետիս քահանան և Հովհաննես երեցը գրել և նկարագարդել են մի քանի ձեռագրեր: Նշենք մի քանիսը. 1655 թ. գրիչ Ավետիս քահանան սկսում է ընդօրինակել «Շարականոց», որն ավարտում է Խավունսի Ջուխտակ վանքում: Հիշատակարանում նշվում է. «...եղև սկսանել Շարականոցիս ի երկիրն մերում Վերին Զական ի հայրենական գեօղն իմ, անուն Պապաջան: Եւ այժմ օտարացեալ եւ փախուցեալ կամ ի երկիրս, զոր ի վերո, գրեցաք, ի գեօղս որ կոչի Խաունիս, որ եղև աւարտ Շարականոցիս, զի ի շէսս այս կայ պատուական Ջուխտակ եկեղեցիս...»³: Իսկ 1659 թ. գրիչ Ավետիսը ընդօրինակել ու մանրանկարել է «Աւետարան»⁴ (թերթ՝ 304, երկայուն, բոլորգիր), որը տեղացիները կոչել են «Կարմիր Ավետարան»՝ «քրիստոսախօս եւ տիեզերալոյս սուրբ Կարմիր Աւետարանս»: Այս մասին նշվում է ձեռագրի հիշատակարաններից մեկում. «Եղև գրաւ գրչութեան քրիստոսախօս եւ տիեզերալոյս սբ. Կարմիր Աւետարանիս ի թուաբերութեանս հայկազեան տոհմի հազար հարիւր և ութ (1659) ամի, խաղախութիւն ժամանակի յերկիրս Վերին Զագամ, ի գեօղս Պապաճան կոչի, ընդ հովանեաւ Ղար(ա)մուրատի յանապատի...»⁵: «Ավետարան»-ում նկարագրվում է Հիսուս Քրիստոսի ծննդյան, մկրտության, Քրիստոսի կող-

¹ ՄՄ, ձեռ. N 986, ք. 292ա:

² Տեղադրված է Վերին Զագամում (Զական): Ներկայումս գտնվում է Ադրբեջանի կողմից բռնազավթված Գետաբեկի շրջանում (մանրամասն տես՝ **Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ**, էջ 81):

³ **Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ**, էջ 81:

⁴ Տե՛ս ՄՄ, ձեռ. N 3542: Տե՛ս նաև Յուզակ ձեռագրաց, Մաշտոցի անվան Մատենադարանի, Խ. Ա., էջ 1037:

⁵ **Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ**, էջ 81:

մից կատարված հրաշքների, պատգամների և այլ կարևոր իրադարձությունների մասին: Մեծ կարևորություն է տրվում Քրիստոսի պատվիրաններին: Անձի հոգու փրկության համար խորհուրդ է տրվում Աստծոն հավատալ և աղոթել: Մեծ ոգևորությամբ ներկայացվում է «Հայր մեր որ յերկինս սբ. եղիցի անունը քո, եկեսցե արքայութիւնը քո...» տերունական աղոթքը¹: Ձեռագրում ուշագրավ է գրչի հետևյալ գրությունը. «...Զգծագրող եւ զմրող նորա սքանչ սբ. Աւետարանիս անպիտան Աւետիս յիշեա եւ ան զքեզ յիշէ»²: Ավետիսը հիշատակարանի սկզբում նշում է իր ուսուցչին՝ «քաջաբան տէր Մխիթարին՝ աննման վարդապետին», տեր Սարգիս վարդապետին և տեր Հակոբ շնորհագարդ քահանային³: Նա հիշատակում է նաև Պետրոս կաթողիկոսի անունը, հավաստելով, որ «Ավետարան»-ը գրվել է Խանձքեցի կաթողիկոսի օրոք: Հավելենք, որ Ավետիս քահանան այն գրել ու նկարագարող էլ է տանուտեր Հախում Պասակերցու և Բարսեղ քահանայի խնդրանքով. «...Եւ արդ ցանկացող եւ ստացող եղեալ սբ. Աւետարանիս Պասակերեցի Հախումն...»⁴: Վերջիններիս խնդրանքը կապված է իրենց երեխանների անունների և ծնողների հիշատակի հետ, որոնց մասին նշվում է գրչի թողած հիշատակարաններից մեկում⁵: Ավետիս քահանայի հաջորդ ձեռագիրը՝ «Աւետարան»-ը (թերթ՝ 282, երկայուն, բոլորգիր), գրվել է 1661 թ.⁶: Այս մասին նշվում է գրչի հիշատակարաններից (գրիչի կողմից թողնվել

¹ Տե՛ս ՄՄ, ձեռ. N 3542, ք. 12բ:

² Նույն տեղում, ք. 137բ:

³ Նույն տեղում, ք. 299ա–300ա:

⁴ Նույն տեղում, ք. 299ա–300ա:

⁵ ՄՄ, ձեռ. N 3542, ք. 301ա:

⁶ Նույն տեղում, ձեռ. N 7687: Տե՛ս նաև Յուզակ ձեռագրաց Մաշտոցի ամվան Մատենադարանի, հ. Բ, էջ 587:

էր չորս¹ հիշատակարան)մեկում. «...գրաւ Սբ. Աւետարանս ձեռամբ Աւետիս քահանայի...ի երկիրս Վերին Զակամ ի գետոս որ կոչի Պապճան²»: Գրիչը հավելում է, որ այն գրվել է Զուխտակ կոչվող եկեղեցում՝ Գանձասարի Պետրոս կաթողիկոսի հայրապետության ժամանակ³:

Պապաջան գյուղում իրենց հետաքրքրությամբ աչքի են ընկնում նաև 1662 թ. գրիչ Հովհաննես երեցի (Ավետարան⁴, թերթ՝ 266, երկայուն, բոլորգիր) և 1668 թ. գրիչ, ծաղկող Ավետիսի (Շարականոց⁵, թերթ՝ 295, միասյուն, բոլորգիր) ձեռքով գրված ձեռագրերը: Վերջինիս հիշատակարանում⁶ նշվում է, որ Ավետիսը ոչ միայն գրել է, այլ նաև ծաղկազարդել: Էջ 292ա-ում հստակ նշվում է, որ այն գրվել է Պապաջան գյուղի Զուխտակ եկեղեցում՝ Աղվանից Պետրոս կաթողիկոսի օրոք: Ուշագրավ է շարականների ոճը, գրչի լեզուն, խոսքի գեղարվեստական մյուս միջոցները: Ձեռագրի էջ 7բ-10ա-ում գովերգվում է սուրբ Մարիամ Աստվածածնի անձը, որ ծնավ մեր ազգի փրկչին՝ Հիսուս Քրիստոսին, ապա փառաբանվում է Քրիստոսը, նրա առաքելությունը, ով թողել էր իր հավիտենական փառքը⁷: Հետաքրքիր մեկնաբանություններով առանձնանում են «Շարական երկոտասան առաքելք»⁸, «Կանոն Յունանու մարգարեի»⁹, «Կանոն սրբոց Քառասնիցն»¹⁰ գլուխները:

¹ ՍՄ, ձեռ. N 7687, ք. 1ք, 126ա, 211բ, 277ա:

² Նույն տեղում, ք. 279ա:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, ձեռ. N 337:

⁵ ՍՄ, ձեռ. N 8549:

⁶ Նույն տեղում, ք. 289բ-294բ:

⁷ Նույն տեղում, ք. 17ա-21բ:

⁸ Նույն տեղում, ք. 21բ:

⁹ ՍՄ, ձեռ. N 8549, ք. 24ա:

¹⁰ Նույն տեղում, ք. 53բ:

Իր բազմաթիվ և բազմաբովանդակ ձեռագրերով առանձնա-
նում է *Քարահաստ գյուղը* (նաև՝ Քարհաստ¹), որտեղ գրված մի
քանի ձեռագրերի մասին մեզ հաջողվել է հավաքել որոշ տեղե-
կություններ: Այսպես, Գրիչ Ավետիս քարտուղարը 1655 թ. օրինա-
կել է «Աւետարան» (թերթ՝ 300, երկայուն, բոլորգիր), որի ստա-
ցողները եղել են Ղուկաս վարդապետն ու Պետրոս կաթողիկո-
սը²: Ձեռագիր մատյանի վերաբերյալ «Մեղու Հայաստանի»
պարբերականը նշում է. «...Եղև յավարտ սուրբ ււետարանիս ի
յերկիրս Գեանջու, ի գեօղն Քարհաստ, ի թագաւորութեան Շահա-
բասի փոքու...»³ (խոսքը վերաբերվում է Աբբաս Բ-ին⁴ 1642-1666):
Այս մասին որոշ տեղեկություններ կան Կարապետ եպիսկոպոսին
(նաև՝ Կարապիտ, գործունեությունը ծավալել է Արցախում) վե-
րագրվող գրության մեջ, որն ամրացվել է աշխատանքի տիտղո-
սաթերթի վրա: Ձեռագրի հետ առնչվող որոշ արժեքավոր
պատմական նշումներ են արվել մատյանի հիշատակարանում⁵:
Իրենց խորիմաստ բովանդակությամբ առանձնանում են «Աւե-
տարան՝ ըստ Մատթեոսի⁶», «Աւետարան՝ ըստ Ղուկասի⁷» գլուխ-
ները:

Քարահաստում իր բազմաբովանդակ ստեղծագործություննե-
րով աչքի է ընկնում գրիչ, ծաղկող Գրիգոր երեցը, որի աշխա-

¹ Գյուղը եղել է պատմական Մեծ Հայքի Ոստիք աշխարհի Գարդմանածոր գավառում:
Գանձակում, ներկայումս՝ Աղբրեջանի կողմից բռնագավթված Դաշքեսանի շրջանում
(այս մասին տես՝ «Արձագանք», Թիֆլիս, 1886, N 21, 1 հունիսի, էջ 310: **Հակոբյան Թ.,
Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.**, նշվ. աշխ., հ. 5, Ե., 2001, էջ 314: **Մինասյան Թ.**,
նշվ. աշխ., էջ 75):

² ՄՄ, ձեռ. N 3196:

³ Տես՝ «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1885, N 74, էջ 3:

⁴ Աբբաս Բ-ի մասին որոշ հետաքրքիր գրառումներ էր կատարել Ջաքարիա Ազուլե-
ցին (տես՝ հեղինակի նշվ. աշխ., էջ 59, 68):

⁵ ՄՄ, ձեռ. N 3196, էջ 299բ-302ա:

⁶ Նույն տեղում, ք. 86բ:

⁷ Նույն տեղում, ք. 144բ:

տանքներից մի քանիսը հասել են մեզ: Նա 1656 թ. Սանդուխտի պատվերով, միասյուն, բոլորգիր տառերով գրեց «Շարականոց¹» (թերթ՝ 378): Հաջորդը՝ «Աւետարան»-ը, Գրիգոր երեցի կողմից գրվել է 1659 թ.: Թ. Մինասյանը, ելնելով ձեռագրի որոշ տեղեկություններից, նշում է, որ այդ աշխատանքը կատարվել է Եղիայի խնդրանքով, որը պետք է նվիրվեր տեր Տերունուն: Ավելի ուշ ձեռագիր մատյանը դարձել է Արսեն և Արման Փուշմանների սեփականությունը²: Հիշատակության արժանի է «Տոնացոյց»-ը (թերթ՝ 270, միասյուն, բոլորգիր)³, որը գրիչ Գրիգոր երեցը՝ Աղվանից կաթողիկոս Պետրոս Խանձքեցու պատվերով գրեց 1662 թ.: Իրենց հետաքրքրությամբ աչքի են ընկնում՝ 1665 թ. նրա կողմից գրված «Ժամագիրք»-ն ու «Տոնացոյց»-ը⁴ (թերթ՝ 285, միասյուն, բոլորգիր):

Ուշագրավ է Քարահատ գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցում 1675 թ. գրիչ, ծաղկող Գրիգոր քահանայի ձեռքով գրված «Աւետարան»-ը, որի պատվիրողը համարվում է Իգնատիոս վարդապետը⁵: Այս մասին վկայում է «Աւետարան»-ի վերջում թողնված գրությունը. «Աւետարանս գրուած է Հայոց 1675 թուին Հակոբ կաթողիկոսի օրերում, որ ժամանակ եղիլին Գանձասարի Պետրոս և Սիմէօն կաթողիկոսները պարսից Շահ Սուլեյմանի տիրապետութեան ժամանակ: Նվիրված է Սիմէօն կաթողիկոսի եղբայր Իգնատիոս վարդապետին»⁶: 1676 թ. գրիչ Բարսեղ քահանայի ձեռքով ևս գրվեց «Աւետարան», ստացողը՝ Մովսես քահանա

¹ ՍՄ, ձեռ. N 10044:

² Մինասյան Թ., նշվ. աշխ., էջ 76:

³ ՍՄ, ձեռ. N 10743: Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Գ, Ե., 2007, էջ 187:

⁴ ՍՄ, ձեռ. N 9448:

⁵ ՍՄ, ձեռ. N 8965:

⁶ Նույն տեղում:

(Մուշի Սբ. Կարապետ կոչվող վանքի ձեռագրերից մեկն էր համարվում, որի մասին նշված է ձեռագրի վերջում): Իրենց բովանդակությամբ հետաքրքիր են հետևյալ բաժինները՝ «Վասն մոգուցն», «Վասն Հարիւրապետին», «Վասն անդամալուծին», «Վասն Մատթեի», «Վասն Առաքելոցն իշխանութե», «Վասն կոյր դիւահարին», «Վասն բժշկելոյ զժողովուրդն», «Վասն կուրացն եւ կաղացն», «Վասն օրինականացն», «Վասն ուրացութեն Պետրոսի» և այլն¹: Քարահատի ձեռագրերից արժեքավոր նմուշներ են գրիչ Հովհաննես երեցի և Ղազար սարկավագի ձեռքով գրված աշխատանքները, որոնցից միայն մեկի մասին ունենք քիչ տեղեկություններ: Այսպես, նրանց աշխատանքներից է «Աւետարան»-ը (թերթ՝ 251, երկայուն, բոլորգիր)², որը գրվել է 1691 թ.: Պատվիրողներն եղել են Ավետոն (նաև՝ Ավետր) ու նրա որդին՝ Իփակը: Այս մասին նշվում է ձեռագրի հիշատակարաններից մեկում. «...Արդ գրեցաւ վարդափրթիթ և ոսկեգօծ Սբ. Աւետարանս ձեռամբ բազմամեղ Յովաննես իրիցու եւ Ղազար սարկավագի»³: Գրիչը շեշտում է, որ նրանք ոչ միայն գրել, այլև ծաղկել են «Աւետարան»-ը ոսկեգօծ, երփներանգ գույներով: Հավելում է, որ ձեռագիրը գրվել է 1691 թ. հունվարի 1-ին, Աղվանից կաթողիկոս Երեմիայի (խոսքը վերաբերում է Երեմիա Հասան-Ջալալյան՝ 1676-1700 թթ.) օրոք, Գանձակի Քարահատ գյուղում⁴: Հետաքրքիր է աշխատանքի պատվիրողի՝ Ավետրի մասին հիշատակումը. «Աւետրին, որ ըստացաւ զ Սբ. Աւետարանս, յիշատակ

¹ ՄՄ, ձեռ. N 5636:

² ՄՄ, ձեռ. N 10660:

³ Նույն տեղում, ք. 249 ք:

⁴ Նույն տեղում, ք. 250 ա:

է իւր ծնողացն եւ կենակցին՝ Մարգարտին, եւ որդւոյն՝ Իփակին: Յիշեցէք Իփակն եւ կենակցին՝ Եղիսաբեթին եւ իւր որդիքն...»¹:

Սոսնու² բնակավայրի ձեռագրերից հայտնի է Ավետիս քահանայի կողմից 1656 թ. գրված ձեռագիր մատյանը՝ «Մաշտոց»-ը, որի հիշատակարանում նշվում է. «...ի երկիրս Շամքոռայ, ի գեղս որ կոչի Սոսոռո...»³:

Մեծ Ղարամուրատի⁴ մերձակայքի Հարանց վանքի (անապատ) ձեռագրերից հայտնի են գրիչ (նաև ստացող) Ավետիս արքեպիսկոպոստի Քամալեցու ձեռքով 1659 թ. և 1679 թ.(թերթ՝ 264, երկայուն, բոլորգիր)⁵ օրինակված «Աւետարան»-ները⁶: Իսկ գյուղի Սբ. Ամենափրկիչ եկեղեցում Ղուկաս երեցը 1682 թ. հեղինակել է «Մաշտոց Ձեռագ» երկը (թերթ՝ 152, միասյուն, բոլորգիր)⁷:

Սվրեցիք⁸ (նաև՝ **Սավուրեցիք**) գյուղատեղիում եղած գրչագրության արվեստի առկայության մասին վկայում է գրիչ Սարգիսի ձեռքով 1660 թ. օրինակված ձեռագիրը՝ «Աստվածաշունչը»: Վերջինիս մասին հիշատակվում է Մատենադարանում պահվող վավերագրերից մեկում⁹. «...Ի սոյն ժամանակի եղև աարտ

¹ ՍՄ, ձեռ. N 10660, p. 250 ա:

² Հյուսիսային Արցախ, ներկայումս՝ Ադրբեջանի կողմից բռնազավթված Շամխորի շրջանում (տե՛ս **Karapetian S., Northern Artsakh**, p. 515).

³ **Կարապետյան Ս.**, *Հյուսիսային Արցախ*, էջ 525:

⁴ Պատմական Մեծ Հայքի Ուտիք նահանգի Գարդման գավառում: Ներկայումս գտնվում է Ադրբեջանի կողմից բռնազավթված Գետարեկի շրջանում (մանրամասն տե՛ս Գ.ԱԹ, Ս. Քամալյանի ֆոնդ, ց. 2, բաժին VI: **Լալանեան Ե.**, *Հայոց նշանակող գյուղեր*, «Ազգագրական հանդէս», 1899, N 5, էջ 326, **Կարապետյան Ս.**, *Հյուսիսային Արցախ*, էջ 88, https://hy.wikipedia.org/wiki/Մեծ_Ղարամուրատ):

⁵ ՍՄ, ձեռ. N 6705:

⁶ **Կարապետյան Ս.**, *Հյուսիսային Արցախ*, էջ 93–96:

⁷ ՍՄ, ձեռ. N 5868:

⁸ Գտնվում է Շամքոր գետի աջակողմյան բարձր արահարթի վրա: Ներկայումս՝ Ադրբեջանի կողմից բռնազավթված Դաշլի(ք)եանի շրջանում (մանրամասն տե՛ս **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Սո., Բարսեղյան Հ.**, *նշվ. աշխ.*, հ. 4, Ե., 1998, էջ 683, **Կարապետյան Ս.**, *Հյուսիսային Արցախ*, էջ 254):

⁹ Վավերագրում նշվում է, որ ձեռագիրը գրվել էր 1660 թ., և որ այն գտնվել է գրիչ Սարգիսի տանը (տե՛ս Մատենադարան, ֆ. Կաթողիկոսական դիվան, քոթ. 1 վավ. 79, էջ 1):

աստվածաբուդի մատինիս սրբոյ Աւետարանիս 'ի յերկիրս Գանճայու, ի գիօղս Մավուրէցիք, ընդ հովանեա սուրբ եկեղեցոյս եւ սուրբ Կարմիր Աւետարանիս 'ի հայրապետութեան տեառն Պետրոսի Աղվանից կաթողիկոսի սրբազան հայրապետի եւ 'ի առաջնորդութեան սուրբ ուխտին Չարեքա մենաստանի Սարգիս երջանիկ վարդապետի եւ 'ի եպիսկոպոսութեան երկրիս Գանճայու Խաչատուր վարդապետի»¹:

Հարցահանգիստ² գյուղի (նաև՝ Հերցանկիս, Հարցանկիս, Չովդառ) գրչօջախից մեզ հասած ձեռագրերը գրվել են Մաժնաբերդի³ (նաև՝ Մալազնաբերդ, Մլզնաբերդ, որը շատ մոտ է եղել Հարցանկիս գյուղին) Սբ. Ամենափրկիչ վանքում: Հայտնի են 17-րդ դարի երկրորդ կեսին գրված երեք Ավետարանները: Ձեռագրերից մեկը՝ «Աւետարան»-ը (թերթ՝ 318, երկայուն, բոլորգիր), գրվել է 1666 թ., գրիչ Հովհաննեսի կողմից⁴: Ծաղկողը և կազմողն եղել է Գրիգոր երեցը, իսկ ստացողը՝ Հակոբը: Այս մասին գրիչն ավելի հանգամանալից ներկայացնում է «Ավետարան»-ի հիշատակարանում. «...Արդ գրեցավ Սբ. աստուածանկար Աւետարանս, ձեռամբ Յովաաննիսի, ի յերկիրս Գանճայ ի գեօղս Հարցանկիս ի դրան սուրբ Մալազ(ո)նաբերթին ի հայրապետութեան երիցս երանելոյ հովուապետին տանս Աղուանից տեառն

¹ Մատենադարան, ֆ. Կաթողիկոսական դիվան, քոթ. 1 վավ. 79, էջ 2-3: Տե՛ս նաև **Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ**, էջ 254:

² Գտնվում է Գանձակում, ներկայումս՝ Ադրբեջանի կողմից բռնազավթված Դաշքեսանի շրջանում (մանրամասն տե՛ս **Լալաբեան Ե., Հայոց նշանավոր գյուղեր**, «Ազգագրական հանդէս», 1899, N 5, էջ 309: «Արձագանք», 1886, N 20, 25 մայիսի, էջ 295-296: **Karapetian S., Northern Artsakh**, p. 156):

³ Միջնադարյան հայկական քերդ պատմական Գարդման գավառում (տե՛ս «Արձագանք», 1886, N 21, 1 հունիսի, էջ 307: **Լալաբեան Ե., Նշանավոր քերդեր**, «Ազգագրական հանդէս», 1899, N 5(1) էջ 352): Ներկայումս գտնվում է Ադրբեջանի կողմից բռնազավթված Դաշքեսանի շրջանում (**Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ**, Ե., 2004, էջ 245, <https://hy.wikipedia.org/wiki/Մաժնաբերդ>):

⁴ ՄՄ, ձեռ. N 11060:

Պետրոսի սրբազան կաթողիկոսին, եպիսկոպոսութեան սուրբ Ամենափրկչին քաջ և արի բաբունապետին, Խաչատուր վարդապետի և թագաւորութեան Պարսից Փոքր Շահապազին, ի թվականութեանս հայոց ՌՃԺԵ ամի...»¹: Ծաղկող Գրիգոր երեցի կողմից թողած հիշատակումից² հասկանում ենք, որ նա ծաղկել է «Աւետարան»-ը ոսկե և երփներանգ գույներով՝ Տեր Եսայի և Տեր Մովսէսի խնդրանքով: Հոգևոր թմառիկայի վերլուծման տեսակետից, արժևորում ենք «Մատթէի աւետարանի» գլուխը, որն ունի իր բազմաբովանդակ ենթաբաժիները՝ «Վասն երկու կուրացն», «Վասն խլին եւ համրին», «Վասն առաքելոցն իշխանութենէ», «Վասն կոյր եւ համր դիւահարին», «Վասն հինգ հացիցն», «Վասն բժշկելոյ գժողովորդն», «Վասն կուրացն կաղաց», «Վասն օրինականացն», «Վասն տասն կուսանացն», «Վասն յուրայի գղջման»³:

Երկրորդ ձեռագիրը՝ «Աւետարան»-ը (թերթ՝ 293, երկայուն, բոլորգիր), գրվել է 1669 թ.⁴, գրիչ Հովհաննէսի ձեռքով, ստացողը՝ խոջա Փարսադան: Գրչի հիշատակարանում նշվում է. «Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի թվականութեանս հայոց ՌՃԺԸ, ի հայրապետութեան երիցս երանելոյ հովուապետին տանս Աղուանից տեառն Պետրոսի սրբազան կաթողիկոսին, թագաւորութին պարսից շահ Սիլէիմանին, գրեցաւ ձեռամբ անարժան սուտանուն Յովանէսի ի յեկիրէ Գանձակու ի գեաւդս որ կոչի Հարցանկի, ի դուռն սուրբ Մալազնաբերթին ի դառն ժամանակիս ասարտեցաք որ հարկապահանջութինն բազմացեալ էր և անօրէնքն յամենայն ժամ խրոխտային ի վերայ քրիստոնէից ազգին եւ

¹ ՄՄ, ձեռ. N 11060, ք. 311բ: Տե՛ս նաև «Արձագանք», 1886, N 20, 25 մայիսի, էջ 296:

² Նույն տեղում, ք. 312ա:

³ Նույն տեղում, ք. 7ա–8ա:

⁴ ՄՄ, ձեռ. N 10966:

քրիստոսի փառք յափտեանս ամէն...»¹: Ըստ որոշ տեղեկության՝ այս ձեռագիրը գտնվել է Շամշադինի Ղուլալի² (Այգեձոր) գյուղի եկեղեցում³: Ձեռագրում ինքնատիպ նկարագրվում են քրիստոնյանների առաքելությունների մասին, շեշտվում, որ նրանց ջանքերի շնորհիվ հասարակության լայն շրջանակներում ամրապնդվել է քրիստոնեական հավատքը և բուժվել բազմաթիվ հիվանդություններ. «...եւ շրջեր քաղաքս եւ գեղս՝ ուսուցանէր ի ժողովուրդս նոցա եւ քարոզէր զաւետարանն արքայութեան, եւ բժշկէր զամենայն հիւանդութիւնս եւ զամենայն ախտս ի ժողովրդեանն...»⁴: Հետաքրքիր տեղեկություններ կան Պետրոսի⁵, Գաբրիել հրեշտակի⁶ (պատմվում է, թե ինչպես է Տիրոջ հրեշտակը բարի լուրը ավետում Սբ. Մարիամին), Մարիամ Աստվածածնի⁷, Հովաննեսի⁸ և այլոց մասին:

Հաջորդ «Աւետարան»-ը⁹ (թերթ՝ 298, երկայուն, բոլորգիր) գրվել է 1683 թ.: Գրիչը եղել է Հովհաննես երեցը, ստացողը՝ Նազարը, իսկ կազմողը՝ Ոհաննես երեցը: Այս մասին նշվում է ձեռագրի հիշատակարանում. «...Արդ գրեցաւ Սբ Աւետարանս...ի թագաւորութեան պարսից շահ Մուլէյմանին¹⁰ եւ ի հայրապետութեան Աղուանից տեր Սիմէօնի սրբազան կաթողիկոսի, ի յերկիրս Գանջա, ի գեղս Հերցանկիս...ձեռամբ Յովաննէս իրիցու»: Այնուհետև նշվում է, որ երբ Հովհաննես երեցը գրեց Սբ. «Ավե-

¹ ՄՄ, ձեռ. N 10966, ք. 293բ: Տե՛ս նաև «Արձագանք», 1886, N 20, 25 մայիսի, էջ 296: **Բարխուտարեանց Մ., Արցախ (1895)**, էջ 322:

² **Բարխուտարեանց Մ., Արցախ (1895)**, էջ 321:

³ «Արձագանք», 1886, N 20, 25 մայիսի, էջ 296:

⁴ ՄՄ, ձեռ. N 10966, ք. 14բ:

⁵ Նույն տեղում, ք. 108բ:

⁶ Նույն տեղում, ք. 133ա–134ա:

⁷ Նույն տեղում, ք. 134ա:

⁸ ՄՄ, ձեռ. N 10966, ք. 224բ:

⁹ ՄՄ, ձեռ. N 3994:

¹⁰ Նույն տեղում, ք. 295բ–296ա:

տարանը», ոչ ծաղկեց, ոչ էլ կազմեց այն¹: Աշխատանքը բաղկացած է չորս գլուխներից և համապատասխան ենթավերնագրերից: Ուշագրավ են «Աւետարան Մատթեոսի²», «Աւետարան Մարկոսի³», «Աւետարան Դուկասի⁴» գլուխներում զետեղված ենթաբաժինները: Հետաքրքիր է «Մարկոսի Աւետարանի» նախաբանում նշված գրառումը, որտեղ ասվում է, որ այդ գլուխը գրվել է Մարկոսի կողմից, որն էլ եղել է Պետրոսի աշակերտը⁵: Այս գլխում անդրադարձ է կատարվում հետևյալ հարցերին՝ «Վասն դիւահարին», «Վասն անդամալուծին», «Վասն համերն և խլին», «Վասն Բարդէմէոսի», «Վասն դպրացն», «Վասն Զատկին»⁶ և այլն:

Գուլլար գյուղում (նաև՝ Քյոլլու)⁷ հայտնի է 1667 թ. գրիչ Սարգիսի կողմից գրված «Աւետարան»-ը⁸, որի ստացողն է Տարչին: Այս մասին նշվում է գրչի հիշատակարանում⁹, որտեղ նա ձեռագիրն անվանում է նաև «Կարմիր Աւետարան»¹⁰: Հիշատակարանում ուշագրավ է հետևյալ գրառումը. «...ի թագաւորութեան Պարսից փոքր շահ Սէֆուն նորընծա թագաւորի եւ ի հայրապետութեան տանս Աղուանից տեառն Պետրոսի սրբազան կաթողիկոսի եւ առաջնորդութեան... Յովհաննէս Եպիսկոպոսի...»¹¹: Հետաքրքիր կերպով վերլուծված են Սբ. Մատթեոսին,

¹ ՄՄ, ձեռ. N 3994, ք. 296ա:

² Նույն տեղում, ք. 2բ:

³ Նույն տեղում, ք. 82ա:

⁴ Նույն տեղում, ք. 136բ:

⁵ Նույն տեղում, ք. 81բ:

⁶ Նույն տեղում, ք. 82ա–83ա:

⁷ Գյուղ Գանձակում, մերկայումս գտնվում է Ադրբեջանի կողմից բռնազավթված Դաշքեսանի շրջանում (տե՛ս **Karapetian S., Northern Artsakh**, p. 203):

⁸ ՄՄ, ձեռ. N 6771:

⁹ Նույն տեղում, ք. 302բ–304ա:

¹⁰ Նույն տեղում, ք. 302բ:

¹¹ Նույն տեղում, ք. 302բ–303ա: Տե՛ս նաև **Մինասյան Թ.**, նշվ. աշխ., էջ 76:

Սբ. Մարկոսին վերագրվող գրուխները: Սբ. Մատթեոսին վերագրվող գրուխի մեջ ամփոփված են «Վասն մոգուցն», «Վասն կոտորածի մանկանցն», «Վասն Հարիւրապետին», «Վասն բժշկութեան», «Վասն Անդամալուծին», «Վասն երկու կուրացն», «Վասն խլին ու համրին», «Վասն օրինականացն», «Վասն օրինաւոր խորհրդոյն», «Վասն ուրացութեն Պետրոսի», «Վասն Յուդայի զղջման» և այլ բաժիններ¹, իսկ Սբ. Մարկոսին՝ «Վասն կուրին», «Վասն անիշաչարութեան», «Վասն Զատիկին», «Վասն Պետրոսի ուրացութեն» և այլն²:

Օ. Եգանյանն իր «Գետաշենի ավագ սուրբ նշան մատրան հայերեն ձեռագրերը» հոդվածում³ հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում *Գետաշենի* Ավագ սուրբ Նշան մատուռի⁴ հայերեն ձեռագրերի մասին: Վերջինս այդ ձեռագրերի վերաբերյալ հայտնում է հետևյալ տեսակետը. «Թե քանի ձեռագիր է ունեցել մատուռը իր կառուցման առաջին իսկ օրից (1667 թ.) և քանակական ինչ փոփոխություններ է կրել հետագայում, դժվար է ասել, որովհետև եղած տեղեկությունները վերաբերվում են միայն ԺԹ դարին»⁵: Նշելով Ս. Զալայանցի, Մ. Բարխուդարյանի, Ե. Լալայանի կողմից արձանագրված որոշ ձեռագրերի մասին, Օ. Եգանյանը հիշատակում է գրիչ, ծաղկող Նիկողայոսի և գրիչ Սարգիս երեցի ձեռքով գրված ձեռագրերը՝ «Անետարան»-ները⁶: Գրիչ, ծաղկող Նիկողայոսին վերագրվող «Անետարան»-ը գրվել է 1667 թ., իսկ Սարգիս երեցին՝ 1671-1673 թթ.: Վերջինիս «Անետարան»-ը (թերթ՝

¹ ՄՄ, ձեռ. N 6771, ք. 11ք-13ա:

² Նույն տեղում, ք. 93ք-94ա:

³ «Էջմիածին», 1971, N 9, էջ 54: Տե՛ս նաև **Եգանյան Օ., Գարեգին եպ. Հովսեփյանի հայերեն ձեռագրերի հավաքածուն**, «Էջմիածին», 1973, N 8, էջ 35:

⁴ Պատմական Գարդման զավառում, ներկայիս Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանում, Կորսակ գետի ափին: Այժմ գյուղը օկուպացված է Ադրբեջանի կողմից:

⁵ «Էջմիածին», 1971, N 9, էջ 54:

⁶ Նույն տեղում:

300, երկայուն, բոլորգիր) ընդօրինակվել է *Դաստիփյուրում*¹ (սակ՝ Դաստիփիւր, Դաստափոր), որն ինչ-ինչ հանգամանքների պատճառով սկսել է պահվել վերոնշյալ Սբ. Նշան մատուռում: Գրիչ Սարգիսը ձեռագիր մատյանը ընդօրինակել է ի հիշատակ իր ծնողների՝ Մարյանին և Եաղուբին: Աշխատանքը 1677 թ. պատկանել է Եարամիշին և նրա որդիներին՝ Ամիխոջին և Թումանին²: Ձեռագիրը պահվում է Մատենադարանի 6746 թվահամարի ներքո:

Դաստիփյուրում նույն Սարգիս երեցի մյուս ձեռագիրը՝ «Մաշտոց»-ն է (թերթ՝ 306, երկայուն, բոլորգիր), որն օրինակվել է 1673-1674 թթ.³:

Հայտնի գրչօջախներից է *Պայանանց գյուղը* (Գանձակ): Տեղի Սբ. Հրեշտակապետի վանքում մեծահարուստ պարոն Միրումի պատվերով գրիչ Սարգիս երեցը 1669 թ. գրել է «Աւետարան»: «Արձագանք» պարբերականը նշում է ձեռագրի հետևյալ գրութայան մասին. «Գրեցաւ սուրբ և Աստուածաշունչ Աւետարանս ի թուականիս հայոց ՌՃԺԸ ամին ի թագաւորութեան պարսից շահ Սուլէյմանի եւ ի հայրապետութեան տանս Աղուանից Տեառն Պետրոսի կաթողիկոսի եւ առաջնորդութեան սուրբ մենաստանիս Պայանու Աստոն պարոն տիրի ըստ առաջին հարանցն նմանելոյ ի յերկիրն Գանձայու ի գեղս Քարատակ ընդ հովանեաւ նորակնունք սուրբ եկեղեցոյս եւ սուրբ Գաբրիել եւ Միքայել տաճարիս. սուրբ աւետարանցս այս որ աստ կան: Ձեռամբ մեղա-

¹ Գյուղը տեղադրված է եղել պատմական Մեծ Հայքի Ուտիք նահանգում: Ներկայումս գտնվում է Գանձակ գետի ձախ վտակ Դաստափորի ձախակողմի հարավահայաց ձորալանջին և կոչվում է Դաստափոր կամ Դաստափոր, արքր: Dəstəfür, Արքրեջանի կողմից բռնագավթված Դաշքեսանի շրջանում (<https://hy.wikipedia.org/wiki>, տե՛ս նաև **Karapetian S., Northern Artsakh**, p. 143):

² Մինասյան Թ., նշվ. աշխ., էջ 73:

³ ՄՄ, ձեռ. N 3576: Տե՛ս նաև Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, Ե., 1965, էջ 1043:

պարտ Սարգիս անարժան երիցոյ, որ միայն անուամբ եմ քահանայ եւ գործով ոչ: Ի խնդրոյ բարեմիտ եւ մեծահարուստ եւ իշխանազուն Պարոն Միրումին, որ է որդի Սարուխան պէկին, թոռն մեծ Միրումանին...¹»: Հետաքրքիր է «Աւետարան»-ի հետևյալ գրառումը. «Թվին ՌՄԺԲ ... առայ Յովհաննէս սուրբ ավետարանս ի ճորս Գանձակու ի երկիրս Գանձու, ի գիւղս որ կոչի Պայանանց ի դռն սուրբ Հրեշտակապետ եկեղեցոյ, ի հայրապետութեան Գանձասարու տէր Ներսէսին»²:

Մատենադարանի 3856 թվահամարի ներքո պահվող ձեռագրում նշվում է *Քարատակ* գյուղում (Գանձակ) գրիչ Սարգիս քահանայի կողմից 1669 թ. գրված «Աւետարան»-ի մասին (ստացող՝ պրն. Միրում, թերթ՝ 327, երկայուն, բոլորգիր)³: Ձեռագիրը գրվել է Սարուխան բեկի որդու՝ պարոն Միրումի խնդրանքով: Այս մասին նշվում է գրչի հիշատակարաններից մեկում. «Արդ գրեցաւ սուրբ եւ Աստուածաշունչ Աւետարանս ի թուականիս հայոց ՌՃԻԸ ամին ի թագաւորութեան պարսից Շահ Սուլէյմանի եւ ի հայրապետութեան տան Աղուանից տեառն Պետրոսի կաթողիկոսի եւ ի առաջնորդութեան սուրբ մենարանին Պո(ա)յանու Անտոն պարոնտիրի ըստ առաջին հարանցն նմանելով ի յերկիրս Գանձայու, ի գեղս Քարատակ ընդ հովանեաւ նորակնունք սուրբ եկեղեցոյս եւ սուրբ Գաբրիէլ եւ Միքայէլ տաճարիս սուրբ ավետարանցս, որ աստ կան: Ձեռամբ մեղապարտ Սարգիս անարժան երիցոյ, որ միայն անուամբ եմ քահանայ եւ գործով՝ ոչ: Ի խնդրոյ բարեմիտ եւ մեծահաւատ եւ իշխանազուն պարոն Միրու-

¹ «Արձագանք», Թիֆլիս, 1888, N 10, 20 մարտի, էջ 133:

² Ոսկեան Հ., նշվ. աշխ., էջ 7:

³ ՄՄ, ձեռ. N 3856: Տե՛ս նաև Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, էջ 1098:

մին, որ է որդի Սարուխան պէկին, թոռն մեծ Միրումանին...»¹: Աշխատանքում քրիստոնեական հավատքի արտացոլման տեսակետից առանձնանում է Մատթեոսին վերագրվող գլուխը, որն իր մեջ ամփոփում է մի շարք բաժիններ՝ «Վասն հարիւրապետին», «Վասն բժշկութեան», «Վասն անդամալուծին», «Վասն խլին ու համրին», «Վասն կուրացն և կաղացն», «Վասն Յուդայի գղջմանն» և այլն²:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում գրչագրության կենտրոններից հիշատակության արժանի են **Համտիվսա, Պարտաւ, Հարար, Գյուլիստան, Ոսկանապատ, Սարդարի թալա** և այլ վայրեր: Հավելենք, որ վերոնշյալ գրչագրության կենտրոններում գրված ձեռագրերի մասին շատ քիչ տեղեկություններ են պահպանվել:

Համտիվսա գյուղում (Գանձակ) Ազարիա և Ղազար քահանաների կողմից 1671 թ. օրինակվել է «Աւետարան» (թերթ՝ 282, երկայուն, բոլորգիր)³: Նույն՝ 1671 թ., մեկ այլ «Աւետարան» (թերթ՝ 182, երկայուն, բոլորգիր)⁴ օրինակվեց **Պարտաւում**⁵, որի ստացողը համարվում է տանուտեր Խասալու Սարդարը:

Հարար⁶ գյուղի եկեղեցում (**Հագարան կամ Հագարեան երկիր,**) հայտնի է Մարտիրոս քահանայի պատվերով և Պաղտա-

¹ ՄՄ, ձեռ. 3856, ք. 324ա–324բ: Տե՛ս նաև Արձագանք, Թիֆլիս, 1886, N 20, 25 մայիսի, էջ 294–295:

² Նույն տեղում, ք. 14բ–16բ:

³ ՄՄ, ձեռ. N 3541: Նաև տե՛ս Յուզակ ձեռագրաց Մաշտոցի ամվան Մատենադարանի, հ. Ա, էջ 1037:

⁴ ՄՄ, ձեռ. N 10863:

⁵ Պարտաւը գտնվում է դաշտային Արցախի՝ Տրտու (Թարթառ) գետի ափին: Մանրաման տե՛ս **Карапетян С., Памятники армянской культуры в зоне Нагорного Карабаха**, Е., 2000, с. 212:

⁶ Գտնվում է Հակարի գետի ձախ կողմում: Գյուղը ներկայիս Արցախի Հանրապետության Հաղորտի շրջանի արևմտյան սահմանից հեռու է ընդամենը 2 կմ (տե՛ս **Կարապետյան Ա., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում**, Ե., 1999, էջ 179):

սար դպրի ձեռքով 1666 թ. գրված ձեռագիրը՝ «Մաշտոց Ձեռագր»¹: Ստացողն եղել է Մարտիրոս քահանան: Իր կրոնական թեմաներով առանձնանում է նույն՝ Պաղտասար դպրի ձեռքով 1671 թ. գրված «Ավետարանը», որի ստացողն է համարվում Եղիսաբեթը: Այս մասին հետաքրքիր գրառում ունի Վրեժ Ներսիսյանը, որն իր՝ «Ցուցակ հայերեն ձեռագրաց Լոնդոնի Վեյքոմ ինստիտուտի գրադարանի» խորագրով հոդվածում նշում է գրչի թողած հիշատակության մասին. «...Արդ, գրեցաւ կենսաբեր սուրբ Աւետարանս ձեռամբ մեղապարտ եւ սուտանուն Պաղտասար դպրի, ի թուաբերութեանս Հայոց ՌՃԻ(1671)-ին ի յերկիրս Հագարեան, ի գեղոս որ կոչի Հարար, ընդ հովանեաւ Սրբոյս Ստեփաննոսի ի հայրապետութեան տանս Աղւանեաց տեանս Պետրոսի եւ բազմահանճար կաթողիկոսի, եւ բռնակալութին տաճկաց Շահ Սըլեմանին...»²: Վերջինս պահվում է Լոնդոնի «Վեյքոմ» ինստիտուտի գրադարանում՝ 74294 թվահամարի ներքո³: Ձեռագրում հետաքրքիր վերլուծված են Մատթեոսի, Մարկոսի, Դուկասի, Հովհաննու Ավետարանները:

Գյուլիստանում գրված որոշ ձեռագրերի մասին հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել Մատենադարանի 4228, 10472, 9043, 1032 թվահամարների ներքո պահվող ձեռագրերում: Այսպես, N 4228 ներքո գտնվող ձեռագրում հիշատակվում է 1681 թ. Գյուլիստանում գրիչ Եսայի երեցի ձեռքով գրված «Աւետարան»-ի (թերթ՝ 213, երկայուն, բոլորգիր) մասին: Գրիչը գրչության արվեստը սովորել է իր հորեղբայր Մեյքոմի հսկողությամբ, որի մասին

¹ Տե՛ս ՄՄ, ձեռ. N 3437:

² **Ներսիսյան Վ.**, *Ցուցակ հայերեն ձեռագրաց Լոնդոնի Վեյքոմ ինստիտուտի գրադարանի*, «ԲՄ», Ե., 1986, N 15, էջ 322–323: Տե՛ս նաև **Կարապետյան Ս.**, *Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում*, էջ 179:

³ Նույն տեղում: Տե՛ս նաև **Բալայան Վ.**, *Արցախի պատմություն*, Ե., 2002, էջ 212:

նա նշում է գլխավոր հիշատակարանում. «Հորեղբայրն Մեղքում, որ էր աշխատատր առաել, քան զհայր, որով բազում աշխատեցաւ ի վերայ իմ ի մանկութիսնս մինչեւ ցայսօր, որպէս յայգեգործ ի յայգոյն իլում աշխատէ, այդպէս աշխատատրէ ի վերայ իմ մինչեւ կարգեաց զիս...»¹: Վերջինիս ձեռքով մեկ այլ ձեռագիր՝ «Մաշտոց Ձեռաց»² (թերթ՝ 139, միասյուն, բոլորգիր, նոտրգիր) գրվեց 1686 թ.: Ձեռագրի բովանդակությունում հիշատակության արժանի են «Տաղ»³ և «Աղոթք»⁴ խորագրերը կրող գլուխները:

Գյուլիստանում գրված հաջորդ ձեռագրերը պատկանում են Դավիթ գրչին: Մեկը՝ «Մաշտոց Ձեռաց»-ը (թերթ՝ 294, միասյուն, բոլորգիր)⁵, օրինակվել է 1689 թ., որի պատվիրողն Եսայի քահանան է: Մյուսը ևս կրում է «Մաշտոց Ձեռաց» (թերթ՝ 304, միասյուն, բոլորգիր)⁶ խորագիրը, որն օրինակվել է Մելիքսեթ քահանայի խնդրանքով՝ 1692 թ.: Վերջինս ձեռագիրը նվիրել է իր ծնողներին՝ Գասպարին և Փերիին, հանգուցյալ եղբայրներ Պահաթուրի, Այդինի, Մեջլումի հիշատակին⁷: Ուշագրավ են հատկապես «Կանօն մկրտութեան»⁸, «Կանօն նըշան օրինելոյ»⁹, «Կանօն հարսանեաց հանդարձ արինեցէք...»¹⁰, «Խրատ փեսային եւ հարսին (Կանօն պսակի)»¹¹, «Գանձք, ողբք, Սաղմոս ննջեցելոց, եւ շարական, Աւետարան, երգ պաշտաման»¹², «Տաղ»¹³, «Ողբ մե-

¹ Մինասյան Թ., նշվ. աշխ., էջ 56:

² ՄՄ, ձեռ. N 10472:

³ Նույն տեղում, ք. 136ա:

⁴ Նույն տեղում, ք. 137բ, 139բ:

⁵ Նույն տեղում, ձեռ. N 9043:

⁶ ՄՄ, ձեռ. N 1032:

⁷ Մինասյան Թ., նշվ. աշխ., էջ 57:

⁸ ՄՄ, ձեռ. N 1032, ք. 2ա:

⁹ Նույն տեղում, ք. 21բ:

¹⁰ Նույն տեղում, ք. 25ա:

¹¹ Նույն տեղում, ք. 31ա:

¹² Նույն տեղում, ք. 134բ:

¹³ Նույն տեղում, ք. 142բ:

նելին մանկանց»¹, «Աղօթք վասն երաշտի»², «Աղօթք վասն հիանդի»³ և այլ բաժիններ: Գրչության հիշատակարանում նշվում է. «Փառք ամենասուրբ Երրորդութեան՝ Հօր եւ Որդոյ, եւ Սուրբ Հոգոյն, որ ետ կարողութին տկար ոգոյ՝ Դաւիթ անպիտանի, մեղօք զառացեալ եւ չարեօք ի լի, տղալագիր եւ զանարիեստ գրչի հասանեալ ի աւարտ սուրբ գրոցս, որ գոչի Մաշտոց. Որ ունի բովանդակ զեւթն խորհուրդ սուրբ եկեղեցոյ: Ի երկիրս Բարտայ, ի գեօղս որ գոչի Գուլըստեան, ընդ հովանեալ Սուրբ Աստուածածնին եւ Սրբոյն Մինասայ, թուական ՌՃԽԱ (1692), ի հայրապետութեանց տեառն Սիմօնի եւ Երեմիայի, իշխանութին Պարտոյ երկրիս Ապագղուլիխանն, ի խնդրոյ բարեմիտ և աստուածաւեր Մէլիքսեթ քահանային, յիշատակ իւր եւ ծնօղացն իւրոց, հօրն՝ Գասպարին...»⁴: Հարկ է նշել, որ ձեռագիրը հետագայում ստացան ևս երկու հոգի՝ Խաչատուր քահանան (1740 թ. հիշատակարան է թողել⁵) և տեր Կարապետ քահանան (1799 թ. հիշատակարան է թողել⁶):

Ոսկանապատի⁷ (սակ՝ Զուռնապատ) ձեռագրերից հայտնի է Կուսանաց անապատի Սբ. Աստվածածին եկեղեցում 1684 թ. գրիչ

¹ ՄՄ, ձեռ. N 1032, ք. 143բ:

² Նույն տեղում, ք. 248բ:

³ Նույն տեղում, ք. 249:

⁴ Նույն տեղում, ք. 298ա:

⁵ ՄՄ, ձեռ. N 1032, ք. 297բ: Տե՛ս մաս Յուզակ ձեռագրաց, հ. Ա, էջ 462: **Մինասյան Թ.**, նշվ. աշխ., էջ 57:

⁶ Նույն տեղում, ք. 299բ: Տե՛ս մաս Յուզակ ձեռագրաց, հ. Ա, էջ 462: **Մինասյան Թ.**, նշվ. աշխ., էջ 57:

⁷ Տեղադրված է Գանձակ գետի ձախ ափին, Հյուսիսային Արցախ: Ըստ «Արձագանք» պարբերականի՝ Ոսկանապատի կալվածքների մի մասը պատկանում էր Մելիք-Շահնազարյաններին: Եղել է զանձակեցի շատ հայ ընտանիքների ամառանոցը: Անապատը կառուցել է Մելիք Ոսկանը: Վերջինիս անունից էլ գյուղը ստացել է Ոսկանապատ անունը (տե՛ս «Արձագանք», 1886, N 20, 25 մայիսի, էջ 294): Ոսկանապատի մասին ուշագրավ տեղեկություններ կան Առաքել Դավրիժեցու արժեքավոր աշխատությունում (տե՛ս Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Վաղարշապատ, 1884, էջ 9):

Ղուկասի ձեռքով գրված «Աւետարան»-ը, որի հիշատակարանում նշվում է. «Եւ արդ եւ Սարգսի որդի Խոջա Պատիս, առի գտորք Աւետարանս ի ձեռաց անօրինաց եւ ետու վախս ի դուռն Ոսկանապատու Կուսանաց անապատի, Աստուածածին սուրբ տաճարին մի ոք իշխեսցէ հանել անտի, քանզի բնական այլ ու այնմ անապատին անուան էր գրեալ եւ տվեալ բայց յետ ժամանակաւ ի յարկածից չարին կողակոն հատեալ էին եւ մենք եւս տվաք յիշատակ ի թուականիս հայոց ՌՃԼԳ եւ որք վայելէք միով հայր մեղայի յիշեցիք զծնօղսն մեր եւ զհայրն իմ Սարգիսն եւ զմայրն իմ Մարիամն եւ զորդին իմ Պապախանն, զՎէլիճանն եւ զՂարախանն. ամէն»¹:

Սարդարի թալա գյուղում (Զակամ գավառ) 1703 թ. գրիչ Արիստակես երեցի կողմից օրինակվել է դեռևս միջնադարում (XIV դ. վերջ և XV դ. սկիզբ) Գրիգոր Խլաթեցու (Ծերենց) խմբագրությամբ «Հայսմաուրք»-ը (թերթ՝ 495, երկայուն, բոլորգիր)²: Ստացողներն եղել են Եսային, Ոսկան տանուտերը և Մելքունը: «Հայսմաուրք»-ում ներկայացվում են Հռոմի, պարսից և հայոց պատմության տարբեր դրվագներ: Ուշագրավ են Հռոմի Դիոկղետիանոս կայսրի՝ քրիստոնյաներին ուղղված հալածանքների մասին տեղեկությունները: Այս մասին նշվում է. «...Նորեն արքա Դիոկղետիանոս հրամայեաց պատրաստել զանազան անօթս տանջանաց եւ սպառնայր քրիստոնէիցն...»³: Հիշատակվում է Հռիփսիմյան կույսերի⁴, Գրիգոր Լուսավորչի՝ Վաղարշա-

Ներկայումս գտնվում է Ադրբեջանի կողմից բռնագավառված Խանլարի շրջանում (այս մասին տե՛ս **Karapetian S.**, *Northern Artsakh*, p. 434):

¹ Տե՛ս «Արձագանք», 1886, N 20, 25 մայիսի, էջ 294:

² ՍՄ, ձեռ. N 9088:

³ Նույն տեղում, ք. 3ա:

⁴ Նույն տեղում, ք. 97ա:

պատում ծավալած լուսավորական գործունեության¹, նրա կողմից հեթանոսական տոների վերացման և քրիստոնեական տոների կարգավորման մասին: Վերջինիս վերաբերյալ նշվում է. «...Կարգեաց եւ կանոնեաց զեկեղեցիս Հայաստանեաց»²: Ձեռագրում պատմվում են նաև Դոմետիանոս (Դոմեդիա) բժշկի՝ հալածված քրիստոնյաներին բուժելու մասին³, Սբ. Մարիամի⁴, Հովհաննես Ոսկեբերանի մասին: Վերջինիս մասին նշվում է. «Հայսմաւոր յիշատակէ սրբոյն Յոհաննու Ոսկիբերանին, մեծ վարդապետն տիեզերաց եւ արեգակն եկեղեցոյ Ոսկիներանն Յոհաննես...»⁵: «Հայսմաւորք»-ում հետաքրքիր տեղեկություններ կան Մաշտոցի⁶, հայոց Սմբատ Բագրատունու⁷ և այլ իրադարձությունների մասին: Հիշատակագրությունում արված գրառումից հասկանում ենք, որ հետագայում թուրք-պարսկական պատերազմի հետևանքով ձեռագիրը Արցախում գրված որոշ ձեռագրերի պես վնասվել էր: Այս ձեռագիրը հայտնվել էր Թավրիզի Սբ. Սարգիս եկեղեցում: 1829 թ. մայիսին ձեռագիրը նորոգվեց. «Յիշատակէ Յասմաւորքս ուստա Խաչէյին, որ նորոգեալ կրկին... Թաւրիզու սբ. Սարգիս եկեղեցոյն ի յիշատակ հանգուցեալ ծնողացն Սուրաբին եւ Հերիքնագին եւ իւր համայնքին...նորին յիշեցէք ի բարին ուսատայ Խաչին եւ իւր ծնողքն զՍուրաբն եւ Հերիքնագն... ամէն...Նորոքեցաւ 1829 թուին...»⁸: Այժմ վերջինս գտնվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

¹ ՄՄ, ձեռ. N 9088, ք. 5ա:

² Նույն տեղում, ք. 21բ:

³ Նույն տեղում, ք. 12բ:

⁴ Նույն տեղում, ք. 28 ա:

⁵ Նույն տեղում, ք. 44ա:

⁶ Նույն տեղում, ք. 81ա:

⁷ Նույն տեղում, ք. 95ա:

⁸ Նույն տեղում, ք. 495բ:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում գրչության արվեստի հայտնի կենտրոն է եղել **Շամբորը**¹, որտեղ հայտնի է եղել գրիչ Սարգիս երեցի անունը: Նրա ձեռքով գրվել են մի քանի ձեռագիր մատյաններ: Մեզ հասած ձեռագրերից մեկը՝ «Ժողովածուն» (թերթ՝ 232, միայուն, նտորգիր), գրվել է 1717 թ.(գյուղ՝ Բերդատակ), որի ստացողն է Մխիթար Աղճուղալեցին²: Բովանդակությունում հետաքրքիր են «Գրիգոր Նարեկացոյ Մատեան ողբերգութեան», «Տեսիլ Բենկայ», «Աղոթք» (Բենիկ, Յովհ. Սարկավագ, Եփրեմ) խորագրերը կրող բաժինները: Հաջորդ ձեռագիր մատյանը՝ «Ժողովածու»-ն³ (թերթ՝ 204, միայուն, նտորգիր), գրվել է նույն գրիչ Սարգիս երեցի կողմից՝ 1721 թ. (գյուղ՝ Բերդատակ): Ստացողը եղել է Առաքել Դանձուսցին: Բովանդակությունում ուշադրության արժանի են հետևյալ բաժինները՝ «Գրիգոր Նարեկացոյ Մատեան ողբերգութեան», «Տեսիլ Բենկայ Վանանդեցոյ», «Աղոթք» (Բենիկ Վանանդեցի, Յովհ. Սարկավագ, Եփրեմ Ասորի, Մովսես Քերթող, Յովհ. Գառնեցի անանունք), «Մաղթանք առ Ս. Աստուածածին»⁴:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ ընդգծենք, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախում ստեղծվել են ութ տասնյակից ավելի ձեռագրեր, որոնց թվում կան պատմական, մշակութային, հոգևոր և աշխարհիկ ստեղծագործություններ: Հայոց ձեռագ-

¹ Տեղադրված է Շամբոր գետակի ձախ, Կոր և Աղստ գետերի այց ափերի և դաշտաբերանի մեջ: Դասվում է Արցախի դաշտային կամ ստորին գավառների թվին (**Բարխուտարեանց Մ., Արցախ (1895)**, էջ 23, 55: Տե՛ս նաև **Հակոբյան Թ., Մելիք-Բալայան Մու., Բարսեղյան Հ.**, նշվ. աշխ., հ. 4, էջ 75): Ներկայումս այն գտնվում է Ադրբեջանի կողմից բռնագավառված Շամխորի շրջանում (մանրամասն տե՛ս **Կարասյեղյան Մ., Հյուսիսային Արցախ**, էջ 505):

² ՄՄ, ձեռ. N 1574:

³ ՄՄ, ձեռ. N 7008: Տե՛ս նաև Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, էջ 440:

⁴ Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, էջ 440:

րերը հայ ժողովրդի պես կրել են պատմության ողբերգական իրադարձությունների ազդեցությունը: Հայ ժողովուրդը սրբությանը է վերաբերվել ձեռագրերին, պահպանել ու փրկել է դրանք օտար բռնակալներից, վերանորոգել վնասված ձեռագիր մատյանները: Այս կարևոր ձեռքբերումը հանդիսանում է հայ ժողովրդի բնորոշ հատկանիշներից ու ազգի գոյատևման հիմքերից մեկը:

§ 3. ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Հայկական կրթությունն ունի հազարամյակների պատմություն և պատմական բոլոր դարաշրջաններում դիտվում է որպես հայ ժողովրդի մշակութային առաջընթացի, ազգային ինքնուրույնության դրսևորման և գոյապահպանման կարևորագույն գործոններից մեկը: Հայկական կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր ու մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:

Չնայած հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական, քաղաքական ծանր իրավիճակին, ինչպես հայկական գաղթօջախներում, այնպես էլ Հայաստանի տարբեր շրջաններում 1639-1736 թթ. հայկական մշակույթի գործիչները փորձում են շարունակել նախորդ դարաշրջանների կրթական ավանդույթները և դրանց զուգահեռ ստեղծել նոր մշակութային արժեքներ: Միաժամանակ դրանք առավել սերտորեն առնչվում են եվրոպական քաղաքակրթության նվաճումների հետ, ինչն էլ կարևոր նշանակություն է ունենում հայկական մշակույթի արժեքային համակարգի հարստացման համար:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախի կրթության և գիտության օջախների ստեղծման ու կայացման ամբողջական համակարգում իր առանձնահատուկ տեղն ունի հայոց Եկեղեցին: Եկեղեցական և վանական տարբեր համալիրները դրսևորվել են ոչ միայն որպես գիտակրթական կենտրոններ, այլ նաև ազգային-հասարակական կյանքի և գիտամշակութային առաջադիմության խոշորագույն օջախներ: Այդ ուսումնագիտական հաս-

տատությունները հսկայական դեր են ունեցել ոչ միայն հայոց մշակութային գանձերը ոչնչացումից փրկելու, ուսուցիչների, բժիշկների, նկարիչների, երաժիշտների, շինարարների և գիտության այլ բնագավառների ներկայացուցիչների պատրաստման ասպարեզում, այլև հայ ժողովրդին կործանման վտանգից փրկելու գործում:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Ինչպես փաստում են գիտական ուսումնասիրությունները¹, մինչև XIX դ. դպրոցների մեծ մասը Արևելյան Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում (նաև Արցախում)² գտնվում էին եկեղեցիներին կից, որոնք մինչև 18-րդ դարի վերջերը կոչվում էին եկեղեցական, իսկ դրանից հետո՝ ծխական (քանի որ գտնվում էին ծխական համայնքների տնօրինության տակ) դպրոցներ: Հետևաբար, սույն ժամանակաշրջանում Արցախում ևս գործում էին **հասարակական, մասնավոր, եկեղեցական, վանական** տիպի դպրոցներ: Այս դպրոցները գտնվում էին նյութական տարբեր պայմաններում. դրանցից մի քանիսի՝ հատկապես հասարակական և մասնավոր տիպի դպրոցների նյութական կարգավիճակը ավելի ծանր էր: Հավելենք, որ դպրոցի վիճակով էր պայմանա-

¹ Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ դպրոցի, Կահիրե, 1946: Մովսիսյան Ա., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (10–15-րդ), Ե., 1958: Սանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Ե., 1964: Երկանյան Վ., Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, (1870–1905), Ե., 1970: Միմոնյան Յ., Ակնարկներ հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության, Ե., 1971: Հարությունյան Գ., Արցախահայ դպրոցը 5–19-րդ դարերում, Ստեփանակերտ, 2000 և այլն:

² Դպրոցների կարգավիճակի մասին տե՛ս «Դարաբաղ», 1911, N 2, էջ 2:

վորված ուսուցչի նյութական ու բարոյական վիճակը, նրա հասարակական դիրքն ու հեղինակությունը:

Հասարակական տիպի դպրոցներն երբեմն շատ քիչ քանակով, երբեմն էլ մասնավորի անվան տակ շարունակում էին գործել նույնիսկ հայ ժողովրդի համար ամենաձանր պայմաններում:

Մասնավոր դպրոցների դասընթացները հիմնականում անցկացվում էին հայ հասարակությունում հայտնի մեղիքների, իշխանների տներում: Հայկական դպրոցները թշնամիներից թաքցնելու և ապահովելու համար, նրանց հաճախ դարձնում էին վանքերին ու եկեղեցիներին կից, որոնցից շատերը գտնվում էին հեռավոր խուլ ձորերում, ազգաբնակչությունից հեռու լեռների ծերպերում և մենաստաններում: Նման պայմաններում մեծանում էր վանական և եկեղեցական տիպի դպրոցների թիվը:

Վանական և եկեղեցական տիպի դպրոցները գործում էին եկեղեցիներին ու վանքերին կից: Այսինքն, վանքերը բացի եկեղեցիների հիմնական շենքերից, ունեին նաև ժողովատներ, մեծ սրահներ, հանրակացարաններ, գրատներ, լսարաններ (ճեմարան) և դպրոցական շենքեր: Այս տիպի դպրոցները պատրաստում էին ոչ միայն եկեղեցական-հոգևորական գործիչներ, այլ նաև աշխարհիկ կյանքի համար պետական, հասարակական գործիչներ, ուսուցիչներ, գրագիրներ, գրիչներ, նկարիչներ, գրքեր ձևավորող մանրանկարիչներ, գիտության այլ բնագավառների ներկայացուցիչներ:

Արցախի վերոնշյալ բոլոր տիպի դպրոցները պահվել են ժողովրդի միջոցներով ու գտնվել են նրա մշտական հոգատարության ու խնամքի ներքո: Դպրոցներում չկար կրթական մեկ ընդհանուր համակարգ (նաև Հայաստանի մնացած վայրերում)¹: Կր-

¹ Մովսիսյան Ա., նշվ. աշխ., էջ 324:

թական համակարգից բխող համապատասխան դրույթները կազմել են վանական, եկեղեցական դպրոցները, որոնք իրենց էությանը կրել են միջնադարյան-ֆեոդալական բնույթ: Այս մասին է վկայում Վ. Երկանյանը, ով հավելում է նաև, որ Հայաստանի երկու հատվածներում էլ մինչև XIX դ. գոյություն ունեցած սակավաթիվ եկեղեցական ու վանական դպրոցներում տիրապետում էր այսպես կոչված ուսուցման միջնադարյան-սխոլաստիկ, խալֆայական ճևր: Աշակերտները սովորում էին մեխասնիկորեն, անգիր անելով, չկար որոշակի կարգ ու կանոն, մարմնական պատիժը համարվում էր ուսուցման պրոցեսի անբաժան մասը: Խիստ սահմանափակ էր յուրացվող գիտելիքների շրջանակը: Շատ ավելի տարածված էր խալֆաների, վարպետների, տիրացուների, քահանաների նախաձեռնությամբ կազմակերպվող տնային, մասնավոր, անհատական ուսուցում, որը ոչ մի հսկողության չէր ենթարկվում: Հաղորդվող գիտելիքների չափն ու բովանդակությունը կախված էր վարժապետի (ուսուցչի) խղճից ու կարողությունից¹ :

Աշակերտները դպրոցներում անցնում էին հիմնականում գրագիտություն, թվաբանություն, աստղաբաշխություն, երկրաչափություն և որոշ այլ առարկաներ:

Արցախում գիտակրթական հիմնարկների առաջնահերթ խնդիրներից են՝ շարունակել նախորդ դարաշրջաններից եկող գիտական բարձր մակարդակի ապահովումը և մատաղ սերնդին զինել ժամանակին համահունչ նոր փիլիսոփայական առավել զարգացած գաղափարներով: Այդ նկատառումով էլ Արցախի իշխանավորները, ինչպես նաև բարձր դասի հոգևորականներն

¹ Երկանյան Վ., *Հայկական դպրոցը 1800-1870 թթ.*, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1970, N 10, էջ 32:

իրենց զավակներին ուսման էին ուղարկում Հունաստան, Իտալիա, Ֆրանսիա, Ռուսաստան և այլ առավել զարգացած երկրներ: Եվրոպայում կրթություն ստացած երիտասարդների ջանքերի շնորհիվ, Արցախի կրթական հաստատություններում վարդապետ-ուսուցիչները վերակառուցում են իրենց ուսումնական ծրագրերը և հատկապես լայն տեղ հատկացնում պատմական, աշխարհագրական, գիտական, գրական, լեզվագիտական առարկաներին:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում (երբեմն որոշ ընդհատումներով) շարունակում էին գործել Ամարասի, Գանձասարի¹, Դադի վանքի, Խաթրավանքի, Գոչավանքի, Ս. Հակոբի վանքի դպրոցները²: Գործող դպրոցների կողքին 1639-1736 թթ. Արցախ աշխարհում բացվեցին Սբ. Ստեփանոսի (Ասկերանի շրջան-*XVII* դ.), Սպիտակ Խաչ վանքի³, Սբ. Հարությունի (Հադրութի շրջան-*XVII* դ.), Շոշ գյուղի Սբ. Ստեփանոսի (1655 թ.), Սբ. Գևորգի (Մարտակերտի շրջանի Ղազանչի գյուղում, 1671 թ.)⁴, Սբ. Աստվածածնի (Մարտակերտի շրջանի Կուսապատ⁵ գյուղում, 1686 թ.) Երից մանկանց վանքի (Մարտակերտի շրջան, Թարթառի վտակ Թրղի գետակի ափին գտնվող եկեղեցին, 1691 թ.)⁶, Ջրակոյս գյուղի Սբ. Ստեփանոսի (Հադրութի շրջան, 1698 թ.)⁷ և այլ եկեղեցիների դպրոցները:

Արցախում գիտակրթական կյանքի կազմակերպման ու հետագա զարգացման գործում բարձր է գնահատվում Գանձասա-

¹ Միմոնյան Յ., նշվ. աշխ., էջ 82:

² Մանրամասն տես Բարխուտարեանց Մ., *Արցախ (1895): Ղևոնդ Ալիշան, Արցախ, Ե., 1993: Ոսկեան Հ.*, նշվ. աշխ.: Ոլորաբայան Բ., *Արցախի պատմություն*:

³ Դիվան հայ վիմագրության, պր. 5 (Արցախ), էջ 187:

⁴ Նույն տեղում, էջ 90:

⁵ Ջալալեանց Ս., *Շամսապարհորդություն ի Մեծն Հայաստան*, հ. Ա, Տփլիս, 1842, էջ 180:

⁶ Դատեան Խ., *Երկերի ժողովածու*, էջ 35:

⁷ Դիվան հայ վիմագրության, պր. 5 (Արցախ), էջ 172:

րի Պետրոս Խանձբեցի կաթողիկոսի դերը¹, որի շինարարական գործունեության շնորհիվ, երկրում զարկ տրվեց գիտակրթական կյանքին: Գործող եկեղեցական, վանական դպրոցներին զուգահեռ, Արցախի տարբեր վայրերում նրա կողմից կառուցված Խաչեն գավառի Առաջաձոր գյուղի Սուրբ Աստվածածին (1668 թ.)², Խանձբ գյուղի Սուրբ Ստեփանոս (1673 թ.)³, Վարանդայի Հերիեր գյուղի Սուրբ Գրիգորիս (1667)⁴, Փառիսոսի Հին Փիփի գյուղի (1670 թ.)⁵ եկեղեցիներում բացվեցին նոր դպրոցներ, որոնցում աշակերտներին բացի դասավանդվող առարկաներից, սովորեցնում էին նաև գրչության արվեստ: Պետրոս կաթողիկոսի պատվերով Արցախի տարբեր գիտակրթական օջախներում գրվել և ընդօրինակվել են մի շարք ձեռագիր աշխատություններ, որոնցից մի մասը, ավաղ, չէին պահպանվել:

Ուսումնակրթական կենտրոնները միևնույն ժամանակ ծառայել են որպես հայ գրչության և գիտության նշանավոր օջախներ, որոնք իրենց մեջ ամփոփել են դեռևս նախորդ դարերում գործող Արևելյան Հայաստանի տարբեր վայրերի մի շարք նշանավոր գիտակրթական կենտրոնների՝ Տաթևի, Գլաձորի (նաև՝ համալսարանների), Գոշավանքի, Սանահինի, Հաղպատի, Հաղարծինի, Բջնիի, Էջմիածնի, Այրիվանքի և այլ դպրոցների գիտական ու արվեստի բարձր արժեքները և անմիջապես կրել նրանց ազդեցությունը (նշված դպրոցների մեծ մասը շարունակել էր իր բեղմնավոր գործունեությունը նաև այդ ժամանակաշրջա-

¹ Կաթողիկոսի մասին որոշ տեղեկություններ ներկայացրել ենք եկեղեցաշինության վերաբերյալ ենթահարցում:

² Դիվան հայ վիմագրության, պր. 5 (Արցախ), էջ 87:

³ Նույն տեղում, էջ 143:

⁴ Դիվան հայ վիմագրության, պր. 5 (Արցախ), էջ 164:

⁵ **Սկրտումյան Լ.**, *Գանձասարի կաթողիկոսությունը Պետրոս Խանձբեցի կաթողիկոսի օրոք (1653–1678 թթ.)*, «ԼՀԳ», Ե., 2000, N 1, էջ 96:

նում)¹: Այդ գիտակրթական կենտրոններում, ինչպես նշվեց վերևում, գրվել, ծաղկազարդվել են շատ արժեքավոր ձեռագիր մատյաններ, որոնց շնորհիվ ոչ միայն շարունակել է զարգանալ գիտակրթական կյանքը (թեպետ որոշ ընդհատումներով), այլև իրավական հիմք հանդիսանալ Արցախում գոյություն ունեցող նյութական և հոգևոր մշակութային հարուստ ժառանգության համար: Մյուս կողմից էլ ավելի վաղ և ուսումնասիրվող ժամանակաշրջանում գրված և ընդօրինակված հայկական բազմաթիվ ձեռագրերը հաստատում են Հայաստանի երկու հատվածներում (արևմտյան և արևելյան) տարբեր պատմական փուլերում գոյություն ունեցող գիտական օջախների մասին:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախում գիտական² մտքի դրսևորումները նկատելի են հիմնականում քերականության, աշխարհագրության, պատմագրության, աստվածաբանության բնագավառներում: Գիտության բնագավառում հայտնի են Վարանդայի մելիք Հուսեիսի դուստրը՝ Գայանեն (Մաշտոց Ձեռագ³, 1641 թ.), Հովհաննես երեցը (Ժողովածու⁴, 1644), Մարիամ ապաշխարողը (օրինակել է Ներսես Շնորհալու «Բանք Չափա»⁵ ստեղծագործությունը, 1647 թ.), Մկրտիչ աբեղան (Հայսմավուրքի ցանկ⁶, 1654 թ.), Գրիգոր երեցը (Խորհրդատետր⁷, 1657

¹ Միմոնյան Ց., նշվ. աշխ., էջ 82–83:

² Արևելյան Հայաստանի մյուս շրջաններում, Արևմտյան Հայաստանում և հայկական գաղթօջախներում գիտության ճյուղերից զարգացած են եղել աշխարհագրությունը, պատմագրությունը, փիլիսոփայությունը, իրավագիտությունը, գրականությունը, բնական գիտությունները (մանրամասն տե՛ս Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին (XVII դ. երկրորդ կես – XIX դ. վերջ), Ե., 2010, էջ 101–128):

³ ՍՄ, ձեռ. N 2404:

⁴ ՍՄ, ձեռ. N 10882:

⁵ Նույն տեղում, ձեռ. N 4281:

⁶ «Արդ, գրի Տօնացոյցս և ցանկ Այսմաուրաց կարգին համառօտաբար ի թվակաճիս Հայկական սեռի ՌճԳ (1654)»:

⁷ Միմոնյան Թ., *Գամձատարի գրչության կենտրոնը*, «ԲՄ», N 20, էջ 238: Տե՛ս նաև Պողարեան Ն., նշվ. աշխ., էջ 366:

թ.), Հովհաննես Ապահունեցին (Ժողովածու¹, 1659 թ.), Իգնատիոս Մեծշենցին (Ժողովածու², 1661 թ.), Սիմոնը (օրինակել է Մովսես Կաղանկատվացու աշխատությունը՝ «Պատմութիւն Աղուանից»³, 1664 թ.), Մխիթարը (Մաշտոց⁴, 1678 թ.), Բարսեղը (Ժողովածու⁵, 1687 թ.) և ուրիշներ, որոնց ստեղծագործությունները մանրակրկիտ տեղեկություններ են հաղորդում Արցախի հոգևոր, մշակութային կյանքի, պատմաքաղաքական և պատմաաշխարհագրական իրադարձությունների վերաբերյալ:

Հայոց իրականության մեջ գիտության սյուս ճյուղերին զուգահեռ մեծ տեղ է հատկացվում քերականական մտքի զարգացմանը: Այդ իսկ պատճառով մանկավարժական և եվրոպական քերականական մտքի համեմատ, հայերենի նոր քերականություն ստեղծելու ծրագրով կազմվում և հրատարակվում են քերականական երկեր: Այս ուղղությամբ մեծ աշխատանքներ էր կատարել Մկրտիչ աբեղան, որը 1660 թ. եկել է Գանձասար՝ աշակերտների «Քերականություն» ուսուցանելու: Վերջինիս մասին հիշատակում է Հ. Ոսկյանը. «ՌՃԹ թուին (1660-ին) Մկրտիչ աբեղան Գանձասար կու գայ սակս ուսուցանելոյ զքերականութիւն»⁶: Արցախում քերականական մտքի դրսևորումների մասին ուշագրավ տեղեկություններ կան Մատենադարանի 2277 թվահամարի ներքո պահվող ձեռագրում, որը վերագրվում է Հովհաննես Ապահունեցուն: Վերջինիս «Ժողովածու»-ում, ներառվել են Հայոց լեզվի Քերականության հետ առնչվող տեղեկություններ, որոնք ընդ-

¹ ՄՄ, ձեռ. N 2277:

² Նույն տեղում, ձեռ. N 3446:

³ Նույն տեղում, ձեռ. N 2561: Տե՛ս նաև «Արարատ», 1895, N 10, էջ 388, **Թօփմեան Զ.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 100:

⁴ ՄՄ, ձեռ. N 968:

⁵ Նույն տեղում, ձեռ. N 713:

⁶ **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., էջ 68:

գրվել են սաների ուսումնական ծրագրերում: 1659 թ. Հովհաննես Ապահունեցի երեցն «ի գեղջէն Ապահինու» եկել է «սուրբ պառոն Գանձասար»՝ քերականություն սովորեցնելու եւ իր ցանկությամբ օրինակել է Թովմա Իտալացու Քերականությունը¹: Սակայն աշխատությունը գրվել է որոշ թերացումներով, որի մասին նշում է նաև հեղինակը: Նա դա բացատրում է նրանով, որ ձեռքի տակ ստույգ և ընտիր օրինակ չի ունեցել և գրել է թերացումներով, ինչի համար թողություն է խնդրում. «Աղերսեմ զձեզ, ով ոք, որ հանդիպեք սմա վերծանելով կամ օրինակելով, թողութին շնորհեցէք սակս վրիպմանացս կամ խոշոր եւ վատ գրոցս, քանզի կար մեր այս էր²»: Այս փատը ևս վկայում է այն մասին, որ Արցախի դպրոցների ուսուցման ծրագրերում կարևոր մաս է կազմել քերականության ուսուցումը, և այդ նպատակով հատուկ ուսուցիչներ են հրավիրվել ու քերականական դասագրքեր ընդօրինակվել: Հարկ է նշել, որ Արցախի գրեթե բոլոր դպրոցներում քերականության նկատմամբ հետաքրքրությունը բխում էր ձեռագիրը ճիշտ վերարտադրելու, ուղղագրությունը բարելավելու պահանջներից:

Գրիչ Միմոնի օրինակած՝ Մովսես Կաղանկատվացու «Պատմութին Աղուանից» աշխատության շնորհիվ դպրոցների սաները սկսում են լայն պատկերացում կազմել Աղվանից աշխարհի թագավորների՝ Վաղարշակի³, Ուոնայրի⁴, Վաչեի⁵, Վաչագան Բարեպաշտի օրոք Հայոց Արևելից նահանգներում (Արցախ և Ուտիք

¹ Տե՛ս ՄՄ, ձեռ. 2277, ք. 235:

² Նույն տեղում, ք. 154ա:

³ ՄՄ, ձեռ. N 2561, ք. 7ա:

⁴ Նույն տեղում, ք. 10 բ:

⁵ Նույն տեղում, ք. 12 բ:

նահանգներում) կատարված պատմաքաղաքական, մշակութային իրադարձությունների մասին:

Գիտության բնագավառում իր մեծ ավանդն է ունեցել Իգնատիոս վարդապետը, որի օրինակած Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» (1661 թ.)¹ աշխատությունը մանրամասն տեղեկություններ է տալիս հայ ժողովրդի պատմական անցյալի մասին:

Հայկական կրթության և գիտության արժեքային համակարգում առանձնահատուկ տեղ է գրավում 1689 թ. պարոն Մնացականի պատվերով գրված ձեռագիր մատյանը (գրիչը անհայտ է), որը պահվում էր Գանձասարի վանքի ձեռագրատանը: Ավելի ուշ այն հայտնվեց Թավրիզի հայկական ձեռագրերի շարքում (N 22), որոնք էլ գրի էր առել ականավոր լեզվաբան Հ. Աճառյանը²: Ձեռագիրը հետաքրքիր տեղեկություններ է պարունակում Մ. Խորենացու «Հայոց պատմություն» և Եղիշեի «Պատմություն Վարդանանց» արժեքավոր աշխատությունների (որոնք գրվել են դեռևս վաղ միջնադարում) վերաբերյալ³: Շնորհիվ այդ աշխատությունների՝ Արցախի դպրոցների սաները ծանոթացել են հայ ժողովրդի պատմության ուշագրավ էջերին:

Կրոնական բնույթի ստեղծագործությունների (Ավետարաններ, Շարականոցներ, Քարոզգրքեր) ընդլայնման գործում կարևորվում են Մխիթար աշխարհականի⁴, Միքայել սարկավազի⁵, Մարտիրոս Խնձորեկցու⁶, Հարություն դպիրի⁷, Եսայի երեցի⁸,

¹ Ոսկեան Հ., նշվ. աշխ., էջ 126:

² Մանրամասն տես **Աճառյան Հ.**, *Ցուցակ հայերեն ձեռագրաց Թավրիզի*:

³ Նույն տեղում, էջ 20:

⁴ ՄՄ, ձեռ. N 223:

⁵ Նույն տեղում, ձեռ. N 7606:

⁶ Նույն տեղում, ձեռ. N 3647:

⁷ **Եզանեան Օ.**, *Մեսրոպ արքեպ. Մմբատյանցի «Նկարագիր Շամախոյ քննի» գրքում հիշատակված ձեռագրերը*, «Էջմիածին», 1970, N 1, էջ 46:

⁸ ՄՄ, ձեռ. N 4053: Տես նաև Ցուցակ ձեռագրաց, հ. Ա, էջ 1138:

Նազար դպիրի¹, Աղվանից կաթողիկոս Պետրոս Խանձքեցու եղբայր Մատթևոս քահանայի², Հովսեփ քահանայի³, Հովհաննես երեցի, Ղազար սարկավագի⁴ և այլոց դերն ու նշանակությունը:

Անշուշտ, ցանկանում ենք ընդգծել, որ XVII դարի երկրորդ կեսին և XVIII սկզբին գիտության զարգացման հիմքում ընկած էին ոչ միայն հայկական ձեռագրերը, այլև՝ տպագիր գրականությունը⁵: Հայկական տպագրության զարգացման գործում բարձր է գնահատվում հայ հոգևորական և հրատարակիչ Մատթևոս սարկավագ Ծարեցու⁶ (1590–1661) դերը, ով իրեն նվիրել է հայ ժողովրդի հոգևոր, կրթական լուսավորության գործին: Վերջինիս գործունեությունը ծավալեց ոչ միայն Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում (հատկապես՝ Արցախում, Ծար գյուղի միջնակարգ դպրոցը կոչված է Մատթևոս Ծարեցու անվամբ⁷), այլ նաև արտերկրներում: 1656 թ. Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսը (1598–1680, կաթողիկոս՝ 1655–ից) նրան գործուղել է Եվրոպա՝ տպարան հիմնելու և հայերեն գրքեր տպագրելու նպատա-

¹ ՍՄ, ձեռ. N 5072:

² **Ղևոնդ Ալիշան**, *Միսակամ*, էջ 270:

³ **Ոսկեան Հ.**, նշվ. աշխ., էջ 123:

⁴ ՍՄ, ձեռ. N 10660:

⁵ Չնայած տարբեր կրթօջախներում գրիչների ձեռքով գրվում և օրինակվում են բազմաթիվ աշխատություններ, այնուամենայնիվ վերջիններս չէին կարող համահունչ լինել ժամանակի պահանջներին: Այդ իսկ պատճառով հայ մշակույթի կարկառուն ներկայացուցիչները ձեռնամուխ եղան կազմակերպելու և բարելավելու տպագրական գործը: Գոտեներեզյան տպագրությունը, 1440-ական թվականներին ծագելով Գերմանիայում, 1465 թ. արդեն անցել էր Իտալիա: XVI դ. սկզբներից Վենետիկը դարձավ հայկական տպագրության ծննդավայրը: Հայկական տպագրության զարգացման միտումներն առավել նկատելի դարձան հետագա դարերում:

⁶ Ծնվել է Արցախի Ծար գավառում: Համարվում է 17-րդ դարի Ամստերդամի հայկական տպագրության հիմնադիրը: Հայրը եղել է Ավագը, մայրը՝ Պեկիխան, եղբայրները՝ Դարիպխանը, Վարդանը, Պալասանը, Մնկասարը, Հախնազարը (տես Պատմություն հայկական տպագրության սկզբնաղբյուրներն մինչև առ մեզ, Վենետիկ, 1895, էջ 98):

⁷ <https://hy.wikipedia.org/wiki/%D4%BE%D5%A1%D6%80>

կով (վերջինս եղել է Ամենայն Հայոց կաթողիկոսի՝ Փիլիպպոսի քարտուղարն ու սպասավորը¹): Սկզբում դպիր Ծարեցին այդ առաքելությունը փորձում է իրականացնել Իտալիայում, սակայն նա այնտեղ հանդիպում է որոշ խոչընդոտների²: Ինչպես Լեոն է բնութագրում, բարեբախտաբար լեոնցի (ղարաբաղցի) դպիրը հեշտ ընկճվող բնավորություններից չէր³: Այս մասին սարկավագը այսպես է նշում. «...ընթացեալ ի տպարանս գրոց բազում ջանիք հող տարեալ...վերահասու եղէ գործառնութեանս եւ զի ի Վենետիկ ոչ գոյին արհեստաւորք պատշաճք այսմ գործոյ... ուք ամիս դեգերելով բնակութեամբ, աղերսական խնդիրը իմացոյց ծիրանատրաց ժողովոյն ու նաեւ քահանայապետին, սակայն չկրցաւ յաջողիլ: Վասն որոյ գնաց յԱմստերդամ Հոլանտիոյ, ուր գտաւ ուզած վարպետ արուեստաւորքը...»⁴:

Իտալիայում չհասնելով նախատեսված հաջողության, Ծարեցին մեկնում է Հոլանդիայի Ամստերդամ քաղաքը, որտեղ գործում էր Լյուդվիկ և Դանիել Էլզեվիրների հարուստ տպարանը⁵: Այստեղ Էջմիածնի պատվիրակը ևս հաղթահարում է բազմապիսի դժվարություններ, որոնց մասին Ծարեցին նկարագրում է հետևյալ կերպ. «ի ցայգ եւ ցերեկ մահու չափ աշխատելով միայն

¹ Լեոն, *Երկերի ժողովածու*, հ. Գ, գիրք առաջին, Ե., 1969, էջ 432: Տե՛ս նաև Հայոց Պատմություն, հ. III, գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), էջ 98:

² Հռոմում այդ ժամանակ մի կողմից համաճարակ էր տարածված, մյուս կողմից էլ Վենետիկից սկսվել էր տարածվել հերետիկոսների դեմ պայքարը (ինկվիզիցիան): Կաթողիկ հոգևորականությունը միջամտում էր հայ տպագրության կարգավորման հետ առնչվող հարցերին :

³ Լեոն, *Երկերի ժողովածու*, հ. Գ, գիրք առաջին, էջ 432:

⁴ Պատմութիւն հայկական տպագրութեան սկզբնաւորութենէն մինչ առ մեզ, էջ 96–97:

⁵ Լեոն, *Երկերի ժողովածու*, հ. Գ, գիրք առաջին, էջ 433: Տե՛ս նաև <http://hygradaran.weebly.com/history-of-armenian-printing---1512.html>

եւ առանց ուրեք օգնականի, յերկարելով յաշխատութիւնս Դ ամ եւ Ը ամիս, զանճն առնելով զվիշոս եւ զտառապանս...»¹:

Ինչպէս նշում է Ռ. Իշխանյան, Ծարեցին, ի վերջո, կարողաւում է ստեղծել բաղձալի տպարանը²: Այս կարծիքի հետ համամիտ է Արամ Բաբայանը, որը Ծարեցուն համարում է Ամստերդամի հայկական տպարանի հիմնադիրը³:

Մատթեոս Ծարեցին 1658 թ. նոյեմբերի 27-ին արվեստագետ, Էլզեվիրների տպարանատան փորագրիչ-գրաձույլ գերմանացի Քրիստոֆել Ֆոն Դիկի (հոլանդերեն՝ Վան Դեյկ) հետ կնքեց պայմանագիր՝ Աստվածաշունչ տպագրելու համար: Ծարեցին հոլանդական մի տպարանից գնում է նաև հայտնի նկարիչ-փորագրիչ Քրիստոֆել վան Ջիխտեն Կրոստերի տպատախտակները, որոնք Աստվածաշնչի թեմաներով պատկերներ էին պարունակում՝ ընդօրինակված եվրոպացի նշանավոր արվեստագետների՝ Ռաֆայել, Ալֆրեդ Դյուրերի, Գոլցիուսի և ուրիշների հայտնի գործերից⁴: 1660 թ. Ամստերդամում հայկական տպարան հիմնադրելուց⁵ հետո, 1661 թ. Վան Դեյկի պատրաստած բոլորագիր և գլխագիր տպատառերով (պատրաստել է երեք տեսակի հայկական տառեր՝ Ծարեցու տված գծագրերով) Ծարեցին նախ հրատարակության է պատրաստել Ներսես Շնորհալու «Յիսուս որդի» խորագիրը կրող աշխատությունը⁶, սակայն 1661 թ. հունվարի 22-ին⁷ նա մահացավ (նախքան գրքի լույս ընծայվելը): Այս մասին

¹ Հայ ժողովրդի պատմություն, Ե., 1972, հ. 4, էջ 614: Տե՛ս նաև **Իշխանյան Ռ.**, *Հայ գիրքը 1512–1920 թթ.*, Ե., 1981, էջ 58:

² **Իշխանյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 58:

³ **Բաբայան Ա.**, *Հայ գիրքը և տպագրությունը*, Ե., 1963, էջ 58:

⁴ Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, էջ 614: Տե՛ս նաև **Իշխանյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 59:

⁵ **Բաբայան Ա.**, նշվ. աշխ., էջ 59:

⁶ Տե՛ս **Ներսես Շնորհալի**, *Հիսուս որդի, Ամստերդամ, 1660–1661*: http://greenstone.lib.sci.am/gsd/collect/armenian/Books/hisus_vordi_1660_1661_index.html

⁷ **Լևոնյան Գ.**, *Հայ գիրքը և տպագրության արվեստը*, Ե., 1946, էջ 102:

ուշագրավ հիշատակում է արվել Վենետիկում տպագրված գրքերից մեկում. «...Երբ գրքին շարումն հասա 38 թերթին եւ տպագրեցաւ 28-ն, նօտար Մատթէոս վախճանեցաւ ի թուին ՌՃԺ ի 22 յունուարի. կենդանութեան ատեն պատրաստելով գրքին վերջը դրուելիք յիշատակարանն, եւ տեղնիտեղը պատմելով այս տպագրական գործոյն համար իր գլխէն ամեն անցածները»¹:

Նրա մահվանից հետո Ոսկան վարդապետ Երևանցու եղբայրը՝ մեծ վաճառական Գլիջենցի (նաև՝ Գլճենցի) Ավետիսը, նախ մարում է տպարանի պարտքերը, այնուհետև այդ տպարանը հանձնում Էջմիածնին (Ծարեցու կտակի համաձայն), որն էլ 1661 թ. ստանում է «Տպարան Էջմիածնի և Ս. Սարգսի»² անունը: Նա նաև «Յիսուս որդի» գրքին 1661 թ. ավելացրեց հիշատակարան, որում նշվում է. «...Մատթէոսն որ մեռաւ, թէ որ ես չէի ո՞վ պիտի տիրէր ի վերայ քերխանային. հազար մառչիլ չոր պարտք էր քերխանային, որ հինգ հարիւր մառչիլ չէր արժէր... յանձն առի յորժամ մեռաւ»³: Այս հիշատակարանի մի դրվագից հետաքրքիր մեջբերում է արել Ն. Պողոսյանը «...Ես իբրև որբ մնացի Ամէսէրդամ, վասն այն որ սրբագրող ոչ գոյր, բայց միայն ես ի կարդացող, որ չի խիստ հէմուտ, ժամանակ մի տարէկուսեալ եւ պարապ մընացի ես եւ սահմանք եւ գործն եւ մըշակն Բ ամիս ժամանակ անցաւ, սկսան նաւերն գնալ ի դէմ ա-

¹ Պատմութիւն հայկական տպագրութեան սկզբնաւորութենէն մինչ առ մեզ (1513–1895), էջ 98:

² Սբ. Սարգիս է կոչվել ի պատիվ համանուն անունը կրող գորավարի: Մյուս կողմից էլ նպատակ կար որպեսզի հիշատակվէր Ուշի գյուղի Սբ. Սարգիս վանքի անունը, որտեղ վանահայր էր եղել Ավետիսի եղբայր Ոսկան Երևանցին՝ ժամանակին ամենակիրք ու զարգացած հայ մտավորականներից մեկը:

³ Լևոնյան Գ., նշվ. աշխ., էջ 102–103:

րեւելս ի քաղաքն Զըմըռնա»¹: Վերջինս հավելում է, թե 1661 թ. Դլճենցի հրատարակած «Յիսուս Որդի» գրքի հիշատակարանի այս մի հատվածը կարող է պատկերացում տալ նրա ընդհանուր նկարագրի մասին²:

Ըստ Լեոյի՝ Մատթեոս Ծարեցու շնորհիվ Ամստերդամը դարձավ հայ լուսավորության մի նոր Վենետիկ, որ մի ժամանակ նույնիսկ գերազանցեց Ադրիականի գեղեցիկ թագուհուն³:

Ծարեցու տպագրության զարգացման գործը շարունակել է Ոսկան Երևանցին, և 1666 թ. իր օգնականներ Կարապետ Ադրիանացու և Օհան Երևանցու հետ սկսում է Աստվածաշնչի տպագրությունը, որը տևում է մինչև 1668 թ.: Նրանց ջանքերի շնորհիվ առաջին անգամ հայոց լեզվով տպագրվել է Աստվածաշունչը⁴ (մինչ այդ վերջինիս տպագրությունը մի քանի անգամ ձախողվել էր): Հարկ է նշել որ մինչև Աստվածաշնչի հրատարակումը, Ամստերդամի հայկական տպարանում (հետո կոչվեց Ոսկանյան տպարան) լույս են ընծայվել երկու «Ժամագիրք», երկու «Սաղմոսարան», «Շարականոց» գրքերը: Ոսկանյան տպարանում տպագրվեցին բազմաթիվ գրքեր⁵, որոնք իրենց բարձր գիտականությամբ գրավեցին եվրոպացի ուսումնասիրողների ուշադրությունը:

¹ Պողոսյան Ն., *XVI-XVII դարերի հայ հնատիպ գրքի հիշատակարանների լեզուն*, «Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետ՝ ԲԵՀ), «Բանասիրություն», 133, 2, Ե., 2011, էջ 23–24:

² Նույն տեղում, էջ 23:

³ Լեո, *Երկերի ժողովածու*, հ. Գ, գիրք առաջին, էջ 433:

⁴ Մանրամասն տե՛ս Լևոնյան Գ., նշվ. աշխ., էջ 105: Տե՛ս նաև «Էջմիածին», 1966, N 11–12 (ԹԱ-ԺԲ), էջ 4:

⁵ Մանրամասն տե՛ս Իշխանյան Ռ., նշվ. աշխ., էջ 58, Լևոնյան Գ., նշվ. աշխ., էջ 105–111, Բաբայան Ա., նշվ. աշխ., էջ 60–63:

XVIII դարի սկզբներին գիտության բնագավառում հայտնի են Արիստակես երեցը¹, Ստեփանոս սարկավազը², Սարգիսն ու Վարդանը³, Յակոբ Երեցը⁴, Սարգիս երեցը⁵, Սարգիսը⁶ և ուրիշներ:

Գրիչներ Սարգիսի և Վարդանի կողմից 1709 թ. օրինակած «Հայսմաուրք»-ը (Գր. Ծերենցի խմբագրությամբ)⁷ կարևոր տեղեկություններ է հաղորդում Հայոց պատմությունից քաղված որոշ դրվագների՝ Հռիփսիմեան կոյսերի, Գրիգոր Լուսավորչի, հայոց թագավոր Տրդատ Մեծի, Հռոմի Դիոկղետիանոս կայսեր կամայականությունների(հատկապես քրիստոնյաներին հալածելու), Սահակ Պարթևի և այլ պատմական դրվագների մասին:

XVIII դարի սկզբներին պատմագրության բնագավառում թողած իր գիտական մեծ ավանդի համար առանձնանում է նշանավոր հոգևորական, մատենագիր, պատմագիր, հայ ազգային-ազատագրական շարժման երախտավոր Եսայի Հասան-Ջալալյանը⁸, որի անունը հիշատակվում է XVII-XVIII դարերի հայ պատմագրության կարկառուն ներկայացուցիչների՝ Առաքել Դավրիժեցու (մոտ 1590-1670), Գրիգոր Դարանաղցու (կամ Կամախեցի, 1576-1643), Զաքարիա սարկավազ Քանաքեռցու(1627-1699),Երեմիա Չելեպի Քյոնուրճյանի (1637-1695), Աբրահամ Կրետացու

¹ ՄՄ, ձեռ. N 9088:

² Նույն տեղում, ձեռ. N 5143:

³ Նույն տեղում, ձեռ. N 3813:

⁴ **Եզանեան Օ.**, *Գանձասարի հայերեն ձեռագրերի հավաքածուն*, Էջմիածին, 1971, N 4, էջ 59:

⁵ ՄՄ, ձեռ. N 1574:

⁶ Նույն տեղում, ձեռ. N 7008:

⁷ Նույն տեղում, ձեռ. N 3813:

⁸ Ծնվել է Արցախում՝ XVII դարի երկրորդ կեսին, մահացել՝ 1728: Մերվել է Առանշահիկների թագավորական տոհմից: Կրթությունը ստացել է Արցախի Գանձասարի վանքում : Եղել է Գանձասարի կաթողիկոսը՝ 1701– 1728 և 18-րդ դարի 20-ական թվականների Արցախի ազգային-ազատագրական շարժման գլխավոր կազմակերպիչներից մեկը (կաթողիկոս հաստատվելու մասին տե՛ս ՄՄ, արխիվ Ա. Երիցյանի, թղթ. 157, վավ. 1, էջ 8, 17):

(մոտ XVII դարի 70-ական թվականներից - 1737), Աբրահամ Երևանցու (XVIII դ.) կողքին:

Եսայի Հասան-Ջալալյանի պատմագիտական ժառանգության գլուգործոցներից է «Համառոտ պատմություն Աղվանից» աշխատությունը, որը գրվել է 1711 թ.: Ընդգծենք, որ վերջինս ամբողջությամբ մեզ չի հասել: Այն լույս է տեսել ավելի ուշ՝ 1839 թ., Արցախի (Ղարաբաղի) հոգևոր թեմի տպարանում (Շուշիում)՝ Բաղդասար մետրոպոլիտ (նաև՝ միտրոպոլիտ) Հասան-Ջալալյանի ջանքերով (վերահրատարակվել է 1868 Երուսաղեմում)¹: Առաջին հրատարակությունում² մանրակրկիտ նկարագրվում են 1160-1711 թթ. Հայաստանի պատմական իրադարձությունները: Երկրորդում կաթողիկոսը, մանրակրկիտ նկարագրելով իր ժամանակի՝ Պարսկաստանի, Վրաստանի և Աղվանաց աշխարհի պատմական դեպքերը, հասցնում է մինչև 1723 թ.³: Հետագայում երկը լույս է տեսել Ֆրանսերեն (1876), վրացերեն (1971), ռուսերեն (1989) լեզուներով:

«Համառոտ պատմություն Աղվանից» աշխատությունը արժեքավոր սկրնաղբյուր է 18-րդ դարի սկզբի հայ ազգային-ազատագրական շարժումների, հայ-վրացական ռազմական համագործակցության, հայկական զինված ուժերի կազմակերպման և այլ կարևոր պատմական իրադարձությունների մասին:

¹ Տե՛ս Եսայի Հասան Ջալալեանց, *Պատմութիւն համառոտ Աղուանից երկրի*, Երուսաղեմ, 1868, էջ 6: <http://digitale-sammlungen.ulb.uni-bonn.de/ulbbn/content/pageview/2478504>: Տե՛ս նաև Հարությունյան Ա., *Եսայի Հասան-Ջալալյանի վիմագրագիտական վստոռակը* (ըստ՝ ՄՄ N 7821 ձեռագրի), «Էջմիածին», 2015, N 10, էջ 117-159:

² Տե՛ս Եսայի Հասան-Ջալալեանց, *Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից՝ դիպե-լոց յաշխարհին Աղուանից ի բուսկանին հայոց 1160*, իսկ ի բուսկանին տեսուն մերոյ վրկչին Յիսուսի 1711, Շուշի, 1839: Տե՛ս նաև http://greenstone.flib.sci.am/gsd/collect/armbook/books/patmutyuan_kam_jishatak_index.html

³ Եսայի Հասան-Ջալալեանց, *Պատմութիւն համառոտ Աղուանից երկրի*, էջ 6:

Աշխատության վերաբերյալ իր հիացմունքն է արտահայտել մեծն գրող Բաֆֆին (Հակոբ Մելիք-Հակոբյան). «Այդ փոքրիկ գրքույկը, ինչպես երևում է, համառոտություն է, քաղած մի ընդարձակ պատմությունից, որի իսկականը, եթե գտնվեր, մեծ գանձ կարելի էր համարել մեր նոր ժամանակների պատմության համար»¹:

Հարկ է նշել, որ բացի հայ անվանի պատմագիրներից, գրողներից, մշակույթի այլ ներկայացուցիչներից, կաթողիկոսի այդ աշխատությունը արժևորել և բարձր են գնահատել նաև օտարները, նույնիսկ՝ աղբբեջանցիները: Այս տեսակետից, ցանկանում ենք ընդգծել աղբբեջանցի հետազոտող Վ. Լեվիատովի կարծիքը, որը նշված աշխատությունը դասում է բարձրարժեք փաստաթղթերի թվին²:

Եսայի Հասան-Ջալալյանի գիտական ժառանգությունում արժեքավոր սկզբնաղբյուր են Արցախի ճարտարապետական հուշարձանների՝ Գանձասարի, Խաթրավանքի, Դաղիվանքի (Խուրավանքի) և բազմաթիվ այլ կոթողների վիմական արձանագրությունները (1718 թ.), որոնց օրինակումները պահվում են Մատենադարանում ³:

Բացի ընդգծվածներից, ուսումնասիրվող ժամանակաշրջանում գործող մնացած եկեղեցիներն ու վանքերը այս կամ այն չափով ևս ունեն իրենց ներդրումը հայոց աշխարհի գիտակրթական համակարգի զարգացման համակարգում:

¹ Բաֆֆի, *Երկերի ժողովածու*, հ. IX, Ե., 1987, էջ 616:

² Левинатов В., *Очерки из истории Азербайджана в XVIII веке*, Баку, 1948, с. 12–13.

³ ՄՄ, ձեռ. N 7821, N 9923: Տե՛ս նաև Հասան-Ջալալյան Մ., *Կարողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի քաղաքական գործունեությունն ու պատմագրական ժառանգությունը*, «ԼՀԳ», 2011, N 3, էջ 96:

Ընդհանրացնելով, նշենք, որ վերոնշյալ տեղեկությունները ևս մեկ անգամ փաստում են պատմական այն ճշմարտությունը, որ տվյալ բարդ պատմափուլում հայ մշակույթի գործիչները ոչ միայն ջանացել են պահպանել դարերից եկող հայկական մշակութային արժեքների ժառանգությունը, այլև նրանց զուգահեռ ստեղծել նոր մշակութային գոհարներ: Նրանց եռանդուն ջանքերի շնորհիվ, ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախում (թեև որոշ ընդհատումներով) շարունակում է առաջ ընթանալ գիտակրթական կյանքը, որի հիմքում ընկած են ոչ միայն ձեռագրական հավաքածուները, այլև տպագիր գրականությունը:

§ 4. ԿԵՐՊԱՐՎԵՍ

Մանրանկարչություն և զարդանկարչություն: Հայկական ձեռագրային մշակույթի ուշագրավ դրսևորումներից են մանրանկարչությունն ու զարդանկարչությունը: Վերջիններս սկզբնավորվել են հայոց գրերի գյուտից հետո և արտացոլվել ձեռագիր մատյաններում (ձեռագիր գրքերում): Մանրանկարչությունը ներառում է գրչագիր մատյաններում արված գծանկարները, գունանկարներն ու գրքերի ձևավորումը՝ անվանաթերթեր, խորաններ, լուսանցազարդեր, սրբապատկերներ, պատմողական թեմատիկ տեսարաններ և այլն, իսկ զարդանկարչությունն՝ անվանաթերթերի վրա, խորաններում, լուսանցքներում, տերունական և սյուժետային մանրանկարներում, զարդաշրջանակների վրա արված զարդանկարները¹: Վերջիններս պատկերազարդվել են գուաշով (ջրաներկի մի տեսակ), ջրաներկով, սոսնձաներկերով, ոսկով, երբեմն՝ արծաթով և այլն:

Հայկական մանրանկարչությունն ու զարդանկարչությունն աչքի են ընկնում դպրոցների և ոճերի բազմազանությամբ: Ամենից շատ պատկերազարդվել են Ավետարաններն, ապա՝ Աստվածաշունչները և ծիսական-կրոնական սյուա ժողովածու-մատյանները (Մաշտոց Ձեռագ, Շարականոց և այլն):

Դեռևս միջնադարում² Արցախում նկարազարդված ձեռագրերը կարելի է բաժանել երկու խմբի. առաջինի մեջ դասակարգ-

¹ Մանրամասն տեսն Հայ ձեռագրային զարդանկարչություն, Ե., 1978:

² Տարբեր դարաշրջաններում բազմաթիվ հայ գրչօջախներ և մանրանկարչական կենտրոններ են ստեղծվել Հայաստանում և հայկական գաղթօջախներում (Գրին, Իսապխա, Նոր Ջուղա, Կ. Պոլիս և այլուր): Արցախում մանրանկարչական արվեստը հայանի է եղել դեռևս վաղ միջնադարում, իսկ բուռն վերելքը սկսվել է 13-րդ դարից: Արցախում գործել են 110

վում են այն ձեռագրերը, որոնց բնորոշ են հայկական արվեստին ներհատուկ գծեր: Այս խմբի մանրանկարները բնութագրվում են հետևյալ ձևով. խորաններն ու անվանաթերթերն ունեն կոթողային ամուր կառուցվածք՝ հստակ նկարված զարդերի դեկորատիվ բնույթով: Հատկապես տպավորիչ են մարդկանց կերպարները, որոնցում նկարիչը կարողանում է հաղորդել հուզական լիցք և լավատեսական տրամադրություն¹: Նկարների գունային կառուցվածքը դրսևորված է պարզ և մատչելի ձևով: Երկրորդ խմբի ձեռագրերն ունեն միառճ մանրանկարներ: Վերջիններս հայ մանրանկարչության մյուս դպրոցների աշխատանքներից առանձնանում են պատկերագրական տարբերակների իրենց յուրահատկություններով և թեմատիկայի ընտրությամբ: Ընդգծենք, որ Արցախի վարպետները մանրանկարներում կիրառել են ավելի պարզ ձևեր՝ խուսափելով բարդ ձևաչափերից: Այս սկզբունքը պահպանվել է նաև գունային ֆոներում. գունաշարն իր մեջ ամփոփում է գորշ գույներ: Հիմնականում մանրանկարներում օգտագործվել էին չորս կամ հինգ գույներ՝ կարմիր, կանաչ, կապույտ, մանուշակագույն, դեղին (ի դեպ նշենք, որ այդ գույների սկզբունքայնությունը եկել էր միջնադարից): Կերպարների դեկորատիվ-զարդային ձևերը՝ հյուսազարդ լայն շրջանակների հետ միավորված են մեկ ամբողջականությամբ: Մանրանկարներում և զարդանկարներում պահպանվել են հայկական զարդարվեստի ավանդական ձևերն ու եղանակները:

մի շարք գրչակենտրոններ, որոնցից մի քանիսն իրենց գործունեությունը ծավալեցին մասնոր շրջանում: Գրչակենտրոնները սերտ կապի մեջ եղել են Հայաստանի մյուս շրջանների (մասն հայկական գաղթավայրերի) հետ (մամրամասն տեսն Հակոբյան Հ., *Արցախի միջնադարյան արվեստը*, Ե., 1991: Армянская миниатюра, Е., 2007. Ղազարյան Մ., *Հայկերպարվեստը XVII-XVIII դդ.*, Ե., 1974):

¹ Armenian miniatures of the 13th and 14th centuries, Yerevan, 1984, p. 37.

Հրավարդ Հակոբյանն Արցախի մանրանկարչության մասին իրավացիորեն նշում է. «Արցախի մանրանկարների ոճը ընդհանուր գծերով կապված է տեղի ազգային արվեստի ավանդույթների հետ: Բազմաթիվ զուգահեռներ կարելի է տանել տվյալ ժամանակաշրջանում ստեղծված որմնանկարների, բարձրաքանդակների, ինչպես նաև եկեղեցիների ու վանքերի դեկորատիվ հարդարանքների միջև»¹:

Հարկ է նշել, որ հայկական ձեռագրերում կատարված բուսական զարդամոտիվներից յուրաքանչյուրն ունի իր խորհուրդը, որոնց մասին լայն պատկերացում է տալիս Ա. Մնացականյանը: Օր.՝ «Կենաց ծառը» զարդարվեստում երևան է եկել ամենաբազմազան ձևերով, հատկանշականը այդ ծառերի համար խիստ ոճավորված և ընդհանրացված մոտիվներն են, ուր պահպանված են լինում բույսի ամենազլխավոր օրգանները: Դրանցից հատկապես ընդգծված են լինում հատիկի (սերմի), ծաղկի և վարսանդա-պտղային օրգանների գաղափարապատկերները²: Ծառի խորհուրդը պտղաբերությունն է: Ա. Մնացականյանն ինքնատիպ վերլուծելով ծաղկի խորհուրդը, նշում է. «Ծաղիկը, որպես աճման և պտղաբերության երևույթներն ընդհանրացնող հասկացողություն, առօրյա կյանքում ևս հսկայական տարածում է գտել: Երբ երիտասարդները հասունացել են ամուսնանալու համար, նրանց համեմատել են արդեն ծաղկելու պատրաստ բույսերի և ծառերի հետ. առանձին ուշադրության արժանի են, օրինակ, Համբարձման տոներին և հարսանիքների ժամանակ տեղի ունեցող մի շարք արարողությունները»³:

¹ Հակոբյան Հ., *Արցախի մանրանկարչական արվեստը*, Ե., 2014, էջ 18:

² Մանրամասն տե՛ս **Մնացականյան Ա.**, *Հայկական զարդարվեստ*, Ե., 1955, էջ 2:

³ **Մնացականյան Ա.**, նշվ. աշխ., էջ 10:

Ջույգ ծաղիկների մոտիվին կենցաղում համապատասխանում է, օրինակ, այն սովորությունը, որի համաձայն հարսանիքի ժամանակ հարսին ու փեսային կոչում են «երկու ծաղիկ» և խմում նրանց աճման ու պտղաբերության կենացը:

Արցախում ստեղծված ձեռագիր գրքերն իրենց զարդամոտիվներով նման են պատմական Հայաստանի սյուս նահանգներում՝ Սյունիքում, Գուգարքում, Այրարատում, Վասպուրականում պատրաստված մատյաններին:

1639-1736 թթ. մանրանկարչության և զարդանկարչության մեծարժեք նմուշներ ենք հանդիպում ծաղկողների՝ Գրիգորի (Չարեքա վանքում), Գայանեի (Ավետարանոց), Գրիգոր քահանայի, Ղազար սարկավազի (Քարահատ գյուղում), Ավետիս քահանայի (Պապաջան կամ Պապճան գյուղում), Մովսես Գորիսեցու, Մովսես երեցի, Տեր Բարսեղի (Ծար գավառում), Բարսեղ քահանայի, Ղազար Սարկավազի, Հովհաննեսի (Հարցհանգիստ կամ Հերցանկիս գյուղում), Ստեփանոս սարկավազի (Շատախում), Գրիգոր երեցի (Գանձակում), Գրիգոր երեցի (Գանձասարում), Նիկողայոսի (Գետաշենում) և ուրիշների¹ ստեղծագործություններում, որոնցից մի քանիսը պահվում են Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում: Այս տեսակետից հիշատակության արժանի են Գայանեի կողմից ծաղկած «Ավետարան»-ը² և գրիչ, ծաղկող, կազմող Սարգիս երեցի «Ավետարան»-ը³: Առաջինը պահվում է Մխիթարյան միաբանության մա-

¹ Այս մասին՝ որոշ լրացումներով, նշվում է աշխատանքի վերջում ներկայացված աղյուսակում:

² Ավետարանը օրինակվել է Վարանդայում՝ գրիչ Կատարինե կույսի կողմից՝ 1650 թ.: Մանրամասն տե՛ս **Ռսկեան Հ.**, *Յոցակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանի ի Վիեննա*, Վիեննա, 1963, հ. Բ, էջ 515-517:

³ Ավետարանը օրինակվել է XVII դ., Արցախի Դասիփյուր գյուղում՝ Տեր Վարդանի պատվերով՝ ի հիշատակ հոր՝ Հովհաննեսի և մոր՝ Մարթայի (մանրամասն տե՛ս **Ռսկեան Հ.**, նշվ. աշխ., էջ 503):

տենադարանի՝ 931 թվահամարի տակ¹, որում գեղեցիկ նկարագարովել են խորաններն ու զարդագրերը, իսկ երկրորդը՝ Մխիթարյան միաբանության 914 թվահամարի ներքո²: Աշխատանքում գեղեցիկ գունային ֆոների վրա պատկերված են «Զարդագիրք», «Խորագիրք», «Խորան», «Լուսանցազարդ», «Մատթեոս», «Մարկոս», «Դուկաս», «Հովհաննես» և այլ մանրանկարները³:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախի մանրանկարչական արվեստի թեմատիկան զանազան էր. ուշագրավ են քրիտոնեական թեմատիկայով մանրանկարները, սրբապատկերները⁴, դիմանկարչության ժանրը: Իրենց հետաքրքրությամբ առանձնանում են «Ավետում», «Ծնունդ», «Մկրտություն», «12 առաքյալներ», «Խաչելություն», «Վերջին դատաստան», «Ավետարանիչ», «Անվանաթերթ Մատթեոսի», «Մարիամ Աստվածածին», «Հիսուս Բրիստոս», «Խորան⁵», «Կիսախորան», «Տերունական», «Լուսանցազարդ», «Զարդագիր», «Թռչնագիր», «Երևումն հրեշտակի», «Վերջին դատաստան» և այլ մանրանկարներ⁶:

Արցախի մանրանկարչական արվեստին առնչվող կարևոր նյութեր պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանի ձե-

¹ Ոսկեան Հ., *Յուզակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանի ի Վիեննա*, էջ 515:

² Նույն տեղում, էջ 502:

³ Նույն տեղում:

⁴ Մրբապատկերների գաղափարը հայ արվեստում գործածվել էր դեռևս վաղ անցյալում, որը նոր շրջանում դրսևորվեց նոր ձևաչափերով ու մեթոդներով՝ զուգորդված լինելով ավանդական ձևերի հետ (մանրամասնր տես **Հակոբյան Հ., Հայոց տերմինական սրբապատկերները**, Ե., 2003):

⁵ Խորան են կոչվում գլխավորապես ավետարանների սկզբում նկարված սյունազարդ դրվագները, որոնք ծառայում են իբրև համեմատության տախտակներ ավետարանների նույնաբովանդակ գլուխների համար: Ավետարաններում ուշագրավ են պատկերագարոված կանոնական խորանները: Խորան է անվանվում նաև քրիստոնեական տաճարի այն մասը, ուր տեղադրվում է պատարագի Ավագ սեղանը, որտեղից էլ՝ Ավագ խորան:

⁶ Որոշ մանրանկարների մասին ավելի մանրամասն տես Յուզակ հայերեն ձեռագրաց մասնատր անձանց (խմբագրությամբ Օնիկ Եզանեանի), «ԲՄ», 1980, N 13:

ռագրական հարուստ հավաքածուներում: Մատենադարանի հետևյալ՝ N 223 (Սուլթանեցիք, 1647 թ.), N 337 (Պապաջան, 1662 թ.), N 968 (Սուլթանեցիք, 1678 թ.), N 986 (Չարեքա վանք, 1665 թ.), N 1032 (Գյուլիստան, 1692 թ.), N 4176 (Վարանդա գավառի Լիզներ գյուղ, 1652 թ.) ներքո գտնվող ձեռագրերում պատկերված են կիսախորաններ՝ նրբագեղ կամարներով, խորհրդանշական ճակատազարդերով, բազմաթիվ լուսանցազարդեր:

Զարդարանքի հարստությամբ, ստեղծագործական մեծ երևակայությամբ ու բովանդակալից զարդամոտիվներով են կերտված Ավետարանոցի «Մաշտոց Ձեռագ»-ը¹ (1641 թ.), Համտիվնա գյուղի (Գանձակուն) «Ավետարան»-ը² (1671 թ.): Առաջինում հետաքրքիր և ավանդական ներշնչանքով պատկերված են «Կիսախորան»³, «Ճակատազարդ»⁴, «Լուսանցազարդ»⁵, «Տաճար»⁶, երկրորդում՝ «Տերունական», «Ավետարանիչ», «Կիսախորան» մանրանկարները: Ձեռագրերն ունեն բազմաթիվ լուսանցազարդեր:

Մանրանկարիչներից նշանավորվում է գրիչ, ծաղկող, կազմող Մովսես Գորիսեցու դերը, որի արժեքավոր աշխատանքներից է Ծարա երկրի Ապահեն գյուղում 1652 թ. գրված և ծաղկած «Շարականոց»-ը⁷: Ծաղկողը մանրանկարներին տվել էր պատկերագրական շատ ինքնատիպ լուծումներ: Այսպես, օրինակ՝ «Ավետման»⁸ տեսարանում թևատարած հրեշտակը՝ ծառի կոճղի մոտ գտնվող երկու հավատացյալներին հայտնվում է երկնքից՝

¹ ՄՄ, ձեռ. N 2404:

² Նույն տեղում, ձեռ. N 3541: Նաև տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, էջ 1037:

³ ՄՄ, ձեռ. N 2404, ք. 6ա:

⁴ ՄՄ, ձեռ. N 2404, ք. 102բ, 127ա, 159ա:

⁵ Նույն տեղում, ք. 45ա, 138ա:

⁶ Նույն տեղում, ք. 201բ:

⁷ Նույն տեղում, ձեռ. 1626:

⁸ Նույն տեղում, ք. 2բ:

աստծո խոսքը հասցնելով վերջիններիս: Կոճղի վրա պատկերված են կաքավի երեք ճագեր, որոնք համարվում են առաքիտության խորհրդանիշներ: Մի քիչ վերևում երևում է՝ դեպի ներքև թռչող մոխրագույն կաքավը՝ բերանին ճագերի համար հայթայթած սնունդով: Մանրանկարը ներառված է կարմիր գույնով ներկված շրջանակի մեջ: Ստեղծագործությունում գերակշռում են վառ կանաչ և կարմիր գույները¹: Գունային գեղեցիկ համադրումներով առանձնանում են «Անվանաթերթ»², «Ճակատագարդ»³, «Համբարձում»⁴ մանրանկարները:

Ձեռագիրն ունի բազմաթիվ լուսանցագարդեր⁵: Ուշագրավ են զարդանկարչության պատկերները՝ սիրամարգ⁶, տաճար⁷, ծաղիկ⁸, խաչ՝ զարդանախշի վրա⁹, կենդանի¹⁰ և այլն:

Իր զարդանախշային մոտիվներով աչքի է ընկնում Մոս գյուղի (Ծար գավառ) «Ավետարան»-ը¹¹ (1653-1654 թթ.), որում առկա են ծաղկող, կազմող Մովսես երեցի ստեղծագործությունները: Ձեռագրի նկարագարդումները կատարված են գեղանկարչական ոճով: Մանրանկարչի մոտ յուրատեսակ ձևով դրսևորված են ավետարանիչների պատկերները: Սահուն գծերով ընդգծում է ավետարանիչի¹² դիմագծերը, մորուքը, մազերը: Ավետարանիչները երբեմն ներկայացվում են իրենց աշակերտ-գրիչի հետ միա-

¹ ՄՄ, ձեռ. 1626, ք. 2բ:

² Նույն տեղում, ք. 3ա, 162ա:

³ Նույն տեղում, ք. 13բ, 68բ, 130ա, 213ա, 266բ, 326բ, 349ա, 379բ:

⁴ Նույն տեղում, ք. 161բ:

⁵ ՄՄ, ձեռ. 1626, ք. 15ա, 17ա, 19ա, 21բ, 24ա, 26բ, 31ա, 34ա, 35բ, 36ա, 37ա, 42բ, 47բ, 49բ, 52բ, 57բ, 60բ, 64բ, 70բ, 75բ, 83ա, 93բ, 96ա, 113բ, 132բ և այլն:

⁶ Նույն տեղում, ք. 36բ, 39ա, 45ա, 55բ, 85բ, 108ա, 160ա, 176ա, 215ա, 234բ:

⁷ Նույն տեղում, ք. 39բ, 169բ, 177ա, 245ա, 253ա, 266բ, 273ա:

⁸ Նույն տեղում, ք. 134բ, 204բ:

⁹ Նույն տեղում, ք. 268ա, 270ա, 276ա, 283ա:

¹⁰ Նույն տեղում, ք. 307ա:

¹¹ ՄՄ, ձեռ. N 3647:

¹² Նույն տեղում, ք. 8բ, 106բ, 169բ, 270բ:

սին: Ծաղկողի ստեղծագործություններից ինքնատիպ են ներկայացված անվանաթերթերը¹, որոնց վրա առկա են կիսախորաններ՝ երկու կողմերում տեղադրված զարդանախշեր և կենդանիների, առաքյալի պատկերներ, գլխազարդեր: Նրա մանրանկարներից երևում է, որ ծաղկող Մովսես երեցը ճիշտ մոտեցում է ցուցաբերել անցյալի ժառանգության նկատմամբ, որը նկատելի է հատկապես խորաններում, մոնումենտալ պայտաձև կամարներում և այլն: Մանրանկարներն ու զարդանկարները տարբերվում են իրենց գունային գամմայով, կատարման որակով ու ձևով: Ձեռագրի լուսանցքներում տեղ են գտել տարբեր զարդանկարների կոմպոզիցիաներ: Հետաքրքիր են շրջանակաձև օղակները, որոնք պարուրված են ծաղիկներով²: Ծաղկող Մովսես երեցը հատկապես սիրել է պատկերել սիրամարգ կամ թռչունի տարբեր տեսակներ³, որոնք նա ներկայացնում է ամենաբազմազան վիճակներով՝ մեկ ներքև նայելիս իջեցրած պոչով, մեկ որպես սիրամարգը թռչունների թագավոր՝ հպարտ կուրծքը դուրս ցցած և հովհարաձև պոչը վեր բարձրացրած, գեղեցիկ ծաղիկների հետ. մի ոճ, որ յուրահատուկ է հայկական ձեռագրերին: Գեղեցիկ են պատկերված ծառերը⁴, որոնք նմանվում են մե՛րթ ոճավորված արմավենու՝ կախված ողկույզներով, մե՛րթ խոշոր տերևներով: Հայկական ճարտարապետությանը բնորոշ գծերով են պատկերված տաճարները՝ պատվանդանի վրա՝ խաչը գլխին⁵:

¹ ՄՄ, ձեռ. N 3647, ք. 9ա, 107ա, 170ա, 271ա:

² Նույն տեղում, ք. 25ք, 27ա, 33ա, 35ա, 42ք, 47ա, 49ա, 56ք, 70ք, 117ա, 127ք, 132ք:

³ ՄՄ, ձեռ. N 3647, ք. 34, 39ք, 77ք, 91ք, 109ա, 113ք, 116ք, 118ա, 133ք, 141ք, 150ք, 176ա, 196ա, 220ա, 263ա, 293ա, 295ա, 301ա, 314ա, 318ք:

⁴ Նույն տեղում, ք. 71ք, 73ք, 143ք:

⁵ Նույն տեղում, ք. 82ք, 151ք:

1655 թ. գրված «Ավետարան»-ի¹ (Քարահատ) ծաղկող Գրիգոր քահանայի զարդարվեստի մոտիվները բազմազան են: Աշխատանքներում կարևոր դեր են կատարում գունային երանգավորումները, որով հեղինակը հասնում է ոչ միայն բովանդակության, այլև տրամադրության բացահայտմանը: Նրա բազմաթիվ ու բազմերանգ զարդաձևերը՝ գունագեղ մանրանկարների ու ավետարանիչների պատկերների հետ արտացոլում են բնության և կյանքի գեղեցկությունները: Ուշագրավ են՝ «Սբ. Մատթեոս Ավետարանիչ»², «Անվանաթերթ»³, «Երեվումն հրեշտակի»⁴, «Տաճար՝ խաչը գլխին»⁵, «Խաչ՝ պատվանդանի վրա»⁶, «Սբ Մարկոս Ավետարանիչ»⁷, «Սբ Ղուկաս ավետարանիչ»⁸, «Առաքյալ»⁹, «Սբ. Հովհաննես ավետարանիչ»¹⁰, «Հոգեգալուստ»¹¹ մանրանկարները:

Ինքնատիպ են էջերի եզրամասերը ամբողջությամբ զբաղեցնող լուսանցազարդերը¹², որոնք կազմվում են զանազան ծաղիկներից¹³, տերևներից¹⁴, ծառերից¹⁵, ինչպես նաև թռչունների¹⁶ և

¹ ՄՄ, ձեռ. N 3196:

² Նույն տեղում, ք. 1ք:

³ Նույն տեղում, ք. 2ա, 89ա, 146ա, 234ա:

⁴ Նույն տեղում, ք. 6ա:

⁵ Նույն տեղում, ք. 67ա, 128ք, 218ա, 253ք, 263ք:

⁶ Նույն տեղում, ք. 78ա, 137ք:

⁷ Նույն տեղում, ք. 88ք:

⁸ Նույն տեղում, ք. 145ք:

⁹ Նույն տեղում, ք. 148ք:

¹⁰ Նույն տեղում, ք. 233ա:

¹¹ Նույն տեղում, ք. 276ա:

¹² ՄՄ, N 3196, ք. 4ա, 4ք, 6ք, 11ք, 17ք, 20ք, 22ք, 24ա, 24ք, 30ա, 30ք, 32ա, 34ք, 52ա, 53ք, 61ա, 64ա, 76ա, 84ք, 96ա, 104ք, 118ա, 121ք, 152ա, 166ա, 182ք, 188ք, 209ա, 216ք, 224ք, 245ք և այլն:

¹³ Նույն տեղում, ք. 58ք, 60ա, 95ք, 120ք, 123ա:

¹⁴ Նույն տեղում, ք. 38ք, 48ք, 91ա, 195ա, 273ք:

¹⁵ Նույն տեղում, ք. 56ք, 210ա, 212ք:

¹⁶ Նույն տեղում, ք. 36ք, 74ք, 84ա, 96ք, 105ա, 127ք, 153ա, 174ա, 191ա, 207ք, 231ա, 236ա:

երևակայական էակների¹ ֆիգուրներից: Ջարդանկարների եզրագծերի միջև եղած բաց տարածություններով մի քանի գույների՝ հատկապես կարմրի, կապույտի, դեղինի առկայությունը ավելի է ընդգծում ստեղծագործության հարթապատկերային բնույթը: Իրենց գեղեցկությամբ առանձնանում են կենդանիների ու թռչունների ֆիգուրներով ձևավորված գլխատատերը :

Արցախի մանրանկարչական արվեստում հիշատակության արժանի է 1659 թ. Պապճյան գյուղում գրիչ, ծաղկող Ավետիս քահանայի կողմից գրված և ծաղկված «Ավետարան»-ը², որը ոչ միայն գեղարվեստական արժեք է, այլ մեծ հետաքրքրություն է ներկայացնում սրբապատկերության որոշ հարցերի ինքնատիպ լուծման տեսակետից: Մանրանկարներն ունեն գունային դաշնություն, որոնք գեղարվեստական նախասիրությունների ընդհանրության շրջանակներում դրսևորվում են ոճի և պատկերագրության որոշակի առանձնահատկություններ: Այս տեսակետից առանձնանում են ավետարանիչների³ պատկերները, որոնցում շեշտված են նրանց կերպարանքները: Նրանց դեմքերն առանձնանում են ներքին ոգեղեն արտահայտչականության խորությամբ: Մանրակրկիտ ոճով հաղորդված են նրանց հագուստների ձևաչափերը: Հագուստները կարծես ծալքերի ձևով փաթաթված լինեն նրանց ոտքերի շուրջ, որոնց կողքից թիկնոցի փնջաձև փեշերը սրածայր, ոլորված իջնում են ցած: Երբեմն ավետարանիչները պատկերվում են իրենց աշակերտ-գրիչների հետ միասին: Հատկանշական է էջ 223բ մանրանկարը, որում ծաղկող Ավետիսը ավետարանիչի և նրա կողքին պատկերված աշակերտ-գրիչի դեմքերին հաղորդել է բացարձակ պարզ հոգևոր արտահայ-

¹ ՄՄ, N 3196, ք. 98բ, 103բ, 106ա, 131բ, 141բ, 155ա, 163ա, 214բ:

² ՄՄ, ձեռ. 3542:

³ ՄՄ, ձեռ. 3542, ք. 1բ, 81բ, 138բ, 223բ:

տություն: Վերջիններիս լայն բացված նշաձև աչքերը, շեշտակիորեն աջ կամ ձախ թեքված բիբերը և կամարակոր հոնքերը առավելագույն չափով լարում են մտցնում, ստեղծում կրոնական գմայլանքի մթնոլորտ:

Ճեռագրում բնութագրականը անվանաթերթերի և կիսախորանների վեհաշուք տեսքն է և թեմատիկ պատկերների բացակայությունը: Ավետարանի կիսախորանները հիմնականում պատկերված են անվանաթերթերի վրա: Դրանք թեև գրաֆիկական, բայց մոնումենտալ տեսք ունեն: Վերջիններս պատկերված են անվանաթերթերի վրա: Կիսախորաններն աչքի են ընկնում նուրբ դեկորատիվ վեհությանը, որոնց ճակատագարդերի վերևում՝ դեմ-դիմաց պատկերված են շքեղ պոչերով և կորացող պարանոցներով սիրամարգեր՝ նրբերանգ ծաղիկներով պարուրված: Իսկ գլխատառերում պատկերված են կենդանակերպի և թռչունների ֆիգուրներ և այլ զարդաձևեր¹:

Ծաղկող Ավետիս քահանայի ստեղծագործություններում առանձին շարք են կազմում բազմազան զարդանկարները՝ բուսական մոտիվները², թռչուններ³, տաճար՝ խաչը գլխին⁴, որոնք ըստ իրենց գրաված տեղի արտահայտում են խորհրդանշական որոշակի իմաստ:

Տերունական պատկերազարդ ձեռագրերի ցանկում առանձնացվում է Չարեքա անապատի «Ճաշոցը»⁵ (1665 թ.): Աշխատանքում մեծ վարպետությամբ ներկայացված են ծաղկող Գրիգորի մանրանկարներն, որոնցում նկատվում է գեղարվեստական

¹ ՄՄ, ձեռ. 3542, ք. 2ա, 82ա, 139ա, 224ա:

² Նույն տեղում, ք. 3ա, 5ա, 8բ, 9բ, 13բ, 16բ, 18բ, 19բ, 20ա, 25բ, 27բ, 28բ, 30ա, 31բ, 32բ, 34ա, 38բ, 40բ, 43բ, 47ա, 48բ, 51ա, 53բ, 56ա, 73ա, 74բ, 78բ, 84բ, 87բ, 89ա, 92ա և այլն:

³ Նույն տեղում, ք. 7ա, 20բ, 34բ, 105բ, 136ա, 144բ, 145ա, 249բ և այլն:

⁴ Նույն տեղում, ք. 124ա, 208բ:

⁵ ՄՄ, ձեռ. N 986:

բարձր հմտություն: Օրինակ սրբապատկերների գեղագիտական ձևաչափերի ճիշտ դրսևորումները, կիսախորանների կամարների նրբագեղությունը, կենդական և բուսական աշխարհի ֆիգուրների յուրահատկությունը նրանց հաղորդում են կենդանի շունչ: Ուշադրության արժանի են հետևյալ մանրանկարները՝ «Անվանաթերթ»¹, «Առաքյալ՝ խաչը ձեռքին»², «Առաքյալ՝ խորհրդանշական տերևը ձեռքին»³, «Հիսուս Քրիստոս»⁴, «Ավերումն դժոխոց»⁵, «Ավետում»⁶, «Սբ. Աստվածածին»⁷, «Համբարձում»⁸: Սրբապատկերների այս շարքում հանդիպում են նաև բավական ինքնատիպ մեկնաբանություններ, որոնք թվում է՝ գալիս են ժողովրդական հին պատկերացումներից ու հավատալիքներից: Մանրանկարչության մեջ հետաքրքիր է բարեխոսության թեման: Այս տեսակետից հատկանշական է «Մարիամ Աստվածածինի»⁹ մանրանկարը, որի գլխավերևում պատկերված է Հիսուս Քրիստոսը՝ երկու հրեշտակների ուղեկցությամբ: Այստեղ Գրիգոր նկարիչը պատկերել է, թե ինչպես է Տիրամայրը՝ Հիսուս Քրիստոսին խնդրում է Ահեղ դատաստանի պահին թողություն տալ մարդկանց վրա ծանրացած մեղքերին: Նմանօրինակ բովանդակությամբ արժեքավոր է «Մարիամ Աստվածածինի»¹⁰ մեկ այլ սրբապատկեր, որի կենտրոնում նկարիչը ոսկեգույն, նարնջագույն, կանաչ, կապույտ երանգներով պատկերել է Սբ. Մարիա-

¹ ՄՄ, ձեռ. N 986, ք. 8ա, 224ա, 314ա:

² Նույն տեղում, ք. 38բ:

³ Նույն տեղում, ք. 40ա:

⁴ Նույն տեղում, ք. 142բ:

⁵ Նույն տեղում, ք. 223բ:

⁶ Նույն տեղում, ք. 241բ:

⁷ Նույն տեղում, ք. 242ա:

⁸ Նույն տեղում, ք. 375բ:

⁹ Նույն տեղում, ք. 295բ:

¹⁰ Նույն տեղում, ք. 313բ:

մին՝ գահին բազմած, իսկ նրա շուրջը մի խումբ հավատացիալներ՝ մեղքերի թողություն խնդրելիս:

Գունային տարբեր ֆոների վրա են ներկայացված զարդանկարչության նմուշները, որոնք զետեղված են լուսանցքներում՝ նրբագեղ տերև¹, զարդանախշ², թռչուն³, տաճար⁴, կենդանիներ՝ գեղեցիկ տերևներով փաթաթված⁵, ծաղիկ⁶, ծառ⁷, խաչ⁸:

Ինքնատիպ պատկերագրական ձեռագրերի շարքում հատկանշական է Գուլլար (Գանձակ) գյուղի «Ավետարան»-ը (1667)⁹, որում զետեղվել են ծաղկող Գրիգոր երեցի ստեղծագործությունները: Վերջինս ունի գծի և գույնի համադրման նուրբ զգացողություն: Գրիգորն իր որոշ մանրանկարների վերլուծության մասին նշում է խորանի մեջ պատկերված իր հիշատակարանում: Վերջին գրառումից կարելի է ենթադրել որ ծաղկողը իր ստեղծագործությունները նվիրել է ծնողների վառ հիշատակին¹⁰: Ճակատագարդում հավանաբար պատկերված է ծաղկողի մանրանկարը¹¹: Ձեռագրում զետեղված են նկարագրական որոշ միտումներով հագեցված մանրանկարներ: Ուշագրավ է Եվսեբիոսի՝ Կարալիոսի սիրելի եղբորն ուղղված «Թուղթ»-ը, որը պատկերված է խորանի մեջ: Ճակատագարդում՝ ոսկեգույն ֆոնի վրա

¹ ՄՄ, ձեռ. N 986, ք. 3ա:

² Նույն տեղում, ք. 9ա, 18ա, 22ք, 29ա, 31ք, 37ք, 43ա, 44ք, 45ք, 48ք և այլն:

³ Նույն տեղում, ք. 21ք, 35ա, 39ա, 52ա, 63ա:

⁴ Նույն տեղում, ք. 56ա, 118ք, 129ա, 248ա:

⁵ Նույն տեղում, ք. 61ա, 93ք, 113ք, 133ք, 137ա:

⁶ Նույն տեղում, ք. 144ա:

⁷ Նույն տեղում, ք. 146ք, 300ա:

⁸ Նույն տեղում, ք. 201ա, 272ա:

⁹ ՄՄ, ձեռ. 6771:

¹⁰ Նույն տեղում, ք. 2ա:

¹¹ Նույն տեղում:

պատկերված է ավետարանչի դիմանկար՝ կապույտ, կարմիր հագուստով: Մյուսների շուրջ պատկերված են ծառեր¹:

Ձեռագրի խորաններն առանձնանում են եզակի հարդարանքով, բարդ խորհրդաբանությամբ, պատկերների կոռ համակարգով, որի հմայքը մեծ չափով ապահովված է նաև առատորեն գործածված ոսկու հետ համադրված վառ և հարուստ ներկաչանակով (ոչ մեծ բարակ հարթակ, որի վրա նկարելու ընթացքում նկարիչը խառնում է գույները): Խորաններից յուրաքանչյուրը կարծես ոսկերչական աշխատանք է: Ճակատագարդերում, սյուների շուրջը հանդիպում են կենդանիների և բուսական տարրերի բարդ միացություններ²:

Խորաններից բացի առանձին շարք են կազմում ավետարանիչների պատկերներն ու անվանաթերթերը, որոնցից յուրաքանչյուրը հիացմունք է պատճառում կոմպոզիցիայի հետաքրքրական կառուցվածքով և գունային ներդաշնակությամբ: Ձեռագրի էջ 14 բ-ում զետեղված է «Մբ. Մատթեոս ավետարանչի» մանրանկարը՝ իր աշակերտի հետ: Պատկերից հստակ երևում է, թե ինչպես է ավետարանիչը՝ խորաթափանց հայացքով ուսուցանում իր աշակերտին: Վերջինս սևեռուն հայացքով նայում է իր ուսուցչին: Ավետարանչի թիկունքում խոյանում է նուրբ ճաղեր ունեցող պատշգամբով, եռամաս կամարի տեսք ունեցող մեծ պատուհանով, կարմիր տանիքով իրական շինություն հիշեցնող կառույց: Նկարիչը տեսարանը ներկայացրել է կանաչ, նարնջագույն, կապույտ, դարչնագույն ֆոնի վրա:

Ծաղկող Գրիգորը հետաքրքիր գունային գամմայով ներկայացրել է Մատթեոսի անվանաթերթը: Վերջինիս վերին հատվածում պատկերված է կիսախորան: Աջ կողմում տեղադրված է

¹ ՄՄ, ձեռ. 6771, ք. 1բ:

² Նույն տեղում, ք. 3բ, 4ա, 5բ, 6ա, 7բ, 8ա, 9բ, 10ա:

հյուսածո զարդանախշ՝ խաչը գլխին¹: Ձեռագրի էջ 94 բ-ում պատկերված է Մարկոս ավետարանիչը՝ «Աւետարանը» ձեռքին, իսկ նրա դիմաց՝ կենդանու գլխով և արծվի թևերով պատկեր: Այստեղ ավետարանիչը ներկայացված է աթոռին նստած՝ ոտքերի բավականին բարդ դիրքով. ձախ ոտքն աջի դիմաց է, իսկ ոտնաթաթերը մեկը մյուսի առջև: Ոտքերի տակ պատկերված է փոքրիկ գորգ: Մարկոսի անվանաթերթի ճակատային հատվածում պատկերված է կիսախորան՝ ձախ հատվածում ունենալով ևս հյուսածո զարդանախշ: Նմանատիպ ոճով է ներկայացված «Ղուկաս ավետարանիչի» մանրանկարը²: Ղուկասի անվանաթերթում ուշագրավը ոսկեգույն երանգներով ներկայացված խաչն է³: Իր առանձնահատուկ ոճային ձևերով տարբերվում է «Հովհաննես ավետարանիչի» մանրանկարը⁴: Այստեղ ավետարանիչը պատկերված է կանգնած՝ խրոխտ կեցվածքով. հետևում կարծես պատկերված լինեն քարացած ալիքներ, իսկ դիմացը նստած է իր աշակերտը՝ գրիչը ձեռքին: Շատ գեղեցիկ և պատկերավոր է ներկայացված Հովհաննեսի անվանաթերթը⁵, որի կիսախորանի ճակատազարդում պատկերված է փոքր թռչուն: Ներսում հանդիպում են ոսկեգույն զարդաձևեր: Նկարչի ստեղծագործություններից են «Տերունական» պատկերները: Այս տեսակետից հատկանշական են «Հիսուս Քրիստոս»⁶, «Ավետում»⁷, «Մարիամ աստվածածին»⁸, «Սբ. Հովսեփ»⁹ մանրանկարները:

¹ ՄՄ, ձեռ. 6771, ք. 15ա:

² Նույն տեղում, ք. 149բ:

³ ՄՄ, ձեռ. 6771, ք. 150ա:

⁴ Նույն տեղում, ք. 237բ:

⁵ Նույն տեղում, ք. 238ա:

⁶ Նույն տեղում, ք. 54ա:

⁷ Նույն տեղում, ք. 91ա, 151բ:

⁸ Նույն տեղում, ք. 152ա:

⁹ Նույն տեղում, ք. 232ա:

«Ավետման» տեսարանում պատկերված են երկու կոյսեր՝ հրեշտակը գլխավերևներում¹:

Ձեռագիրն ունի լուսանցազարդեր՝ զարդանախշ², սիրամարգ³, ծառ⁴ տաճար⁵, խաչ՝ պատվանդանի վրա⁶ և այլն:

Այս ձեռագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այն հայկական մանրանկարչության յուրահատուկ և լավագույն նմուշներից է և որոշ ձևաչափերով նմանվում է միջնադարյան մանրանկարներին:

Հոգևոր թեմատիկայի կերպարների (նաև՝ պատկերների) միտումներն առկա են ծաղկողներ՝ Գրիգոր երեցի (Հարցանկիս, 1666 թ.)՝ «Խորան⁷», «Կիսախորան⁸» և Հովհաննեսի (Հարցանկիս, 1669 թ.)՝ «Մարկոս⁹», «Հովհաննես¹⁰», «Կիսախորան¹¹» ստեղծագործություններում: Զաղանկարները հիմնականում արտացոլված են լուսանցքներում:

Իրենց գունազեղությամբ, ոճական բազմազանությամբ ևչքի են ընկնում ծաղկողներ Բարսեղ քահանայի, Ղազար սարկավազի (Հարցանգիստ կամ Հերցանկիս, 1683 թ.)¹² ստեղծագործությունները: Դրանք բուսական, կենդանական, երկրաչափական մոտիվներից, մարդկային և երևակայական էակների ֆիգուրներից կազմված բարդ կոմպոզիցիաներ են, որոնք զարդա-

¹ ՄՄ, ձեռ. 6771:

² Նույն տեղում, ք. 16բ, 18ա, 19բ, 21ա, 22ա, 25ա, 28ա, 31ա, 32բ, 33բ, 34ա, 34բ, 39բ, 40ա, 41բ, 43ա, 44ա, 51ա և այլն:

³ Նույն տեղում, ք. 19ա, 48ա, 58բ, 102բ, 109բ, 116ա, 156բ և այլն:

⁴ Նույն տեղում, ք. 65ա, 66բ, 126բ, 128ա, 216բ:

⁵ Նույն տեղում, ք. 74բ, 133բ, 221բ:

⁶ Նույն տեղում, 86ա, 141բ, 143ա, 228:

⁷ ՄՄ, ձեռ. N 11060, ք. 1ա, 2բ-3ա, 4բ-5ա, 6բ, 314ա, 315բ, 316բ, 317բ-318ա:

⁸ Նույն տեղում, 10ա, 97ա, 154ա, 243ա:

⁹ Նույն տեղում, ձեռ. N 10966, ք. 76բ:

¹⁰ Նույն տեղում, ք. 221բ: Տե՛ս նաև Յուզակ ձեռագրաց, հ. Գ, էջ 271:

¹¹ Նույն տեղում, ք. 77ա, 131ա, 222ա:

¹² ՄՄ, ձեռ. N 3994:

րում են գլխավորապես խորաններն ու անվանաթերթերը: Դրանցից հատկանշական են՝ «Ավետարանիչ¹», «Անվանաթերթ²», «Մարկոս ավետարանիչ³», «Ղուկաս ավետարանիչ⁴», «Հովհաննես ավետարանիչ⁵» մանրանկարները: Ձեռագրի զարդանկարչության դրսևորումներից են՝ զարդանախ⁶, երևակայական էակների ֆիգուր⁷, թռչուն⁸, ծառ⁹, տաճար¹⁰, խաչ՝ զարդանախշի հետ¹¹: Կենդանական և բուսական տարբեր պատկերներով գեղեցիկ ներկայացվել են գլխատառերը¹²:

N 2067 ձեռագրում «Քարոզգիրք»-ում (Ծար, 1684 թ.), զարդանախշային մոտիվներով աչքի են ընկնում ծաղկող Տեր Բարսեղի մանրանկարները՝ «Կիսախորան¹³», «Ճակատազարդ¹⁴» ու զարդանկարները: Ձեռագիրն ունի գեղեցիկ լուսանցազարդեր, որոնց բուսական նախշերի՝ կարմիրի, կապույտի, կանաչի, դեղինի, վարդագույնի, դարչնագույնի նուրբ երանգները դրախտային պատկերների տեսք են հաղորդում: Վերջիններս ունեն հոգի լուսավորող մի փայլ, որը կարծես հաշտեցնում է մարդու և աշխարհի միջև եղած հակադրությունը, հաղորդում լավատեսական երանգ: Այն զարդագիր է:

¹ ՄՄ, ձեռ. N 3994, ք. 3ք:

² Նույն տեղում, ք. 5ա, 85ա, 140ա, 231:

³ Նույն տեղում, ք. 83ք:

⁴ Նույն տեղում, ք. 138ք:

⁵ Նույն տեղում, ք. 229ք:

⁶ Նույն տեղում, ք. 6ք, 9ա, 17ա, 23ք, 24ա, 27ք, 29ք, 33ք, 38ք, 45ք, 104ք, 111ք և այլն:

⁷ ՄՄ, ձեռ. N 3994, ք. 7ա, 10ա, 15ա, 18ա, 31ա, 41ա, 57ա, 91ա, 91ք, 107ա և այլն:

⁸ Նույն տեղում, ք. 35ա, 39ա, 46ք, 86ք, 94ա, 106ա, 158ա, 192ք, 212ք:

⁹ Նույն տեղում, ք. 55ք, 115ա:

¹⁰ Նույն տեղում, ք. 63ք, 122ա, 262ք:

¹¹ Նույն տեղում, ք. 75ա, 131ա:

¹² Նույն տեղում, ք. 6ք, 7ա, 9ա, 10ա, 12ա, 13ա, 15ա, 17ա, 21ա, 23ք, 27ք, 29ք, 42ա, 54ա և այլն:

¹³ ՄՄ, ձեռ. N 2067, ք. 12ա:

¹⁴ Նույն տեղում, ք. 201ա, 367ա:

Ծաղկող Բարսեղի գործերից են Դաղի վանքի «Աւետարանի»¹ մանրանկարները: Այս մասին Թ. Մինասյանը նշում է, որ «Ավետարանի» նկարազարդումը նախաձեռնել էր Գրիգոր քահանան, սակայն 1676 թ. նա վախճանվում է: Տարիներ անց հոր կիսատ գործը շարունակում է որդին: Վերջինս՝ Եփրեմ քահանայի օրինակած «Աւետարանը» 1684 թ. ծաղկազարդում է: Ծաղկողը աշխատանքում ստեղծել է շուրջ քսանչորս տերունական նկար, ավետարանիչների պատկերներն՝ անվանաթերթերով, խորաներ և կիսախորաներ²:

Մեծ հետաքրքրություն ունեն քրիստոնեական թեմատիկայով մանրանկարները: Այս տեսակետից հատկանշական են N 5143 ձեռագրի (Շատախ, 1708 թ.)՝ ծաղկող Ստեփանոս սարկավազի սինվոլիկ մանրանկարները՝ «Մկրտություն³», «Հիսուսին խաչելը⁴», «Հրեշտակների երևալը մարդկանց⁵», «Տերունական», «Ավետարանիչ⁶», «Խորան⁷», «Կիսախորան⁸», «Ջանգալատուն⁹», «Սբ. Մարիամ¹⁰», «Հրեշտակ¹¹», «Լուսանցազարդ¹²» և այլն: Ձեռագրում տեղ են գտել տարբեր իմաստներ խորհրդանշող զարդապատկերներ՝ թռչուն¹³, զարդանախշ¹, մոմակալ², ծաղիկ³, տերև⁴, խաչ⁵, կենաց ծառ⁶, եկեղեցի⁷:

¹ ՍՄ, ձեռ. 7232: Տե՛ս նաև Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, էջ 487-488:

² **Մինասյան Թ.**, *Արցախի գրչության կենտրոնները*, էջ 38-39:

³ ՍՄ, ձեռ. 5143, ք. 5ա:

⁴ Նույն տեղում, ք. 5բ:

⁵ Նույն տեղում, 7բ:

⁶ Նույն տեղում, ք. 15բ, 95բ, 146ա, 149բ, 230բ, 235բ:

⁷ Նույն տեղում, ք. 8ա, 10բ, 11բ, 11ա, 11բ, 12ա, 12բ, 13ա, 13բ, 14ա:

⁸ Նույն տեղում, ք. 16ա, 96ա, 150ա, 236 ա:

⁹ Նույն տեղում, ք. 76բ, 134բ:

¹⁰ Նույն տեղում, ք. 93բ:

¹¹ Նույն տեղում, ք. 152ա, 156ա:

¹² Նույն տեղում, ք. 22ա, 23 ք, 24բ, 27ա, 28բ, 28բ, 33ա, 34բ, 35բ և այլն:

¹³ Նույն տեղում, ք. 17բ, 18բ, 40ա, 45ա, 53ա, 55ա, 73բ, 104ա, 106բ, 109բ, 162բ և այլն:

Մատենադարանի N 5636 (Քարահատ, 1676 թ.) ձեռագրում ուշագրավ են ծաղկող Գրիգորի՝ «Եվսեբեոսի եղբորն ուղղված խոսքը⁸», «Ղուկասի», «Հովհաննեսի», «Մատթեոսի կանոնները⁹», «Լուսանցագարդ¹⁰», «Ավետարանիչ¹¹», «Սբ. Մարկոս ավետարանիչ¹²», «Ռամիկ (գյուղացի)՝ մուրճը ձեռքին, դիմացը՝ թռչուն¹³», «Տաճար¹⁴», «Սբ. Ղուկաս ավետարանիչ¹⁵», «Առաքյալ՝ խաչը ձեռքին¹⁶», «Սբ. Մարիամ¹⁷», «Խորան¹⁸», «Կիսախորան¹⁹» մանրանկարները: Ձեռագրում՝ գեղեցիկ, գունային տարբեր երանգներով ներկայացվում են մի շարք զարդապատկերներ՝ թռչուն²⁰, զարդանախշ²¹, ծաղիկ²², մոմակալ²³, աստղ կամ արև²⁴, զարդանախշ՝ մեջը առկա է երկու փոքր սև խաչ, կողքին՝

¹ ՄՄ, ձեռ. 5143, ք. 19բ, 20ա, 27ա, 29բ, 51ա, 64ա, 66ա, 97ա, 98բ, 105ա, 111ա, 119բ, 158ա, 159ա և այլն:

² Նույն տեղում, ք. 28բ:

³ Նույն տեղում, ք. 33ա, 67ա, 127բ, 172ա:

⁴ Նույն տեղում, ք. 46ա:

⁵ Նույն տեղում, ք. 78բ, 87բ, 143ա, 226բ, 292բ:

⁶ Նույն տեղում, ք. 70ա:

⁷ Նույն տեղում, 220ա:

⁸ ՄՄ, ձեռ. N 5636, ք. 1բ:

⁹ ՄՄ, ձեռ. N 5636, ք. 4ա, 5ա, 6բ, 8ա, 9բ, 10ա, 11բ, 12ա:

¹⁰ Նույն տեղում, ք. 18բ, 19բ, 20բ, 21ա, 23ա, 24ա, 25բ, 29ա, 38ա, 43ա, 45ա, 54բ և այլն:

¹¹ Նույն տեղում, ք. 16բ, 154բ, 173ա:

¹² Նույն տեղում, ք. 101բ:

¹³ Նույն տեղում, ք. 106 բ:

¹⁴ Նույն տեղում, ք. 142բ:

¹⁵ Նույն տեղում, ք. 159բ:

¹⁶ Նույն տեղում, ք. 161բ:

¹⁷ Նույն տեղում, ք. 162ա:

¹⁸ Նույն տեղում, ք. 4բ, 5ա, 6բ, 8ա, 9բ, 10ա:

¹⁹ Նույն տեղում, ք. 3ա, 102ա:

²⁰ Նույն տեղում, ք. 21ա, 56բ, 67բ, 76ա, 105բ, 111բ, 130բ, 147բ, 165բ, 198բ, 210ա:

²¹ Նույն տեղում, ք. 22բ, 26բ, 29ա, 37ա, 39ա, 39բ, 41ա, 43ա, 45ա, 46բ, 48ա, 49ա, 51ա, 75ա, 88ա, 90ա, 92ա:

²² Նույն տեղում, ք. 23ա:

²³ Նույն տեղում, ք. 31 ա:

²⁴ Նույն տեղում, ք. 32ա:

թռչուն¹, ծաղկեփունջ², տերևներ³, ծաղիկ՝ դիմացը թռչուն⁴, կե-
ծան⁵, եկեղեցի՝ հենված պատվանդանի վրա⁶, խաչ՝ ներկված
կարմիր գույնով՝ պատվանդանի վրա, կողքին՝ թռչուն⁷, ավետա-
րանիչ⁸, զարդանախշ՝ վերևի հատվածում կապույտ գույնով
ներկված խաչ՝ դիմացը՝ թռչուն⁹, շրջանաձև ծաղիկ¹⁰, տաճար¹¹,
ծաղիկ¹², ծաղկեփունջ՝ վրան փոքրիկ թռչուն¹³ և այլն:

«Ավետարանիչ», «Կիսախորան», «Լուսանցազարդ» ման-
րանկարների փայլուն օրինակներ կան Մատենադարանի՝ N 4228
(Գյուլատան, 1681 թ.), N 5072 (Շատախ, 1661 թ.), N 6705 (Ղարամու-
րատի Հարանց վանք, 1679 թ.), N 6746 (Դաստիփիլ, 1671-1673
թթ.), N 7687 (Պապճան գյուղ, 1661 թ.), N 7980 (Գանձակ, 1639 թ.),
N 8549 (Պապաջան, 1668 թ.), N 8678 (Չարեքա վանք, 1662,1715
թթ.), N 9448 (Քարահատ, 1665 թ.) ձեռագրերում:

N 7008 (Բերդատակ, 1721թ.), N 7606 (Խզնավար, 1652 թ.), N
8504 (Գանձասար, 1660 թ.,1664 թ.) ձեռագրերի մանրանկարներն
աչքի են ընկնում կիսախորանների կոթողային ինքնատիպ կա-
ռուցվածքով, դեկորատիվ նախշերի հստակ գծագրված տարրե-
րով:

¹ ՄՄ, ձեռ. N 5636, ք. 35բ:

² Նույն տեղում, ք. 38ա, 121ա, 122ա, 146բ:

³ Նույն տեղում, ք. 54բ, 74ա:

⁴ Նույն տեղում, ք. 60ա:

⁵ Նույն տեղում, ք. 71ա, 136ա, 137բ:

⁶ Նույն տեղում, ք. 81ա:

⁷ Նույն տեղում, ք. 93բ:

⁸ ՄՄ, ձեռ. N 5636, ք. 98ա:

⁹ Նույն տեղում, ք. 112բ:

¹⁰ Նույն տեղում, ք. 116բ:

¹¹ Նույն տեղում, ք. 142բ:

¹² Նույն տեղում, ք. 183ա, 201ա, 203ա:

¹³ Նույն տեղում, ք. 194բ:

Իր բազմաբովանդակ մանրանկարներով աչքի է ընկնում N 7840 (Խանաձած¹, 1693 թ.) ձեռագիրը, որում հատկանշական են՝ «Ավետում²», «Ծնունդ³», «Մուտք Երուսաղեմ⁴», «Խորհրդավոր ընթրիք⁵», «Խաչելություն⁶», «Հարություն⁷», «Հիսուս Քրիստոսի հրեշտակի⁹», «Խորան¹⁰», «Անվանաթերթ¹¹», «Լուսանցագարդ¹²» և այլ մանրանկարներ: Այլ մոտեցում է ցուցնում «Ավետարանիչ¹³» և «Տերունական¹⁴», դիմանկարների նկատմամբ: Աշխատանքներում անզեն աչքով պահպանվել են համաչափությունների ու ձևերի դաշնությունը, գույների բնատիպ նմանակումները, դեմքերի անատոմիական կառուցվածքը, ծավալային խնդիրները: Ձեռագրի զարդանկարչությունը բազմաբովանդակ է: Հետաքրքիր գունային (կարմիր, կապույտ, նարնջագույն, կանաչ) երանգներ ունեն 19բ, 20ա, 21բ, 22ա, 23բ, 24ա, 25բ, 26ա, 27բ, 28ա էջերում առկա խորաններում պատկերված թռչունների տարբեր տեսակների (սիրամարգ, աղավնի, արծիվ), կենաց ծառի, կենդանիների (առյուծ, կապիկ) զարդամոտիվները: 67բ, 94բ, 105բ, 113բ, 124ա, 131ա, 139բ, 141բ, 143բ, 154բ, 159բ, 206ա և այլ էջերում պատկերված ծաղկազարդերի ծաղկաթերթիկներն

¹ Տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, էջ 621:

² ՄՄ, ձեռ. N 7840, ք. 3բ:

³ Նույն տեղում, ք. 4ա:

⁴ Նույն տեղում, ք. 9բ:

⁵ Նույն տեղում, ք. 10ա:

⁶ Նույն տեղում, ք. 13բ:

⁷ Նույն տեղում, ք. 14ա:

⁸ Նույն տեղում, ք. 15բ:

⁹ ՄՄ, ձեռ. N 7840, ք. 17բ:

¹⁰ Նույն տեղում, ք. 19բ, 20ա, 21բ, 22ա, 23բ, 24ա, 25բ, 26ա, 27բ, 28ա:

¹¹ Նույն տեղում, ք. 33ա, 118ա, 119ա, 173ա, 266ա:

¹² Նույն տեղում, ք. 34բ, 35բ, 36բ, 37բ, 40ա, 41բ, 42բ, 45բ, 47ա, 50ա, 51բ, 53բ, 55ա, 120բ, 121բ և այլն:

¹³ Նույն տեղում, ք. 32բ, 112ա, 113 ա, 117բ, 172բ, 265բ:

¹⁴ Նույն տեղում, 16ա:

իրենց վրա կրում են տերևի գաղափարանշանը՝ կազմելով ավելի բարդ հասկացություն: Այս տեսակետից առանձնապես ուշագրավ են այն ծաղկազարդերը, որոնք միաժամանակ ցույց են տալիս բողբոջների, ճյուղերի, պտուղների, հատիկների և բուսական այլ օրգանների գաղափարաձևերը: Առկա են կենաց ծառ¹, տերև², սիրամարգ³, խաչ⁴, տաճար⁵, աղավնի⁶, զանգակատուն⁷ այլ զարդամոտիվներ:

Հիսուս Քրիստոսի ծննդյան և կյանքի որոշ դրվագներ են նրեկայացված N 8965 (Քարահատ, 1675 թ.) ձեռագրի ծաղկող Գրիգոր քահանայի ստեղծագործություններում՝ «Ավետում⁸», «Մկրտություն⁹», «Հիսուսին տանջելը և խաչին բարձրացնելու պահը¹⁰», «Խաչելություն¹¹» և այլն: Հետաքրքիր գունային ֆոների վրա են պատկերված «Տերունական», «Ավետարանիչ», «Իզնատիոս վարդապետի», «Գանձասարի Սիմեոն կաթողիկոսի», «Վերջին դատաստան», «Անվանաթերթ Մատթեոսի», «Խորան», «Կիսախորան» մանրանկարները: Ձեռագիրն ունի լուսանցազարդեր՝ բույսերի և կենդանիների բազմաթիվ նկարներով¹²: Նման թեմատիկայով օժտված է N 10743 ձեռագիրը (Քարահատ, 1662 թ.), որում պատկերված են ծաղկող Գրիգոր երեցի ստեղ-

¹ ՄՄ, ձեռ. N 7840, ք. 89ա:

² Նույն տեղում, ք. 90բ, 91ա:

³ Նույն տեղում, ք. 91բ, 152բ, 158ա:

⁴ Նույն տեղում, ք. 97ա, 327ա:

⁵ Նույն տեղում, ք. 155ա, 247ա:

⁶ Նույն տեղում, ք. 234ա:

⁷ Նույն տեղում, ք. 239բ:

⁸ ՄՄ, ձեռ., ձեռ. N 8965, ք. 1բ:

⁹ Նույն տեղում, ք. 4ա:

¹⁰ Նույն տեղում, ք. 5ա:

¹¹ Նույն տեղում, ք. 9ա:

¹² Նույն տեղում, ք. 30բ, 31ա, 31բ, ք. 32բ, 34ա, 35ա, 36ա, 36բ, 37բ, 39ա, 40ա, 43ա, 45ա, 46բ, 50ա, 52ա, 53ա, 54բ, 56բ, 58բ, 60ա, 61ա, 65 բ, 67բ:

ծագործությունները՝ «Հիսուս բազմած գահին¹», «Ծնունդ²», «Կիսախորան³», «Ճակատագարդ⁴»: Վերջինս ուներ ինքնատիպ լուսանցագարդեր:

Արցախի մանրանկարչական արվեստում լայն տարածում ունեն սրամիտ ավետարանիչների դիմանկարները: Պատկերված անձանց դեմքերին բնորոշ են շեշտված սպիտակ ակնախոռոչները, հաստ հոնքերը, լայն, երբեմն կարմրացրած ծայրերով քթերը, բաց կարմրավուն այտերը, սպիտակ կամ սև մորուքը, ոլորված, ալիքավոր կամ ճակատին հաճախ երկու փնջով թափվող մազերը: Այս ոճի փայլուն օրինակներ են Քարատակ գյուղում 1669 թ. գրված «Ավետարան»-ի⁵ և N 10660 ձեռագրի (Քարահատ, 1691 թ.) 1բ, 65բ, 106բ, 183բ էջերում՝ ծաղկող Ղազար սարկավազի ձեռքով պատկերված ավետարանիչների մանրանկարները: Նման բովանդակությամբ հատկանշական են 1671 թ. Հարար գյուղի եկեղեցում գրված ձեռագրի՝ «Ավետարանի» մանրանկարները, որոնց մասին հիշատակում է Վրեժ Ներսիսյանը: Ըստ վերջինիս՝ ձեռագրում առկա են Մատթեոս, Մարկոս, Ղուկաս, Հովհաննես ավետարանիչների մանրանկարները: Ձեռագիրը հարուստ է բուսական լուսանցագարդերով և թռչնազիր զարդագրերով⁶:

N 4053 (Ծարա երկիր, 1663 թ.), N 9043 (Գյուլիստան, 1689 թ.), N 10472 (Գյուլիստան, 1686 թ.), N 10863 (Պարտավ, 1671 թ.) ձեռագրերն ունեն բազմաթիվ լուսանցագարդեր: N 10882 ձեռագրի (Շատախ, 1644 թ.) էջ 2ա և 142բ կան նրբաոճ ճակատագարդեր:

¹ ՄՄ, ձեռ. 10743, ք. 3բ:

² Նույն տեղում, ք. 113 բ:

³ Նույն տեղում, ք. 4 ա, 114 ա, 114բ, 173ա:

⁴ Նույն տեղում, ք. 12բ, 27ա, 47ա, 100ա, 144բ, 250ա:

⁵ ՄՄ, ձեռ. N 3856, ք. 19բ, 101բ, 157բ, 252 բ:

⁶ **Ներսիսյան Վ.**, *Յուզակ հայերեն ձեռագրաց Լոնդոնի Վերքոմ ինստիտուտի գրադարանի*, «ԲՄ», N 15, էջ 322:

Նախշերի տեսակներն ունեն վառ արտահայտված ազգային բնույթ:

XVIII դ. սկզբի զարդանկարչության հոյակապ նմուշ են Սարդարի թալա գյուղում 1703 գրված «Հայսմաուրք»-ի¹ զարդամոտիվները, որոնք օժտված են գույների հագեցվածությամբ: Վերջինիս 3ա, 4բ, 6ա, 12ա, 18բ, 26բ, 38բ, 40ա, 47բ, 54ա, 91ա, 132բ, 192բ և այլ թերթերում տեղ են գտել բազմապիսի զարդանախշեր: Առկա են նաև տարբեր կոմպոզիցիաներ՝ եկեղեցու գմբեթ՝ խաչը գլխին², թռչուն³, խաչ⁴, ծաղիկ⁵, եկեղեցի⁶, մոմակալ⁷, մոմակալ՝ խաչի տեսքով⁸, զանգակատուն⁹, ծաղիկ¹⁰ և այլն: Զարդապատկերները հատկանշվում են ճշգրիտ համամասնություններով՝ թեթև շարժումներով և մեղմ գունաշարով: Հետաքրիիր են՝ լուսանցազարդ¹¹, տաճար¹², խորան¹³ մանրանկարները: Այս շրջանի մանրանկարչության մեծարժեք նմուշներից են Շատախի ձեռագրի՝ «Ավետարանի» (1707 թ.) մանրանկարները՝ «Կիպրիանոս և Ուստիանե», «Մարիամ Աստվածածին», «Գրիգոր Նարեկացի», «Հրեշտակապետներ», «Պողոս, Պետրոս», «Հիսուս», «Գևորգ Զորավար»¹⁴: Աշխատանքում «Աստվածամոր» պատկերում

¹ ՄՄ, ձեռ. 9088:

² Նույն տեղում, ք.5ա:

³ Նույն տեղում, ք. 10բ, 68ա, 100բ, 121բ, 138ա, 268ա, 347բ:

⁴ Նույն տեղում, ք. 43ա, 393ա:

⁵ Նույն տեղում, ք. 50բ, 168ա:

⁶ ՄՄ, ձեռ. 9088, ք. 52ա:

⁷ Նույն տեղում, ք. 68բ, 77բ, 88ա, 130ա, 176ա:

⁸ Նույն տեղում, ք. 92ա:

⁹ Նույն տեղում, ք. 264ա:

¹⁰ Նույն տեղում, ք. 436բ:

¹¹ Նույն տեղում, ք. 3ա, 4բ, 6ա, 12ա, 18բ, 26բ, 38բ, 40ա, 47բ, 54ա և այլն:

¹² Նույն տեղում, ք. 52ա:

¹³ Նույն տեղում, ք. 475ա:

¹⁴ Ցուցակ հայերեն ձեռագրաց մասնավոր անձանց, «Բանբեր Մատենադարանի», 1980, N 13, էջ 299:

շեշտվում է նրա երկրային և զգայական էությունը, վեր հանվում որդու հանդեպ սիրուց տանջվող մոր կերպարը: Ձեռագիրը ճակատագարդ է՝ կարմիր, կապույտ, դեղին զարդագրերով:

Հիշատակության արժանի է 1709 թ. Սուլթանեցիք գյուղում գրված «Հայսմատորք»¹-ի զարդանախշերը, որոնք դրսևորված են բուսական և կենդանական մոտիվներով²: Աշխատանքում ինքնատիպ պատկերված են զանգակատուն՝ խաչը գլխին³, զարդանախշ՝ մեջը փոքր խաչ⁴, մոմակալ⁵, խաչ՝ պատվանդանի վրա⁶ և այլն: Ձեռագրի էջ Յա-ում պատկերված է «Կիսախորան», ընդ 7բ-ում՝ զանգակատուն՝ խաչը գլխին մանրանկար: Ձեռագրի խորանագարդերում ու լուսանցազարդերում կան տարատեսակ թռչունների՝ արծիվ, անգղ, աղավնի, ագռավ, արագիլ, կռունկ, կաքավ պատկերներ⁷ և այլն: Հավելենք, որ կենդանապատկերի նկարազարդում առկա է եղել դեռևս վաղ միջնադարում⁸:

Անփոփելիվ հետևյալ ենթահարցը՝ շեշտենք, որ Մատենադարանում պահվող ազգային ձեռագրերում տեղ գտած վերոնշյալ արժեքավոր նմուշները ևս մեկ անգամ փաստում են տվյալ ժամանակաշրջանում մանրանկարչության և զարդանկարչության զարգացման միտումների առկայությունը: Հավելենք, որ կերպարվեստի մնացած ճյուղերի (որմնանկարչություն, գեղան-

¹ ՄՄ, ձեռ. N 3813:

² Նույն տեղում, ք. 5բ, 8բ, 72բ, 73բ, 75բ, 80բ, 82ա, 84ա, 85ա, 86ա, 87ա, 99ա, 100ա, 109ա, 115ա, 120ա, 122բ, 124բ, 132ա, 147բ, 150ա, 151բ, 155ա, 161բ, 170ա, 173բ, 203ա, 213բ, 267ա, 270ա, 271ա, 203ա, 213բ, 267ա, 270ա, 271ա, 275ա, 276ա, 298ա, 305բ, 327բ, 331բ, 342ա, 375ա, 398ա, 426ա, 427ա, 427բ, 428բ, 450բ, 451ա, 451բ, 453բ:

³ Նույն տեղում, ք. 7բ:

⁴ Նույն տեղում, ք. 183բ:

⁵ Նույն տեղում, ք. 376ա, 379ա, 394ա, 435ա:

⁶ Նույն տեղում, ք. 401բ:

⁷ Նույն տեղում, ք. 157բ, 165ա, 185ա, 272ա, 361բ, 386բ, 399ա, 404 բ, 459ա:

⁸ Մանրամասն տես Հայկական մանրանկարչություն (կենդանազարդեր), Ե., 1996:

կարչություն և այլն) զարգացման միտումները ևս առկա են եղել այդ շրջանում, որոնց վերաբերյալ պահպանվել են շատ աղքատիկ տեղեկություններ:

§ 5. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Եկեղեցաշինություն: 1639 թ. Կասր ի Շիրինի պայմանագրի կնքումից հետո, որոշակի առաջընթաց է նկատվում նաև հայկական ճարտարապետության բնագավառում: Չնայած ժամանակաշրջանի ներքին և արտաքին արգելիչ գործոններին, Հայաստանում արվեստի կարկառուն ներկայացուցիչները շարունակում են վերակառուցել և ստեղծել նոր ճարտարապետական կոթողներ՝ պահպանելով նախորդ դարաշրջանների արվեստի ավանդական տարրերը:

Հայաստանում XVII-XVIII դդ. ճարտարապետության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում վանական համալիրները, որոնք իրենց հորինվածքով տարբերվում են դեռևս IX-XIV դդ. կառուցված վանական համալիրներից: Վերջիններիս զուգահեռ կառուցվում են ինքնատիպ եկեղեցական շինություններ: Իրենց ինքնատիպությամբ առանձնանում են XVII-XVIII դդ. կառուցված Արցախի ճարտարապետական կոթողները:

Ընդգծենք, որ XVII-XVIII դդ. հայկական եկեղեցաշինության առանձնահատկությունը եղել է եռանավ բազիլիկների զանգվածային կառուցումը: Ի տարբերություն վաղ միջնադարի, XVII-XVIII դդ. բազիլիկները ծածկվել են ընդհանուր երկթեք տանիքով: Գմբեթավոր եկեղեցիներ քիչ են կառուցվել և պատկանել են գմբեթավոր դահլիճի կամ քառամույթ գմբեթավոր բազիլիկի տիպին:

Ամարասի, Գանձասարի, Դադիվանքի, Խաթրավանքի (նաև՝ Խադարի, Խադայի կամ Խադոյի), Գտչավանքի, Ս. Հակոբի

վանական համալիրներին զուգահեռ¹, 1639–1736 թթ. Արցախում վերակառուցվեցին և կառուցվեցին բազմաթիվ վանքեր և եկեղեցիներ: Իրենց հնատիպ առանձնահատկություններով աչքի են ընկնում *Գյուլիստանի, Դրախտիկի, Թողանի, Խաչակապի, Ավետարանոցի, Խաչմասի* եկեղեցիները²:

Գյուլիստանի Սբ. Ամենափրկիչ վանքը կառուցվել է 1641 թ.: Այն գտնվում է գյուղից ոչ հեռու, դեպի հարավ–արևմուտք, Աղսու կոչված վտակի ճախ ափի մոտ, մի անտառապատ ձորակում: Եռանավ բազիլիկ եկեղեցի է՝ կանգնած չորս բոլորակ սյուների վրա. կառուցված է կիսամշակված քարերով: Անկյունաքարերը և կամարները խնամքով մշակված քարերից են՝ շարված կրաշաղախով: Այս մասին հետաքրքիր հիշատակություն ունի անվանի գրող Բաֆֆին. «...Ամենափրկչի անապատի տաճարի շինուածքը կանգնած է չորս բոլորակ սիւների վրայ, որ շինուած են խամկուր քարից: Այդ տաճարը այժմ ամայի է. խաշնարած թուրքերը անասուններ են լցնում նրա մէջ, անասունների աղբը թանձրացած էր յատակի վրայ: Տաճարից ոչ այնքան հեռու կայ մի այլ շինուածք, ուր ապրում էր մի ժամանակ այնտեղի միաբանութիւնը: Դա էլ նոյնպէս անասնանոց է դարձել: Թէ տաճարի եւ թէ միաբանութան բնակարանի բոլոր շինութիւնները դեռ մնացել են ամբողջ...»³:

Վանքի մասին հետաքրքիր գրառում է կատարել նաև Ե. Լալայանը. «Տաճարը շինուած է անտաշ քարով չորս բոլորակ սիւների վրայ և ունի 23 մետր 50 սանտիմետր երկարութիւն և 10

¹ Մանրամասն տե՛ս **Բարխուստարեանց Մ.**, *Արցախ (1996): Ոսկեան Հ.*, *Արցախի վանքերը: Ղևոնդ Ալիշան, Արցախ: Ոլորաքյան Բ.*, *Արցախի պատմություն:*

² Տե՛ս **Հարությունյան Մ.**, *Եկեղեցաշինությունն Արցախում, 1639-1700 թթ.*, «ԼՀԳ», Ե., 2016, N 1 էջ 116–118:

³ Տե՛ս **Բաֆֆի**, *Երկու ամիս Ադրանից եւ Սիւնեաց աշխարհներում*, «Լուսնայ», Թիֆլիս, 1896, N 2, էջ 203: **Բաֆֆի**, *Երկերի Ժողովածու*, հ. IX, էջ 268:

մետր լայնությամբ: Երկու փոքրիկ, նեղ լուսամուտներ աղօտ լոյս են սփռում ներսը, ուր կան մի մեծ ու երկու փոքր խորաններ և երկու խորհրդարան: Միակ, հարաւային դուռը այժմ քաղուած է, այս պատճառով էլ տաճարը թուրքերի անասունների ապաստարան է դարձած: Աւագանի մօտ, որ նոյնպէս կիսով չափ քանդուած է կայ ՌՂ(1641) թուականը»¹: Տաճարի արևմտյան կողմում եղել է երկու թաղակապ (կամարակապ, թաղածածկ), որոնցից մեկի դռան վրա գրված է. «ԹՎ ՌՃԿԴ. յիշատակ է այս օթաղս Եղիա վարդապետին»²:

Գյուլիստանի հնատիպ ճարտարապետական կոթողներից հայտնի է նաև *Սր. Մինաս կոչվող մատուռը*, որի հյուսիսային պատի վրա կար հետևյալ արձանագրությունը. «Կամա Աստուծոյ շինեցինք խորանս տանուտէրն Ուլուխան, աշխատողք երկու տէր Դաւիթն, Սպարապետն, պտղն, առ հասարակ ժողովուրդքն. թվ. ՌՃԸ(1659)»³: Մատուռի մասին Բաֆֆին նշում է. «Ամենափրկիչ անապատից մի քսան քայլ հեռավորութեան վրայ գտնուում է մի փոքրիկ մատուռ, որ ուխտատեղի է. այստեղ դեռ թուրքերի անասունները մուտք չեն գործել, որովհետև դուռ ունի...»⁴:

Դրախտիկ գյուղի (ներկայիս Արցախի Հանրապետության - Հաղթութի շրջանում) *Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցին* կոչվում է նաև Նարեկավանք: Վերջինս մասնակիորեն քանդված է, խորանը՝ կիսավեր, ծածկը՝ քարաշեն, կրաշաղախով, տանիքը՝ թաղակապ, մուտքը՝ միայն արևմուտքից: Ըստ շինարարական արձանագրության, որ պահպանվում է մուտքի մոտ և ներսում՝ այսն

¹ Տե՛ս **Լալաբան Ե.**, *Նշանավոր վանքեր*, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1899, գիրք Ե (№ 1), էջ 348:

² Նույն տեղում:

³ Տե՛ս Դիվան հայ վիճագրության, պր. 5 (Արցախ), էջ 248:

⁴ **Բաֆֆի**, *Երկու ամիս Ադրանից եւ Մյունեաց աշխարհներում*, «Լուսնայ», 1896, N 2, էջ 203:

վրա, եկեղեցին կառուցվել է ՌՂԴ (1645) թվականին¹: Սյան վրա փորագրված արձանագրությունը վկայում է, որ մշակութային կոթողը կառուցվել է Հովհաննես վարդապետի հիշատակին²:

Թողանի³ եկեղեցու արձանագրություններից մեկի համաձայն, եկեղեցին կառուցվել է 1647 թ.՝ Տեր Եղիասի կողմից: Վերջինս եկեղեցին կառուցել է իր կողակից Բեղաղինի հոգու հիշատակի համար: Հայր Ղ. Ալիշանը հիշատակում է այդ արձանագրության մասին. «Աստծու կամքով ես՝ Տեր Եղիաս, շինեցի այս սուրբ եկեղեցին՝ Առտի բեգի որդի, իմ կողակից Բեղաղինի հոգու հիշատակի համար, Շահբազի ժամանակ, Մութուղօղլի խան – Թաղուղի իշխանութան օրոք և Գանձասարի կաթողիկոս Տեր Գրիգորիսի կաթողիկոսութեան ժամանակ...»⁴:

Խաչակապի⁵ (սակ՝ Խաչափակ, Ղուշչի) **թաղակապ եկեղեցին** կառուցվել է 1650թ.¹ (վերանորոգվել՝ 1864), իսկ **Ավետարա-**

¹ **Քարխառաքեանց Մ., Արցախ (1895),** էջ 88: Տե՛ս նաև Դիվանի հայ վիմագրության, պր. 5 (Արցախ), էջ 172:

² <http://www.monuments.nkr.am/index.php?al=home&act=filter&mtype=12>:

³ Ըստ Ղևոնդ Ալիշանի՝ Թողան գյուղը տեղադրված է եղել Խաչենի գաղթափ ճորում (տե՛ս **Ղևոնդ Ալիշան, Արցախ,** էջ 106):

⁴ **Ղևոնդ Ալիշան, Արցախ,** էջ 106: Տե՛ս նաև **Զալալյան Ս., Ճանապարհորդարքին ի Մեծ Հայաստան,** մասն Ա, էջ 210:

⁵ Խաչակապ գյուղը տեղադրված է եղել պատմական Մեծ Հայքի Ոստիք նահանգի Գարդման գավառում: Այն ներկայումս գտնվում է Ադրբեջանի Ղաչքեսանի շրջանում: Գյուղի հայ բնակչությունը բռնազաղթել է 1988–1989 թվականներին՝ Ադրբեջանի իշխանությունների վարած հակահայկական քաղաքականության հետևանքով: Գյուղի անվան հետ կապված են մի քանի ավանդազրույցներ: Դրանցից մեկի համաձայն՝ գյուղում կային մի քանի բարձր խաչարձաններ, որոնք կանգնեցրել է Ս. Մեսրոպը, երբ Գարդմանի Խուրա իշխանի ձեռնափոխումը վերացրել է կռապաշտության բոլոր մնացորդները: Եվ ի հիշատակ այդ անցքի՝ գյուղը կոչվել է Խաչակապ կամ Խաչափակ: Առավել ուշագրավ է Ե. Լալայանի մոտ նշված հետևյալ ավանդությունը. Շահ-Աբբասի արշավաբների ժամանակ այս գյուղից ոմն Գրիգոր բռնում է մեկ բագե՝ շահին ընծա տանելու համար, սակայն նա ժայռից վայր է ընկնում և մեռնում: Շահ-Աբբասը լսելով այդ մասին, կամեմուն է այս գյուղը նվիրել նրա հորը, բայց վերջինս հրաժարվում է և խնդրում այն նվիրել համայնքին, որպեսզի միշտ իր հանգուցյալ որդուն որդումի տան: Շահն էլ կատարում է նրա խնդրանքը և գյուղն էլ կոչում է Ղուշչի (տե՛ս «Արձագանք», 1886, N 21, 1 հունիսի, էջ 310: **Լալայան Ե., Հայոց նշանավոր գյուղեր,** «Ազգագրական հանդես», գիրք Ե, 1899, (№ 1), էջ 313–314: **Karapetian S., Northern Artsakh,** p. 173):

նոցի (Չանախչի) **Ս. Աստվածածին եկեղեցին**¹ 1651 թ²., որի մասին վկայում է եկեղեցու մուտքի բարավորի (դռնագլուխ, շեմագլուխ) վրա փորագրված արձանագրությունը: Այս մասին հետաքրքիր հիշատակություն ունի Վ. Հարությունյանը, որը նշում է, թե մեծածավալ եռանավ, թաղածածկ այս եկեղեցին խոշորագույններից է իր տիպի մեջ, բացարձակ չափերով զիջելով միայն Տաթևի մեծ անապատի եկեղեցուն³: Ուշագրավ է եկեղեցում ավագ խորանի երկու կողմերում «օթյակների» գոյությունը, որոնք կամարակապ երկու բացվածքներով ուղղված են աղոթասրահի կողմը:

Խաչմաս գյուղի (Մ. Բարխուտարեանցի⁴ մոտ՝ Խաչմաչ) **Ս. Ստեփանոսի թաղակապ եկեղեցին** ունի փոքր զանգակատուն: Մուտքի բարավորի վրա փորագրվել է մեկ տող արձանագրություն, որում նշվել է եկեղեցու կառուցման թվականը՝ 1651 թ. (թուին ՌՃ): Այս եկեղեցին կառուցել է ուստա Հուսեփը: Վերջինս եկեղեցու մուտքի արևելյան կողմում թողել է մեկ արձանագրություն, որտեղ նշում է, որ ինքը ոմն Գևորգի հետ որպես հիշատակ կառուցել են այդ եկեղեցին և որ տեսնողները թող ասեն Աստված ողորմի⁵:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ուշագրավ է **Շոշ⁶ գյուղի Ս. Ստեփանոսի եկեղեցին**, որը կառուցվել է 1655 թ.: Այս

¹ «Նոր-Գար», Թիֆլիս, 1886, 6 մայիսի (ք. 65.) էջ 1:

² Դիվան հայ վիմագրության, էջ 148: Տե՛ս նաև **Հարությունյան Վ., Հայ ճարտարապետության պատմություն**, Ե., 1992, էջ 401:

³ **Հարությունյան Վ.**, նշվ. աշխ., էջ 401:

⁴ **Բարխուտարեանց Մ., Արցախ (1996)**, էջ 65:

⁵ Դիվան հայ վիմագրության, էջ 159:

⁶ Շոշ (նաև՝ Շուշիքենո) գյուղը գտնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանում, Շուշի քաղաքից 4 կմ հարավ-արևելք: Ե. Լալայանը նշում է, որ գյուղի բնակիչների շատ քիչ մասն է բնիկ, շատերին Մելիք Բաղին է Սոփից բերել և բնակեցրել այստեղ, իսկ մի քանի գերդաստան էլ Ջրաբերդից են եկել (տե՛ս «Ազգագրա-140

մասին փաստում է եկեղեցու հյուսիսային մուտքի ճակատաքարի վրա փորագրված հետևյալ արձանագրությունը. «Փոքր ծոթով ուր գա հասա քև տէր. ոտարք շինեցաք զսուրբ Ամենափրկիչ եկեղեցիս յիշատակ հոգուց մերոց և ննջեցելոց. ի հայրապետութեան Աղուանից տեառն Երեմիայի եւ ի մերոցս նահանգի աթոռն ղոյ տէր Գրիգորն և տէր Դաւիթ եպիսկոպոսաց: Ես մեղաւորս տէր Դաւիթ Էրեցս եղէ պատկառ. յիշեցէ՛ք ի տէր հանդերձ: ԺԵ: (15) քահանայիւ. զտէր Առաքել քահանայն յիշեցէ՛ք ի տէր. թվ.: ՌՃԴ: (1655) էր: Յաղարթս յիշեցէ՛ք: Տէր Յիսուս Քրիստոս Աստուած ողորմեա ննջեցելոցն»¹:

Իր ճարտարապետական ինքնատիպությամբ աչքի է ընկնում Ճարտար գյուղի *Եղիշե վանքի եկեղեցին*² (ներկայիս Արցախի Հանրապետության Մարտունու շրջանում), որի վերակառուցումը կատարվել է 1655 թ.: Այն գտնվում է Դուզե Ճարտար³ գյուղից հարավ բարձրացող լեռան գագաթին: Վանքի միակ եկեղեցին արձանագրությունների մեջ կոչվում է Եղիշայ կույսի անապատ⁴: Եկեղեցին ուշ միջնադարի ոճին հատուկ բազիլիկ է, ներսում ունի երկու սյուներ, ծածկը թաղակապ է: Բեմի երկու կողմից կան ուղղանկյուն հատակագծով խորաններ: Կամարները, լուսամուտների և դռան եզրերը շարված են մաքուր տաշած քարով,

կան հանդէս», Թիֆլիս, 1897, գիրք Բ, էջ 33): Ծուշիքեմոյի հին բնակիչների մասին տես ՎԱՄ, ֆ. 319, ց. 1, գ. 6:

¹ Դիվան հայ վիմագրության, էջ 145–146:

² Հին շենքի հիմնադրման ժամանակը ստույգ հայտնի չէ: Վիմական արձանագրություններից մեկի համաձայն՝ 12-րդ դարից արդեն եղել է նշանավոր ուխտատեղիներից մեկը, որը հետագայում ավերվել է և տեղը 17-րդ դարի երկրորդ կեսին վերաշինվել:

³ Ճարտարը բաղկացած է Դուզե (հյուսիսահայաց) ճարտար, Դուզե կալեր, Գյունե (արևելահայաց) ճարտար և Գյունե կալեր գյուղերից: Վանքի եկեղեցու հին շենքի հիմնադրման ժամանակը ստույգ հայտնի չէ: Սակայն վիմական արձանագրությունից մեկի համաձայն՝ 12-րդ դարից եղել է նշանավոր ուխտատեղերից մեկը:

⁴ Տես Մկրտչյան Շ., *Լեռնային Դարարտի պատմա-ճարտարապետական հուշարձանները*, Ե., 1980, էջ 110:

մնացած մասերը՝ անտաշ որձաքարերով¹: Եկեղեցու վերակառուցումը կատարել են երկու կրոնավորներ՝ Հովհան արեղան և իր որդեգիր կրտսեր Տեր Հովհանը: Շինարարության արձանագրությունը գտնվում է մուտքի ճակատաքարի վրա: Կտուրի վրա որպես զանգակատուն եղել է փոքրիկ կաթողիկ: Եկեղեցու ավագ խորանում՝ բեմի տակ գտնվում է Եղիշա կոյսի դամբարանը²: Վերջինիս հետ կապված են բազմաթիվ ավանդազրույցներ: Դրանցից մեկի մասին նշում է Ե. Լալայանը. «...Բեմի մեջ կա մի փոքրիկ խորանաձև բացվածք, որի մեջ կա մի փոքրիկ, բայց շատ խորը անցք, որ հավանականորեն հասնում է մինչև կոյսի գերեզմանը: Հիվանդները աղոթելուց և մոմեր վառելուց հետո մի անմեղ երեխայի ձեռքը փաթաթում են շորերով և պահում այդ խորանի անցքում: Ասում են թե մի քանի րոպեից հետո հիվանդի ցաված տեղին համապատասխանող մի ոսկր (կոյսի նշխարներից) թռչում կանգնում է երեխայի թևին: Անմիջապես վերցնում են այդ ոսկրը, դնում ջրի մեջ և այդ ջրով լվանում հիվանդի ցավող մասը, որ իսկույն կեթ լավանում է »³:

Եղիշա կոյսի դամբարանի մոտ կան մի քանի արձանագրություններ: Այդ արձանագրություններից մեկում նշվում է. «Յիշատակ է Համասուտանց Միրզախանի որդի Մանուկ վարդապետիս այս խաչկալս, եղբարքն իմ Պապան եւ Վանլալան, քորար (քորք) իմ Գուլասմար, Ինթաղիհ, ծնողքն իմ Մումխանիմ, կողակից իմ Նազլու, որդի իմ Հախնազար, Շահապ, Սիրուն, Վռամին, Մագրվանին եւ դստեր իմ Բաջուն, Դօսդաշին, թվ.

¹ Տե՛ս **Սկրտչյան Շ.**, *Մարտունու շրջանի պատմական հուշարձանները*, «Էջմիածին», 1976, N 6, էջ 62:

² **Սկրտչյան Շ.**, *Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները*, էջ 110:

³ Տե՛ս **Լալայան Ե.**, *Վարանդայի տեղագրությունը*, «Ազգագրական հանդես», 1897, զիլք Բ, էջ 46:

ՌՃԴ(1655)»¹: Իսկ հյուսիսային խորանին, ճակատաքարի վրա կա հետևյալ արձանագրությունը. «Ես Աղէս կանգնեցի զխաչս փրկութիւն ինձ եւ կենակցին իմոյ, որդւոյ եւ դստերաց իմոց»²:

XVII դ. 50-ական թվականներին շինարարական լայն աշխատանքներ են ծավալվել նաև Գանձասարի վանքում, որոնց մասին արժեքավոր հիշատակություն ունի Տիրայր վարդապետ – Մարտիկյանը: Վերջինս, վկայակոչելով եկեղեցու գավթի դռան ներքևում գտնվող մեղիք Աբովի արձանագրությունը, նշում է, որ 1657 թ. Թալիշի մեղիք Հովսեփի որդի մեղիք Աբովը նորոգել է, – Գանձասարի երկու եկեղեցիների տանիքներն ու քանդված պատերը: Այդ արձանագրությունը ունի հետևյալ բովանդակությունը. «Ի ՌՄԼԹ թուխս կամանն Աստուծոյ ձեռամբ Տեառն Յովհաննու կաթողիկոսին ես Ապաւ (Մեղիք Աբով) ուզբաշի որդի Մեղիք Յովսեփա: Թալիշու եւ իմ կենակից Հերիքնազ եւ որդիք Մեղիք Պէկլար եւ Մեղիք Ապաւ մեր հալալ արդեանց շինեցաք սրբոյ Աթոռոյս Աղուանից Գանձասարու երկու եկեղեցեաց (տաճարի և գավթի) տանիսն եւ խախտեալ որմունս բազում աշխատութեամբ յիշատակ մեզ եւ ննջեցելոց մերոց...»³:

Ճարտարապետական կոթողներից ուշագրավ են **Չարեք վանքի**⁴ (սակ՝ Չարեքավանք, Չարեքագետի անապատ Չարեքա անապատ) **Ս. Աստվածածին եկեղեցու** գլխավոր կառույցները՝

¹ Ոսկեան Հ., *Արցախի վանքերը*, էջ 38–39: Տե՛ս նաև **Բարխուստարեանց Մ.**, *Արցախ (1996)*, էջ 76:

² Ոսկեան Հ., նշվ. աշխ., 39:

³ **Տ. վարդ. Մարտիկյան**, *Շուշի քաղաքի Անենափրկիչ եկեղեցին և Ամարասի ու Գանձասարի վանքերը*, «Էջմիածին», 1957, N 12, էջ 32: Տե՛ս նաև **Ղևոնդ Ալիշան**, *Արցախ*, էջ 87–88:

⁴ Տեղադրված է եղել պատմական Մեծ Հայքի Ուտիք նահանգի Գարդման գավառում՝ Փիլի գյուղից 10 կմ հեռավորության վրա՝ Շամխոր գետի ձախ ափին, Հյուսիսային Արցախում («Արձագանք», 1886, N 21, 15 հունիսի, էջ 330): Ներկայումս այն գտնվում է Ադրբեջանի կողմից բռնազավթված Գետաբեկի շրջանում (մանրամասն տե՛ս **Կարապետյան Մ.**, *Հյուսիսային Արցախ*, էջ 103):

զանգակատունը, գավիթը, մատուռը և օժանդակ այլ կառույցներ: Վանքը հիմնադրվել է XVII դ. սկզբին: Այն հիմնադրել է Սյունյաց Մեծ անապատի սան Դավիթ եպիսկոպոսը¹: Չարեքա վանքի մասին հետաքրքիր տեղեկություններ կան ՀԱԱ, ֆ. 332-ում պահվող Կարապետ Բ Ուլնեցի կաթողիկոսի (1726-1729)՝ Չարեքա վանքին նյութական օգնություն ցույց տալու առթիվ գրած կոնդակում. «... մեծ և սուրբ Անապատն Չարեքու, որ է յերկրին - Գանջայու, որ կառուցեալ է յառաջնոց թագաւորաց, ի հայրապետացն սրբոց լուսապայծառ եկեղեցիս անուամբ սուրբ Աստուածածին և հաստատեալ անապատս բազմախումբ կրօնաօրաց...»²:

Եկեղեցու զանգակատունը կառուցել է վանքի վանահայր - Սարգիս վարդապետը 1659 թ., վանքի հյուսիս-արևմտյան հատվածում³: Այն նվիրվել է Գաբրիել ու Միքայել հրեշտակապետներին: Իրենց ինքնատիպ գեղեցկությամբ առանձնանում են զանգակատան հարավային ճակատին՝ լուսամուտի երկու կողմերում տեղադրված սրնգահար հրեշտակների հարթաքանդակները⁴: Իսկ 1684-ին վանահայր Ներսես վարդապետը Չարեք վանքի 70 միաբանների մասնակցությամբ կառուցել է Ս. Աստվածածին եկեղեցուն կից (արմ. կողմից), բազիլիկ հորինվածքով գավիթը, որի հարավային ճակատը եռակամար սյունասրահ է: Այս մասին հետաքրքիր գրառում է արվել «Արարատ» ամսագրում. «Հրաշակերտ գաւիթն շինեալ կայ առաջին մեծ եկեղեցոյն՝ համակ սրբատաշ քարամբ ի վերայ երկուց սեանց, ունի երկու դռուն՝

¹ «Արարատ», Սբ. Էջմիածին, 1872, ք. 7 (Է), էջ 269-270: Տե՛ս նաև «Բազմավեպ», Վեներտիկ, 1891, հ. ԽԹ, էջ 39:

² ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 778, ք. 1:

³ **Զաղախանց Մ.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 164-166:

⁴ Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Ե., 2002, էջ 842:

մինն մեծ ընդարձակ առ հարաւ, միան նեղ՝ արևմտեան հիւսիսային յանկինս ի վեր քան զբարաւարն, սոյն փոքր դրան ի ներքոյ խաչվիմի գրեալ կայ այս ինչ գիր, այնէ ով քառաթև սուրբ Փրկչին, և զինարան անմահ գառին, աուր փառաւոր արքային, թվի ՌՃԼԳ»¹:

1667-ին Սարգիս վարդապետը Չարեք վանքի հյուսիսարևմտյան բլրի գագաթին կառուցել է «Հարանց» կոչվող թաղածածկ մատուռը, որը հետագայում ծառայել է որպես անապատի վանահայրերի տապանատուն²: Այս մասին վկայում են վանքում թողնված արձանագրությունները: Արձանագրություններից մեկում նշվում է. «Ի թուականիս Հայոց ՌՃԺԶ (1667) ամի ի հայրապետութեան տեան Պետրոսի կաթողիկոսին, ես Քրիստոսի ծառայ Սարգիս վարդապետս կանգնեցի զխաչս ՚ի լուսաւորութին հոգոյ իմոյ եւ ծնողաց իմ տէր Յոհաննէսին եւ Եղիսաբեթին եւ միաբանիցս որք աստ կան հանգուցեալ եւ ամենայն ողորմածաց մերոց, Քրիստոս Աստուած մեր լուսաւորեսցէ հոգւով եւ մարմնով աստ եւ յարն դատաստանին եւ որք ընթեռնուք յիշեցէք ՚ի Քրիստոս զՄելքոն կազմաւոս»³: 1717-ին Մկրտիչ վարդապետը կառուցել է վանքի կամարակապ դարպասով պարիսպը, որին կից է թաղածածկ 30 խուց: Համալիրի արմ. կողմում խոհանոցով սեղանատունն է՝ քարե երկշարք սեղաններով: Վանքը ավերվել է լեզգիների արշավանքների հետևանքով: Սակայն 1730 թ. վանահայր Մկրտիչ վարդապետը հանգանակությամբ ձեռք բերած միջոցներով նորոգել է այն:

¹ «Արարատ», 1872, ք. 7 (Է), էջ 271:

² **Բարխուսարեանց Մ.**, *Արցախ (1996)*, էջ 202:

³ **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 166: Տե՛ս նաև «Արարատ», 1872, N 7, 270: «Արձագանք», 1886, N 23, էջ 330–331:

Արցախում եկեղեցաշինության ծավալման գործում բարձր է գնահատվում Գանձասարի Պետրոս Խանձրեցի կաթողիկոսի (կաթողիկոս՝ 1653-1675¹/1653-1678² թթ.) դերը: Տեր Գրիգոր Դ կաթողիկոսի վախճանվելուց հետո, 1653 թ. Աղվանից կաթողիկոս է դառնում Տեր Պետրոս Գ Խանձրեցին (Խանձկեցի): Վերջինիս մասին ուշագրավ հիշատակություն ունի Զաքարիա Ագուլեցին, որում նշվում է, որ Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությունը ստանալուց հետո, Պետրոս կաթողիկոսը սիրով ու հոժարակամ գնաց Գանձասար. «...Դարցեալ, Գանձասարու Պետրոս կաթողիկոսին գաւազան իշխանութին տվեց...Շատ ուրախութին եղև, սիրով եւ յօժարութեամբ գնաց Գանձասար»³:

Ինչպես նշում է Մ. Բարխուտարեանցը, խոհեմափայլ կաթողիկոսը նախ կարգավորում է Աղվանքի⁴ և Հայոց կաթողիկոսությունների միջև եղած հարաբերությունները՝ ձեռնադրվելով և օծվելով Ս. Էջմիածնում, ապա՝ Աղվանքի հայ բնակչության սրտերում ջերմացնում է սերը Գանձասարի նկատմամբ, համախմբում Վարանդա գավառի ժողովրդին և պաշտպանում շահական պալատում Գանձասարի դարավոր իրավունքը⁵: Նա ծնունդով Վարանդա գավառի հյուսիսում գտնվող Խանձք գյուղից է⁶, որի համար էլ կոչվեց Խանձրեցի: Նրա ջանքերով վերա-

¹ **Շահխաթունեանց Յովհ.**, նշվ. աշխ., էջ 345–346: Տե՛ս նաև **Մաղալյան Ա.**, *Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսների գավազանագիրքը*, «Պատմա-քառասյակյան հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), Ե., 2008, № 3, էջ 270, **Աբրահամյան Հ.**, նշվ. աշխ., էջ 39:

² **Սկրտումյան Լ.**, *Գանձասարի կաթողիկոսությունը Պետրոս Խանձրեցու օրոք (1653–1678)*, «ԼՀԳ», Ե., 2000, № 1, էջ 88:

³ **Զաքարիա Ագուլեցի**, նշվ. աշխ., էջ 108:

⁴ Աղվանքի պատմության մասին մանրամասն տե՛ս **Связян Г.**, *История страны Агуанк (с древнейших времен по VIII век)*, Ե., 2009.

⁵ **Բարխուտարեանց Մ.**, *Պատմութիւն Աղուանից*, Կ. Բ., էջ 66:

⁶ Նույն տեղում, էջ 143: Բ. Ուլուբաբյանը նշում է, որ Խանձքը գյուղ էր այն ժամանակվա Խաչեն գավառում, Հասան-Ջալալյանների տիրույթում, և որ վերջինս սերվում էր այս տոհմաճյուղից (տե՛ս **Ուլուբաբյան Բ.**, Արցախի պատմություն (սկզբից մինչև մեր օրերը) էջ 134):

նորոգվեց Ամարասը¹ և կառուցվեցին Հերիեր գյուղի Սուրբ Գրիգորիս (1667), Խաչեն գավառի Առաջաձոր գյուղի Սուրբ Աստվածածին (1668), Հին Փիփի² գյուղի (1670)³, Խանձք գյուղի Սուրբ Ստեփանոս (1673)⁴ եկեղեցիները: Հավելենք նաև, որ բացի Արցախի հոգևոր-մշակութային կյանքում թողած մեծ ներդրումից, Պետրոս կաթողիկոսը աչքի է ընկնում երկրամասի տնտեսական կյանքում ծավալած իր գործունեությամբ: Այս մասին հետաքրքիր տեղեկություն է պահպանվում Ռուսաստանի կենտրոնական պետական արխիվի (հին փաստաթղթերի) ֆոնդերից մեկում պահվող փաստաթղթում (արխիվից քաղված նյութը վերաբերում է հայ վաճառականների նկատմամբ ցուցաբերած օգնությանը), որտեղ նշվում է, Պետրոս կաթողիկոսի՝ Ռուսաստանի ցար Ալեքսեյ Միխայլովիչին (1629-1676, ռուսական ցար՝ 1645 թվականից) հղած նամակի (խնդրագրի) բովանդակության մասին: Խնդրագրում ներկայանալով որպես Պետրոս կաթողիկոս՝ ձեռնադրված Մեծ Հայքի լուսավորիչ Գրիգորի օրինությամբ, խնդրում է, որպեսզի Ռուսաց մեծ ու հզոր երկրի թագավորն իր գորավոր ուշադրությամբ պաշտպան և հովանավոր կանգնի հայ վաճառականներին, ընդհանրապես հայ ազգին: Ընդգծվում է, որ հայ

¹ **Ուրբարքյան Բ.**, նշվ. աշխ., էջ 135:

² Ավանդության համաձայն՝ գյուղի Փիփի անունը ծագում է Փեփրոնյա կույսի անունից, որը նահատակվել է այստեղ և ամփոփվել գյուղի եկեղեցում: Գյուղը կոչվել է նաև Փիք, Ձագիկ այժմ՝ Ջեյլիկ: Տեղադրված է եղել պատմական Մեծ Հայքի Ռոսիք նահանգի Գարդման գավառում, Հյուսիսային Արցախում: Ներկայումս այն գտնվում է Ադրբեջանի կողմից բռնագավառված Դաշքեսանի շրջանում (տե՛ս **Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ**, էջ 257, <https://hy.wikipedia.org/wiki/Փիփի>):

³ **Մկրտումյան Լ.**, *Գանձասարի կաթողիկոսությունը Պետրոս Խանձքեցի կաթողիկոսի օրոք (1653-1678 թթ.)*, «ԼՀԳ», 2000, N 1, էջ 96:

⁴ Նույն տեղում:

վաճառականները Իրանի և հարևան երկրների հետ միասին առևտուր են անում Ռուսաստանի հետ¹:

Վարանդայի Հերիեր գյուղի Սուրբ Գրիգորիս եկեղեցին²
(ներկայիս Արցախի Հանրապետության Մարտունու շրջանում) կառուցվել է 1667-1676 թթ.¹ Պետրոս կաթողիկոսի կարգադրությամբ և Բարսեղ արքեպիսկոպոսի ղեկավարությամբ: Իրենց ինքնատիպ ճարտարապետական ղեկորատիվ ձևերով առանձնանում են կոթողի բազմաթիվ սենյակները: Եկեղեցու շինարարական աշխատանքների վերաբերյալ մի շարք արձանագրություններ թողնվել են նրա պատերի վրա: Ուշագրավ է եկեղեցու սեղանի ժողովրդահայաց երեսին փորագրված հետևյալ արձանագրությունը. «Կաման Աստծոյ եւ Պետրոս Կաթողիկոս Աղուանից սուրբ աթոռոյ Գանձասարայ՝ նորոգեալ սուրբ աթոռս Ամարասայ արքեպիսկոպոսութեան բոլոր նահանգի Վարանդու եւ Քոչիզու, քանզի փեռեկտեալ եւ պատառեալ էին զվիճակ սորին արարեալ ըստ իւրաքանչիւր կամաց. իսկ մեք զցանկ հայրենի նորոգեալ ժողովեցաք, նորոգեցաք զսիրելի աշակերտս մեր զտէր Բարսեղ արքեպիսկոպոսն, որ եւ հրամայեցաք սմա շինել զեկեղեցի իմ հովարան Ամարասայ, զոր եւ շինեալ կատարեաց ըստ մերում հրամանի յաւուր տանի այլակերպութեանն Քրիստոսի. Եւ արինեցաք զսուրբ տաճարս անուանելով զսա սուրբ Գրի-

¹ 1672 г. Письмо канцзасарского патриарха Петра Алексею Михайловичу с просьбой покровительствовать испаганским армянским купцам и всему армянскому народу. См. Армяно-русские отношения, Сборник документов, том I, Е., 1953, с. 91–92. Տե՛ս նաև **Քարայան Վ.**, *Ազատագրության և պետականության համար պայքարի և զաղափարական դրսևորումները Արցախում (17-րդ դարի երկրորդ կես – 2007 թվական)*, Առեմախտ-սուրբում, Ե., 2012, էջ 45-46:

² **Քարխատարեանց Մ.**, *Պատմութիւն Աղուանից*, հ. Ա, էջ 170–174: Տե՛ս նաև Դիվան հայ վիճագրության, էջ 164: Տե՛ս **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 317: **Հասարայան Մ.**, *Հայկական միջնադարյան ճարտարապետության արցախյան ստեղծագործական դպրոցը*, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան, և ապագան, միջազգային գիտաժողով, Ե., 2007, էջ 357:

գորիս՝ բերելով ի նշխարաց սրբոյն Գրիգորիսի ամփոփեցաք երկրիս Վարանդու եւ Քոչիզու, զի եղիցի այս երկու պառոս մի...»¹:

Ս. Զալայանը հիշատակում է եկեղեցու արևմտյան դռան ճակատակալ քարի վրա եղած արձանագրության մասին. «Ես Պետրոս կաթողիկոս՝ աշակերտ Ղուկաս վարդապետի առ շինել կաթողիկէս յիշատակ ինձ եւ աշակերտին իմոյ Բարսեղ եպիսկոպոսին, յիշեցէք ՚ի Քրիստոս: Աստուած օրինէ Քօչեզու ժողովուրդն այն օրինութեամբն՝ որ ոչ անցանէ, ձեռնտու եղեն կրին եւ քարին...»²:

Հետաքրքիր է շինության հյուսիսային փոքր խորանի հարավային սեմի վրա արված արձանագրությունը, որի մասին Մ. Բարխուդարյանը նշում է. «Աստուած ողորմի տնտես Մարիամին, որ է (7) տարի եկեղեցուց հացն ու ճաշն արա»³:

Ինչպես նշում է Հ. Ոսկյանը, եկեղեցու արձանագրություններից երևում է, որ Հերիերը եղել է Ամարասի առաջնորդների հովարանն ու ամառանոցը և շատ բնական է, որ այն ենթակա է եղել նրանց իրավասությանը⁴: Այս կարծիքի հետ համամիտ է Վ. Հարությունյանը, որը նշում է, որ այս եկեղեցու ճարտարապետական նկարագրի վրա ազդել է այն հանգամանքը, որ Հերիերն եղել է Ամարասի վանքի միաբանների ամառանոցը, Վարանդայի ու Քոչեզի (նաև՝ Քոչիզ⁵) վիճակների կենտրոնը¹: Եկեղեցին դաս-

¹ **Լալաեան Ե.**, *Վարանդայի տեղագրությունը*, «Ազգագրական համդէս», 1897, գիրք Բ, էջ 39-40:

² **Զալայեանց Ս.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 330: Տե՛ս նաև **Բարխուտարեանց Մ.**, *Արցախ (1895)*, էջ 105:

³ **Բարխուտարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 105:

⁴ **Ոսկեան Հ.**, *Արցախի վանքերը*, էջ 45:

⁵ Քոչիզ հնավայրը ընկած է Ծովաստեղ և Խերխան գյուղերից մերքև ընկած բլրալանջի վրա (տե՛ս **Սկրտչյան Ը.**, *Մարտունու շրջանի պատմական հուշարձանները*, «Էջմիածին», 1976, N 6, էջ 61):

վում է գմբեթավոր բազիլիկ եկեղեցիների շարքին: Եկեղեցու պատերը արտաքուստ կառուցված են անմշակ քարերով:

Իր ինքնատիպությամբ աչքի է ընկնում ***Խաչեն գավառի Առաջաձոր*** (Առջաձոր) ***գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցին***, որը երկու կամարների վրա թաղակապ սովորական շենք է: Կառուցվել է Դավիթ քահանայի կողմից՝ 1668 թ.²: Եկեղեցու շինարարական աշխատանքներին օժանդակել է Յաղուբ բեկը, որն այդ ժամանակ գյուղի ավագն էր: Եկեղեցու կառուցման մասին վկայում է նրա հարավային պատին թողնված հետևյալ բովանդակությունը կրող արձանագրությունը. «Թվին 1668 թ., հայրապետութիւն Պետրոս կաթողիկոսին, գյուղիս տանուտէրութիւն Եաղուբ պէկին (բէգին), աղսակալութիւն (Աղսախխալի) Պահարին, ես՝ անարժան Դաւիթ Էրեցս շինեցի զեկեղեցիս ի յիշատակ հոգոց մերոց, ով կարդաք, ողորմի ասէք մեղավորիս»³: Այս մասին նաև վկայում է Ս. Ջալալյանը⁴:

Ուշագրավ է Դ. Ալիշանի հիշատակումն եկեղեցու դռան վրա ամրացված մի խաչքարի մասին, որի վրա թողնված վիմագրությունից (1253 թ.) կարելի է ենթադրել, որ դեռևս 13-րդ դարի կեսերից այդտեղ գոյություն է ունեցել մատուռ, որի հիմքերի վրա էլ կառուցվել էր վերոնշյալ եկեղեցին: Վիմագրում նշվում է. «ՉԲ թվին ես՝ Աբուսալի որդի Վաչես, կանգնեցրի զխաչս պարոն Թուրքին. ովքեր կկարդան, թող հիշեն հանուն Քրիստոսի»⁵:

Խանձք գյուղի Սուրբ Ստեփանոս եկեղեցին կառուցվել է 1673 թ., որի մասին վկայում է մուտքի ճակատաքարին փորագր-

¹ Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 401:

² Դիվան հայ վիմագրության, էջ 87:

³ Դիվան հայ վիմագրության, էջ 89:

⁴ Տե՛ս Ջալալեանց Ս., նշվ. աշխ., մասն Բ, էջ 240–241:

⁵ Ղևոնդ Ալիշան, *Արցախ*, էջ 74:

ված հետևյալ արձանագրությունը. «Ի:ՌՃԻԲ: (1673) թուին ես Պետրոս կաթողիկոս Աղուանից ի գեղջև Խանցկայ, հայրն իմ Մանկասար, մայրն Ադխանն և աաք եղբայրն իմ Իշխանն և իր որդիքն Ովանէսն, Պապաջանն և իր թոռ Մանկասարն և տատ Խաթունն շինեցաք զԵկեղեցիս յիշատակ մեզ և ննջեցելոց մերոց»¹:

Պետրոս կաթողիկոսի ջանքերի շնորհիվ, նաև վերակառուցվեց Վարանդայի եպիսկոպոսական կենտրոն Ամարասը²: Կաթողիկոսի աշակերտը՝ Բարսեղ եպիսկոպոսը, շարունակելով իր ուսուցչի շինարարական գործունեությունը՝ նորոգում է Ամարասը³, շրջապատում պարիսպներով:

17-րդ դարի երկրորդ կեսին կառուցվել են նաև *Պտկաթաղի, Ղազանջիի, Վարդաշենի, Միսրենի, Բերդաշենի, Մարտունաշենի, Գետաշենի, Կուսապատի* եկեղեցիները:

Պտկաթաղի եկեղեցին (ներկայիս Արցախի Հանրապետության Հաղրուրի շրջան) գտնվում է Ծակուռի և Թաղուտ գյուղերի միջև: Եկեղեցու արձանագրություններից մեկի համաձայն՝ այն կառուցվել է 1670թ. և պատկանում է թաղաձածկ դահլիճ-եկեղե-

¹ Դիվան հայ վիմագրության, էջ 143: Տե՛ս նաև **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 343:

² Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 240, վավ 132: Տե՛ս նաև **Բարխուտարեանց Մ., Արցախ**, էջ 74: **Հասրաթյան Մ.**, *Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը*, Ե., 1992, էջ 17:

³ Ամարասի վանական համալիրը որպես նշանավոր կրոնական և մշակութային կենտրոն հայտնի է եղել դեռևս 4-րդ դարից, երբ Գրիգոր Լուսավորիչն այդտեղ եկեղեցի է հիմնել, որի կառուցումն ավարտին է հասցրել իր թոռը՝ Գրիգորիս եպիսկոպոսը: Ինչպես մյուս հայկական ճարտարապետական կոթողները, այնպես էլ Ամարասի վանքը 1387 թ. ենթարկվում է լանկթեմուրյան հյոսակների ասպատակություններին: Ավանդագրույցներից մեկի համաձայն՝ Լանկ-Թեմուրն իր զորքերը շարել է Ամարասից մինչև Արաքս գետը և հրամայել վանքի քարուքանդ եղած պատերի քարերը միմյանց տարվով թափել Արաքսի մեջ (մանրամասն տե՛ս **Փավստոս Բուզանդ**, *Պատմութիւն Հայոց*, Ե., 1968):

ցիների տիպին¹: Իր գեղեցիկ ճարտարապետական կառուցվածքով առանձնանում է աղոթասրահը:

Ղազանչի գյուղի (Ներկայիս Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջան) **Սբ. Գևորգ եկեղեցու** մուտքի վրա փորագրված է. «Սուրբ Գևորգայ եկեղեցիս. թվ :ՌՃԻ: (1671)»²:

Վարդաշեն (Միրզիկ³) **գյուղի Սբ. Գաբրիել** քառասյուն եկեղեցին կառուցվել է 1674 թ.: Այս մասին եկեղեցու կամարակալ քարի վրա թողնվել է հետևյալ արձանագրությունը. «Արդեամբ Միրզիկայ սուրբ Գաբրիել եկեղեցիս շինեցա 1674 թ. ամի»⁴: Եկեղեցին ունի եռանավ, թաղածածկ բազիլիկ հորինվածք: Այն տարբեր ժամանակներում վերանորոգվել է: Վերջինս գործել է մինչև 1928 թ. և Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների որոշմամբ փակվել: Ներկայումս եկեղեցին ու զանգակատունը, ինչպես նաև պատերի հայատառ արձանագրությունները հիմնականում պահպանվում են⁵:

Իր հնատիպ ոճով աչքի է ընկնում **Մինքենդ գյուղում** (Ներկայիս Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանում) 1675 թ. սրբատաշ քարերով կառուցված մատուռը: Եկեղեցու կառուցման թվականի մասին է վկայում շինության հարավային մուտքի բարավորի վրա փորագրված հետևյալ արձանագրությունը. «Շի-

¹ Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 402:

² Էլիվան հայ վիմագրության, էջ 90:

³ Գամձակից մոտ 20 կմ հարավ-արևմուտք, Հյուսիսային Արցախ (տե՛ս **Լալանան Ե., Հայոց նշանավոր գյուղեր**, «Ազգագրական հանդես», 1899, N 5, էջ 315: «Արձագանք», 1886, N 20, 25 մայիսի, էջ 295): Ներկայումս գտնվում է Ադրբեջանի կողմից բռնագավառված Խանլարի շրջանում (**Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ**, էջ 394–396):

⁴ **Լալանան Ե., Հայոց նշանավոր գյուղեր**, «Ազգագրական հանդես», գիրք Ե, 1899 (№1), էջ 316:

⁵ http://gardmanq.do.am/blog/vardashen_mirzik_gyowghi_sowrb_gabriel_ekegheci/2014-01-31-20:

նեցաւ սբ. եկեղեցիս նորակնունք հայկայ ժողովուրդս թուին :ՌՃԻԴ: (1675)»¹:

Բերդաշեն գյուղի (սակ՝ Ղզղալա, ներկայիս Արցախի Հանրապետության Մարտունու շրջանում) **Սբ. Նահապետի եկեղեցին** կառուցվել է 1676 թ.: Այս մասին գրված է եկեղեցու արևմտյան պատի վրա. «Ես Ղզղալեցի Ղարայխանս շինեցի եկեղեցիս. հայրն իմ Ամիրխան եւ մայրն իմ Մաիրան եւ եղբայրն իմ Սարուխան, Պաղի, Բաբասի եւ կողայգիցն իմ փերին եւ որդին իմ Սարքիս :ՌՃԻԵ: (1676)»²:

Հաջորդ արժեքավոր ճարտարապետական կառույցը նշենք **Մարտունուաշենի** (սակ՝ Ղարաբուլաղ³) **Սբ. Աստվածածին եկեղեցին**, որը կառուցվել է 1676 թ. (Ս. Կարապետյանի մոտ՝ 1675⁴): Այս մասին է վկայում է եկեղեցու արձանագրություններից մեկը. «Շնորհօք ամենակալին մենք Ղարապուլախի ժողովուրդս, մեծ եւ փոքր շինեցիք սուրբ եկեղեցիս յիշատակ հոգուց մերոյ եւ ամենայն ննջեցելոց, ի հայրապետութեան Տեառն Պետրոսի, ի թագավորութեան Պարսից շահ Սիլեմանի...:ՌՃԻԵ: (1676)»⁵: Սբ. Աստվածածին եկեղեցու մեկ քարի վրա թողնված է հետևյալ արձանագրությունը. «Ես խօճա Անտոնս սակաւ օգնական եղի Սբ. եկեղեցոյս վարձուն, յիշատակ ինձ եւ կողակցին Մարիանին եւ որդոցն Գասբարին, Մէլզումին»⁶: Վերանորոգվել է 1892 թ.՝ հանգանակած գումարների միջոցով:

¹ Գիվան հայ վիմագրության, պր. 5 (Արցախ), էջ 194:

² Նույն տեղում, էջ 157:

³ Հյուսիսային Արցախ, ներկայումս՝ Ադրբեջանի կողմից բռնազավթված Խանլարի շրջանում (Գիվան հայ վիմագրության, պր. 5 (Արցախ), էջ 239: Տե՛ս նաև **Կարապետյան Մ., Հյուսիսային Արցախ**, էջ 378):

⁴ **Կարապետյան Մ., Հյուսիսային Արցախ**, էջ 378:

⁵ Գիվան հայ վիմագրության, պր. 5 (Արցախ), էջ 241: Տե՛ս նաև **Կարապետյան Մ.**, նշվ. աշխ., էջ 378-381:

⁶ Գիվան հայ վիմագրության, պր. 5 (Արցախ), էջ 242:

Հիշատակության արժանի է **Գևորգյանի՝** Սր. Նահատակ կամ Ավագ Սր. Նշան եկեղեցին², որը կառուցվել է 1677թ՝ Քամալ բեկի և համագյուղացիների նախաձեռնությամբ: Այս մասին վկայում է եկեղեցում թողնված արձանագրությունը. «Թվին ՌՃԻԶ (1677) կաման ամենակալին Աստուծոյ, շինեցաւ սուրբ Նահատակս ձեռամբ Քամալ Պէկին, օգնականութեամբ գեղուս, թագաւորութիւն պարսից շահ Սուլեյմանին, հայրապետութիւն տեառն Սիմնոնին յիշատակ Փարին»³:

Կուսասպատ՝ գյուղի Սր. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1686 (ՌՃԼԵ)⁵: Այս մասին ուշագրավ հիշատակում է արել Ս. Զալալյանցը. «Է գիւղ բազմամարդ որ ունի զայգիս յոլովս, իսկ շրջապատ լերինքն յամարան տօթատանջ վշտագնեն զբնակիչսն, ՚ի սմա է եկեղեցի սագաշէն կառուցեալ ՚ի վերայ չորից սեանց ՚ի թուին Հայոց ՌՃԼԵ»⁶:

1639-1736 թթ. Արցախում կառուցված եկեղեցիներից իր պատմական նշանակությամբ առանձնանում է **Երից Մանկանց վանքի եկեղեցին**: Վանքը գտնվում է Զրաբերդի մոտ (պատմական Արցախ նահանգի Մեծ Կուենք կամ Մեծ Կվենք գավառում)⁷, Թրդի գետակի ձախ ափին⁸ (ներկայիս Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանում, Խոտորաշեն գյուղի մոտ, Տոնաշեն

¹ Հյուսիսային Արցախ, ներկայումս՝ Ադրբեջանի կողմից բռնազավթված տարածքներում (Գիվան հայ վիճագրության, պր. 5, էջ 233: Տե՛ս նաև **Կարապետյան Ս.**, *Հյուսիսային Արցախ*, էջ 321):

² **Կարապետյան Ս.**, *Հյուսիսային Արցախ*, էջ 321:

³ «Արձագանք», 1886, N 19, էջ 281:

⁴ Ղևոնդ Ալիշանը Կուսասպատ գյուղը կոչում է Կասպատ կամ Քասաբաղ: Այն տեղադրում է Մեծիրանք գավառում, ներկայիս Մարտակերտի շրջանում (տե՛ս **Ղևոնդ Ալիշան**, *Արցախ*, էջ 69-70):

⁵ Գիվան հայ վիճագրության, պր. 5 (Արցախ), էջ 93:

⁶ **Զալալյանց Ս.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 180:

⁷ «Արարատ», Սր. Էջմիածին, 1871, N 8 (Ը), էջ 441, 1896, N 1 (Ա), էջ 44:

⁸ **Կարապետյան Ս.**, *XVII դ. վանական երկու համայնի Արցախում*, «ՊԲՀ», Ե., 1985, N 1, էջ 227:

և Մեծ Շեն գյուղերի հարևանությամբ): Եղել է եռանավ բազիլիկ եկեղեցի: Պահպանված է հյուսիսային ավանդատունը, կենտրոնական խորանի և պատերի մի մասը: Պատերը հիմնականում շարված են կիսամշակ քարերից, բարձրորակ կրաշաղախով: Շարվածքում օգտագործվել են նաև տարբեր գույնի և չափսերի ավազաքարեր:

Երից Մանկանց վանքը¹ եղել է Աղվանից հակաթոռ² կաթողիկոսների նստավայրը (ի դեպ նշենք, որ վանքը բաղկացած է եղել մեկ եկեղեցուց, որն էլ կառուցվել է նվիրատվությունների օժանդակությամբ): Խաչաձև գմբեթակիր հորինվածք ունեցող եկեղեցին կառուցվել է Աղվանից Սիմեոն կաթողիկոսի և նրա եղբոր Իգնատիոսի կողմից՝ 1691 թ.: Այս մասին «Արարատը» ամսագիրը գրում է. «...Այս գաառին վանքերէն երևելի է Երից

¹ Ղևոնդ Ալիշանի «Արցախ» խորագրով աշխատությունում (էջ 41) Երից Մանկաց վանքը նշվում է մաս Գանիելի վանք անունով, որն աշխարհացույց քարտեզում գրված է Քիրեթոյի Վելի վանք:

² Զրաբերդ գավառի Մեծ Շեն գյուղի Մարգիս քահանայի որդի Սիմեոն եպիսկոպոսը 1691 թ. կառուցելով Երից Մանկանց վանքի եկեղեցին, իրեն հռչակեց կաթողիկոս: Այս հանգամանքը սկիզբ դրեց Գանձասարի դեմ ուղղված հակաաթոռությանը: Վեճեր ծագեցին Սիմեոն եպիսկոպոսի և Գանձասարի Երեմիա Բ Հասան-Ջալալյանց կաթողիկոսի (1676–1700) միջև: Սիմեոնի և Գանձասարի Երեմիա կաթողիկոսի միջև ծագած անհաշտ պայքարը հարթելու միտումով հանդես եկավ Էջմիածնի Նահապետ Ա Եղեասցի կաթողիկոսը (1691–1705): Որոշվեց, որ պետք է վերացվի հակաաթոռությունը: Ինքնակոչ Սիմեոն կաթողիկոսը հատուկ պարտավորվեց, որ իր տոհմից այլևս ոչ ոք չպետք է կաթողիկոս դառնա: Մակայն 1705 թ. հակառակ Սիմեոնի խստամանն ու ստորագրությանը, նրան հաջորդեց իր ազգակամ Ներսեսը (1706–1736 թ.), որի օրոք պայքարն ավելի սրվեց, այս անգամ արդեն Ներսեսի և Գանձասարի Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանցի միջև: Երկու տարի անց՝ 1707-ին, դարձյալ երկու կաթողիկոսները կանչվեցին Էջմիածին և Ամենայն Հայոց կաթողիկոս Ալեքսանդր Ա Ջուղայեցին (1706–1714), հանգամանքներն քննելով հարցը, նույնիսկ Ներսեսին և օրինական կաթողիկոս հայտարարեց Եսայուն: Մակայն Եսայի կաթողիկոսը ճիշտ ըմբռնելով ձգձգվող թշնամությունից հալոց ընդհանուր գործին հասցվող վատ հետևանքները, նպատակահարմար գտավ հարյուրավե Ներսեսի հետ: Այնուհետև Երից Մանկանց վանքում կաթողիկոս հռչակվեց Ներսեսի բրոջ որդի Բարսեղը (1728–1763) (տե՛ս **Լեռ, Երկրի ժողովածու**, հ. 3, գլխք 2-րդ, էջ 116: ՄՄ, արխիվ Ա. Երիցյանի, թղթ. 157, վավ. 1, էջ 6–8: Գ.Աժ, ֆոնդ Ա. Քամալյանի, ց. 7, րաժին XVIII, N 65: Ի դեպ, Ս. Քամալյանի ֆոնդի նշված րաժին նյութի վերաբերյալ Տե՛ս «Արձագանք», 1886, N 36 (5 հոկտեմբերի), էջ 446: **Սլյուստմյան Լ., Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII–XIX դդ.**, Ե., 2006):

Մանկանց ուխտն հռչակատր Մոսու լերին բազկաց վերայ, Հայոց ՌՃԽ թուականին Աղուանից Սիմէօն Կաթողիկոսին և իւր եղբօր Իգնատիոս վարդապետին ձեռօք, ինչպես որ սորա եկեղեցւոյ արձանագրութիւններէն ևս յայտնի է զորս Սրբազան Սարգիս Արք Եպիսկոպոսն Հասան-Ջալալեանց...»¹: Այս փաստը հաստատում է եկեղեցու արևմտյան մուտքի կիսականար ճակատաքարի վրա թողնված հետևյալ արձանագրությունը. «Ի ՌՃԽ (1691) թվիս, ի ժամանակս շահ Սուլէյմանին մեծի արքային Պարսից, Ես Սիմէօն շնորհիւն Աստուծոյ կաթողիկոս Աղուանից շինեցի գեկեղեցիս ընդ հարազատ եղբարն իմով Իգնատիոս վարդապետին որ եմք որդիք Սարգսի քահանայի մեծաշէնցոյ յաղաթս յիշեցէ՛ք որդիք նոր Սիօնի ՚ի մտանելն և յելանելն դրանս տէրունի ամէն»²: Խ. Դադյանը եկեղեցու կառուցման թվականը ևս նշում է 1691 թ.³:

Եկեղեցու բեմի բարձրության ճակատին թողնված արձանագրությունում նշվել է, որ եկեղեցում եղել էր դպրատուն: Եկեղեցին ունեցել է նաև բնակելի սենյակներ, որոնց մեծ մասն ավերվել են (օտար զավթիչների ասպատակությունների հետևանքով): Բնակելի սենյակների տակ եղել են նկուղներ, որոնք ծառայել են որպես պահեստներ, հնարավոր է և թաքստոցներ: Իրենց գեղեցիկ ճարտարապետական ոճով առանձնանում են սեղանատունը և վեհարանի շենքը: Սեղանատունը բաղկացած է ճաշարահից և հետագայում դրան կցված նախարահից ու խոհանոցից: Ճաշարահիլիճը թաղածածկ է, թաղակիր երկու կամարների վրա: Իսկ վեհարանի շենքը բաղկացած է միմյանց հավա-

¹ «Արարատ», 1871, N 8 (Ը), էջ 442:

² Այս արձանագրությունից պարզ երևում է, որ Սիմեոն կաթողիկոսը եղել է Ջրաբերդ գավառի Մեծ Շեն գյուղից (Դիվան հայ վիմագրության), էջ 96: Այս մասին տե՛ս նաև **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., մասն Ա, էջ 178: **Ղևոնդ Ալիշան**, նշվ. աշխ., էջ 41–42: **Կարապետյան Ս.**, *XVII դարի վանական երկու համայնիր Արցախում*, «ՊԲՀ», 1985, N 1, էջ 228–229):

³ **Դադյան Խ.**, *Երկերի ժողովածու*, Սբ. էջմիածին, 2007, էջ 35:

սար երկու թաղածածկ դահլիճներից¹: Եկեղեցու ճարտարապետն է Ուստա Սարգիսը, որի մասին հավաստում է եկեղեցու հյուսիսային պատի վրա փորագրված արձանագրությունը. «Շինող և վարպետ եկեղեցոյս ուստայ Սարգիսն յիշեցէք ՚ի Քրիստոս»²: Ըստ Ջալալյանի՝ եկեղեցին կառուցվել է ավելի վաղ՝ 1664 (ՌՃԺԳ): Այս թվականը նշում է նաև Շ. Մկրտչյանը³: Ջալալյանի տեսակետը Ղևոնդ Ալիշանը բացահայտ սխալ և արձանագրությանը հակասող փաստ է համարում, քանզի այդ ժամանակ Սիմեոնը կաթողիկոս չի եղել: Շարունակելով իր տեսակետը՝ Ղ. Ալիշանը նշում է. «Իսկ եթե ՌՃԾԳ (1704) թվականը կարդանք, այն ևս անհնար է, որովհետև այն ժամանակ վախճանված էր Սիմեոնը»⁴:

Մենք համամիտ ենք Ղ. Ալիշանի տեսակետի հետ, քանի որ ըստ եկեղեցու պատին թողնված արձանագրության, եկեղեցին կառուցել է Աղվանից կաթողիկոս Սիմեոնը, այսինքն Սիմեոն Դ Խոտորաշենցին (1675–1701թթ)⁵: Իսկ վերջինիս կաթողիկոս եղած ժամանակահատվածը համընկնում է եկեղեցու կառուցմանը վերաբերվող Ղ. Ալիշանի տեսակետի հետ:

Ուշագրավ է նաև եկեղեցու արձանագրություններից մեկում Երից Մանկանց վանքի վերաբերյալ հետևյալ հիշատակումը. «Մեր աշխատանքը ավարտին հասցրինք՝ աստվածասերների ու ողորմածների միջոցով ու օգնությամբ. սուրբ Դանիել մարգարեի և երեք սուրբ Մանուկների պատվական նշխարքները, որոնք դրված են այստեղ, մեծամեծ հրաշագործություններ են կատա-

¹ Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 400:

² Ջալալեանց Ս., նշվ. աշխ., մասն Ա, էջ 179:

³ Մկրտչյան Շ., նշվ. աշխ., էջ 53:

⁴ Ղևոնդ Ալիշան, *Արցախ*, էջ 42:

⁵ Շահխաթունեանց Յովհ., նշվ. աշխ., էջ 346: Քրիստոմյա Հայաստանի հանրագիտարան, Ե., 2002, էջ 44:

րում: Այստեղ այն կառուցվեց մեր փրկության, մեր բազում մեղքերի թողության, մեր հոգևոր ու մարմնավոր ծնողների, ինչպես նաև բոլոր աշխատողների համար. մեզ և վանքի միաբաններին հիշեցե՛ք ձեր սուրբ աղոթքների մեջ»¹:

Երից Մանկանց վանքն ունի երկու թաղակապ խուց, միաբանների համար նախատեսած քարաշեն սենյակներ²:

XVII դ. 90-ական թվականներին Արցախում վերակառուցված և կառուցված եկեղեցիներից նշանավոր են Ս. Հակոբա վանքը (Մեծ Իրանք կամ Մեծառանք գավառ), Մազրայի (Քաշունիքի կամ Ղուբաթի շրջան), Ծամձորի, Ջրակույս գյուղի (ներկայիս Արցախի Հանրապետության Հադրութի շրջան), Ներքին Շենի (Ղարաչայ գետի՝ Սև գետակի ձախ ափին) եկեղեցիները:

Սբ. Հակոբա վանքը վերանորոգվել է 1691 թ.՝ Գրիգոր Եպիսկոպոսի կողմից³, իսկ Մազրա գյուղի կենտրոնական մասում գտնվող եկեղեցին՝ 1694 թ.: Վերջինս միանավ, թաղակապ հորինվածքով, ներսում ավագ խորանի երկու կողմերում զույգ ավանդատներով, հարավային ճակատից բացված միակ մուտքով, կոփածո և սրբատաշ գորշ ու մանուշակագույն բազալտ քարով միջին չափերի կառույց է⁴: Նմանօրինակ ճարտարապետական կառույցներից են **Ծամձորի Սբ. Աստվածածին** (1696 թ.⁵) և **Ներքին Շենի** եկեղեցիները: Ե. Լալայանի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ **Ներքին Շենի Սբ. Աստվածածին եկեղեցին** կառուցվել է 1697 (ՌՃԽԶ): Վերջինս նշում է. «Եկեղեցին բազմաթիվ անգամ որպես ապաստարան է ծառայել գյուղացիների հա-

¹ **Ղևոնդ Ալիշանի**, նշվ. աշխ., էջ 43:

² «Արարատ», Սբ. Էջմիածին, 1896, p. 1. (Ա), էջ 44:

³ Գլխան հայ վիճագրության, պր. 5 (Արցախ), էջ 11:

⁴ **Կարապետյան Ս.**, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, էջ 188:

⁵ **Քարխատարեանց Մ.**, *Արցախ (1996)*, էջ 42:

մար, քանի որ պատերի վրա նկատելի են բազմաթիվ գնդակների հետքեր»¹:

Ջրակույս գյուղի Սբ. Ստեփանոս եկեղեցին կառուցվել է 1698 թ.²: Իրենց ինքնատիպությամբ առանձնանում են եկեղեցու պատմաճարտարապետական հորինվածքները:

XVIII դ. առաջին երեք տասնամյակում Արցախում վերակառուցված և կառուցված եկեղեցիների վերաբերյալ շատ քիչ տեղեկություններ են պահպանվել: Կառուցված եկեղեցիներից հայտնի է **Խաչքուլաղի եկեղեցին, որը** կառուցվել է 1710 թ.³:

XVIII դ. առաջին կեսին որոշ շինարարական աշխատանքներ են կատարվել **Ս. Հակոբա վանքում, Տող գյուղի Սբ. Հովհաննես եկեղեցում**: Ս. Հակոբա վանքի ներսի սրահը և երկու սենյակ կառուցել է Սարգիս վարդապետը 1725 թ., որի մասին եկեղեցու սրահի մուտքի կամարի վերին հատվածում թողնվել է մեկ արձանագրություն. «Կահն այ. ես շինեղեցի Սարգիս վարդապետս շինեցի սրահս եւ զերկու սենեակս յիշատակ ինձ եւ ծնողաց իմոյ, ի հայապետութեան տանս Աղուանից տէր Եսայի սրբազան կաթողիկոսին ի ՌՃՀԴ(1725) թուին»⁴:

Տող գյուղի (ներկայիս Արցախի Հանրապետության Հադրութի շրջան) **Սբ. Հովհաննես եկեղեցու** (վերջինս եղել է մելիք Եզանյանների տոհմական տապանատունը) եկեղեցու գլուխը նորոգեց Դուկաս վարդապետի որդի մելիք Եզանը՝ 1736 թ., որի մասին Ս. Ջալալյանը նշում է. «Այս սուրբ Յովհաննէս եկեղեցոյ

¹ **Լալաբան Ե., Հայոց նշանավոր գյուղեր**, «Ազգագրական հանդես», գիրք Ե, 1899 (№ 1), էջ 330:

² Դիվան հայ վիճագրության, էջ 172:

³ Խաչքուլաղ անունը թարգմանվում է Խաչաղբյուր (տե՛ս **Բարխուտարեանց Մ., Արցախ (1895)**, էջ 287): Այժմ կոչվում է Խոշքուլաղ: Ամվան ծագումնաբանությունը կապվում է համանուն աղբյուրի հետ: Տեղադրված է եղել պատմական Գարդման գավառում: Ներկայումս՝ Ադրբեջանի կողմից բռնագավթված Դաշքեսանի շրջանում (տե՛ս **Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ**, էջ 233):

⁴ Դիվան հայ վիճագրության, պր. 5, էջ 19:

գլուխն նորոգեաց Դուկաս վարդապետի որդի մէլիք Եգանն յիշատակ հոգոյ իւրոյ որ կարդայ՝ մէկ բերան Աստուած ողորմի ասէ»¹:

Բնակելի տների տիպերը: XVII-XVIII դդ. ճարտարապետական ինքնատիպ հորինվածքներով առանձնանում են բնակելի տները, որոնք աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ: Օրինակ, Հայաստանի լեռնային հատվածի ժողովրդական բնակարանի հիմնական տիպը գլխատունն էր՝ ուղղանկյուն շինություն՝ ծածկված «հազարաշեն կամ «սողմաքաշ» համակարգի փայտե գմբեթով, կենտրոնում՝ լուսանցույց երդիկով: Ծածկը հենվում էր չորս առանձին կամ պատին կից սյուների վրա...²: Այս մասին առավել հանգամանալից ներկայացնում է Ն. Պապուխյանը³: Այս բնակարանների տիպին պատկանում է Ծարում 1658 թ. ուն Ավանեսի կառուցած հազարաշեն տունը, որի չորս սյունները սովորական գերանների փոխարեն քարից են⁴: Գյուղում այս քարայուն տունը հայտնի է «Դաշ դիրայլ դամ» անունով, և նրա մեջ ապրում էր Մեհտին Իսմայել Մուսա օղլու ընտանիքը⁵:

Նոր շրջանի բնակարանի մեկ այլ տարբերակ են համարվում պալատական ամրոցները, կամ մելիքական ապարանքները (ամարաթները), որոնց շինարարությունը՝ շնորհիվ XVI-XVIII դդ. Արցախում մելիքական կարգի հաստատման ու ասամրապնդման և դրանց հետագա ճյուղավորման, լայն թափ ստացավ: Պատմաճարտարապետական տեսանկյունից, ապարանքները դրսևոր-

¹ **Զաղախանց Ս.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 260: Տե՛ս նաև **Բարխուտարեանց Մ.**, *Արցախ (1895)*, էջ 74:

² Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, էջ 132:

³ Մանրամասն տե՛ս **Պապուխյան Ն.**, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Ե., 1972:

⁴ **Նարսայեղյան Ս.**, *Հայ մակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում*, էջ 65:

⁵ Գլխիկան հայ վիմագրության, էջ 217:

վում են երկու ոճերով. բնակավայրերի ապարանքներ և ամրոցների: Վերջիններս իրենց ճարտարապետական, կառուցողական ոճով նմանվում են Սյունիքի մելիքական ապարանքներին¹:

Հարկ է նշել, որ մելիքանիստ բնակավայրերի ամենակարևոր նախապայմանը պաշտպանվածությունն էր: Հենց այս նկատառումով է, որ դրանք կառուցվել են կամ ամրոցների մերձակայքում, կամ թիկունքում ունեցել են բնական պատասպարաններ ու թաքստոցներ՝ անտառներ, լեռնոտ ձորեր ու բարձունքներ և այլն:

Ինչպես նշում է Վ. Հարությունյանը, ծագումնաբանական կապ ունենալով հայկական ժողովրդական բնակելի տան ավանդական տիպի՝ գլխատան հետ, միաժամանակ մելիքական տների ճարտարապետությունն աչքի է ընկնում հատակագծային լուծման որոշակի կանոնավորությամբ...պաշտպանական կառուցվածքներով օժտվածությամբ, ոչ մեծ բերդի նկարագրով²:

Ավելի տարածում ունեին ապարանքները՝ երկու գլխատներով ու տարաբնույթ, մեծաքանակ սենյակներով, բակի կողմից կամարասրահի առկայությամբ, ընդ որում բակը շրջապատված էր բարձր ու բուրգավոր պարսպապատերով (Թալիշ, Մոխրաթաղ, Մաղավուզ, Տող, Չանախչի և այլն), իսկ որոշներն ունեցել են երկհարկանի մասեր (Թալիշ, Մոխրաթաղ, Մաղավուզ, Խնածախ, Ավետարանոց)³: Բոլոր տիպի մելիքական տներում ձգված ուղղանկյուն հատակագծով սենյակները կառուցված են ժողովրդական բնակարաններում լայնորեն տարածված գոմի-օդանների օրինակով. մեծ մասամբ ունեն խորքային տեղադրիք, ճակատային մուտք, ետնապատում խորշերի մեջ առնված բուխարի, եր-

¹ Մանրամասն տե՛ս **Հասրաթյան Մ.**, *Սյունիքի XVII-XVIII դդ. ճարտարապետական համալիրները*, Ե., 1973: **Նույան Ա.**, նշվ. աշխ.:

² **Հարությունյան Վ.**, նշվ. աշխ., էջ 438:

³ Նույն տեղում:

կայնական, բարձրացված, ծածկաձև և այլն: Այս տեսակետից ուշագրավ են Վարանդայի Մելիք-Շահնազարյանների, Ջրաբերդի Մելիք-Իսրայելյանների, Գյուլիստանի Մելիք-Բեգլարյանների¹ (XVII-XVIII դդ.)² ապարանքները:

Երկհարկանի շինությունների թվին է դասվում Ավետարանոցում կառուցված՝ Մելիք-Շահնազարյանների տոհմաճյուղից սերված Մելիք Բաղի Ա-ի ապարանքը (XVII դ.)³: Վերջինիս հետաքրքիր նկարագրությունը տալիս է Մ. Բարխուտարեանցը. «Մելիք Բաղու ապարանն, որ մօտ է Կուսանաց անապատին, բաղկացած է երկու յարկից. գետնայարկում կայ երեք արցախական, քարուկիր տուն, որք մնում են ցարդ նույնպե՞ս: Իսկ վերնայարկը քանդել տուած է ռազմագէտ գեներալ Առուստամ⁴ Գիւգիեան Մատաթեանցն եւ շինած իր համար բնակարան. որ աներակ է այժմ»⁵: Այս ոճի ճարտարապետական կառույցներից են Ավետարանոցի Մելիք-Հուսէյն Ա-ի և Մելիք-Բաղի Բ-ի ապարանքները (XVII-XVIII դդ.)⁶:

Մելիք-Իսրայելյանների ապարանքը⁷ ամրոցատիպ է: Ունենալով նպաստավոր բնական պայմաններ՝ այն վաղ միջնադարից ի վեր կառուցապատվել և դարձել է երկրամասի անստիկ ու նշանակալի պաշտպանական հենակետերից մեկը: XVII դ.

¹ **Լաթաեան Ե.**, *Հայ մելիքություններ*, «Ազգագրական հանդես», գիրք Ե, 1899, N 1, էջ 219:

² Մամրամասն տեսն **Ղուկաս Ա.**, նշվ. աշխ., էջ 36-48:

³ Նույն տեղում, էջ 90:

⁴ Մ. Բարխուտարյանցը նշում է, որ Առուստամ անունը եղել է Կենսազ-Մադաթովի անունը, իսկ նրա հոր անունը՝ Գրիգոր (տեսն Մ. Բարխուտարեանցի «Արցախ» աշխատությունը (1895), էջ 96-97):

⁵ Նույն տեղում, էջ 97:

⁶ Մամրամասն տեսն **Ղուկաս Ա.**, նշվ. աշխ., էջ 91:

⁷ Գտնվում է ներկայիս Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանում, Թարքառ գետի և նրա թրդի վտակի ձախ ափին: Պատմական տարբեր աղբյուրներում նշվում է Չարաբերդ, Ճառաբերդ, Ջերմուկի բերդ և Ջրաբերդ անուններով (տեսն **Ղուկաս Ա.**, նշվ. աշխ., էջ 82):

սկզբից գավառի մելիքներն իրենց առաջին նստավայրն են դարձրել Ջրաբերդ ամրոցը՝ նրա բարձունքին պահպանված հնավանդ ավերակները վերակառուցելով և վերածելով ամրացված բնակարանի: Ապարանքը բաղկացած է բազմաթիվ բնակելի սենյակներից: Միջնաբերդ-ամրոցը ուներ բրգավոր պարիսպներ, որոնց ավերակները պահպանվել են:

Մելիք-Իսրայելյանների ապարանքի անառիկությունը յուրովի նկարագրում է Մ. Բարխուտարյանցը. «Շինությունն ունի արտաքուստ բերդի ձև-քարուկիր բարձր պարիսպ եւ մի դարբաս արևելեան կողմից: Արտաքուստ չափերով ունի 49 մետր երկարություն, 29 մետր 25 սանթիմ լայնություն: Ամբողջ ապարանն բաղկացած է տասներկու սենեկից, որք ունին զանազան ձև ննջարան, ընդունարան, դատարան, թոնրատուն, խոհանոց, սպասատրանոց, գոմանոց...»¹:

Մելիք-Բեգլարյանների ապարանքներից մեկը (Հոռեկա կամ Գլխո վանքի մոտ) շրջափակված է բրգավոր պարիսպներով, որը վերագրվում է Մելիք-Բեգլար Ա-ի որդիներին՝ Աբով Բ-ի և Մելիք-Թամրազին: Այս մասին հետաքրքիր նկարագրությունը տալիս է Բաֆֆին. «Պալատը շինուած է ամբողջապէս սպիտակ քարերից: ...Հօռեկի բլուրի ստորոտում գտնվում է բուն պալատը, ամբողջութիւնը քառակուսի ձև ունի. շրջապատի չորս անկիւնները ամրացրած են չորս աշտարակներով: Գլխավոր դռնից ներս մտնելով բակը, դէպի աջ կողմը բոլորովին ողջ կանգնած են մի կարգ ընդարձակ սենեակներ. նրանց թիւը ութն է: Սենեակների առաստաղը կամարակապ է եւ գմբէթաձեւ. գմբէթի գագաթից բոլորաձեւ

¹ Տե՛ս Բարխուտարյանց Մ., *Արցախ*, (1996), էջ 140:

երդիկ է բացուած, որտեղից լույս է թափուում...»¹: Բաֆֆին շարունակելով ապարանքի ճարտարապետական մանրակրկիտ նկարագրությունը, այն նմանեցնում է պունեցիների պալատներին: – Մեծ գրողը նշում է. «Մենեակների ձևը սինեցու տան կատարելագործուած ձևն է...»²: Բաֆֆին մեծ ոգևորությամբ նաև նկարագրում է պալատի դիմացի կառույցի նշանակության մասին. «Այդ պալատի հանդեպ, ճանապարհի միւս կողմում, կայ մի այլ առանձին շինուածք, որը իւր ընդարձակութեամբ աւելի մեծ է, քան առաջինը: Որպէս երևում է դա ծառայելիս է եղել յիշեալ պալատում բնակուող իշխանի ծառաների, հիւրերի եւ պահապանների բնակութեան համար: Այստեղ կայ ախոռատուն, ստորերկրեայ ներքնատներ, որոնք բանտի համար են եղել եւ այլ զանազան ծածկոցներ...»³: Նա նշում է նաև, որ մի դահլիճի դռան կամարի վրա փորագրվել է հետևյալ արձանագրությունը. «Յիշատակ է Ոհան բարուն (իշխան) տէրին Մէլիք Թամրազ: ՌՃՀԶ:»⁴:

Այս մասին մեկ այլ աղբյուրում նշվում է, որ սենյակները կառուցված են մաքուր, սրբատաշ քարերով, ներսից և դրսից թաղածածկ են, պատերի մեջ ունեն բազմաթիվ պատուհաններ և դարակներ, որոնցից մեկի մուտքի ճակատին գրված է եղել. «Յիշատակ է Ոհան Բարուն. տերեն Մէլիք Թամրազ⁵: ՌՃԾ: (1701)»⁶: Իսկ Ա. Դուլյանի՝ «Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները» աշխատությունում նշվում է 1727 թ. (հեղինակը հիմնվել է

¹ **Բաֆֆի**, *Երկու ամիս Ադրասից եւ Մյունեաց աշխարհներում*, «Լուսնայ», 1896, N 2, էջ 206:

² Նույն տեղում:

³ **Բաֆֆի**, *Երկու ամիս Ադրասից եւ Մյունեաց աշխարհներում*, «Լուսնայ», 1896, N 2, էջ, 207:

⁴ Նույն տեղում:

⁵ Մելիք Թամրազի մասին տե՛ս **Լալաբեան Ե.**, *Հայ մելիքաբնիկներ*, «Ազգագրական հանդէս», գիրք Ե, 1899, N 1, էջ 222:

⁶ Գլխիկի հայ վիմագրության, էջ 101:

Բաֆֆու և Ե. Լալայանի վկայությունների վրա), և, որ կառուցած ապարանքը Մելիք-Թամրազը¹ թողնում է պարոն տեր Օհանին² (Հռեկա վանքի վանահայրն էր, ազգային-ազատագրագան պայքարի ոգեշունչ մասնակիցը):

Հարկ է նշել, որ ապարանքն ունեցել է պաշտպանական նշանակություն՝ որպես ամրացված հենակետ ու զորակայան-սղնախ՝ հսկելով մելիքության արևելյան՝ տափաստանամերձ սահմանները, միաժամանակ վտանգի պահերին ապահով ապաստան դառնալով գյուղի և շրջակայքի բնակչության համար:

Բերդաձև-ամրոցակերպ ձևերի թվին է պատկանում Քաղաքատեղի (սակ՝ Մայրաքաղաք³)ապարանքը, որը կառուցվել է XVII դ. մելիքական տուն-դոյակի մնացորդների վրա, իսկ XVIII դ. 20-ական թվականներին՝ վերակառուցվել⁴: XVIII դ. երկրորդ կեսից ապարանքը Մելիք Ադամի նստավայր-դոյակներից մեկն էր: Ապարանքը կառուցված է ժայռոտ լանջերով ձորակի լայնքով դրված ու կիսակլոր բուրգեր ունեցող բարձր (մոտ 4-8 մ) հենապատնեշով ստեղծված արհեստական դարավանդի վրա: Նախամուտքերն ու բոլոր սենյակներն եղել են փայտածածկ: Պատերը հագեցած են համաչափ դասավորված ու լայն որմնախորշերով, պատուհաները եղել են լայն ձևերով: Սենյակների առաստաղները ներքուստ շեշտելու և լանջավոր տանիքների ստանալու նպա-

¹ Մելիք-Թամրազը, որպես Գյուլիստանի մելիք և արցախյան սղնախների հայ զինվորության նշանավոր հրամանատար, հանդես է գալիս ազգային-ազատագրական պայքարի ամենամշտնապետ դեմքերի՝ Եսայի կաթողիկոսի, Մելիք-Եզանի, Աբրահամ Սպարապետի, Ավան յուզբաշու և այլոց հետ (տե՛ս **Ղույսան Ա.**, նշվ. աշխ., էջ 52):

² **Ղույսան Ա.**, նշվ. աշխ., էջ 50:

³ Ներկայիս Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղից մոտ 2 կմ արևմուտք, Թաքթառ գետի աջ ափին, նշանավոր Ջրաբերդ ամրոցից 1,5 կմ դեպի արևելք: Ներկայացվում է որպես Ջրաբերդի մելիքանիստ բնակավայրերից մեկը (մանրամասն տե՛ս **Ղույսան Ա.**, **Աբգարյան Ռ.**, *Արցախի Քաղաքատեղ բերդավանդ*, «ՊԲՀ», 1988, № 1, էջ 147-162):

⁴ **Ղույսան Ա.**, նշվ. աշխ., էջ 75:

տակով, ծածկվել են ոչ թե ավելի հեշտ իրականացվող լայնական գերաններով, այլ՝ երկայնական:

Երկհարկանի ապարանքների թվին է դասվում Մելիք Եզանի ապարանքը (1737 թ.), որը գտնվում է Տող գյուղի կենտրոնում¹: Այն ունեցել է բրգավոր շրջապարիսպ, որը մասամբ պահպանված է՝ դարպասի հետ միասին: Կառուցված է սրբատաշ քարով, ներքին հարկը քարածածկ է: Ապարանքի ամենաուշագրավ կառույցը՝ Մելիք Եզանի ընդունարանն է, որը քառանկյուն հատակագծով և թաղակապ ծածկով դահլիճ է: Ընդունարանի երկրորդ հարկի շքամուտքի ամբողջ ճակատով մեկ փորագրվել էր Մելիք Եզանի երկար հիշատակագրությունը, որում նշվում է կառույցի մասին²:

Այս շինության մասին հետաքրիքիր հիշատակություն ունի Մ. Սարգսյանը. «Մուտքը, որ իրականացված է սրբատաշ քարերով շարված ազդեցիկ կամարակապ շքամուտքի տեսքով, բացվում է սրահից և տեղադրված է պատի կենտրոնական մասում: Դիմացի պատի մեջ տեղադրված է մեծ բուխարի, որի երկու կողմերում բացված են ուղղանկյուն խորշեր: Մենյակը լուսավորվում է դեպի ներս լայնացող փոքր պատուհաններից թափանցող աղոտ լույսով...»³: Վերին հարկն ունի պատշգամբներ:

Նմանօրինակ պատմաճարտարապետական կառույցներ են եղել նաև Արցախի այլ վայրերում:

¹ Արցախի Հանրապետության կառավարության առընթեր Զբոսաշրջության վարչությունը 2009, 2010, 2011 թվականներին նախաձեռնեց՝ դաշտային ճարտարապետահնագիտական աշխատանքների ծավալով նոր բացահայտումներ իրականացնելու գործը (այս մասին մանրամասն տե՛ս Ժամկոչյան Ա., Բաբայան Ֆ., Մելիք Եզանի պալատական համակառույցի պեղումները Տող գյուղում, «Էջմիածին», 2015, N 5, էջ 122–136):

² **Ղուլյան Ա.**, նշվ. աշխ., էջ 30:

³ **Սարգսյան Մ.**, *Մելիքական բնակելի համակառույց Տող ավանում*, «ՊԲՀ», 1987, N 3, էջ 134-135:

Ամրոցների դասակարգման օրինակներ են սղնախները: Պատմաճարտարապետական իրենց մեծ նշանակությամբ աչքի են ընկնում Ջրաբերդի, Շիկաքար–Քարագլխի¹ (Խաչենի), Շոշի², Ավետարանոցի և այլ սղնախները, որոնք XVIII դ. 20-ական թվականներին հայ ազատագրական շարժման մեջ կատարել են պաշտպանական հենակետերի դեր³:

Կամրջաշինություն: Ճարտարապետական կոթողների ուշագրավ օրինակներ են կամուրջները, որոնց վերաբերյալ պահպանվել են աղքատիկ պատմական տվյալներ: Հայ ճարտարապետները օգտագործելով միջնադարյան փորձը, տեխնիկական նվաճումները, կամրջաշինությունը ծավալում են նաև նոր շրջանում: Արցախյան կամուրջների հիմնական շինանյութը կրաշաղախով միաձուլված մշակ և կիսամշակ քարն է, կան նաև աղյուսի համադրմամբ կառուցված կամուրջներ: Հին և միջնադարյան միաթռիչք և բազմաթռիչք կամուրջների՝ «Խաղխաղի» (Ջակամում, Հյուսիսային Արցախ), «Պարտավի» (Բարդա քաղաքի հարևանությամբ), «Քարավազի հին» (Քաշաթաղի շրջան), «Աշոտ Երկաթի» (Հյուսիսային Արցախի Չարեք բերդի ստորոտում), «Կոտոսավանքի», «Քարավազի նոր» (Քաշաթաղի շրջան), «Հին – Գանձակի վերին» (Հյուսիսային Արցախի Գանձակ քաղաքի հյու-

¹Մանրամասն տե՛ս **Սարգսյան Ս.**, *Շիկաքար բերդը և շրջակայքի հուշարձանները*, «Էջմիածին», 1993, N 7-8, էջ 78:

²Մանրամասն տե՛ս **Բաղայան Վ.**, *Շոշի. տեղն ու դերը Հայոց քաղաքակրթության համակարգում*, Ե., 2017:

³18-րդ դարի սկզբին Օսմանյան Թուրքիայի և Պարսկաստանի միջև հակամարտությունը վերակավում է, իսկ 1724 թ. թուրքական զորքերը նորից ներխուժեցին Այսրկովկաս, այդ թվում՝ Արևելյան Հայաստան: Նման իրադրությունն առաջացրեց միջնադարյան մի քանի բերդերի ու ամրոցների վերակառուցման և նորերի ստեղծման անհրաժեշտություն: Պաշտպանական հենակետերի ստեղծման փայլուն օրինակներ են եղել Սյունիքում և Արցախում կառուցված սղնախները (մանրամասն տե՛ս **Արզումանյան Ջ.**, *Մեծ և փոքր սղնախների հարցի շուրջ*, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1985, N 4, էջ 85-92: **Բաղայան Վ.**, *Շոշի. տեղն ու դերը Հայոց քաղաքակրթության համակարգում*, էջ 56-82):

սիսային մասում), «Զրվշտիկ» (Մարտակերտի շրջանի Մադաղիս գյուղի մոտ), «Ձիասարի» (Քաշաթաղի շրջան), «Խաթրավանքի», «Դադիվանքի»¹ և այլ բազմաթիվ կոթողների կողքին (որոշ մասը կիսավեր վիճակում է) սկսվում են կառուցվել նորերը: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում հատկանշական են «Վերին Քարահատի» (Ադրբեջանին բռնակցված Հյուսիսային Արցախի Վերին – Քարահատ գյուղում, XVI–XVII դդ.), «Թովի» (Քաշաթաղ, XVI–XVII դդ.), «Մահտեսի Արանի» (Ավետարանոցի մոտ, 1663 թ.), «Ակնաղբյուրի» (ԼՂՀ Ասկերանի շրջան, XVII դ.), «Բանացի Մեծի» (Հյուսիսային Արցախ, XVII դ.), «Հոցկոտի» (Ավետարանոց գյուղից 200 մ հարավ-արմուտք, XVII–XVIII դդ.), «Անջուր կամ Խռովածի» (Շահումյանի շրջան, XVII–XVIII դդ.), «Ներքիշենի» (Շահումյանի շրջան, XVIII դ.) «Ներքի Իգյակուցի», (Հադրութի րջանի Տումի գյուղի մոտ, XVII–XVIII դդ.), «Ձախլիկի կամ Ճրդացածորի» (Ասկերանի շրջանի Շոշ գյուղից 1կմ արևմուտք, XVII–XVIII դդ.), «Գյուլիստանի» (Շահումյանի շրջան, XVII–XVIII դդ.), «Մելիք Մնացականի» (Գետաշենում, XVIII դ.) կամուրջները²: Իր ինքնատիպ կառուցվածքով առանձնանում է Ասկերանի Խնձրիստան գյուղի «Մելիքի» կամուրջը (XVIII դ.), որը կառուցել է Խաչենի մելիք Միրզախանը³:

Ամփոփելով նշենք, որ չնայած պատմական բարդ ժամանակաշրջանին, 1639–1736 թթ. ինչպես Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում, այնպես էլ Արցախում վերակառուցվել և կառուցվել են ճարտարապետական հրաշալի կոթողներ, որոնց մասին տվյալները ևս մեկ անգամ վկայում են Արցախում մշակութա-

¹ Մանրամասն տե՛ս **Կարապետյան Ս.**, *Արցախի կամուրջները*, Ե., 2009, էջ 15-46:

² Տե՛ս **Կարապետյան Ս.**, *Արցախի կամուրջները*, էջ 64, 66, 68, 70, 72, 78, 80, 82, 83, 86, 94, 97:

³ Նույն տեղում, էջ 88:

յին արժեքավոր կոթողների առկայության մասին: Շեշտենք, որ վերոնշյալ եկեղեցիների մի մասը ներկայումս գտնվում են կիսավեր վիճակում, հատկապես՝ Հյուսիսային Արցախի եկեղեցիները, որոնք մյուս հայկական մշակութային արժեքների հետ գտնվում են Ադրբեջանի կողմից բռնազավթված տարածքներում:

§ 6. ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հայկական արվեստի կարևոր և հատկանշական բնագավառներից է քանդակագործությունը, որը դեռևս վաղ քրիստոնեական ժամանակներից սերտորեն կապված է եղել ճարտարապետության հետ: Հայ արվեստի վարպետները XVII-XVIII դդ. վերամշակեցին հարդարանքի ավանդական տարրերը և ստեղծեցին նորերը՝ դարաշրջանի գեղագիտական ըմբռնումներին ու պահանջներին համապատասխան: Աճում է զարդարվեստի նշանակությունը, ծավալվում ֆիզուրալ քանդակագործությունը, լայն տարածում են ստանում կրոնական ու աշխարհիկ թեմաներով պատկերաքանդակները: Նոր շրջանում առկա են եղել քանդակագործության հետևյալ ենթատեսակները՝ բարձրաքանդակ, հարթաքանդակ, խորաքանդակ:

Քանդակագործության արվեստի մի շարք փայլուն օրինակներ են XVII-XVIII դդ. Արցախի եկեղեցիների արտաքին պատերի, ճակտոնների, մուտքերի, պատուհանների շրջանակների ու գոտիների, զանգակատների, թմբուկների վրա արված զարդաքանդակները: Ուշագրավ են Գյուլիստանի, Դրախտիկի, Թողանի, Խաչակապի, Ավետարանոցի, Խաչմասի, Շոշի Սբ. Ստեփանոսի, Վարանդայի Հերիեր գյուղի Սուրբ Գրիգորիս եկեղեցու, Առաջաձոր գյուղի Սբ. Աստվածածինի, Խանձք գյուղի Սուրբ Ստեփանոսի, Պոկաթաղի, Ղազանչիի Վարդաշենի, Մինքենդի, Բերդաշենի, Մարտունաշենի, Գետաշենի, Կուսապատի և այլ եկեղեցիների՝ տարբեր հատվածներում արված հարդարանքները: Հիշատակության արժանի է Երից Մանկանց վանքի եկեղեցու քանդակաշարը: Բազմաթիվ և գեղեցիկ քանդակների մեջ աչքի է

ընկնում արևի ժամացույցը՝ քարի վրա կերտված¹: Իր հնատիպ քանդակաշարերով առանձնանում է Եղիշա վանքի եկեղեցին, որի պատերի մեջ տեղադրվել են գեղեցիկ խաչքարեր, կենցաղային և այլ տեսակի հետաքրքիր զարդաքանդակներ, նույնիսկ գերեզմանաքարեր, որոնց վրա քանդակված են երկրագործական գործիքներ, վար ու ցանքի, հացահատիկի կալսման տեսարաններ, խաղողի ողկույզներ և այլն²:

Քանդակագործության մեջ հատուկ ելքախումբ են կազմում տարբեր ժանրերի մանրաքանդակները («մանր պլաստիկա», «փոքր ձևերի քանդակագործություն»): Մանր պլաստիկայի³ առանձնահատուկ բնագավառին են պատկանում ոսկերչական քանդակավոր կերտվածքները: Այս տեսակետից ուշագրավ են բազմաթիվ ձեռագրերում արված զարդամոտիվները: Ձեռագրերի կազմերի վրա առկա են բազմաթիվ զարդաքանդակներ՝ կիսագնդիկներ, անկյունային և եզրային մետաղապատումներ, կողային պատվածքներ, արծաթյա խաչ, արծաթյա զարդաքանդակ, խաչելությանը, Տիրամոր դիմաքանդակով և այլն: Հարկ է նշենել, որ մետաղապատ մասն են կազմում կապիչները կամ նրանց մասերը՝ կոճակ, ամրակ կամ փականակ, զանազան տեսակի շղթաներ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, եգրածողեր կամ անկյունային պատվածքներ⁴: Հատկանշական են

¹ Սկրտչյան Շ., *Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները*, էջ 53:

² Սկրտչյան Շ., *Մարտունու շրջանի պատմական հուշարձանները*, «Էջմիածին», 1976, N 6, էջ 63:

³ «Մանր պլաստիկա» ենթախմբին են պատկանում տարբեր ժանրերի մանրաքանդակները, որոնք պատրաստվում են խեցուց, մետաղից, ոսկրից, քարից, սպակուց կամ պլաստմասսայից (տե՛ս Հայկական հանրագիտարան, <http://www.encyclopedia.am/pages.php?hId=1382>):

⁴ Մանրամասն տե՛ս Մատենադարանի արծաթապատ կազմերով ձեռագրերը, Ե., 2011:

N 3196, N 3994 ձեռագրերի կազմերը: Առաջինի կազմը մետաղազարդ տախտակ է՝ «Տերունական» նկարով (լատիներեն մակագրությամբ) և «Խաչելության» բազմաֆիգուր ու դինամիկ քանդակով, երկրորդի կազմի վրա պատկերված է ականակուռ արծաթյա խաչ: Այն կոստղապատ է:

N 5636 ձեռագիրը արծաթ-ոսկեջրած կազմով է՝ ոսկեջրած զարդաքանդակներով: Կազմի վրա Տիրամոր վեհաշուք ֆիգուրն է՝ Մանուկը ձեռքին: Բարձրաքանդակ ծավալաձևերով այդ աշխատանքն աչքի է ընկնում համամասնությունների անթերի մեկնաբանությամբ: Այս կազմի երկրորդ փեղկի վրա «Խաչելության» փայլուն կերտվածքն է:

Իրենց ինքնատիպ մանրաքանդակներով աչքի են ընկնում N 6746, N 6771 ձեռագիր մատյանների կազմերը: Առաջինի կազմը՝ կոստղապատ է՝ ականակուռ խաչով, երկրորդինը՝ արծաթյա զարդաքանդակ է՝ կրկնակազմով, գեղեցիկ նախշերով (շրջանակաձև ծաղիկներ, տերևներ) Խաչելությամբ, Տիրամոր դիմաքանդակով: Վերջինս ճակատային դիրքով նստած է, հայցքը՝ դիտողին: Մանուկը մոր ձախ ծնկին է: Տիրամայրը աջով օրհնում է՝ ձախ ձեռքում պահելով փոքրիկ ճրագ: Այդ ձեռագրի կազմի «Խաչելություն» և «Տիրամայր» մանրաքանդակները պատկերված են ոսկեպատ շրջանակների մեջ:

Ուշագրավ է N 7840 ձեռագրի կազմը, որն արծաթապատ է: Վերջինիս վրա պատկերված են «Տերունական» քանդակներ, որոնք ունեցել են սրբապատկերային նշանակություն: Բարձրաքանդակային սահուն հնարներով ցույց են տրված կերպարների դժվարին շարժումները: Տպավորիչ է հատկապես ֆոնի և ֆիգուրների հիասքանչ համադրությունը:

Մանր քանդակների (երբեմն քանդակները եղել են մակագրությունների տեսքով) փայլուն օրինակներ են դրոշմագարդ¹, շերտագարդ² և վանդակագարդ³ ձեռագիր մատյանների կազմերը: Ուշագրավ է N 10660 ձեռագիրը, որի աստառը՝ ծաղկագարդ դարչնագույն կտավ: Ա և Բ փեղկերին կան 4-ական մակագրություն՝ «Տ[է]ր ՄԵՍՐՈՊ» (ԺԸ դ.)⁴:

Ինչպես վերը նշվեց քանդակագործության բնագավառում իր ուրույն տեղն է ունեցել զարդարվեստը: Զարդարվեստը համարվում է հայկական արվեստի հնագույն ճյուղերից մեկը, որը ձևավորվել էր դեռևս նախնադարում: Զարդարվեստի մոտիվները տարաբնույթ են: Ա. Մնացականյանը, հանգամանորեն ներկայացնելով զարդարվեստի մոտիվների ծագման ու գաղափարական բովանդակության հետ առնչվող հարցերի մեկնաբանությունը, նշում է, որ հնագույն ժամանակներից սկսած մարդիկ զարդարել են հագուստները, բնակարանները, տնային կահկարասիքը, գործիքները, մարդկային մարմինները, ձեռագրերն ու գրքերը, պատմաճարտարապետական զանազան հուշարձանները, գերեզմանաքարերը, նույնիսկ անասունների մարմինները, ծածկոցները և այլն⁵: Հայկական զարդարվեստում կարևոր մաս են կազմում բուսական և կենդանական մոտիվները:

Զարդաքանդակի մոտիվներն արտացոլվել են նաև տապանաքարերի վրա: Մեծ, հարթ, սպիտակավուն տեսակներից են Տող գյուղի Պետրոս Պապի⁶ (1649 թ.) Մելիքսեթ եպիսկոպոսի¹

¹ Տե՛ս ՍՄ, ձեռ. N 223, N 713, N 2067, N 2277, N 3541, N 3542, N 3647, N 4228, N 4281, N 5072, N 5143, N 8678, N 9043:

² Նույն տեղում, ձեռ. N 968, N 4053, N 7980, N 8549:

³ Նույն տեղում, ձեռ. N 6746, N 7687, N 10472:

⁴ Յուրակ ձեռագրաց, հ. Գ, էջ 152:

⁵ Տե՛ս Մնացականյան Ա., *Հայկական զարդարվեստ*, Ե., 1955, էջ 7:

⁶ Դիվան հայ վիճազրության, էջ 179:

(Զրվշտիկ կամ Եղիշե առաքյալի վանքում, 1651 թ.), Աղուանից Գրիգոր կաթողիկոսի² (Գանձասարի վանքում, 1653 թ.), Ծարի պր.ն Զհանգիր բեկի (1676 թ.), Մելիքսեթ եպիսկոպոսի ավագ եղբոր՝ Մեսրոբի³ (Զրվշտիկ, 1713 թ.), Զհանգիր բեկի կողակից Շալամի⁴ (Ծարում, 1717 թ.) տապանաքարերը:

Իրենց ինքնատիպ պատկերաքանդակներով առանձնանում են Գետաշենում գտնված տապանաքարերը. Պետոսի տապանաքարն (1643 թ.) օրորոցաձև է, հարավային կողին նվագածու և պարող: Մյուսը մեծ, թամբաձև է, հարավային երեսին հեծյալ՝ սուրը ձեռքին, սանձից բռնած պատանի: Պատկերված է պարող՝ մի ձեռքին գավ, մյուսին՝ բլիթ, երկու մարդ, շրջանակներին հինգ տող. «Սուրբ խաչս բարեխոս Հախնազարին, կողակից Նանահն, որդի Եավրին, Հարութինին: ՌՃԱ: (1652)»⁵:

Հիշատակության արժանի է Փարաջանց գյուղում (Լաչինի շրջան) գտնված տապանաքարը (1658 թ.), որն օրորոցաձև է. հյուսիսային երեսին կենցաղային տեսարան, վերևի թեքության վրա փորագրված արձանագրություն, արևմտյան ճակատին խառույկ, որից վեր միայն թվականը⁶:

Զարդաքանդակի գեղեցիկ նմուշ է Երեմիա կաթողիկոսի տապանաքարը: Այն մեծ և տափակ է, սպիտակ մարմարից, շրջանակներին շղթայաձև զարդեր, երեսին գեղեցիկ քանդակներ և հովվական գավազան: Տապանաքարի վրա գրված է. «Այս է տապան Երեմիա կաթողիկոսին Աղուանից, յազգէն Զալալ Դօ-

¹ Դիվան հայ վիմագրության, էջ 108:

² **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, էջ 176: Տե՛ս նաև Դիվան հայ վիմագրության, էջ 66:

³ Դիվան հայ վիմագրության, էջ 110:

⁴ **Բարխուտարեանց Մ.**, *Արցախ (1895)*, էջ 406: Տե՛ս նաև Դիվան հայ վիմագրության, էջ 222:

⁵ Դիվան հայ վիմագրության, պր. 5, էջ 236:

⁶ Նույն տեղում, 196:

լին»։ ՌՃԽԹ։ (1700) թուին¹։ Իրենց ինքնատիպությամբ առանձնանում են Մելքիսեթ եպիսկոպոսի եղբոր՝ Մեսրոբի (Ջրվշտիկ կամ Եղիշե Առաքյալի վանքում, 1713), մելիք Եգանի հոր՝ Գտչավանքի վանահայր Ղուկաս վարդապետի տապանաքարերը (Տող գյուղի սբ. Հովհաննես եկեղեցում)։ Վերջինիս տապանաքարի վրա կա հետևյալ արձանագրությունը. «Այս է տապան Մելիք Եկանի հայր Ղուկաս վարդապետի, ով կարդայ ողորմի ասէ. թվին։ ՌՃԿԴ։ (1716)»²։

Գեղեցիկ քանդակներ են արվել մելիք Բեգի (նաև՝ Պեկ) կողակից Շայամինի³ (Ծար-Ջառ գյուղի Սբ. Սարգիս կոչվող թաղածածկ մատուռի մերձակայքում, ԼՂՀ Քարվաճառի, նախկին՝ Քյալբաջարի շրջան, 1717 թ.), Խոճա Եվրինի⁴ (Հին Մոխրաթաղ գյուղում, Մարտակերտի շրջան, 1720 թ.), առաջածորցի տեր Գրիգորի (1722 թ.), Մեսրոպ վարդապետի որդի տեր Սիմեոնի տապանաքարերի վրա։ Վերջինիս վրա կա հետևյալ արձանագրությունը. «Այս է տապան տէր Սիմեոնի որդի Մեսրոբ վարդապետի, թվին ՌՃՀԲ (1723)։ Լուսահոգի մելիք Եկանն ձեռնադրել տվա եպիսկոպոս, կարգեց Կոնիչոյ վանքին առաջնորդ։ Որ եկի հաստատեցի սուրբ աթոռս թվին ՌՃՂԶ-ին(1747), ով որ կարդայ, մէկ քերան Աստուած ողորմի ասէ»⁵։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում նմանատիպ տապանաքարեր են տեղադրվել Գանձասարում (Մինաս վարդապետի,

¹ Դիվան հայ վիմագրության, սյր. 5, էջ 65։ Տե՛ս նաև **Քարխոտապետանց Մ.**, *Արցախ* (1895), էջ 176։

² Նույն տեղում, էջ 178։ Տե՛ս նաև **Քարխոտապետանց Մ.**, նշվ. աշխ., էջ 75։

³ Դիվան հայ վիմագրության, սյր. 5, էջ 222։

⁴ Նույն տեղում, էջ 94։

⁵ **Քարխոտապետանց Մ.**, *Արցախ* (1895), էջ 82։ Տե՛ս նաև **Ջալալեանց Մ.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 258։ Դիվան հայ վիմագրության, սյր. 5, էջ 185։

1724 թ.), Հացի գյուղի մատուռում (Խմիշի որդու Սարգիսի¹, 1725 թ., Արցախի Հանրապետություն, Մարտունու շրջան):

Իր գեղագիտական քանդակաշարով աչքի է ընկնում Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան Զալայանցի տապանաքարը՝ 1728 թ.: Այն մեծ և տափակ է, սպիտակ մարմարից, շրջանակներին շղթայաձև զարդեր, երեսին գեղեցիկ քանդակներ և հովվական գավազան: Տապանաքարի վրա գրված է. «Այս է տապան Եսայի կաթողիկոսին Աղուանից որ է ազգէն Զալալ Դօլին :ՌՃՀԷ: (1728) թուին»²:

Հետաքրքիր զարդարվեստի մոտիվներ առկա են Մելիք Շահնագարի տապանաքարի վրա (Ավետարանոցում): Այն սպիտակավուն է: Տապանաքարի մեկ երեսին պատկերված է սազ նվագող, դիմացը՝ երեք պարողներ, երկու ֆիգուր. մեկի ձեռքին հայելանման իր, իսկ մյուսին՝ կենաց ծառ: Մյուս երեսին՝ երեք հեծյալ և մի թամբած ձի, որի վրա պատկերված է թռչուն: Տապանաքարի վրա գրված արձանագրությունը օղակաձև է. «Այս է տապան մելիք Շահնագարի որդի մելիք Յիսէին, թվ :ՌՃՁԵ: (1736): Ոգեմ զբանս գովեսգի ի վերայ մելիք Հուսէյնի, զօր գրեցի այս տապանի...»³:

Քանդակագործության արվեստի գեղեցիկ նմուշներ են Արցախի եկեղեցիների (այս մասին նշվել էր) շրջակայքում կանգնեցրած խաչքարերը⁴: Լինելով ժամանակաշրջանի գեղարվեստական մտածելակերպի ինքնատիպ մարմնավորում, խաչքա-

¹ Բարխուստարեանց Մ., *Արցախ (1895)*, էջ 127:

² Նոյն տեղում, էջ 176: Տե՛ս նաև Դիվան հայ վիճագրության, պր. 5 (Արցախ), էջ 64:

³ Բաֆֆի, *Խամսայի մեկիքությունները*, էջ 49: Տե՛ս նաև Դիվան հայ վիճագրության, պր. 5, էջ 149:

⁴ Արցախի գյուղերում գտնված խաչքարերից, տապանաքարերից, ինչպես նաև եկեղեցիների պատերից քաղված հետաքրքիր արձանագրություններ կան ՀԱԱ-ում (տե՛ս Ֆ. N 319, ց. 1, գ. 5, ք. 1–30, գ. 9, ք. 1–55):

րերն¹ իրենց մեջ համադրում են բոլոր տեսակի թեմատիկ և գաղափարական խնդիրները՝ ռճական և արտահայտչական կոնկրետ ձևերով, որոնք կապված են պատմական զարգացման ընթացքի, տվյալ ժամանակաշրջանին բնորոշ գեղարվեստական ճաշակի, կերտող վարպետների անհատականության և այլ գործոնների հետ:

Խաչքարային արվեստի ձևաչափերը նոր շրջանում դրսևորվում են նոր սկզբունքներով՝ իրենց մեջ պահպանելով ավանդական մեթոդների նրբությունները: Ինչպես նշում է Հ. Պետրոսյանը, 15-րդ դարի վերջից ձևավորվում է հորինվածքային մի կայուն հիմնաձև, որը դառնում է գերակշիռ և հարատևում մինչև 18-րդ դարի 20-ական թվականները: Քանդակազարդման տեսակետից այն համադրում է բազմախաչությունն ու սալի համակ զարդապատումը, պարզ հյուսվածքը, ուղղանկյուն սեգմենտներն ու բազմաթիվ ստղերը: Քանդակը դառնում է մակերեսային, ելնդավոր գիծն ավելի է լայնանում և տափակում, ինչը ողջ հորինվածքին որոշակի հարթատեսքություն է հաղորդում ²:

Իրենց հետաքրքիր գեղաբանդակներով առանձնանում են Մուրթունիսի եկեղեցու բակում (Թողան գյուղում, 1639 թ.), Շոշ գյուղի սբ. Ստեփանոսի եկեղեցու (1651թ., 1655թ., 1712 թ.)³, Ճարտար գյուղի Եղիշա Կուսի անապատի(1654 թ.)⁴, Ջրվշտիկ կամ Եղիշե Առաքյալի վանքերի շրջակայքում (1642 թ.⁵, 1728 թ.⁶), Սբ.

¹ Այս մասին մանրամասն տես Հայկական խաչքարեր, Ե., 1973:

² Պետրոսյան Հ., Խաչքար (ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը), Ե., 2008, էջ 203:

³ Դիվան հայ վիմագրության, էջ 146:

⁴ Քարխոստարեանց Մ., Արցախ, (1895), էջ 116:

⁵ Դիվան հայ վիմագրության, էջ 109:

⁶ Նոյն տեղում, էջ 111:

Մինաս եկեղեցու¹ բակում (1681)², Գոչա վանքի բակում (կանգ-
նեցրվել է տողեցի Սարգսի որդի Սայունու և նրա կնոջ՝ Հերիք-
նազի կողմից, 1717թ.³), Գիշի գյուղում (1723 թ.)⁴ և այլ վայրերում
տեղադրված խաչքարերը: Վերջիններիս հմայքը զարդամտիվ-
ների ու համամասնությունների ներդաշնակության մեջ է:

Խաչքարային արվեստի արժեքավոր նմուշ է Ներքին Շենի
գերեզմանատան հին մասում տեղադրված խաչքարը, որի վրա
փորագրված արձանագրությունից երևում է, որ այն կանգնեցրել
են 1641 թ.⁵: Այն ունի ուշագրավ սյուժետային զարդաքանդակներ.
պատկերված է ձի, թամբի վրա՝ թռչուն, առջևում՝ մարդկային եր-
կու պատկերներ և այլն⁶: Խաչքարային գեղեղիկ հարդարանքներ
են պատկերված եկեղեցիների ճակտոնները: Այս առումով հե-
տաքրքիր են Երից Մանկանց եկեղեցու ճակտոնները, որոնք
հարդարված են գեղեցիկ քանդակազարդ խաչքարերով⁷:

Այսպիսով, վերոնշյալ տեղեկությունները հաստատում են
այն մասին, որ այդ շրջանում Արցախում մշակույթի տարբեր ճյու-
ղերին զուգահեռ շարունակել է առաջընթաց ապրել քանդակա-
գործությունը, որը սերտորեն փոխկապակցված էր արվեստի
մյուս ճյուղերի հետ:

¹ Տեղադրված էր պատմական Մեծ Հայքի Արցախի մագանգի Կոռք գավառում:
Ներկայումս՝ Ադրբեջանի կողմից բռնագավթված Խամուրի շրջանում (տե՛ս Դիվան հայ
վիճագրության, էջ 229)

² Դիվան հայ վիճագրության, էջ 232:

³ **Ջալալեանց Մ.**, *Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան*, մասն Բ, էջ 258: Տե՛ս
նաև **Բարխուդարեանց Մ.**, նշվ. աշխ., էջ 82:

⁴ Դիվան հայ վիճագրության, էջ 159:

⁵ **Ղահրամանյան Ա.**, *Հյուսիսային Արցախ*, էջ 77:

⁶ Նույն տեղում:

⁷ **Հարությունյան Վ.**, նշվ. աշխ., էջ 400:

§ 7. ԴԵԿՈՐԱՏԻՎ-ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ

Դեկորատիվ-կիրառական արվեստը¹ սկզբնավորվել է դեռևս հասարակության զարգացման վաղ շրջանում, որի յուրաքանչյուր բնագավառ ունեցել է իր դպրոցները: Դրանք միմյանցից տարբերվել են կատարման տեխնիկայով, զարդաձևերի ինքնատիպությամբ և ոճական առանձնահատկություններով: Այն դարերի ընթացքում կրել է տարբեր ոճերի և ուղղությունների ազդեցությունը:

Հայկական դեկորատիվ-կիրառական արվեստի ուսումնասիրության արժեքային համակարգում միշտ էլ առկա են եղել մի շարք բարդ հիմնախնդիրներ: Նախ և առաջ դրանք բացատրվում են նրանով, որ տարբեր պատմական դարաշրջաններում օտար նվաճողների ավերիչ արշավանքների հետևանքով հայկական մշակույթի բազմաթիվ արժեքներ ենթարկվել են տեղաշարժերի ու փոխազդեցությունների, տեղայնացվել են այլ էթնիկական միջավայրերում, ստացել գործածական նոր ոլորտներ: Արևելյան Հայաստանը, գտնվելով Պարսկաստանի տիրապետության տակ, կրել է տեղի կիրառական արվեստի գաղափարական ազդեցությունը, երբեմն՝ նշանակալից հետքը թողել պարսկական արվեստում: Չնայած այդ ամենին, հայկական կիրառական արվեստի բազմաբովանդակ ճյուղերը պահպանել են իրենց ինքնատիպությունն ու ազգային նկարագիրը:

¹ Խոսքը վերաբերում է կենցաղային գործածության իրերին՝ գորգեր, կարպետներ, գավաթներ, սափորներ, սկուտեղներ, պղինձներ, փայտե դեկորատիվ իրեր, մոմակալներ, տարազի տեսակներ և այլն, որոնք իրենց դեկորատիվ բնույթով նմանվում են Հայաստանի մի շարք բնակավայրերի համանման իրերին:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախում շարունակում էին զարգանալ գորգագործությունը, ասեղնագործությունը, ժանեկագործությունը, խեցեգործությունը, քարի, փայտի, մետաղի գեղարվեստական մշակումները: Դեկորատիվ-կիրառական արվեստի այս ճյուղերի միջոցով հայ ժողովուրդը դարեր ի վեր՝ որպես ստեղծագործող զանազան պատկերների միջոցով արտահայտել է իր հոգևոր աշխարհի առանձնահատկությունները :

Գորգագործություն: Արցախ աշխարհում գորգագործությունը¹ որպես արհեստ ձևավորվել է դեռևս հնագույն դարաշրջանում: Ուշագրավ է Վ. Թաթիկյանի հիշատակումը, որ դեռևս Վանի թագավորության շրջանում արդեն նկատելի էր կիրառական արվեստի այդ ձևը, այսինքն այն ժամանակ, երբ Ուրտեխեն կամ Ուդեխեն (Արցախի ուրարտական անվանումը²) մտավ Բիսյան պետության կազմի մեջ³: Սակայն գորգագործության, ինչպես նաև արվեստի և արհեստի այլ ճյուղերի զարգացման միտումնե-

¹ Հարկ է նշել, որ «գորգ» տերմինի գործածության հարցի շուրջ կան վիճահարույց կարծիքներ: Ըստ Թեմուրճյանի՝ այն առաջին անգամ հայ գրականության մեջ գործածվել է 13-րդ դարում: Մինչ այդ վաղ միջնադարյան մատենագիրներ՝ Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Հովհաննես Դրասխանակերտցու և ուրիշների կողմից օգտագործվել է «անկուածոց», «արկանելի», «ակումբ», «խալի», «կապետ կամ կարպետ» և այլ տերմիններ: Բանասիրության մեջ ընդունված է այն տեսակետը, թե «գորգ» բառը առաջին անգամ հիշատակել է Հովհաննես Երզնկացին 1270-ական թվականներին իր աշխատության՝ «Համառօտ տեսութիւն քերականի» մեջ: Գր. Ղափանցյանի կողմից գործածված «գորգ» (karuk) արմատը ըստ Ե. Ստրրտիվենտի՝ խեթերեն բառարանում նշանակում է ծածկոց (ջորիի, ձիու): Դա էլ նշանակում է, որ այդ բառը հնարավոր է գործածված լիներ ավելի վաղ ժամանակներում (տե՛ս **Թեմուրճյան Վ., Գորգագործությունը Հայաստանում**, Ե., 1955, էջ 34-35: **Նույնի՝ Պատմական ակնարկ հայկական գորգագործության մասին**, «Տեղեկագիր գիտությունների ազգային ակադեմիայի», Ե., 1952, N 11, էջ 110: **Մելիք-Շահնազարյանց Վ., Բուրդ գզերը և գորգ գործելը Ղարաբաղում**, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1928, № 6, էջ 475-478):

² **Пиотровский Б., Ванское царство (Մարտի)**, М., 1959: Տե՛ս նաև **Կարազեղոզյան Յ., Սեպագիր տեղանունները Արարատում և հարակից մահանգներում**, Ե., 1998:

³ Տե՛ս **Թաթիկյան Վ., Արցախի տոնագրերը**, Ե., 2004, էջ 10:

րը նկատելի դարձան Առանշահիկների օրոք¹: Այս փաստով ժխտվում է թուրք արվեստագետ Շերարե Էդկինի այն տեսակետը, որ Կովկասում գորգերը սկսել են գործել XIV դարից հետո²:

XVII դ. սկզբից բրդե, բամբակե, մետաքսե, արծաթե ու ոսկե թելերով զարդանախշված և հյուսված գորգերը, կարպետները, սրբիչները, անձեռոցիկները, գոգնոցներն ու ժանյակներն առանձնանում են գույների գեղեցիկ և նրբաճաշակ համադրումներով, կատարման բարձր վարպետությամբ: Ավելին, հայ արհեստագործ վարպետների ստեղծած գորգագործության, կարպետագործության, ասեղնագործության բազմաթիվ հոյակապ նմուշներ զարդարել են Պարսկաստանի տարբեր շուկաները: XVII դ. սկզբին, երբ շահ Աբասը Արարատյան³ դաշտի բնակիչներին բռնի տեղափոխեց Պարսկաստան և բնակեցրեց Սպահան քաղաքում և նրա շրջակայքում, հայերն իրենց գույքի հետ միասին տարան գորգեր ու կարպետներ⁴: Հայ վաճառականները դրանով նոր թափ հաղորդեցին տեղի միջավայրի կիրառական արվեստի այդ ճյուղի զարգացման գործընթացին:

1639–1736 թթ. Արցախում հայտնի էին «Վիշապագորգերը»⁵, «Խաչենի արծվագորգերը», «Անցումային գորգերը», «Օձագորգերը», «Գուհար» (նաև՝ «Գուհար») «Խնձորեսկ» գորգերի տեսակները: Այդ շրջանում գորգագործության հայտնի կենտրոններ

¹ Ուրբարյան Բ., *Արցախի պատմություն*, էջ 28–35: Տե՛ս նաև Բալայան Վ., *Արցախի պատմություն*, էջ 81–85:

² Տե՛ս Պողոսյան Ա., *Հայաստանում գորգագործության հարցի շուրջ*, «ՊԲՀ», N 2, 2001, էջ 237: Арутюнян М., *Декоративно – прикладное искусство в Арцахе во второй половине XVII века и в начале XVIII века*, «Интернаука», Научный журнал, N 4(8), Февраль, Москва, 2017 г., с. 20.

³ Տե՛ս Առաքել Գարիժեղի, *Գիրք պատմութեանց*, էջ 37–45:

⁴ Տե՛ս Դավթյան Ս., *Հայկական կարպետ*, Ե., 1975, էջ 14:

⁵ Տե՛ս XVII–XX դդ. (այրո՞մ կատարող), Ե., 2012: Հայերեն արձանագրության գորգեր (այրո՞մ կատարող), Ե., 2010:

էին համարվում Վարանդայի մեղիքության իշխանանիստ Ավետարանոցը¹, Ջրաբերդը², Շոշի (հետագայում՝ Շուշի) ամրոցը և այլ բնակավայրեր: Դրանց վառ վկաներ են համարվում (սակ՝ մինչև XVII–XVIII դդ. նմուշներ) հայկական դասական գորգերի ու կարպետների բարձրարժեք նմուշները, որոնք պահպանվում են աշխարհի տարբեր երկրների թանգարաններում (սակ՝ մասնավոր հավաքածուներում)³: Իրենց ինքնատիպությամբ առանձնանում են Վիեննայի (Ավստրիայի արդյունաբերության և արվեստի թանգարան), Անստերդամի (Համալսարանի թանգարան), Բեռլինի (Ֆրիդրիխ-կայզեր թանգարան), Բուդապեշտի (Դեկորատիվ-կիրառական արվեստի թանգարան), Լոնդոնի (Ալբերտ և Վիկտորիա թանգարան), Նյու Յորքի (Մետրոպոլիտեն թանգարան), Սանկտ Պետերբուրգի (Էրմիտաժ), Ստամբուլի (Թուրքական և իսլամական արվեստների թանգարան) և այլ վայրերի թանգարանային նմուշները⁴: Յուրահատուկ գործվածքներով հայկական գորգերի մի մասը պահվում են նաև Հայաստանի և Արցախի⁵ հանրապետությունների տարբեր վայրերի թանգարաններում: Այդ ժամանակի Արցախի գորգերի դասական նմուշներ ցուցադրված են Հայաստանի պատմության թանգարանում⁶, որոնք պահվում են N 4 ֆոնդում⁷:

¹ Հատկապես, երբ 17-րդ դարի վերջին՝ 1692 թ., Մելիք Շահնագարի որդի Մելիք Հուսեյնը և նրա եղբոր՝ Մելիք Միրզա-Բեկի որդի Մելիք Բաղին Գեղամա լճի եզերքից իրենց ազգակիցների մի մասի հետ գաղթում են Վարանդա գավառ և բնակություն հաստատում Ավետարանոց գյուղում (տե՛ս **Լալանեան Ե.**, *Վարանդա*, «Ազգագրական հանդես», 1897, N 2, էջ 5):

² Տե՛ս **Казарян М.**, *Армянские ковры*, Москва, 1985, էջ 88:

³ Տե՛ս **Թեմուրճյան Վ.**, *Գորգազործությունը Հայաստանում*, էջ 68:

⁴ <http://www.armeniancarpets.am/hy/page/armenian-carpets-in-european-museums>

⁵ <http://karabakh.travel/hy/museums/47/>. Արցախի պետական պատմաեթնոգրաֆիտական թանգարան, ֆոնդ N 3:

⁶ <http://www.historymuseum.am/expositions/?id=6&lang=arm>

⁷ <http://www.historymuseum.am/collections/?id=3&lang=arm>

Ընդգծենք, որ «Վիշապագորգեր»-ի գործածման հարցի շուրջ ի հայտ են եկել տարբեր տեսակետներ. Ֆ. Մարտիրոս դրանք թվագրում է 13-րդ դարով, Կ. Գոմբոշը՝ 14-15-րդ դարերով, իսկ Է. Կուհնելը, Կ. Էրդման, Գ. Էլիս և ուրիշներ՝ 16-18¹: Գրականության մեջ տիրապետում է այն տեսակետը, որ XVII դ. սկզբներից սկսած՝ դասական վիշապագորգերը (այսինքն՝ վիշապագորգերի հնագույն ձևը) այլևս չեն գործվում, նրանց հորինվածքը վերածնվում է: Երևան են գալիս, այսպես կոչված, «Անցումային» գորգեր, որոնք էլ իրենց հերթին հիմք են հանդիսանում «Արծվագորգերի» և «Գուհար» տիպի գորգերի համար: Դրանք ներկայացվում են նաև որպես մի փուլ դասական «Վիշապագորգերի» և «Զրաբերդ», «Որոտան» («Լենքորան») տիպի գորգերի միջև: Հավելենք, որ և՛ ուսումնասիրվող պատմափուլում, և՛ հետագա դարերում հայկական գորգարվեստում շարունակում են մնալ դասական «Վիշապագորգերի» բազմաթիվ զարդանախշային մոտիվներ:

«Վիշապագորգ»-ի շեղացանց հորինվածքում, բուսական ու կենդանական զարդանախշերի տարբեր զուգորդումներում կարևորված է վիշապի ոճավորված կերպարը (այստեղից էլ՝ անունը)²: Կենտրոնում երկայնակի կենտրոնական առանցքով դասավորված են բազմազան հորինվածքներով շքեղ վարդյակներ: Իրենց գեղեցկությամբ աչքի են ընկնում նաև կենաց ծառերը, որոնք պատկերված են վիշապի պատկերներին զուգա-

¹ Տե՛ս **Թաթևիկյան Վ.**, նշվ. աշխ., էջ 13:

² Հարկ է նշել, որ Վիշապի գաղափարի առաջացման և տարածման հարցի շուրջ պատմագիտության մեջ առկա են տարբեր կարծիքներ: Ըստ Հ. Քրիստյանի՝ «վիշապի» գաղափարի արծարծումը պատմական Հայաստանում նկատելի էր դեռևս մ.թ.ա. 8-րդ դարում՝ Ուրարտական պետությունում: Այդ մասին հիշատակված է նաև Ասորեստանի բազավոր Մարգոնի թողած արձանագրության մեջ (տե՛ս **Քրիստյան Հ., Վիշապը հայկական գորգերում մէջ**, Վենետիկ, 1932, էջ 6):

հետ: Դասական վիշապագորգերի զարդանկարներում առկա է «բարի» վիշապի հորինվածքը, (կան նաև «չար»-ը¹ խորհրդանշող վիշապներ, որոնք հիմնականում համարվում են մարերի, ավելի ուշ՝ մոնղոլների խորհրդանիշներ) որը ներդաշնակված է այլ կենդանական ու բուսական մոտիվների հետ: Արցախի «Վիշապագորգերի» մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Հարություն Քրիստեանը. «Ղարաբաղում սովորություն կար և այժմ էլ այն ընդհանրացրած է...: Երբ վերջացնում են գորգի գործուածքը և մնում է մոտ մի արշին չգործած աւելի տեղ, խնճոյք են կազմում, հարեաններին ու բարեկամներին կանչում գորգը կտրելու օրը: Չբեր, ամուրի, յղի կանայք այդ օրը գալիս են իրենց բախտը փորձելու, տղայ կամ աղջիկ կ'ունենան թէ ոչ և գորգի վրա դիմում են տարբեր հնարքների...»²:

XVII դ. դասական վիշապագորգի արժեքավոր նմուշ է պահպանվում Գլազգոյում՝ Բարելի հավաքածուում (Մեծ Բրիտանիա): Այդ նմուշի ստեղծագործական և գեղագիտական տեսքը հետևյալն է. հանգուցանախշերի մեծ մասը ամփոփում են կլորավուն վարդյակ, ցլանախշ: Վ. Թաթիկյանի բնորոշմամբ կենտրոնում զբաղեցրել է կեռագարդ շեղանկյուն մի զարդանախշ, որը նախանշում է դրան ազգակից տիպերի գորգագործական մի մեծ խմբի զարգացման ընթացքը: Վիշապի պատկերը մնալով արտահայտիչ՝ մոտեցել է «Թելթող» վիշապակարպետներին³:

Ուշագրավ է Բեռլինի իսլամական արվեստի թանգարանում⁴ պահվող «Վիշապագորգ»-ի հոյակապ նմուշը, որում պատկեր-

¹ Մանրամասն տեսն **Քրիստեան Հ.**, նշվ. աշխ., էջ 11:

² **Քրիստեան Հ.**, նշվ. աշխ., էջ 22: Այս մասին տեսն նաև **Մելիք-Շահնազարյանց Ա., Բորդ զգելը և գորգ գործելը Ղարաբաղում**, «Համդես ամսօրյա», Վիեննա, 1928:

³ Տեսն **Թաթիկյան Վ.**, նշվ. աշխ., էջ 98:

⁴ Նույն տեղում, էջ 99:

ված է վիշապների գույգը՝ խաչազարդ կենտրոնով: Վիշապները պատկերված են սլացիկ՝ հին գորգերում իրենց մարմնին փաթաթված զարդանախշերից գրեթե ազատված: Գորգի հիմնական տարածությունը զարդարված է «Արծվագորգերից» վերցված «Հուշակապարիկ» պատկերանշանով, մարդկանց ու այլ կենդանիներ պատկերող մանրանախշերով: Վերևի ու ներքևի մասերում նկատվում են առյուծի ու ցուլի պատկերներ, որոնք կարծես պայքարում են միմյանց դեմ: Զարդագոտին գալարանախշ է՝ հարստացած «բողբոջներով», որոնք խորհրդանշում են օձերի ու թռչունների հավերժական հակամարտությունը: Հետագայում նման հորինվածքով բազմաթիվ գորգեր հանդիպում են Արցախում՝ XIX-XX դդ. սկզբներին:

Արցախի գորգագործական մշակույթում իրենց ինքնատիպությամբ առանձնանում են «Արծվագորգերը», որոնք (նաև՝ «Զրաբերդ» կամ «Չարաբերդ») ուղեկցվում են արծիվների խորհրդանշական պատկերներով: Դրանք համարվել են Զրաբերդի մեղիքների՝ Տեր-Իսրայելյանների խորհրդանշանները: Մեկ այլ կարծիքի համաձայն, վերջիններիս խորհրդանշանը համարվել է «Խնձորեսկ» կոչված տիպը, որը հայկական գորգարվեստի ամենավաղ հորինվածքներից մեկն է: Լինելով նախ Սյունիքի տոհմիկ տերերի՝ Սյունիների, այնուհետև՝ Օրբելյանների տոհմանշանը, XVII-XVIII դդ. սկսած՝ այն սկսել էր գործածվել նաև Արցախում: Արցախյան «Արծվագորգի» դասական օրինակ պահվում է Մյունխենի ազգագրական թանգարանում¹:

Անցումային գորգերը թվագրվում են XVII և XVIII դարերով: Սակայն դրանց նախօրինակները հորինվել են դեռևս XIII դ. սկզբներին:

¹ Տե՛ս **Казарян М.**, *Армянские ковры*, Москва, 1985, стр. 91:

Իրենց հետաքրքիր պատկերներով աչքի են ընկնում «Օճագորգերը»: Վերջիններս ունենում են օձի պատկերներ՝ մեջտեղում արևի սկավառակի նշաններով: Դրանք գտնվում են նախազարդ մակերեսի կենտրոնում, շրջանակների մեջ և մեծ մասամբ կենդանական կամ աշխարհի ծագման ու հավերժության գաղափարներն են արտահայտում: Ամբողջ նախազարդը խորհրդանշում է աշխարհի ստեղծումը, իսկ ութ օձերը՝ որպես աշխարհի պաշտպաններ¹:

Իր ինքնատիպությամբ և արտասովոր գեղեցկությամբ առանձնանում է «Գոհար» (նաև՝ Գուհար) տիպի գորգը: Վերջիններիցս ուշագրավ է 1679-1680 թթ. (կամ՝ 1699-1700 թթ.) գործված նմուշը, որը գործվել է սյունիք-արցախյան դպրոցում: Գորգը իր անվանումը ստացել է գործողի՝ հայ կնոջ Գոհարի անունից: Դրա մասին է վկայում գորգագործի կողմից գորգի վրա թողնված երկտողը. «Ես՝ Գուհարս մեղօք լի հոգովս տկար ձեռամբ իմոյ գործեցի ով կարդայ մեկ բերան ողորմի ասի»²: Այս երկտողի բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ գորգը հյուսվել է տարեց կնոջ ձեռքով, ով Աստծուց խնդրում է իր հոգու փրկության համար, իսկ գալիք սերնդից՝ իրեն միշտ հիշել: Հետագայում այլ ձևով դրսևորվեց այս գորգի ճակատագիրը: Խնդիրն այն է, որ 20-րդ դարի սկզբին թուրքերը հափշտակել էին այդ գորգը հայկական մի եկեղեցուց և տարել Բաթում: Ենթադրվում է, որ ավելի ուշ այն տեղափոխվել է ԱՄՆ: Ըստ Վ. Թեմուրճյանի՝ «Գոհար» գորգը գործվել է 1680 թ. և այժմ գտնվում է Լոնդոնի Վիկտորիա և Ալբերտ թանգարանում³: Այս գորգը դասվում

¹ Казарян М., *Армянские ковры*, стр. 91:

² Տե՛ս Թաթիկյան Վ., նշվ. աշխ., էջ 108:

³ Թեմուրճյան Վ., *Պատմական ակնարկ հայկական գորգագործության մասին*, ՀՀ ԳԱԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», Ե., 1952, N 11, էջ 118:

է «Անցումային» գորգերի խմբին: Գորգի զարդանկարը բուսա-
ծաղկային ոճով նմանվում է դասական «Վիշապագորգերին»: «Գոհար» գորգում կարմիր, դեղին, կանաչ, կապույտ գույներով պատկերված են խաչանշան, բուսական նախշեր, թռչուններ:

Իրենց գեղեցկությամբ հայտնի են «Արև-Ծիլ» (սակ՝ «Արևագորգեր», գրականության մեջ՝ «Լամբա-Ղարաբաղ») կոչվող գորգերը: Վ. Թաթևյանը նշում է, որ XVII դ. սկզբին շահ Աբաս I-ի՝ Պարսկաստանի տարբեր վայրերում հայերին բռնի վերաբնակեցնելուց հետո այս գորգերը գործել են երկրի կենտրոններում՝ Թավրիզում, Սպահանում և այլուր¹: Դրանից հետո պարսկական գորգարվեստի համայնապատկերում նկատվում են հայկական որոշ զարդանախշերի նախատիպեր ու ընդհանրաձևեր, հատկապես՝ Սպահանի XVII դ. գորգերում: Նման գորգերից կարելի է հիշատակել «Հերաթ» «Ֆերախան» և այլն: «Արևագորգեր» եղել են Գյուլիստանի մեխրների՝ Մելիք-Բեգլարյանների տոհմական խորհրդանշանները՝ տոհմագորգերը: Հետագայում դրանք գործածվեցին Շուշիի խաների կողմից:

XVII-XVIII դդ. Արևելյան Հայաստանի մի շարք վայրերում՝ Սյունիք, Տավուշ, Լոռի, Այրարատ, Արցախում տարածված են եղել «Խնձորեսկ²» տիպի գորգերը: Արցախի վարպետ գորգագործները յուրովի են արտացոլել զարդաձևերը գորգի այդ տարբերակների մեջ: Այս տիպի գործվածքներում ավելի ընդգծված են վիշապները, նրանց գույգերի գունային հակադրությունները,

¹ Տե՛ս Թաթևյան Վ., նշվ. աշխ., էջ 123:

² Սյունիքի բնակավայրերից մեկում գործվել է շատ հին մեկ տարբերակ, որի հորինվածքում կենտրոնական վիշապաձևերն ավարտվում են քարայծերի պոզեր հիշեցնող մի տարով: Ինչպես երկու տարբերի՝ թռչունի և օձի խաչաձևմամբ կազմված կեռխաչը, այնպես էլ այս զարդանախշը ձևավորվել է երկու տարբեր կենդանախաչերից՝ վիշապից ու այծից: Այստեղից կարելի է ենթադրել, որ հայկական գորգի այս տարբերակը գործածվել էր դեռ վաղ անցյալում և որ «Խնձորեսկ» անվանումը առաջացել է Սյունիքի բնակավայրերից մեկի անունից:

կեռխասչը հյուսիսային օջախներում կորցնում է կենդանակերպ բաղադրիչները ու քրիստոնեական ազդեցությամբ սկսում ընկալվել որպես խաչ¹:

Սյունիքից Արցախ աշխարհի տարածված գորգի այս տարբերակը կարելի է բացատրել մի քանի հանգամանքներով: Ընդօժենք մի քանիսը. 1) XVII-XVIII դդ. Սյունիքում և Արցախում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական տեղաշարժերով, 2) XVIII դ. սկզբներին ազգային-ազատագրական պատերազմներով, 3) Դավիթ Բեկի ապստամբության պարտությունից հետո Սյունիքի հայաշատ բնակավայրերից մեծ թվով բնակչություն տեղափոխվեց Արցախ աշխարհ, որտեղ և ժողովուրդը ավելի ակտիվորեն ներառվեց դեկորատիվ-կիրառական արվեստի այդ տարբերակի մեջ:

Ուսումնասիրվող պատմափուլի Արցախի գորգագործական մշակույթում նշանավոր են նաև Մելիք-Շահնագարյանների և Մելիք-Ավանյանների տոհմագորգերը: Վարանդայի մելիքների՝ Մելիք-Շահնագարյանների տոհմանշանը² սկսած XVII դ. եղել է «Թռչնաբուն» կոչվող հորինվածքը, որն առաջացել է դասական վիշապագորգերից: Իսկ Դիզակի Մելիք-Ավանյանների (Մելիք-Եզանյաններ) տոհմանշանի հորինվածքը վերաձևված է Լոռիում իշխող տան՝ Արղությանների տոհմագորգից:

Ասեղնագործություն և ժանկագործություն³: Դեկորատիվ արվեստի այս ճյուղերը սերտորեն կապված են գորգարվեստի հետ: Հարկ է նշել, որ ասեղնագործությունը հայ ժողովրդի մշա-

¹ Թաթևյան Վ., նշվ. աշխ., էջ 21:

² Հարկ է նշել, որ Մելիք-Շահնագարյանների տոհմանշանը նախկինում կրկնում էր Խաղրակյան կամ Պռոշյան իշխանական տան կենդանախշ տոհմագորգի զարդանախշերի մոտիվները (մանրամասն տեսն **Թաթևյան Վ.**, նշվ. աշխ.)

³ Ժամայակը դա առանց կտորի հիմքի մետաքսյա, բամբակյա, բրդյա, մետաղյա և այլ բեղերով ստեղծված ցանցկեն մանածագործվածքն է:

կույթի արժեքային համակարգում արմատավորված է եղել դեռևս նախնադարյան համայնական հասարակարգում¹:

Ասեղնագործության և ժանյակագործության (նաև՝ ժանեկագործություն) հոյակապ նմուշներ ստեղծվել են հատկապես զարգացած միջնադարում: Դա համարվել է հայ կնոջ հիմնական զբաղմունքներից մեկը: Կիրակոս Գանձակեցին հիացմունքով է նկարագրում դեռևս XIII դ. Հաթերքի Վախտանգ իշխանի կնոջ՝ Արզուխաթունի և նրա աղջիկների հյուսած ձեռագործ աշխատանքների մասին: Դրանցից չորսը, որոնք աչքի են ընկնում իրենց զարդանախշային ինքնատիպությամբ, նվիրվել են Նոր Գետիկի, Հաղպատի, Մակարա և Դադի վանքերին²: Պատմիչը հիշատակում է նաև Վախտանգ Տանգիկի կնոջ՝ իշխանուհի Խորիշահի անունը, ով իր չքնաղ ձեռագործներով «զարմացուցանելը զամենայն տեսողսն ու զլսողսն»³:

Այլ կերպ է բնորոշվում 1639-1736 թթ. Արցախի ասեղնագործության և ժանյակագործության նմուշների կառուցվածքային բովանդակությունը: Խնդիրն այն է, որ հայ ասեղնագործ և ժանյակագործ վարպետները դարերի խորքից եկող զարդանախշերի հետ հորինում էին նոր զարդաձևեր՝ պարուրված բազմերանգ թելանյութերով: Նման տարատեսակ ստեղծագործությունը դառնում էր ավելի արտահայտիչ ու շքեղ: Մյուս կողմից՝ ժամանակահատվածի հայկական ասեղնագործության և ժանյակագործության առանձնահատկությունը բնորոշվում է հայոց աշխարհում ընթացող սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային

¹ Տե՛ս **Դավթյան Ս.**, *Հայկական ասեղնագործության մի հին նմուշ*, «Բանբեր Մատենադարանի», Ե., 1956, N 3, էջ 43:

² Մանրամասն տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմորիսն հայոց*, Ե., 1961, էջ 215:

³ **Կիրակոս Գանձակեցի**, նշվ. աշխ., էջ 216: Տե՛ս նաև **Элтарян И.**, *Памятники истории и культуры Агстевской долины*, Ե., 1987, с. 17.

իրադարձություններով: Այդ շրջանում Արևելյան Հայաստանը գտնվելով Պարսկաստանի տիրապետության տակ, որոշ առումով ենթարկվել է տվյալ երկրի գաղափարական ազդեցությանը՝ միաժամանակ պահպանելով ազգային ինքնատիպությունը: Եվ չնայած երկրամասի սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքի առաջընթացին խոչընդոտող արգելքներին՝ Արցախի ասեղնագործությունը և ժանեկագործությունը սերտորեն փոխկապակցված լինելով Արևելյան Հայաստանի մյուս շրջանների արվեստի ճյուղերի՝ հետ, շարունակել են յուրովի դրսևորվել հայկական և եվրոպական կիրառական արվեստի արժեքային համակարգում:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ասեղնագործ և ժանյակագործ վարպետներն ինքնատիպ զարդանախշեր էին պատկերում ազգային հագուստների վրա: Հայկական ժանյակագործության մեջ պահպանվել են ամենահին՝ երկրաչափական, բուսական, կենդանական, թռչնական, տիեզերական մարմինների և այլ ոճավորված զարդանկարներ: Տարածված են վարդյակի բազմաթիվ տարատեսակներ, կենաց ծառի, նռան, խաղողի ողկոյզի պատկերներ (այս կոչվել է «ճութ»):

Արցախում տեղաբնիկներն աչքի էին ընկնում գեղեցիկ տարազներով²: Իրենց գեղեցիկ ձևաչափերով առանձնանում էին մելիքների տարազները, որոնք կարվում էին թանկարժեք կտորներից: Ինչպես նշում է Ե. Լալայանը, մելիքները գունավոր, ամենալավ շորերը՝ հատկապես հագնում էին պատերազմ գնալիս, ասելով՝ եթե կյանքս գնալու է, թող շորերս էլ գնան³: Գեղեցիկ,

¹ Նշենք, որ ասեղնագործությունը պատկերագրության առումով շատ նմանություններ ունի ճարտարապետական կառույցների, խաչքարերի, գերեզմանաքարերի զարդանկարների, որմնանկարչության, մանրանկարչության գարդանկարային կառուցվածքի հետ:

² Հայ ազգագրություն և բանասիրություն, հ. 12, Ե., 1981, էջ 36:

³ **Լալայան Ե.**, *Մելիքների հասարակական և իրավաբանական սովորույթները*, «Ազգագրական հանդես», 1899, N 5 (1), էջ 258:

մետաքսյա թելերով ասեղնագործված էին երիտասարդների՝ ճմեղվա համար նախատեսած գոգնոցները, որոնք այն ժամանակ «դօշլուղ» էին անվանում¹:

Կանանց տարազանքը², բացի գեղեցիկ ձևավորումներից, կրում էր սևի, կանաչի և մուգ դեղնավունի գեղեցիկ համադրություն³: Կարելի է ասել, որ Արցախի (նաև՝ Սյունիքի⁴, Ագուլխի) կանացի տարազը այնքան էլ զարդարված չէր ասեղնագործության հարուստ նախշերով: Ասեղնագործվել են միայն վարտիքի եզրերը՝ փողկապը, շապիկի կտրծքը: Ոսկեթելով, մետաքսաթելով ասեղնագործվել են նաև գլխի թագը, ճակատկապին (ճակտնոց), գլխի ծածկոցները: Գլխի հարդարանքում հիմնականում գործածվել է զուգաթել, կատարվել են հատիկաշար տեխնիկայով արծաթե կեռածն գլխազարդեր⁵: Տարագում գործածվել են նաև մարգատահյուս, ոսկեթել, արծաթաթել ժանյակներ: Կան նաև թելքաշ ասեղնագործված ժանյակներ: Շքեղ են ասեղնագործված (ոսկեթելով) հարուստ դասի կանանց և տղամարդկանց թավշյա մուշտակները, կանանց մետաքսե վարտիքի փողքերը: Ոսկեթելով ասեղնագործված են նաև նորահարսի, երիտասարդ կանանց չմուշկ-ոտնամանները: Ուշագրավ են գլխի հարդարանքում առկա գունավոր ժանյակ-ծաղիկները, քունքե-

¹ **Լադաճան Ե.**, *Մեղիքների հատարակական և իրավաբանական սովորույթները*, «Ազգագրական հանդես», 1899, N 5 (1), էջ 260:

² Ընդգծենք, որ Արցախի կանանց տարազը զարդանախշային մոտիվներով է նմանվել է Սյունիքի, Նոյեմբերյանի, Իջևանի, Լոռի-Գուգարքի, Դիլիջանի, Ագուլխի, Օրդուբադի բնակիչների և՛ գամձակեցիների տարազին:

³ Հայկական տարազների նման ձևաչափը առկա է եղել նաև XIX դ. առաջին քառորդում (տե՛ս Հայկական տարազ, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը (ուսումնասիրությունը և արժույթի նկարները Առաքել Պատրիկյի), Ե., 1967, էջ 16, 33–34):

⁴ Մանրամասն տե՛ս **Դավթյան Ս.**, *Հայկական ասեղնագործություն*, Ե., 1972, էջ 27–32:

⁵ Այս մասին մանրամասն տե՛ս **Պողոսյան Ս., Ստեփանյան Ա.**, *Սյունիք-Արցախի ավանդական տարազախումբը հայոց տարազի համակարգում*, Լեռնային Ղարաբաղի հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան, զեկուցումների ժողովածու (միջազգային գիտաժողով), Ե., 2007, էջ 417-424:

րից իջնող ժանյականման մարգարատյա ոսկետուտ կախիչները, որոնք վզնոցի հետ շրջանակում են նորահարսի դեմքը:

Ասեղնագործ և ժանյակագործ վարպետները գեղեցիկ զարդանախշերով էին պատել նորածին երեխանների ծածկոցները, ձեռքերի և ոտքերի բարուրակապերը: Հոյակապ նմուշներ են բնակավայրերի, եկեղեցիների վարագույրները, սփռոցները, ծածկոցները, սրբիչները, որոնց վրա պատկերված են բազմաբովանդակ զարդանկարները:

Ուշագրավ է Ա. Մարաբյանի հիշատակումը այն մասին, որ ընդունված էր հայկական ասեղնագործության մի շարք բարձրարվեստ տեսակներ (նաև՝ գորգերի, կարպետների) կոչել այն բնակավայրերի անուններով, որտեղ դրանք ձևավորվել են (օր՝ Վան-Վասպուրականի, Կարիսի, Կիլիկիայի, Շիրակի, Արարատյան դաշտի, Սյունիքի, Արցախի և այլ վայրերի)¹: Այդ ավանդույթը կար նաև XVII-XVIII դդ.:

Դարեր ի վեր հայկական ասեղնագործության և ժանյակագործության մեջ տարածված են եղել «Պտուղ», «Ճութ», «Ծիլ», «Սյունիկներ» (նաև՝ Մուշաբաղ), «Փուշ», «Սահք», «Ցանցկեն» նախշաձևերը, կլոր, ճվաձև, մաքոքահյուս ժանյակներ և այլն²: Այսպես, վերոնշյալ նախշաձևերից առկա էին նաև 1639-1736 թվականների Արցախի ասեղնագործությունում:

Երբեմն գորգերի, կարպետների, ասեղնագործված և ժանյակագործված գործվածքների (Արցախի, Սյունիքի և հայկական այլ շրջանների) պատկերները արտացոլվել էին հայկական և եվրոպական կերպարվեստներում:

¹ Տե՛ս Մարաբյան Ա., *Ասեղնագործություն*, Ե., 1985, էջ 3:

² Նույն տեղում:

Արծաթագործություն, ոսկերչություն, ակնագործություն¹,
փայտագործություն:

Դեկորատիվ-կիրառական արվեստի այս ճյուղերի ակունքները ևս գալիս են հնադարից²: Արցախի մի շարք հնավայրերից հայտնաբերվել են կիրառական արվեստի բազմաթիվ նմուշներ, որոնք այժմ պահպանվում են Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանում³: Այդ մասին են վկայում մի շարք հայտնի հնագետների, հետազոտողների՝ Շուշվա ռեալական ուսումնարանի ուսուցիչ, գերմանացի Էմիլ Ռեպերի, Ռուսական կայսերական հնագիտական ընկերության անդամ Ա. Իվանովսկու, Ս. Տեր Ավետիսյանի, Ի. Մեշչանինովի, Ի. Ջափարզադեի, Յա. Հումելի, Կ. Քուչնարևայի և ուրիշների ուսումնասիրությունները⁴:

Հայ արծաթագործները, ոսկերիչները և մետաղագործները ժառանգել են նախկինում հայտնի դրվագողների, փորագրիչների, զուգաթելի և արծնակիտման վարպետների լավագույն ավանդույթները:

Արծաթագործության և ոսկերչության գեղեցիկ նմուշներից են կանացի գոտիները, վզնոցները, ապարանջանները, մատանիները, գլխի ծածկոցների օղագոտիներից կախված ոսկյա (երբեմն ոսկեջրած) դրամները, տարբեր տեսակի այլ զարդերը, ձեռագրերի արծաթյա պատկերազարդ սալիկները, նրանց կազմե-

¹ Ակնագործությունը՝ իրերը թանկարժեք և կիսաթանկարժեք քարերով զարդարելու արվեստ է:

² Հայկական ոսկերչություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Ե., 1983, էջ 5: Տե՛ս նաև Հին Հայաստանի ոսկին (մ.թ.ա III հազարամյակ - մ.թ. XIV դար), Ե., 2007, էջ 15:

³ Տե՛ս **Քաղայան Վ.**, նշվ. աշխ., էջ 45:

⁴ Տե՛ս **Ասրյան Յու.**, *Հնագիտական նորույթներ Լեռնային Ղարաբաղում*, «ՊԲՀ», 1973, N 2, էջ 295: **Ուլուբաբյան Բ.**, *Արցախի պատմություն*, էջ 18: Տե՛ս նաև **Асрян Ю.**, *Нагорный Карабах в эпоху поздней бронзы и раннего железа (II-I тыс. до н.э)*, Степанакерт, 1999:

րը, սպասքերը և այլն, որոնց մի մասը պահվում են Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանում:

Հայ վարպետների աշխատանքներում կատարողական զարմանալի վարպետությամբ առանձնանում է գոտիների մեկ այլ խումբ: Դրանք պատրաստված են լարահյուս, ցանցկեն (առանց հենքի), փորագրության, ազուցման, ձուլման աշխատանքներով: Երբեմն գոտին կամրջող ուղղանկյունիները ցանցկեն վարդյակներով են կամ նույնատիպ վարդյակներին ազուցված թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարերով:

Հետաքրքիր դեկորատիվ ձևերով առանձնանում են կանանց ապարանջանները, որոնց որոշ մասը կազմված է փոքրիկ, կլոր կամ ձվաձև օղակներից, երբեմն՝ ցանցկենազարդ վարդյակներով: Մատանիների մեջ կան այնպիսիները, որոնք հորինվածքի առանձնահատկություններով համընկնում են ապարանջանների, ականջօղերի հետ և կարող են միասին կազմել պաճուճանքի երկու կամ ավելի իրերից կազմված համալիրներ: Դրանք վկայում են ոսկերիչ և արծաթագործ արհեստավորների վարպետության բարձր մակարդակի և առանձնահատուկ կողմերի մասին:

Ձեռագրերի կազմերի վառ օրինակներ են՝ N 7840, N 5636, N 3994, N 6771 և այլն, որոնք պահվում են Մատենադարանում: Վերջիններիս արծաթյա կազմերը և ոսկյա զարդամոտիվներն արտացոլում են հայկական դեկորատիվ-կիրառական արվեստի այդ ճյուղերի դպրոցների պատմությունը:

Արցախի մի շարք եկեղեցիներում առկա են եղել արծաթյա և ոսկյա հոյակապ իրեր: Այս տեսակետից ուշագրավ են հաթերքեցի ոսկերիչ Մուրատի գործերը: Նրա աշխատանքներից են Հադրութի Տող գյուղի Սբ. Հովհաննես եկեղեցում եղած արծաթյա երկու խաչերը, որոնք պատրասվել են 1641թ. և 1657 թ.: Դրանցից

մեկը պատրաստվել էր ուն Գրիգորի պատվերով: Այս մասին փորագրվել էր խաչերից մեկի վրա. «Ես՝ Գրիգոր շինել տվի խաչս յիշատակ ինձ առաջ անմահական է ՚ի Քրիստոս Աստուած հաւատաց է Սուրբ Ակովիկ, որ է Դիզակ: Հաթերքեցի ոսկերիչ Մուրատս շինեցի. թվին:ՌՂ: էր (1641)»: Մյուսի՝ «Այս է աջն սրբոյն Բարսեղի հայրապետին Կեսարու, որ ես՝ Սարգիս վարդապետս վերստին նորոգել տրվի, յիշատակ ինձ և ծնողաց իմոց Օհանին եւ Եղիսապետին ի դուռն սուրբ Աստուածածին. Թուին ՌՃԵ (1657)»¹:

Արծաթագործության և ոսկերչության արվեստին զուգահեռ զարգացել էր ակնագործությունը, որի զարդամոտիվներն արտացոլվել են կենցաղային բազմաթիվ իրերի բնագավառներում: Հատկանշական են կանաց ականջաօղերի, ապարանջանների, գոտիների, մատանիների, մագակալների, այլ զարդերի թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը:

Ակնագործության հոյակապ նմուշ են ձեռագրերի կազմերի քարերը: Նման արժեքավոր օրինակ է Արցախի Դաստիփյուր գյուղի «Ավետարանի» ակնակոտ խաչը²:

Թանկարժեք քարերով են զարդարվել նաև եկեղեցական տարբեր իրեր՝ խաչեր, անոթներ, բուրվառներ (խունկ ծխելու աման) և այլն:

Ինքնատիպ, դեկորատիվ ձևաչափերով ու սկզբունքներով առանձնանում է փայտագործությունը, որն իր փորագրման բնույթով փոխկապակցված է կիրառական արվեստի մյուս ճյուղերի հետ: Փայտագործ վարպետների ձեռքով պատրաստվել էին բազմաթիվ դեկորատիվ իրեր՝ օրորոցներ, գավազաններ,

¹ Բարխուստարեանց Մ., *Արցախ (1895)*, էջ 75: Տե՛ս նաև Դիվան հայ վիճագրության, սյր. 5, էջ 180:

² Տե՛ս ՄՄ, ձեռ. 6746:

մոմակալներ, մահճակալներ, գրասեղաններ, պահարաններ, բազկաթոռներ, պատշգամբների տարբեր հատվածներ, աշխատանքային բազմաթիվ գործիքներ, սկուտեղներ, շերեփներ, սափորներ, առօրյա կենցաղային այլ իրեր:

Փայտը որպես շինանյութ միշտ էլ օգտագործվել է հայկական ճարտարապետության մեջ: Լայն տարածում ունեցել են եկեղեցիների դռները, պուների սղոցաձև փորագրվածները, քանդակագարդ խարիսխները և այլն:

Փայտե դեկորատիվ հարդարանքներով նշանավոր են մելիքական փայտաշեն պատշգամբները: Լուսամուտների համար նախատեսված քառակուսի կամ սլացիկ շրջանակների մեջ, գանազան զարդանախշերի ձևերով տեղավորում էին տարբեր կոթողության և երկարության փայտե փոքրիկ հատվածներ, որոնք ցանցկեն տեսք էին տալիս հարթությանը: Յուրաքանչյուր լուսամուտ ուներ իր կոմպոզիցիոն կառուցվածքը և դրանից բխող զարդանախշը: Իրենց ինքնատիպությամբ աչքի են ընկնում Մելիք Եգանի ապարանքի վերին հարկի փայտաշեն պատշգամբները¹:

Նմանատիպ փայտե դեկորատիվ իրեր են գործածվել նաև հայկական գաղթօջախներում՝ Նոր Զուղա, Հալեպ, Մոսկվա, Լվով, Դրիմ և այլն²:

Արցախի դեկորատիվ-կիրառական արվեստի առաջընթացն առավել ցայտուն դրսևորվեց հատկապես հետագա դարերում:

Այսպիսով, վերը նշված ամփոփ տեղեկությունները ևս մեկ անգամ ապացուցում են պատմական այն ճշմարտությունը, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում արցախցիները շարունա-

¹ Դուլյան Ա., նշվ. աշխ., էջ 35:

² Մանրամասն տե՛ս Գևորգյան Մ., *Փայտի գեղարվեստական փորագրությունը Հայաստանում*, Ե., 1989, էջ 35:

կել են ոչ միայն պահպանել նախորդ դարերում մեր նախնիների կողմից ստեղծված հայկական դեկորատիվ արվեստի լավագույն նմուշների մեծ մասը (անընդհատ տեղի ունեցող պատերազմների հետևանքով կեսը ոչնչացվել է), այլև դրանց զուգահեռ ստեղծել նորերը: Դրանց առաջընթացն ընթանում էր Արևելյան Հաստատանի մյուս շրջանների դեկորատիվ-կիրառական արվեստի ճյուղերի զարգացմանը զուգահեռ:

ՎԵՐՋԱԲԱՆ

Այսպիսով, մեր ուսումնասիրություններից ելնելով հանգում ենք այն եզրակացության, որ 1639 թ. Կասրե-Շիրինի հաշտության պայմանագրից հետո Հայոց երկրում ստեղծված հարաբերական խաղաղությունը որոշակի սոցիալ-տնտեսական, քաղաքական նախապայմաններ ստեղծեց մշակութային կյանքի առաջընթացի համար: Քաղաքական նպաստավոր պայմաններից է մելիքական տների առկայությունը, որոնք դրսևորվեցին որպես Հայոց պետականության խորհրդանիշներ: Չնայած պատմաշրջանի արգելիչ գործոններին, հայ մշակույթի անխոջ ներկայացուցիչները պահպանելով նախորդ դարերի մշակութային ժառանգությունը, ստեղծեցին նոր մշակութային արժեքներ:

1639-1736 թթ. Արցախում մշակութային կյանքի զարգացման միտումները նկատելի էին գրչության արվեստի, գիտակրթական կյանքի, կերպարվեստի, ճարտարապետության, քանդակագործության, դեկորատիվ-կիրառական արվեստի բնագավառներում:

Վերջիններիս զարգացման գործընթացում կարևոր ներդրում ունեն վանական համալիրներն ու եկեղեցիները՝ Դադի վանքի, Ամարասի, Գանձասարի, Գտչավանքի, Խանածախի, Ավետարանոցի, Խզնավարի, Փառիտսի, Երից Մանկանց վանքի, Ծարա երկրի, Ս. Հակոբա վանքի, Եղիշե Առաքյալ վանքի, Գանձակի, Սուրբանեցիքի, Լիզների, Մելիքզադայի, Խավունիսի, Չարեքա վանքի, Պապաջանի, Քարահատի, Սոսոռոտի, Մեծ Ղառամուրատի, Սվրեցիքի, Հարցհանգիստի, Գուլլար գյուղի, Գե-

տաշենի, Դաստիփյուրի, Պայանանց գյուղի, Քարատակի և այլն, որոնք դրսևորվեցին որպես գրչության, կրթության և գիտության կենտրոններ:

Արցախում գիտակրթական ծրագրերի իրականացման խնդրում կարևորել ենք Մխիթարի, Հովհաննես երեցի, Գրիգորի, Բարսեղի, Դավիթի, Սարգիսի, Մովսես Գորիսեցու, Հովհաննես Ապահունեցու, Գայանեի, Ավետիս քարտուղարի, Պաղտասար դպիրի, Իգնատիոս Մեծշենցու, Մարտիրոս Խնձորեցու, Մարիամ ապաշխարողի, Նազար դպիրի, Ստեփանոս սարկավագի, Ավետիս աբեղա Քամալեցու, Եսայի Հասան-Ջալալյանի, Սիմոնի, Եփրեմ քահանայի, Հովհաննես երեցի և այլոց գործունեությունը:

Ընդգծվել է հայկական տպագրության զարգացման գործում Մատթեոս Ծարեցու արժեքավոր դերակատարության մասին:

Կերպարվեստի ճյուղերի ուսումնասիրության խնդրում, արժևորել ենք ծաղկողների՝ Գրիգորի, Մովսես Գորիսեցու, Տեր Բարսեղի, Գայանեի, Գրիգոր քահանայի, Մովսես երեցի, Ստեփանոս սարկավագի, Ավետիս քահանայի և այլոց դերը:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում իրենց ինքնատիպությամբ առանձնանում են Ճարտարապետական հուշարձանները՝ եկեղեցական և վանական համալիրները, մելիքական ապարանքները, հոյակապ կամուրջները և այլն:

Քանդակագործության բնագավառում առանձնանում են տարբեր ժանրերի մանրաքանդակները՝ մանր պլաստիկան, փոքր ձևերի քանդակագործությունը և այլն: Վերջիններս առավել դրսևորվեցին ձեռագրերի կազմերի, տապանաքարերի, ճարտարապետական հուշարձանների վրա:

Դեկորատիվ-կիրառական արվեստի ճյուղերից հատկանշական են գորգագործությունը, ասեղնագործությունը, ժանեկագործությունը, արծաթագործությունը, ոսկերչությունը, ակնագործությունը, փայտագործությունը, որոնց արժեքավոր նմուշները ներդրվել են հայկական մշակույթի հարուստ գանձարանում:

КУЛЬТУРНАЯ ЖИЗНЬ В АРЦАХЕ С 1639 ПО 1736 гг.

ЗАКЛЮЧЕНИЕ

Таким образом, учитывая наши исследования мы пришли к выводу, что после относительно мирного договора Каср (е) – Ширин (в 1639 году) были созданы некоторые социально-экономические и политические предпосылки для прогресса армянской культурной жизни. Одним из благоприятных политических условий было присутствие семьи меликов, которые считались символами государственности. Несмотря на запрещающие факторы исторического периода, сохраняя культурное наследие прошлых веков, неутомимые представители армянской культуры создали новые культурные ценности.

В Арцахе в 1639–1736 гг. тенденции развития культурной жизни были заметны в сферах рукописного искусства, научной жизни, живописи, архитектуре, скульптуре, декоративно-прикладного искусства. Монастыри Дади, Амарас, Гандзасар, Гтчаванк, Святой Акоп, Ериц Манканц, чарек, а также церквей Ханацах, Аветараноц, Хзнавар, Парисос, Цар, Егише Апостол, Гандзак, Султанецик, Лизнер, Меликзада, Хавунис, Пападзан, Карахат, Срсорот, Великий Харамурат, Сврещик, Харцхангист, деревня Гуллар, Геташен, Дастипюр, деревня Паянанц, Каратак и т.д. вложили значительный вклад в процесс развития центров письменности, науки и образования.

Мы оценили деятельность Мхитара, иерея Ованеса, Григора, Barsexa, Давида, Саркиса, Мовсеса Горисеци, Ованеса Апахунечи, Гаяне, Аветиса, причетника Пахтасара, Игнатия Мещенци, Мартироса Хндзорекци, Мариам, причетника Назара, диакона Стефаноса, монаха Аветиса Камалеци, Есаи Гасан-Джалалаяна, Симона, священника Ефрема и других в научных и образовательных программах Арцаха. Была подчеркнута ценная роль Матеоса Тцаречи в развитии армянской печати.

В исследовании вопроса отраслей изобразительного искусства мы оценили роль миниатюристов - Григора, Мовсеса Горисеци, отца Barsexa, Гаяне, священника Григора, иерея Мовсеса, диакона Стефаноса, священника Аветиса и других.

В этот период были построены уникальные архитектурные памятники: храмы, монастыри, дворцы меликов, великолепные мосты и так далее.

В сфере скульптуры были известны небольшие скульптуры различных жанров: мелкая пластика, скульптура малых форм и так далее. Они были на обложках рукописей, надгробных плитах, архитектурных памятниках.

Из отраслей декоративно-прикладного искусства были известны ковроделие, рукоделие, серебряные искусства, ювелирные изделия, деревянные изделия и так далее, чьи ценные образцы были вложены в богатую сокровищницу культуры.

CULTURAL LIFE IN ARTSAKH FROM 1639 TO 1736

CONCLUSION

Thus, considering our studies, we came to the conclusion that after the relatively Peace Treaty of Qasr (e)- Shirin (in 1639) some socio-economic and political preconditions were created for the progress of Armenian cultural life. One of the favorable political conditions was the presence of meliks' families, which were considered symbols of the Armenian statehood. Although the interditory factors of the historical period, keeping cultural heritage of previous centuries tireless representatives of Armenian culture have created new cultural values.

In Artsakh in 1639 to 1736 tendencies of the development of cultural life were noticeable in the areas of the writing art, scientific life, painting, architecture, sculpture, decorative and applied arts. Monasteries of Dadi, Amaras, Gandzasar, Gtchavank, St. Hakob, Yerits Mankants, Charek, as well churches of Khanatsakh, Avetaranots, Khznavar, Pharisos, Car, Yeghishe Apostle, Gandzak, Sultanetsik, Lizner, Melikzada, Khavunis, Papajan, Karakhat, Srsrot, Great Gharamurat, Svretsik, Hartshangist, Gullar village, Getashen, Dastipyur, Payanants village, Karatak, etc. have invested an important contribution in the development process of the centers of writing, science and education.

We evaluated activity of Mkhitar, Elder John, Grigor, Barsegh, Davit, Sargis, Movses Goriseci, John Apahunetsi, Gayane, Avetis, Scribe

Paghtasar, Ignatius Metsshentsi, Martiros Khndzorektsi, Mariam, Scribe Nazar, Deacon Stephanos, Monk Avetis Kamaletsi, Esai Hasan-Jalalian, Simon, Priest Ephraim and others in the scientific and educational programs of Artsakh. It was emphasized the valuable role of Matthew Tseratsi in the development of the Armenian printing.

In the study of the issue of branches of the Fine arts we appreciated the role of the miniaturists of Grigory, Movses Goriseci, Father Barsegh, Gayane, Priest Gregory, Elder Movses, Deacon Stephanos, Priest Avetis and others.

In the period there were unique architectural monuments: churches, monasteries, palaces of meliks, magnificent bridges and so on.

In the field of sculpture there were known small sculptures of various genres: small plastic, sculpture of small forms and so on. These have been on the covers of manuscripts, tombstones, architectural monuments.

Among the arts and crafts branches there were known carpet weaving, needlework, silver art, jewelry, woodcraft and so on, the valuable specimens of which have been invested into the rich treasury of culture.

ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՑԱՆԿ

Բովանդակություն	Փամու-նակ	Վայր	Գրիչ	Ցուկիտ	Կազմող	Մուտքով
N 223 Անկուսարան	Մուլքանեցիք	Միլիթար աշխարհագրական	-	-	-	Լուսի Շատուրյ
N 337 Անկուսարան	Պապուրյան	Հեղինակներ Երեզ	-	-	-	-
N 713 Փոքրիկներ N 968 Մաշտոց	Շատուրյան	Բարսեղ	-	-	-	Մայրը Հայկունյան
N 986 Մաշտոց	Մուլքանեցիք	Միլիթար	-	-	-	Թարևու Եղիշյան
N 1032 Մաշտոց Չեռուայ	Չարկերա վանք	Գրիգոր	Գրիգոր	-	-	Սարգս վարդանյան
N 1574 Փոքրիկներ	Գյուլիստան	Պապուրյան	-	-	-	Միլիթար Արմուրյան
N 1626 Շարավանդ	Մեղրուտակ (Շարվան)	Սարգիս	Մոզես Գրիգորյան	Մոզես Գրիգորյան	Մոզես Գրիգորյան	-
N 2007 Բարսեղյան	Պապուրյան	Վասիլյան	-	-	-	Պապուրյան վարդանյան
N 2277 Փոքրիկներ	Գանձառայի վանք	Հեղինակներ Ազատյան	-	-	-	-
N 2404 Մաշտոց Չեռուայ	Ավարուտանոց	Գարեմ	Գարեմ	Գարեմ	-	Գարեմ վարդանյան
N 2561 Արտանյան արտանյան	Գանձառայի վանք	Սիմոն	-	-	-	Չարակ արքայ
